ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ЭКОНОМИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ
ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ВЕСТНИК АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА

MESSENGER OF ARMENIAN STATE
UNIVERSITY OF ECONOMICS

2(38)

«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2015

«Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի»
հանդեսն ընդգրկված է դոկտորական ատենախոսությունների արդյունքների
տպագրման համար ընդունելի գիտական հրատարակությունների ցանկում

Գլխավոր խմբագիր՝ ***Կորյուն ԱԹՈՅԱՆ***

Խմբագրական խորհուրդ՝ Սուրեն ԳԵՎՈՐԳՅԱՆ, Արարատ ԶԱՔԱՐՅԱՆ, Աշոտ ԹԱՎԱԴՅԱՆ, Գրիգոր ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Միքայել ՄԵԼՔՈՒՄՅԱՆ, Խորեն ՄԽԻԹԱՐՅԱՆ (գլխավոր խմբագրի տեղակալ), Աշոտ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ, Արամ ՍԱՐԳՍՅԱՆ, Վարդան ՍԱՐԳՍՅԱՆ, Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, Գագիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Պարույր ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Главный редактор ***Корюн АТОЯН***

Редакционная коллегия: Сурен ГЕВОРКЯН, Арарат ЗАКАРЯН, Ашот ТАВАДЯН, Григор КИРАКОСЯН, Микаел МЕЛКУМЯН, Хорен МХИТАРЯН (заместитель главного редактора), Ашот САЛНАЗАРЯН, Арам САРКИСЯН, Вардан САРКИСЯН, Юрий СУВАРЯН, Гагик ВАРДАНЯН, Паруйр КАЛАНТАРЯН

Editor-in-chief ***Koryun ATOYAN***

Editorial board: Suren GEVORGYAN, Ararat ZAKARYAN, Ashot TAVADYAN, Grigor KIRAKOSYAN, Mikayel MELKUMYAN, Khoren MKHITARYAN (Deputy Editor-in-chief), Ashot SALNAZARYAN, Aram SARGSYAN, Vardan SARGSYAN, Yuri SUVARYAN, Gagik VARDANYAN, Paruyr KALANTARYAN

Պատասխանատու քարտուղար՝ Գոհար ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ավագ խմբագիր՝ Սուսաննա ՉԱԼԱԲՅԱՆ
Տեխնիկական խմբագիր՝ Նաիրա ԽՉԵՅԱՆ

Ответственный секретарь Гоар ОГАНЕСЯН
Старший редактор Сусанна ЧАЛАБЯН
Технический редактор Наира ХЧЕЯН

Executive secretary Gohar HOVHANNISYAN
Senior editor Susanna CHALABYAN
Techicul Editor Naira KHCHEYAN

© «Բանբեր ՀՊՏՀ», 2015
© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ, ՆԱՐԵԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ, ՍՈՒՍԱՆՆԱ ՉԱԼԱԲՅԱՆ
Սպառողների հավատարմության և բավարարվածության փոխառնչությունները 9

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ
Պետական պարտքի և պետության պարտքային ֆինանսավորման հայեցակարգային հարցերի շուրջ 18

ԳՈՌ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ԱՇՈՏ ՅԱԽՇԻԲԵԿՅԱՆ
Շուկայական համակենտրոնացումը և գերիշխանությունը որպես Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացման վրա ազդող գործոններ 33

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՄԵՐԻ ԲԱԴԱԼՅԱՆ, ՄԱՐԻՆԵ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ, ԼԻԼԻԹ ԴԱԴԱՅԱՆ
Բուհի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական գործունեության շահադրդման խնդիրները 44

ԹԱԳՈՒՀԻ ՕՀԱՆՅԱՆ
Համայնքների խոշորացումը. նպատա՞կ, թե՞ միջոց 55

ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ
Հակոբ Պարոնյանը՝ հայոց վարքաբան 60

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Միջազգային տնտեսական կազմակերպությունների հակաճգնաժամային միջոցառումները համաշխարհային տնտեսության ճգնաժամային զարգացումների համատեքստում 75

ՄԻԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԶԱՏ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ, ՀԱՅԿԱԶ ԻԳԻԹՅԱՆ
Հայաստանի տնտեսական անվտանգության ներկա վիճակի գնահատումը 85

ԶԵՆՖԻՐԱ ԹՈՒՄԱՍՅԱՆ, ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՄԱՐԻՆԱ ՏՈՆՈՅԱՆ, ԷՄՄԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ որոշ ապրանքային շուկաների տնտեսական մրցակցության իրավիճակային վերլուծությունը և գնահատումը 102

ԱՐՄԵՆ ՂԱՄԲԱՐՅԱՆ
Օրգանական սննդամթերքի նկատմամբ պահանջարկի ձևավորման արդի միտումները 114

ՀԱԿՈԲ ԱՐՇԱԿՅԱՆ
Զբոսաշրջության ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի և զբաղվածության վրա. քլաստերային մոտեցման արդյունավետությունը 124

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾ

ԱՐԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ
Բանկերի հիմնական գործառույթների և գործառնությունների ժամանակակից փոխակերպումները..... 135

ԳՅՈՒԼԼՈ ԱՐԱԲՅԱՆ
Ֆինանսական արդյունքների շեղումների հաշվառման բարելավումը հանրային ոլորտում..... 148

ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ԲՈՐԻՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Բնական ռեսուրսների տնտեսական գնահատման մոտեցումները 158

С О Д Е Р Ж А Н И Е

КОРЮН АТОЯН, НАРЕК ГУКАСЯН, СУСАННА ЧАЛАБЯН
Взаимосвязь между лояльностью и удовлетворенностью потребителей 9

ЭКОНОМИЧЕСКАЯ ТЕОРИЯ

ЭДУАРД АКОПЯН
Концептуальные вопросы государственного долга и долгового финансирования государства 18

ГОР ХАЧАТРЯН, АШОТ ЯХШИБЕКЯН
Рыночная концентрация и доминирование как факторы влияющие на экономическое и социальное развитие Республики Армения 33

МЕНЕДЖМЕНТ

МЕРИ БАДАЛЯН, МАРИНЕ НИКОГОСЯН, ЛИЛИТ ДАДАЯН
Проблемы мотивации профессиональной деятельности преподавательского состава вуза 44

ТАГУИ ОГАНЯН
Укрупнение общин – цель или средство? 55

ВАЛЕРИЙ МИРЗОЯН
Акоп Паронян о поведенческой характеристике армян 60

МЕЖДУНАРОДНЫЕ ЭКОНОМИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ

ВЛАДИМИР АРУТЮНЯН, КАРЕН САРГСЯН
Антикризисные меры международных экономических организаций в контексте кризисных развитий глобальной экономики 75

МИКРОЭКОНОМИКА

АЗАТ КАЛАНТАРЯН, АЙКАЗ ИГИТЯН
Оценка текущей экономической безопасности Армении 85

ЗЕНФИРА ТУМАСЯН, ГАЯНЕ ГРИГОРЯН, МАРИНА ТОНОЯН, ЭММА КАРАПЕТЯН
Анализ и оценка экономической конкуренции некоторых товарных рынков РА 102

АРМЕН ГАМБАРЯН
Современные тенденции формирования спроса на органические продукты питания 114

АКОП АРШАКЯН
Влияние туризма на занятость и экономический рост РА: эффективность кластерного подхода 124

БАНКОВСКОЕ ДЕЛО

АРАМ МХИТАРЯН
Современные преобразования основных функций и операций банков..... 135

ГЮЛЛО АРАБЯН
Совершенствование учета отклонений финансовых результатов в государственном секторе 148

ЭКОНОМИКА ПРИРОДОПОЛЬЗОВАНИЯ

СУРЕН ГЕВОРКЯН, БОРИС ШАХНАЗАРЯН
Подходы к экономической оценке природных ресурсов 158

C O N T E N T S

KORYUN ATOYAN, NAREK GHUKASYAN, SUSANNA CHALABYAN
Interrelation between Loyalty and Consumer Satisfaction .....

THEORY OF ECONOMICS

EDUARD HAKOBYAN
Conceptual Issues of the Government Debt and Debt Financing of Government 18

GOR KHACNATRYAN, ASHOT YAKHSHIBEKYAN
Factors of Market Concentration and Dominance Influencing the RA Economic and Social Development. 33

MANAGEMENT

MERI BADALYAN, MARINE NIKOGHOSYAN, LILIT DADAYAN
Issues Related to Faculty Motivation at Higher Educational Institution..... 44

TAGUHI OHANYAN
Is Community Enlargement a Purpose or a Means?..... 55

VALERI MIRZOYAN
Hakob Paronyan as the Researcher of Armenians' Behavior 60

INTERNATIONAL ECONOMIC RELATIONS

VLADIMIR HARUTYUNYAN, KAREN SARGSYAN
Anticrisis Measures of International Economic Organizations in the Context of Crisis Developments of Global Economy 75

MICROECONOMICS

AZAT KALANTARYAN, HAYKAZ IGITYAN
Estimation of Current Economic Security of Armenia..... 85

ZENFIRA TUMASYAN, GAYANE GRIGORYAN, MARINA TONOYAN, EMMA KARAPETYAN
Evaluation and Analysis of Economic Competition of Some Commodity Markets in the RA 102

ARMEN GHAMBARYAN
Current Trends in Organic Food Demand Formation 114

HAKOB ARSHAKYAN
Impact of Tourism on Employment and the RA Economic Growth: the Efficiency Cluster Approach..... 124

BANKING

ARAM MKHITARYAN
Modern Transformations of Basic Functions and Operations of Banks 135

GYULLO ARABYAN
Improving the Accounting of Financial Results Deviations in the Public Sector 148

ENVIRONMENTAL ECONOMICS

SUREN GEVORGYAN, BORIS SHAHNAZARYAN
Approaches to Economic Assessment of Natural Resources 158

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՆԱՐԵԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ
ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու

ՍՈՒՍԱՆՆԱ ՉԱԼԱԲՅԱՆ
ՀՊՏՀ լեզուների ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների թեկնածու,
մարքեթինգի մագիստրոս

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես հայտնի է, հավատարմությունը հիմնված է բավարարվածության վրա: Սիա թե ինչու է անհրաժեշտ պարզել՝ որքանո՞վ է հավատարմությունը կախված բավարարվածությունից: Սակայն միշտ չէ, որ սպառողների բավարարվածության դեպքում ֆիրման մեծ հաջողության է հասնում. պետք է տարբերել պարզապես բավարարվածությունն ու լրիվ բավարարվածությունը: Արդյոք հավատարմությունն ազդո՞ւմ է ընկերության շահույթի վրա: Հավատարիմ են համարվում ընկերության կայուն գնորդները, ովքեր տվյալ ապրանքի բազմակի գնորդներն են: Բազմաթիվ մասնագետներ կրկնակի գնումներ կատարելու գործոնը վճռորոշ են համարում ընկերության զարգացման համար: Ընդհանուր առմամբ, որքան շատ է սպառողն առնչվում ընկերության հետ, այնքան ֆինանսական տեսակետից մեծ արժեք է ներկայացնում: Նման սպառողներին կարելի է անվանել երկարաժամկետ: Նրանք ավելի շատ ապրանք են գնում, ավելի քիչ ուշադրություն են պահանջում, պակաս զգայուն են գների փոփոխության նկատմամբ և նպաստում են նոր սպառողների ընդգրկմանը:

Հոդվածում քննարկվում է սպառողների հավատարմության և բավարարվածության փոխադարձ կապը, դրանց դերը ընկերության հաջողության գործում:

Հիմնաբառեր. *հավատարմություն, բավարարվածություն, հավատարիմ գնորդ, արժեքային աղբյուր, նվիրվածության սխեմա*

Առևտրի ոլորտում «հավատարմություն» (loyalty) հասկացությունը մինչ օրս խորությամբ ու ըստ էության չի ընկալվում մեզանում: Հայտնի է, որ գործարարության տարբեր ոլորտներում առաջատար դիրքեր են գրավում հիմնականում այն կազմակերպությունները, որոնք ունեն կայուն սպառողական հենք (բազա): Հաջողության հենց այս գործոնն էլ կոչվում է հավատարմություն: Որոշ դեպքերում հավատարմության արդյունքն ընկերության հաջող գործունեության շատ ավելի հզոր պայման է, քան շուկայական բաժնեմասը և ծախսերի կառուցվածքը:

Հավատարմության ուսումնասիրության մեջ զգալի ներդրում ունի Ֆրեդերիկ Ռեյչհելդը (Baind and Company միջազգային խորհրդատվական ընկերության նախագահ): Նա հավաքել է զանազան ընկերությունների մարքեթինգային հետազոտությունների նյութեր, որոնց ուսումնասիրության առարկան սպառողների բավարարվածության աստիճանն է: Ֆ. Ռեյչհելդը այդ նյութերի հիման վրա հրատարակել է «Հավատարմության էֆեկտը. եկամտաբերության և երկարատև արժեքների աճի թաքնված շարժիչ ուժը» աշխատությունը, որում մանրամասնորեն քննարկել է հավատարմությանն առնչվող խնդիրները: Ռեյչհելդը հավատարմությունը սահմանում է որպես որակ, որ հատուկ է որևէ արժեքից (ապրանք, ծառայություն) օգտվողին, ով ամեն անգամ վերադառնում է տվյալ աղբյուրին՝ խորհուրդ տալով դա նաև բարեկամներին[1]: Այլ կերպ ասած՝ հավատարմությունը սպառողների՝ սեփական արժեքների աղբյուրի նկատմամբ նվիրվածությունն է:

Հավատարիմ գնորդը արժեքների աղբյուրը չի փոխում և խորհուրդ է տալիս իր շրջապատին օգտվելու դրանից: 2006 թ. Ֆ. Ռեյչհելդը ամերիկյան 400-ից ավելի ընկերությունների գործունեության ուսումնասիրության հիման վրա հրատարակեց իր «Վերջին հարց. լավ շահույթ և իրական աճ» գիրքը, որտեղ առաջարկեց սպառողների բավարարվածության ցուցչի (NPS՝ Net Promoter Score) հայեցակարգը:

Ֆ. Ռեյչհելդն իր հետազոտությունը կառուցել է ըստ «Որքա՞ն է մեր արտադրանքը ձեր ընկերներին ներկայացնելու հավանականությունը» հարցի պատասխանների: Սպառողը պատասխանը գնահատում է 10-միավորային սանդղակով: Ըստ այդմ՝ բոլոր պատասխանողները բաժանվում են 3 խմբի.

1. ***Վաճառքին նպաստողներ՝*** «9–10» միավոր (Promoters՝ «պաշտպաններ կամ կողմնակիցներ»). հաճախորդներ, ովքեր հավատարիմ են ընկերությանը և պատրաստ են գովազդելու այն իրենց ընկերներին:
2. ***Չեզոքներ՝*** «7–8» միավոր. պասիվ հաճախորդներ, ովքեր հիմնականում գոհ են ընկերությունից, սակայն առանձնապես չեն գովազդում այն իրենց մտերիմներին:
3. ***Քննադատներ՝*** «0–6» միավոր. գոհ չեն, հետևաբար՝ այլընտրանք են փնտրում:

NPS ցուցիչը հաշվարկվում է ըստ վաճառքին նպաստողների և քննադատների միջև եղած տոկոսային հարաբերակցության: Որքան մեծ է վաճառքին նպաստողների թիվը, այնքան մեծ է ընկերության NPS-ը: Այս դեպքում շուկան ավելի շատ դրական կարծիքներ է ստանում ընկերության մասին, և ավելի շատ հաճախորդներ են ընտրում տվյալ ընկերությունը: Բացի դրանից, վաճառքին նպաստողները ընկերության հաճախորդների բազայի ամենա-

[1] Տե՛ս **Reichheld F.,** The Hidden Force Behind Growth, Profits and Lasting Value, Harvard Businss School Press, 1996:

շահութաբեր մասն են: Սովորաբար նրանք գնի նկատմամբ պակաս զգայուն են և գնումների ծավալն ավելի արագ են մեծացնում, քան մյուսները:

Հետազոտողի կարծիքով՝ հավատարմության էֆեկտի նկատմամբ առավել զգայուն են գործունեության այն ոլորտները, որոնք մտավոր բարձր ունակություններ և պրոֆեսիոնալիզմ են պահանջում (ապահովագրություն, բանկային գործունեություն, հրատարակչական գործ):

Հավատարմությունը, փաստորեն, ենթադրում է սպառողների դրական վերաբերմունքն այն ամենի նկատմամբ, ինչն առնչվում է կազմակերպության գործունեությանը, արտադրած ապրանքներին, մատուցած ծառայություններին, աշխատակազմին, վարկանիշին, ապրանքանիշին, լոգոտիպին և այլն:

Հավատարմությամբ, ինչպես նաև տվյալ ընկերության նկատմամբ սպառողների բարեհամբույր վերաբերմունքով է պայմանավորված վաճառքի կայուն ծավալը, որը ընկերության հաջող ռազմավարության ցուցանիշն է: Հայտնի է, որ սպառողի հավատարմության աստիճանը բնութագրվում է որոշակի ապրանքանիշի նկատմամբ նրա նվիրվածությամբ և, սովորաբար, չափվում է արտադրանքի կրկնակի գնումների քանակով: Սպառողների հավատարմության արտահայտման բարձրագույն ձևը ապրանքի (բրենդի) պաշտամունքն է. նախընտրում և ձեռք են բերում՝ չհետևելով «գին-որակ» սկզբունքին:

Հավատարիմ կարելի է համարել նաև այն գնորդներին, ովքեր բավական երկար ժամանակ անդավաճան օգտվում են ընկերության ծառայություններից, բազմակի գնումներ կատարում:

Հավատարմության հիմքերից մեկը դրական փորձն է, որ սպառողը ձեռք է բերում տվյալ ապրանքի կամ ծառայության գնման կամ սպառման ընթացքում: Օրինակ՝ եթե սպառողը լիովին բավարարված է որոշակի մասնագիտության կրթական ծրագրերից, ապա մյուս բոլոր անփոփոխ գործոնների դեպքում հաջորդ անգամ նա իր սպառողական ընտրությունը, ամենայն հավանականությամբ, կանի հօգուտ այս մասնագիտության: Իր հերթին՝ տնտեսագիտական կրթություն ընտրելիս, իմանալով, որ տվյալ բուհը մատուցում է որակյալ ծառայություններ, վերն ընտրված մասնագիտության գծով ծառայություններ մատուցողների բարեհամբույր և բարեխիղճ վերաբերմունքը կարող է տվյալ բուհի ցանկացած մասնագիտական կրթական ծրագրի ընտրության հիմքը դառնալ:

Արդյո՞ք հավատարմությունը (այսինքն՝ հիմնական սպառողների առկայությունը) ազդում է ընկերության շահույթի վրա: Կայուն գնորդները հիմնականում նրանք են, ովքեր նորից ու նորից գնում են նույն ապրանքը: Շատ մասնագետներ այդ գործոնը՝ կրկնակի գնումներ կատարելը, վճռորոշ են համարում ընկերության զարգացման համար[2]: Ընդհանուր առմամբ, որքան շատ է սպառողն առնչվում ընկերության հետ, այնքան ֆինանսական տեսակետից մեծ արժեք է ներկայացնում: Նման սպառողներին կարելի է անվանել երկարաժամկետ: Նրանք ավելի շատ ապրանք են գնում, ավելի քիչ ուշադրություն են պահանջում, պակաս զգայուն են գների փոփոխության նկատմամբ և նպաստում են նոր սպառողներ ընդգրկելուն: Նրանց առնչվող ամենաուշագրավ առավելությունը հավատարմությունը ձեռք բերելու նախնական ծախսերի բացակայությունն է:

Երկարաժամկետ սպառողներն այնքան արժեքավոր են, որ որոշ ոլորտներում, հաճախորդների ընդհանուր կառուցվածքում, երկարաժամկետ սպա-

---

[2] Տե՛ս http://www. reklamist.com/useful/brand/0.html

ռողների թվի ընդամենը 5% աճը հանգեցնում է շահույթի 100% աճի:

Եթե ընկերության ղեկավարությունը ձևավորել է հավատարմության համակարգ, ապա դա կարող է նպաստել կազմակերպության գործունեության վերլուծության մի քանի նոր տարրերի ներդրմանը.

- հաճախորդների հաշվեկշիռ,
- հաճախորդների քանակի փոփոխության հաշվետվություն,
- հաճախորդների թվի նվազման պատճառների բացահայտում և այլն:

Սա կօգնի հաճախորդներին գրավելու և պահելու որոշումների ընդունմանը: Գիտակցելով, որ սպառողների կորուստը թանկ արժե, և նրանց պահելը շահութաբեր է, հանգեցրեց «նվիրվածության սխեմաների» մշակմանը, որոնք անցյալ դարի 90-ական թվականներից հաջողությամբ կիրառվում են արևմտաեվրոպական երկրների և ԱՄՆ-ի մարքեթինգային ոլորտում: Նվիրվածության սխեման գործողությունների ծրագիր է, որը մշակվում է սպառողների ցանկությունների և պահանջմունքների վերաբերյալ ճշգրիտ և ժամանակին ձեռք բերված տեղեկատվության հիման վրա:

Ինչպես արդեն նշել ենք, հավատարմության հիմքում բավարարվածության զգացումն է: Իսկ ինչպիսի՞ն է հավատարմության և բավարարվածության կապը: Հարկ է նշել, որ բավարարվածությունն անհրաժեշտ, բայց պարտադիր պայման չէ մեծ հաջողությունների հասնելու համար: Պետք է տարբերել պարզապես բավարարվածությունը լրիվ բավարարվածությունից: Սպառողների պարզապես բավարարվածությունը լրիվ բավարարվածությունից չտարբերելու հանգամանքը կարող է ֆիրմայի կործանման պատճառ դառնալ[3]: Հետաքրքիր է, օրինակ, Ֆ. Ռեյչհելդի այն պնդումը, թե՝ չնայած սպառողների բավարարվածության բարձր ցուցանիշներին, ֆիրման շարունակում է կորցնել իր դիրքերը շուկայում:

Այս առումով, ուշագրավ է նաև Թ. Ջոնսի և Վ. Սասերի՝ այս երևույթը լուսաբանող օրինակը[4]: Ֆիրմայի ութ ստորաբաժանումներ գործարարությամբ են զբաղվում տարբեր ոլորտներում: Բոլոր ստորաբաժանումներում զգացվում է մրցակցության ընդգծված աճ: Ֆիրման իր հերթին մշակում է սպառողների բավարարվածության աստիճանը պարզելու ծրագիր:

Ղեկավարը վերլուծում է երրորդ եռամսյակում սպառողների բավարարվածության աստիճանը գծապատկերի միջոցով: Նա նշում է, որ սպառողների 82%-ն իրենց պատասխաններով փաստում են, որ բավարարվածության մակարդակը 4-րդ (բավարարված ենք) կամ 5-րդ (լրիվ բավարարված ենք) տիրույթում է: Կառավարիչները համոզված են, որ այս ցուցանիշը վկայում է ընկերության բավականին լավ վիճակի մասին: Ընկերության ստորաբաժանումներից 3-ն ունեն սպառողների բավարարվածության միջին ցուցանիշ՝ 4,5 միավոր: Այս բաժանմունքների կառավարիչների կարծիքով հետագա ֆինանսական ներդրումները չեն նպաստի արդյունքի մեծացմանը (գծապատկեր 1):

Այնուհետև վերլուծության է ենթարկվում սպառողների ամենացածր՝ 2.7% բավարարվածության մակարդակով ստորաբաժանումը, որը շուկայում գործում է ամենաբարձր մրցակցության պայմաններում: Շահույթի մակարդակը շատ ցածր է, և կառավարիչները կարծում են, թե տվյալ շուկայի գների

---

[3] Տե՛ս **Reichheld F.,** Learning from Customer Defections, Harvard Businss Review, Apr., 1996:

[4] Տե՛ս **Jones T. and Sasser W.,** Why Satisfied Customers Defect, Harvard Business Review, Nov., 1995:

փոփոխությունների նկատմամբ բավականին զգայուն սպառողներին դժվար է լրիվ բավարարել, և նպատակահարմար չէ ֆինանսական ներդրումներ կատարել սպառողների բավարարվածության աստիճանը բարձրացնելու համար:



Գծապատկեր 1. ***Ընկերության սպառողների բավարարվածության աստիճանը 3-րդ եռամսյակում***

1. - բոլորովին չբավարարվածներ
2. - չբավարարվածներ
3. - չեզոքներ
4. - բավարարվածներ
5. - լրիվ բավարարվածներ

Մյուս 4 ստորաբաժանումների արդյունքների քննարկումից պարզվում է, որ սպառողներն, ընդհանուր առմամբ, գոհ են, սակայն չեզոք վերաբերմունք ունեն ֆիրմայի նկատմամբ: Նրանց բավարարվածության աստիճանը տատանվում է 3,5–4,5 միավորների տիրույթում: Որոշվում է պարզել, թե ի՞նչը դուր չի գալիս ամենադժգոհ սպառողներին, ապա վերացնել դա:

Փաստորեն, ըստ կառավարիչների, առաջինը՝ շատ բարդ է լրիվ բավարարել սպառողներին, և եթե բավարարվածության մակարդակը 4 միավորից ցածր չէ, կարելի է ասել, որ ֆիրմայի և սպառողների միջև կապը բավական հաստատուն է: Ի վերջո, ապրանքներն ու ծառայությունները չեն կարող կատարյալ լինել, հետևաբար՝ սպառողներին դժվար է լրիվ գոհացնել: Երկրորդը՝ պարզապես գոհ սպառողներին լրիվ գոհացնելու համար կատարվող ֆինանսական ներդրումները, ռեսուրսների օգտագործումը լավագույն տարբերակները չեն: Որոշ դեպքերում (օրինակ՝ վերջին 4 ստորաբաժանումների պարագայում) նույնիսկ չարժե փորձել դա անել: Վերջապես՝ այն ստորաբաժանումները, որոնց սպառողները բավարարված են (համաձայն սանդղակի՝ 3,5–4,5 միավոր), պետք է իրենց ջանքերը կենտրոնացնեն չբավարարված սպառողներին գոհացնելու համար:

Հեղինակները սպառողների բավարարվածության և հավատարմության փոխկախվածությունն ուսումնասիրելուց հետո եկել են այն համոզման, որ կառավարիչները կա՛մ անտեսում, կա՛մ պատշաճ ուշադրություն չեն դարձնում հավատարմության նշված կողմերին:

Բացառիկ դեպքերում միայն լրիվ բավարարված սպառողները հավատարմության ապահովման և երկարատև ֆինանսական հաջողության հիմքը կարող են լինել: Հաճախ հստակ չի լինում բավարարված և լիովին բավարարված սպառողների տարբերակումը: Դա հատկապես նկատելի է մեծ

մրցակցությամբ աշխատող արտադրությունում: Նույնիսկ ոչ շատ մրցակցային շուկաներում սպառողների լրիվ բավարարվածության ապահովումը կարող է դառնալ նրանց հավատարմությունը ձեռք բերելու միակ միջոցը: Կարևոր է, որ կազմակերպությունը կարողանա առանձնացնել իր նպատակային սպառողական հատվածը և տրամադրել սպառողներին լիովին բավարարող ապրանքներ ու ծառայություններ: Ապրանքի կամ ծառայության որակը միշտ չէ, որ սպառողների բավարարվածության ցածր աստիճանի հիմնական պատճառն է: Երբեմն կազմակերպությունները ներգրավում են ոչ այն սպառողներին կամ ի վիճակի չեն լինում հետ բերելու իրենցից դժգոհ մնացած սպառողին: Գ. Լին կարծում է, որ պետք է առանձնացնել սպառողի երկու տիպ՝ «ճիշտ» կամ նպատակային, ում պահանջմունքները ֆիրման պետք է կարողանա բավարարել իր համար դրական ֆինանսական արդյունքով, և «սխալ», ում պահանջմունքները բավարարելիս ֆիրման շահույթ ձեռք չի բերի: «Սխալ» սպառողների ի հայտ գալը հին հաճախորդներին պահելու և նորերին ներգրավելու գործընթացների վատ կազմակերպման հետևանք է: Եզրակացությունը հետևյալն է. հարկ է արագ բացահայտել «սխալ» սպառողներին, նրանց վրա չծախսել կազմակերպության աշխատանքային և ֆինանսական միջոցները[5]:

Բավարարվածության աստիճանները պայմանավորված են տարբեր գործոններով և պահանջում են բավարարման տարբեր մեթոդներ: Գ. Լին առանձնացնում է սպառողների բավարարվածության մակարդակի վրա ազդող 4 գործոն.

- ապրանքի կամ ծառայության հիմնական հատկանիշներ, որոնք սպառողները ակնկալում են ինչպես տվյալ ընկերությունից, այնպես էլ նրա բոլոր մրցակիցներից,
- ապրանքի սպասարկման և պահպանման հիմնական համակարգ,
- ֆիրմայի վնասը փոխհատուցելու կարողություն,
- ընկերության սպառողների անձնական պահանջմունքները բավարարելու (կամ ապրանքը տարբերակելու) ունակություն:

Թեև սպառողների բավարարվածության մակարդակի ուսումնասիրությունների արդյունքները կարևոր ցուցիչ (ինդիկատոր) են, սակայն միայն դրանցով կողմնորոշվելը կարող է կործանարար լինել կազմակերպության համար: Նման ուսումնասիրությունները հսկայական քանակությամբ օգտակար տեղեկություններ են պարունակում, որոնք, այնուամենայնիվ, բավարար չեն կազմակերպության ռազմավարությունը և արտադրական նորարարությունները մշակելու համար: Ուստի ֆիրմաները պետք է նաև ուրիշ մեթոդներ կիրառեն հավանական և նախկին սպառողների պահանջմունքները որոշելու համար:

Պահանջմունքների բավարարման կառավարման ցանկացած հաջող ռազմավարության մշակման հիմքում, անկասկած, սպառողներին լսելու կարողությունն է: Սպառողների բավարարվածության մակարդակի ուսումնասիրությունը կառավարիչներին օգնում է պատկերացնել իրադրությունը, հասկանալ, թե սպառողն ինչպիսի՞ վերաբերմունք ունի ընդհանրապես ընկերության, մասնավորապես՝ տվյալ ապրանքի նկատմամբ: Քանի որ այս ցուցանիշը քանակական է, դա հնարավորություն է տալիս համեմատելու տարբեր

[5] http://www.reklamist.com/useful/brand/2.html

ժամանակահատվածների տվյալները, դիտարկելու ստորաբաժանումների և տարածաշրջանային համանման ցուցանիշները:

Մի շարք հեղինակներ մեծապես կարևորում են սպառողների հետ հետադարձ կապը՝ կոչ անելով «քայլել սպառողների կոշիկներով» («Walk in your customer's shoes»)[6]: Ընկերությունը չի կարող լուծել իր առջև ծառացած խնդիրները՝ առանց իմանալու, թե դրանք ինչպես են արտահայտվում: Թեև ընկերությունները ավանդաբար հսկայական միջոցներ են ներդնում շուկայի ուսումնասիրության նպատակով, սակայն հաճախ անտեսում են հետևյալ հանգամանքը. անհրաժեշտ է ոչ միայն լսել նրանց, ովքեր իրենց սպառողն են դարձել, այլ նաև նրանց, ովքեր հրաժարվել են ընկերության ծառայություններից: Կարծում ենք՝ անհրաժեշտ է ստանալ հետևյալ առանցքային հարցերի պատասխանը.

1. Որո՞նք են մեր արտադրանքը ձեռք բերելու հիմնական դրդապատճառները:
2. Ո՞րն է մեր արտադրանքը չգնելու հիմնական պատճառը:

Սպառողների պահանջմունքների հիման վրա ստեղծված բարձրորակ արտադրանքը կնպաստի բավարարվածության ավելի բարձր մակարդակի ապահովմանը: Բավարարվածության բարձր մակարդակը կնպաստի սպառողների հավատարմության մակարդակի բարձրացմանը: Հավատարմությունը, ինչպես արդեն նշվել է, կազմակերպության երկարաժամկետ ֆինանսական հաջողության առանցքային բաղադրիչն է: Ուշագրավ են հեղինակների ուսումնասիրության արդյունքները. լրիվ բավարարված սպառողները պարզապես բավարարվածներից վեց անգամ ավելի պատրաստակամ են կրկնակի գնում կատարելու[7]: Պարզապես բավարարված սպառողը լիովին հավատարիմ չի դառնում: Իսկապես հավատարիմ սպառողներ կարելի է համարել միայն լրիվ բավարարվածներին:

Սպառողների բավարարվածության աստիճանի վերաբերյալ տեղեկատվությունը հստակ վկայում է, թե ընկերությունը որքանո՞վ է լավ կամ վատ բավարարում իր հաճախորդների պահանջմունքները: Սա կարող է նաև օգնել հասկանալու, թե ինչը պետք է լավացնել, որպեսզի հաճախորդների մեծ մասը լրիվ բավարարված զգա իրեն: Ահա թե ինչու ռազմավարական տեսանկյունից կարևոր է իմանալ սպառողների կարծիքը:

Ի մի բերելով վերը նշվածը՝ կարելի է ասել, որ երկարաժամկետում գոյատևում և բարգավաճում են այն ընկերությունները, որոնք մշտապես ուշադրություն են դարձնում սպառողների բավարարվածության մակարդակի և հավատարմության փոխկախվածությանը:

Այս առումով, Հորստ Շուլցը՝ «Ռից» հյուրանոցների ցանցի հիմնադիրը և տնօրենների խորհրդի նախագահը, հետևյալ կարծիքն է արտահայտել. «Քանի դեռ ձեր սպառողները 100%-ով բավարարված չեն և հիացած չեն այն ամենով, ինչ անում եք նրանց համար, դուք անելու դեռ շատ բան ունեք: Իսկ եթե արդեն հասել եք սպառողների 100%-անոց բավարարվածության մակարդակին, վստահ եղեք, որ ուշադիր հետևելու եք այդ ցուցանիշի հնարավոր փոփոխություններին, որպեսզի ինքներդ ևս արագ փոփոխվեք»[8]:

---

[6] Տե՛ս **Sauerwein E., Bailom F., Matzler K., Hinterhuber H.,** Preprints Volume I of the IX International Working Seminar on Production Economics, Innsbruck /Igls/ Austria, Feb. 19-23, 1996, էջ 313-327:
[7] Տե՛ս **Jones T.,** նշվ. աշխ., էջ 10:
[8] Մեջբերումը՝ ըստ Գ. Լիի աշխատության. // http://www.marketing.spb.ru/read/article/a47.htm

КОРЮН АТОЯН
Ректор АГЭУ, доктор экономических наук, профессор

НАРЕК ГУКАСЯХ
Доцент кафедры “Маркетинга” АГЭУ, кандидат экономических наук

СУСАННА ЧАЛАБЯН
Заведующая кафедрой “Языков” АГЭУ, кандидат филологических наук, магистр маркетинга

Взаимосвязь между лояльностью и удовлетворенностью потребителей.- Как известно лояльность основана на удовлетворенности. По этому необходимо выяснить насколько лояльность зависит от удовлетворенности. Однако это не означает, что в случае удовлетворенности потребителей фирма должна достичь больших успехов - необходимо различать простую удовлетворенность от полной удовлетворенности. Имеет ли лояльность влияние на прибыль? Лояльными считаются те потребители, которые неоднократно приобретают данный товар. Многие специалисты считают, что решающим для развития компании является фактор неоднократных покупок. Чем больше потребитель обращается к компании, тем большую стоимость он приобретает с финансовой точки зрения. Таких потребителей можно называть долгосрочными. Они делают больше покупок, меньше внимания требуют к себе со стороны обслуживающего персонала, меньше чувсвительны к изменениям цен и способствуют к привлечению новых потребителей. В статье рассматривается взаимосвязь между лояльностью и удовлетворенностью потребителей и их роль в успешной деятельности компании.

Ключевые слова: *лояльность, удовлетворенность, лояльный потребитель, источник ценности, схема преданности.*

KORYUN ATOYAN
ASUE Rector, Doctor of Economics, Professor

NAREK GHUKASYAN
Associate Professor at the Chair of "Marketing" at ASUE, PhD in Economics

SUSANNA CHALABYAN
Head of the Chair of "Languages" at ASUE, PhD in Linguistics, Master's Degree in Marketing

Interrelation between Loyalty and Consumer Satisfaction.- It is well-known that loyalty is based on satisfaction. Therefore, finding out to what extent loyalty is dependent on satisfaction is of great significance. It does not imply, however, that in case of consumer satisfaction the company must achieve great success: the simple satisfaction should be differentiated from the complete one. Does loyalty have any impact on profits? Consumers repeatedly buying the same good are considered to be loyal. Most specialist think that the fact of repeated purchases is the very factor contributing to the company's success. The more the consumer deals with the company the more valuable he becomes from the financial viewpoint. Such consumers are regarded longterm consumers as they make more purchases, require less attention from the personnel, are less sensitive to price changes and contribute to engaging new consumers. The interrelationship between loyalty and consumer satisfaction, their role in the successful performance of the company are considered in the given paper.

Keywords: *loyalty, satisfaction, loyal consumer, value source, devotion scheme.*

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի ասպիրանտ

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Ներկայումս աշխարհը թևակոխել է զարգացման այնպիսի ժամանակաշրջան, երբ պետությունների կուտակած մեծ պետական պարտքերն արդեն իրականություն են, և շատ երկրներում հասնում են առավելագույն մակարդակների: Աշխարհի շատ պետություններում արձանագրվող ցածր տնտեսական աճը բարդացնում է պարտքի կայունության ապահովման խնդիրը, որը լրացուցիչ բեռ է դնում արդեն իսկ ճնշումների տակ գտնվող հարկաբյուջետային քաղաքականության վրա: Բնականաբար, Հայաստանը նույնպես այս զարգացումների շրջանակում է:

Կարևորելով վերոնշյալ զարգացումների դերը՝ հոդվածում անդրադարձ է կատարվում պետության պարտքային ֆինանսավորման հիմնական ութ հայեցակարգերին՝ հարկաբյուջետային պահպանողականություն, ավելցուկային հարկային բեռ, պետական ֆինանսների «ոսկե կանոն» և «կայուն ներդրման կանոն», պետական փոխառություններ փողի էմիսիայի փոխարեն, կարճաժամկետ կայունացում, կառուցվածքային պակասուրդի հայեցակարգ, չկայացած ֆինանսական շուկա, հասարակական ընտրություն և հարկաբյուջետային պատրանք: Այս կարևոր հայեցակարգերը հիմնավորում են պետական պարտքի՝ որպես պետական բյուջեի ֆինանսավորման առավել արդյունավետ աղբյուրի դերը: Դրանց վերլուծությունը թույլ է տալիս առաջարկել այն հիմնական կառուցվածքային մոտեցումները, որոնցով պետք է առաջնորդվեն երկրների կառավարությունները հարկաբյուջետային և պարտքային քաղաքականություններ մշակելիս՝ պետական պարտքը արդյունավետ կառավարելու նպատակով:

Հիմնաբառեր. *պետական պարտք, պարտքային ֆինանսավորում, առողջ ֆինանսներ, հարկաբյուջետային պահպանողականություն, կար-*

Ճաժամկետ կայունացում, հակապարբերաշրջանային քաղաքականություն, ավելցուկային հարկային բեռ, Լաֆերի կոր, ոսկե կանոն, կայուն ներդրման կանոն, կառուցվածքային պակասուրդ, հարկաբյուջետային պատրանք

Ներկայումս աշխարհը թևակոխել է զարգացման այնպիսի ժամանակաշրջան, երբ պետությունների կուտակած մեծ պետական պարտքերն արդեն իրականություն են: Այդ իրողությունն անհանգստացնող է, քանի որ շատ երկրներում պետական պարտքերը չափազանց մեծ չափերի են հասնում՝ ՀՆԱ-ի նկատմամբ գրանցելով առավելագույն մակարդակ[1]: Մյուս կողմից՝ արդի ժամանակաշրջանում երկրները թևակոխել են տնտեսական ցածր աճի փուլ, որը միջնաժամկետում և երկարաժամկետում դժվարություններ է ստեղծելու պարտքի նվազմանն ուղղված ջանքերի առումով: Այս հանգամանքն էապես ազդում է հարկաբյուջետային քաղաքականության վրա, քանի որ պետական բյուջեներն արդեն իսկ ճնշումների ազդեցության տակ են թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրներում:

Հայաստանը նույնպես զերծ չէ համաշխարհային այդ զարգացումներից: Ճիշտ է, Հայաստանի պետական պարտքը դեռևս լուրջ մտահոգություն չի առաջացնում և չի գերազանցում ՀՆԱ-ի նկատմամբ օրենքով սահմանված 50 տոկոս շեմը, սակայն իրադրությունն այնպիսին է, որ աստիճանաբար արտոնյալ պայմաններով փոխառությունների հոսքը նվազում է, և սկսում է գերակշռել արտաքին աշխարհից շուկայական (ոչ արտոնյալ[2]) պայմաններով փոխառությունների ներգրավումը: Այս պարագայում վերահիմաստավորվում է *պարտք ինստիտուտի* նկատմամբ մասնագիտական վերաբերմունքի ձևավորման անհրաժեշտությունը:

Հայաստանում պարտքի վերաբերյալ տնտեսագիտական ուսումնասիրությունները և այդ երևույթի ուսումնասիրությամբ զբաղվող տնտեսագետները բավական քիչ են, որը թույլ չի տալիս ամբողջական տնտեսագիտական վերաբերմունք և հետաքրքրություն առաջացնել տնտեսագետների և, ինչու չէ՝ նաև հասարակության շրջանում: Անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալու պարտքին առնչվող հայեցակարգային մի շարք կարևոր հարցերի, որոնք թույլ կտան պարտքի վերաբերյալ համակարգային մոտեցում ձևավորել:

Պարտքի տեսության զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ տնտեսագիտության հզոր տեսաբանները միակարծիք չեն պետության պարտքային ֆինանսավորման և, ընդհանուր առմամբ, պարտքի դերի վերաբերյալ իրենց մոտեցումներում: Նրանց մի մասն ուսումնասիրություններում անդրադառնում է տնտեսության վրա պետական պարտքի ազդեցության զուտ բացասական, որոշ մասը՝ դրական, իսկ մյուս մասը՝ և՛ դրական, և՛ բացասական կողմերին: Ելնելով հոդվածի նպատակից՝ պարտքի տեսության զարգացումը համառոտ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

---

[1]Տե՛ս Արժույթի միջազգային հիմնադրամի Fiscal Monitor տվյալների բազա (https://www.imf.org/external/pubs/ft/fm/2014/02/fmindex.htm):

[2] Պարտքի արտոնյալությունը գնահատվում է դրամաշնորհային տարրի (grant element) հաշվարկման միջոցով: Ներգրավվող վարկերը համարվում են արտոնյալ, եթե դրանց դրամաշնորհային տարրը նվազագույնը 35% է (ավելի մանրամասն տե՛ս https://www.imf.org/external/np/pdr/conc/):

1. **Վաղդասական:** Սմիթը (1776)[3], Ռիկարդոն (1821)[4], Հյումը (1955)[5] համոզված էին, որ պարտքը վատ երևույթ է, քանի որ, հզորացնելով պետությունը, ոչնչացնում է կապիտալը:

2. **Ուշդասական և նորդասական:** Մալթուսը և Միլն այն կարծիքին էին, որ պարտքը միշտ չէ, որ վատ երևույթ է: Իսկ ավելի ուշ Ադամսը, Բաստեբլը, Լերուա-Բոլյեն հանգեցին այն եզրակացության, որ պարտքը կարող է օգուտ բերել հասարակությանը, եթե պետության կողմից ներգրավված միջոցներն ուղղվեն ներդրումներին: Իսկ նորդասական Բարոն ցույց տվեց, որ տնտեսությունն անտարբեր է, թե պետությունն ինչպես է ֆինանսավորում իր ծախսերը [6]:

3. **Քեյնսյան (կայունացման) տեսություն**: Քեյնսը, Լերները, Սամուելսոնը, Գելբրեյթը, Հարիսը առաջ էին քաշում պետական բյուջեի պակասուրդի կայունացման տեսությունը, ըստ որի՝ պետությունը հարկաբյուջետային քաղաքականության միջոցով պետք է ակտիվ միջամտի տնտեսական գործընթացներին և կարգավորի տնտեսությունը, իսկ պարտքը երկարաժամկետում պետական ֆինանսներին և տնտեսությանը վնաս չի կարող հասցնել[7]:

4. **Նոր տեսություններ:** Բյուքենենն իր դիտարկումներով մոտեցավ ուշդասականներին, իսկ Ֆրիդմենը և մոնետարիստներն ընդհանրապես մերժում էին հարկաբյուջետային քաղաքականության՝ իբրև տնտեսության կայունացման գործիքի դերը[8]:

Ընդհանուր առմամբ, պետական պարտքի վերաբերյալ դասականների տեսակետները խմբավորվում են «առողջ ֆինանսների»[9], իսկ քեյնսականների հայացքները՝ «ֆունկցիոնալ ֆինանսների»[10] հայեցակարգերում:

Իհարկե, վստահաբար հնարավոր չէ պնդել, թե այս կամ այն տեսակետը, անկասկած, առավելություն ունի մյուսի նկատմամբ և ամբողջությամբ արտացոլում է իրական զարգացումները: Այստեղ մի շատ կարևոր հարց է առաջանում. «Եթե պետական պարտքը վատ կամ բացասական երևույթ է, այդ դեպքում ի՞նչ սկզբունքով են առաջնորդվում երկրների կառավարությունները, երբ ներգրավում են հսկայածավալ պարտքեր»: Չէ՞ որ պետական պարտքը թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրներում զարգացման բոլոր փուլերում եղել է պետական բյուջեի ֆինանսավորման կարևոր և առանցքային աղբյուրներից մեկը: Փաստորեն, իրականում կան պատճառներ, որոնք առավելություն են տալիս պետական պարտքին հարկերի և փողի էմիսիայի նկատմամբ:

---

[3] Տե՛ս **Smith A.,** An Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations, 1776, Book Five:
[4] Տե՛ս **Ricardo D.,** On the Principles of Political Economy and Taxation, 1821 Library of Economics and Liberty:
[5] Տե՛ս **Hume D.,** Writings on Economics, Edited and introduced by E. Rotuein, London,1955:
[6] Տե՛ս **Malthus T.,** An Essay on the Principle of Population, John Murray, 1826:
Barro R., The Ricardian Approach to Budget Deficits, Journal of Economic Perspectives, 1989:
[7] Տե՛ս **Keynes J.,** The General Theory of Employment, Interest and Money, Macmillan Cambridge University Press, 1936:
Lerner A., Interest Theory: Supply and demand for loans or supply and demand for cash? Review of Economic Studies, 1944:
[8] Տե՛ս **Buchanan J.,** Public Principles of Public Debt. A Defence and Restatement, Richard D. Irwin, 1958:
[9] Տե՛ս **Bastable Ch.,** Public Finance. Macmillan and Co., Limited. 1917:
[10] Տե՛ս **Lerner A.,** նշվ. աշխ.:

Վերոնշյալ հարցին պատասխանելու համար պետական պարտքի տեսությունից տեղափոխվենք իրական աշխարհ, որտեղ տնտեսական քաղաքականություն իրականացնողները ոչ թե տեսաբաններ են, այլ կառավարությունը՝ նախարարություններով և համապատասխան մասնագետներով: Կառավարությունը տնտեսական քաղաքականության իրականացման ընթացքում կարող է բախվել ռեսուրսների անբավարարության խնդրին, որը հաղթահարելու համար պետք է կատարի որոշակի քայլեր: Դրանցից առանձնացնենք հետևյալները. կրճատել ծախսերը, բարձրացնել հարկերի դրույքաչափերը կամ ներմուծել նոր հարկեր, օտարել պետական սեփականություն հանդիսացող օբյեկտները, իրականացնել փողի էմիսիա (արտարկ), ներգրավել պարտք ներքին և արտաքին շուկաներից:

Վերոնշյալ հինգ հնարավոր քայլերի համակարգային դիտարկման տեսանկյունից կարևորում ենք պարտքի և պարտքային ֆինանսավորման առավելություններն ընդգծող հետևյալ ութ հիմնական գործնական տնտեսական հայեցակարգերի վերլուծությունը, որոնք դրսևորվում են տնտեսությունների զարգացման ընթացքում.

1. հարկաբյուջետային պահպանողականություն,
2. ավելցուկային հարկային բեռ,
3. պետական ֆինանսների «ոսկե կանոն» և «կայուն ներդրման կանոն»,
4. պետական փոխառություններ փողի էմիսիայի փոխարեն,
5. կարճաժամկետ կայունացում,
6. կառուցվածքային պակասուրդի հայեցակարգ,
7. չկայացած ֆինանսական շուկա,
8. հասարակական ընտրություն և հարկաբյուջետային պատրանք:

Հարկաբյուջետային պահպանողականություն: Առաջին հայեցակարգը ենթադրում է «առողջ ֆինանսների» առաջին երկու կանոնների (խաղաղ ժամանակ հավասարակշռել բյուջեն և, ավելին՝ ունենալ ավելցուկային բյուջե, ավելցուկային միջոցները կուտակել հատուկ ֆոնդերում) կիրառություն կամ, ինչպես Ադամ Սմիթն էր ասում՝ «ոչինչ բացի հարկերից»: Սակայն պետությունների համար երբևէ ընդունելի չեն եղել դասական տեսության այդպիսի պահպանողական մոտեցումները: Նույնիսկ Սմիթի ժամանակաշրջանում Մեծ Բրիտանիան, որը կապիտալիստական աշխարհի կենտրոնն էր, երբևէ այդքան պահպանողական քաղաքականություն չէր վարում: Իսկ եթե դրան ավելացնենք նաև ԱՄՆ-ի և Եվրոպայի մյուս հարուստ երկրների փորձը, ապա այդ շրջանում կանոնական էր համարվում հարկաբյուջետային պահպանողականության վերոնշյալ երկու կանոնների անտեսումը, քանի որ Առաջին համաշխարհային պատերազմի և հետագայում արդեն Մեծ ճգնաժամի տարիներին նշված երկրները բազմիցս ունեցան և՛ ավելցուկներ, և՛ պակասուրդներ: 21-րդ դարում նույնպես դժվար է հանդիպել այնպիսի երկրի, որը խստորեն դրսևորում է հարկաբյուջետային պահպանողականություն: Իսկ ո՞րն է դրա պատճառը:

Իրականում «առողջ ֆինանսները» դեռևս առողջ տնտեսություն չեն նշանակում: Բյուջեի հավասարակշռությունը կառավարություններին թույլ չի տալիս իրականացնել հակապարբերաշրջանային քաղաքականություն: Տնտեսության անկման շրջանում հարկային մուտքերը կրճատվում են, իսկ ծախսերը, հատկապես սոցիալական բնույթի՝ աճում: Այս պայմաններում,

բյուջեի հավասարակշռության կանոնի համաձայն, պետությունը պետք է բարձրացնի հարկային դրույքաչափերը և նվազեցնի ծախսերը, որն ավելի կխորացնի տնտեսական անկումը: Իսկ աճի փուլում հակառակ գործողությունները կարող են հանգեցնել տնտեսության «գերտաքացման»: Այս խնդիրները հաղթահարելիս ծագում է մեկ այլ՝ կառուցվածքային պակասուրդի հայեցակարգը:

Բյուջեի հավասարակշռման մյուս ծանրակշիռ թերությունն այն է, որ այդ մոտեցումը սահմանափակում է կառավարության երկարաժամկետ ներդրումները: Բյուջեի հավասարակշռությունը ենթադրում է, որ կապիտալ ծախսերը պետք է ֆինանսավորվեն հարկերի հաշվին, որն էլ թույլ չի տալիս ներդրումային նախագծերի վրա կատարվող ծախսերը բաշխել ներկա և ապագա սերունդների հարկատուների միջև: Չէ՞ որ այդ նախագծի արդյունքներից օգտվելու են ապագա սերունդները: Այս ամենի հետևանքով կառավարությունները կարող են կորցնել իրենց հետաքրքրությունը պետական ներդրումների հանդեպ: Հաջորդ բացասական հետևանքը կլինի այն, որ հարկաբյուջետային քաղաքականությունը օգուտ կբերի միայն հարուստ խավին՝ սոցիալական լարվածություն ստեղծելով բնակչության մյուս խավերի շրջանում և ավելցուկային հարկային բեռ դնելով վերջիններիս ուսերին:

Ի տարբերություն առաջինի, երկրորդ կանոնը բացառապես բացասաբար չի ընդունվում կառավարությունների կողմից, քանի որ, ինչպես ցույց է տալիս երկրների փորձը, հատուկ ֆոնդերը միշտ էլ կիրառվել են հատկապես այն երկրներում, որոնք հարուստ են բնական ռեսուրսներով: Հատուկ ֆոնդերի ստեղծման առավելությունն այն է, որ դա օրենքի ուժով ստիպում է կառավարություններին գումարներ կուտակել՝ արտակարգ իրավիճակներում օգտագործելու համար: Սակայն այդ ֆոնդերն ունեն նաև էական թերություններ. առաջին՝ դրանց պահպանման ծախսերը բավական մեծ են, երկրորդ՝ միշտ չէ, որ դրանք այնքան մեծ են լինում, որ հնարավորություն տան ծածկելու կուտակված պարտքերը, երրորդ՝ այդ ֆոնդերի միջոցները կարող են ոչ նպատակային օգտագործվել, չորրորդ՝ պետական բյուջեի ավելցուկները կուտակվում են այդ ֆոնդերում, որին մասնավոր հատվածի արձագանքը բացասական է, քանի որ մի կողմից՝ դա տեղի է ունենում մասնավոր հատվածի վրա լրացուցիչ բեռ դնելու հաշվին, մյուս կողմից՝ բնակչությունը չի հասկանում, թե ինչու հնարավոր չէ այդ ավելցուկների միջոցով նվազեցնել հարկերը կամ ավելացնել ծախսերը:

Ավելցուկային հարկային բեռ: Այս հայեցակարգը ենթադրում է «առողջ ֆինանսների» երրորդ և հինգերորդ կանոնների (արտակարգ ծախսերը ֆինանսավորել փոխառությունների հաշվին, պատերազմները՝ փողի էմիսիայի հաշվին) կիրառություն: Պատերազմական շրջանում հարկաբյուջետային ճնշումը բավական մեծ է լինում, այստեղ օգնության կարող են գալ փոխառությունները: Երկրորդ համաշխարհային պատերազմի, իսկ հետագայում սառը պատերազմի տարիներին ներգրավված փոխառությունների հետևանքով աշխարհի առաջատար երկրներում կուտակվեցին հսկայական պարտքեր: Բայց առանց այդ փոխառությունների, պատերազմում հաղթած երկրները դժվար թե կարողանային լուրջ հաջողությունների հասնել, այսինքն՝ փոխառությունները մեծ ազդեցություն ունեցան ռազմական գործողությունների ելքի վրա: Փոխառությունների այս դերը հիմնավորվում է այն տրամաբանությամբ, որով այդ տարիներին առաջնորդվեցին բազմաթիվ երկրներ: Այսպես՝

«Ինչո՞ւ պատերազմի հսկայական հարկային բեռը գցել ներկա սերունդների ուսերին»: Պատերազմում հաղթանակի օգուտները հիմնականում քաղում են ապագա սերունդները, հետևաբար՝ խելամիտ կլինի ներկայիս պատերազմի բեռը կիսել ապագա սերունդների հետ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին երկրներն օգտվում էին նաև հինգերորդ կանոնից՝ միաժամանակ իրականացնելով և՛ փողի էմիսիա, և՛ «թաքնված փողի էմիսիա»: Կենտրոնական բանկերը, առևտրային բանկերից գնելով պետական արժեթղթեր, անուղղակի ճանապարհով փողի էմիսիա էին կատարում ռազմական ծախսերը հոգալու նպատակով:

Հետագայում երրորդ կանոնը զարգացրին նորդասական տնտեսագետները: Նրանք մատնանշում էին հարկերին առնչվող այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսիք են ավելցուկային հարկային բեռը և հարկերի խեղաթյուրող էֆեկտը: Հարկերի բարձր դրույքաչափերի պարագայում ավելանում են հարկերից խուսափելու դեպքերը, նվազում է հարկերի հավաքագրման աստիճանը, պակասում են աշխատելու խթանները, մասնավոր հատվածում նվազում է ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, ավելանում են վարչարարությանն առնչվող ծախսերը և այլն: Այստեղ լուծումը խեղաթյուրող էֆեկտը նվազագույնի հասցնելն է: Նորդասականներ Բարոն, Լուկասը, Ստոկին առաջարկում են հարկային դրույքաչափերի համահարթեցման գաղափարը, որի բովանդակությունը հետևյալն է՝ ժամանակի մեջ դրույքաչափերը պետք է լինեն հարաբերականորեն կայուն, քանի որ խեղաթյուրող էֆեկտը աճում է ավելի արագ, քան դրույքաչափերը: Սակայն կարևոր է նաև տնտեսությունում տեղի ունեցող ցնցումների բնույթի վերլուծությունը: Եթե կատարվում են ժամանակավոր ցնցումներ՝ պայմանավորված ավտոմատ կայունարարների փոփոխությամբ, բնական ու տեխնոլոգիական աղետներով և այլ արտակարգ իրավիճակներով, ապա պետական բյուջեի պակասուրդն անհրաժեշտ է ֆինանսավորել փոխառությունների ներգրավման ճանապարհով: Եթե այս դեպքում պետությունը գնա հարկերի դրույքաչափերի ժամանակավոր բարձրացման, հետագայում՝ իջեցման ճանապարհով, ապա կխեղաթյուրի տնտեսական գործունեությունը, քանի որ մի կողմից՝ տնտեսավարողները կարող են դժվար հարմարվել փոփոխվող իրավիճակներին, մյուս կողմից՝ հարկային քաղաքականության որոշումները, պայմանավորված մեծ ներքին լագով, կարող են ոչ ճիշտ արձագանքել փոփոխվող իրադրությանը:

Իսկ եթե տեղի ունենան մշտական և երկարաժամկետ ցնցումներ, ապա հարկ կլինի բարձրացնելու հարկերի դրույքաչափերը:

Մեկ այլ լուծում է մատնացույց անում առաջարկի տնտեսագիտության ականավոր ներկայացուցիչ Արթուր Լաֆերը՝ ներկայացնելով իր կորի գաղափարը: Լաֆերի կորը ցույց է տալիս հարկային դրույքաչափերի և պետական բյուջեի հարկային մուտքերի միջև եղած կապ: Դրա տրամաբանությունն այն է, որ հարկերն անհիմն ձևով չպետք է բարձրացնել, և գոյություն ունի հարկային դրույքաչափերի օպտիմալ սահման, որը գերազանցելու պարագայում այլևս հնարավոր չի լինի ապահովել հարկերի առավելագույն մուտք պետական բյուջե, քանի որ այդ դեպքում խեղաթյուրվում է տնտեսական գործունեությունը:

Պետական ֆինանսների «ոսկե կանոն» և «կայուն ներդրման կանոն»: Պետության պարտքային ֆինանսավորման օգտին ներկայացվող հաջորդ փաստարկի հիմքում դասական երկու գաղափարներն են. պարտքի բեռը

փոխանցվում է ապագա սերունդներին, և հարկերը վճարում են նրանք, ում օգուտ են բերում պետության ծախսերը: Այլ խոսքով՝ ապագա սերունդները պետք է վճարեն ներկայի ծախսերի այն մասը, որն ապագայում օգուտ է բերելու հենց իրենց: Ըստ էության, խոսքը կապիտալ ծախսերի մասին է: Տնտեսագետները դեռևս անցած դարի 30-ական թվականներին առաջարկեցին պետական ծախսերը դասակարգել ընթացիկ և կապիտալ ծախսերի: Ընդ որում, նրանք ընդգծում էին, որ ընթացիկ ծախսերն անհրաժեշտ է ծածկել հարկերի, իսկ կապիտալ ծախսերը փոխառությունների հաշվին: Այս սկզբունքը Ռիչարդ Մասգրեյվը բնութագրում էր՝ «վճարիր և օգտվիր»[11], որը բխում էր հարկերի գանձման այն դրույթից, ըստ որի «վճարում է նա, ում օգտակար է», և սերունդների միջև ծախսերը բաշխելու համար անհրաժեշտ է պարտքային ֆինանսավորում:

Վերոնշյալ սկզբունքների վրա է հիմնված «ոսկե կանոնը»՝ ներգրավել փոխառություններ ներդրում կատարելու նպատակով: Այս կանոնը ենթադրում է երկու՝ ընթացիկ և կապիտալ բյուջեների գոյություն: Ընդ որում, ընթացիկ բյուջեն պետք է լինի հավասարակշռված, լավագույն դեպքում՝ ավելցուկային, որը թույլ է տալիս պետությանը ներգրավված փոխառու միջոցներն ուղղել արտադրողական ներդրումներին: Այս մոտեցումը նպաստում է նաև բյուջետային ծախսերի արդյունավետության և թափանցիկության մեծացմանը:

Ըստ «կայուն ներդրման կանոնի»՝ պարտքի տնտեսական բեռը, այսինքն՝ ՀՆԱ-ի նկատմամբ պետական պարտքի հարաբերակցությունը պետք է պահպանել որոշակի կայուն և խելամիտ սահմաններում[12], որը չի խաթարի հարկաբյուջետային կայունությունը և չի վտանգի երկարաժամկետ տնտեսական աճը:

Պետական փոխառություններ փողի էմիսիայի փոխարեն: Վերևում նշվեց փողի էմիսիայի և դրա թաքնված տարբերակի մասին: Իհարկե, փողի էմիսիան ծախսերը ֆինանսավորելու ամենահեշտ, բայց ամենաքննադատվող ճանապարհն է: Փողի էմիսիայի հետևանքով առաջանում է սենյորաժ, որը թույլ է տալիս լրացուցիչ եկամուտ ստանալ՝ առանց մասնավոր հատվածին անհանգստացնելու: Քեյնսը փողի էմիսիան տրամաբանական և գործնական քայլ էր համարում ոչ թե որպես հարկերի այլընտրանք, այլ գործիք, որը թույլ է տալիս տոկոսադրույքներն իջեցնել մինչև լրիվ զբաղվածությանը համապատասխանող սահման:

Սակայն, ըստ մեկ այլ՝ փողի քանակական տեսության, փողի քանակի ավելացումը հանգեցնում է ինֆլյացիայի, իսկ երկարաժամկետում այդ ազդեցությունը դրսևորվում է 1:1 հարաբերակցությամբ: Ինֆլյացիան նվազեցնում է ինչպես պետության ներգրավված փոխառությունների գնողունակությունը, այնպես էլ պետական արժեթղթերի և փոխառությունների սեփականատերերի իրական եկամտաբերությունը՝ վնասելով նաև ողջ հասարակությանը: Իսկ պետական պարտքը ծախսերի ֆինանսավորման ոչ ինֆլյացիոն ուղի է:

Կարճաժամկետ կայունացում: Կայունացման համատեքստում հարկաբյուջետային քաղաքականության պատմությունը բաժանվում է երկու մասի՝ մինչ Քեյնսը և Քեյնսից հետո: Տնտեսագիտության մեջ քեյնսյան հեղափոխությունը նոր երանգ հաղորդեց հարկաբյուջետային քաղաքականության կայու-

---

[11] Տե՛ս **Musgrave R.,** The Theory of Public Finance. A Study in Public Economy, McGrow Hill Book Company, 1959, էջ 36-37:

[12] Տե՛ս **Мэнкью Н., Тейлор М.,** Макроэкономика, 2-е издание. М., 2013, էջ 551:

նացման գործառույթին: Քեյնսյան մոտեցումները, ըստ էության, թույլ տվեցին ազատվել «առողջ ֆինանսների» այնպիսի նեղ հայեցակարգից, ինչպիսին բյուջեի հավասարակշռությունն է: Առաջ քաշվեց նոր՝ ամբողջ տնտեսության հավասարակշռման հայեցակարգը: Քեյնսականները համարում էին, որ բյուջեի հավասարակշռության կանոնը առասպել է, քանի որ առանձին անհատին բնորոշ այդպիսի վարքագիծը սխալ է վերագրել պետությանը: Պատճառն այն է, որ դա թույլ չի տալիս պետությանը ճիշտ արձագանքել տնտեսական տատանումներին, այսինքն՝ վարել հակապարբերաշրջանային քաղաքականություն, որի կարիքն ունեին կառավարությունները հենց Մեծ ճգնաժամի, Երկրորդ համաշխարհային պատերազմի և հետպատերազմական ժամանակաշրջաններում: Օգտագործելով քեյնսյան մոտեցումները՝ նրանք կարողացան կայունացնել իրենց տնտեսությունները:

Բյուջեի կայունացման գործառույթի իրականացման տեսանկյունից հատկապես մեծ դերակատարում ունի պարտքային ֆինանսավորումը: Պարտքի մեջ ապագա սերունդների համար սպառնալիքներ պետք չէ տեսնել, քանի որ դա այնքան օգուտ է բերելու, որքան ապագա հարկերի հնարավոր բարձրացումն է:

Կառուցվածքային պակասուրդի հայեցակարգ: Նախորդի հետ անմիջական կապ ունի կառուցվածքային պակասուրդի հայեցակարգը, որը համեմատաբար նոր մոտեցում է տնտեսագիտության մեջ: Մինչ այդ հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ որոշումներ կայացնելիս տնտեսագետները հիմնականում հենվում էին բյուջեի բացարձակ ցուցանիշների վերլուծության վրա, և պարտքի ու պակասուրդի ֆիզիկական մեծ ծավալները հաճախ էին մտահոգում նրանց: Սակայն ճիշտ չէ պնդել, որ այդ ցուցանիշների մեծ ծավալները բացասական երևույթ են նկարագրում:

Ըստ ամերիկացի հեղինակավոր տնտեսագետ Բոմոլի՝ միևնույն հարկաբյուջետային ծրագիրը, կախված տնտեսության վիճակից, կարող է հանգեցնել ինչպես պակասուրդի, այնպես էլ հավելուրդի առաջացման: Հեղինակի կարծիքով՝ այս փաստի թերի ըմբռնումն է, որ պատճառ է դառնում այնպիսի մտայնության ձևավորման, թե, իբր, ավելի մեծ պակասուրդը միշտ էլ նշանակում է ավելի ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականություն: Սակայն միշտ չէ, որ այդ պնդումը ճիշտ է[13]: Վերոնշյալը հիմնավորելու համար օգնության է գալիս կառուցվածքային պակասուրդի հայեցակարգը: Այս առումով, ֆրանսիացի տնտեսագետ Բլանշարն առաջարկում է օգտագործել պարբերաշրջանայնորեն ճշգրտված պակասուրդի հայեցակարգը[14]:

Ընդհանուր առմամբ, բյուջեի հաշվեկշիռը՝ OB (պակասուրդ/հավելուրդ) կարելի է ներկայացնել որպես երկու հիմնական բաղադրիչների հանրագումար՝ պարբերաշրջանային հաշվեկշիռ (CB) և պարբերաշրջանայնորեն ճշգրտված հաշվեկշիռ (CAB).

$$OB = CB + CAB$$

Պարբերաշրջանային հաշվեկշիռն ընդգրկում է եկամուտների և ծախսերի այնպիսի տեսակներ, որոնք փոփոխվում են տնտեսական պարբերաշրջանին համընթաց՝ անկախ հարկաբյուջետային քաղաքականությունից (օրինակ՝ ավտոմատ կայունարարները): Պարբերաշրջանայնորեն ճշգրտված

[13] Տե՛ս **Бомол У., Блайндер А.,** Экономикс. Принципы и политика. М., 2004, էջ 738:
[14] Տե՛ս **Бланшар О.,** Макроэкономика, М., 2010, էջ 594:

հաշվեկշիռը համապատասխան եկամուտների և ծախսերի տարբերությունն է: Իսկ վերջիններս եկամուտների և ծախսերի այն մեծություններն են, որոնք կարող էին ստացվել և ծախսվել, եթե տնտեսությունը գտնվեր լրիվ զբաղվածության իրավիճակում: Այս ցուցանիշները հաշվարկվում են՝ փաստացի եկամուտներն ու ծախսերը ճշգրտելով պոտենցիալ և փաստացի ՀՆԱ-ների՝ պոտենցիալ ՀՆԱ-ների նկատմամբ եկամուտների ու ծախսերի ճկունության գործակիցներով ճշգրտված հարաբերակցությամբ: Ճկունության գործակիցները գնահատվում են ռեգրեսիոն վերլուծության միջոցով, իսկ պոտենցիալ ՀՆԱ-ները՝ տնտեսաչափական ֆիլտրերի միջոցով (Hodrick-Prescott, Band-Pass, Kalman): Ընդ որում, գնահատումները կատարվում են և՛ ագրեգացված եղանակով՝ հաշվարկներում ընդգրկելով միայն ընդհանուր եկամուտներն ու ծախսերը, և՛ ապաագրեգացված եղանակով՝ ներառելով եկամուտների և ծախսերի առանձին տարատեսակներ[15]:

Կառուցվածքային հաշվեկշիռը, ըստ էության, պարբերաշրջանայնորեն ճշգրտված հաշվեկշռի՝ հարկաբյուջետային վիճակը գնահատող ավելի ընդգրկուն տարատեսակ է, քանի որ վերջինիս չափը գնահատելու համար պարբերաշրջանայնորեն ճշգրտված հաշվեկշիռը հետագա ճշգրտման է ենթարկվում տնտեսությունում ակտիվների և առանձին ապրանքատեսակների գների կտրուկ փոփոխություններին համընթաց:

Կառուցվածքային պակասուրդի գնահատումը թույլ է տալիս ավելի ճիշտ վերլուծել հարկաբյուջետային քաղաքականության՝ տնտեսական տատանումներից անկախ փոփոխությունները: Այսինքն՝ դա արտացոլում է դիսկրետ հարկաբյուջետային քաղաքականությունը: Այս ցուցանիշի գնահատումը կարևոր է նաև պետական պարտքի տեսանկյունից: Այստեղ գլխավոր եզրահանգումը հետևյալն է. «Բյուջեի պակասուրդները, որոնք առաջանում են տնտեսական անկման շրջանում՝ դրա բացասական հետևանքները չեզոքացնելու կարճաժամկետ հատվածում, ամբողջական պահանջարկի միջոցով տնտեսության աշխուժացումը խթանելու նպատակով, չեն կարող հիմնավորված ձևով գնահատվել որպես պարտքային բեռ գալիք սերունդների համար»[16]: Իսկ այն պարտքերը, որոնք կուտակվում են կառուցվածքային պակասուրդների միջոցով, պետք է մտահոգեն կառավարություններին, և այստեղ է հենց կարևորվում պարտքի խելամիտ ու արդյունավետ քաղաքականության դերը: Պարտքի ներգրավումը թույլ է տալիս հարթել տնտեսական տատանումների հետևանքով առաջացած հարկաբյուջետային քաղաքականության կտրուկ փոփոխությունները, իսկ եթե այս նպատակով օգտագործվեն հարկերը, ապա տնտեսության վրա իր բացասական ազդեցությունը կթողնի հարկերի խեղաթյուրող էֆեկտը:

Չկայացած ֆինանսական շուկա: Զարգացած և կայացած ֆինանսական շուկան ցանկացած երկրի տնտեսական կայունության երաշխիքներից մեկն է: Սակայն այդպիսի շուկա ունենալը բավական մեծ ջանքեր ու ժամանակ է պահանջում: Ներկայումս աշխարհում շատ են երկրները, որտեղ ֆինանսական շուկաները կայացած չեն: Եվ այս դեպքում կարևորվում է պետական

---

[15] Տե՛ս When and How to Adjust Beyond the Business Cycle? A Guide to Structural Fiscal Balances; by Fabian Bornhorst, Gabriela Dobrescu, Annalisa Fedelino, Jan Gottschalk, and Taisuke Nakata; IMF Technical Notes and Manuals TNM/11/02, April 11, 2011:

[16] Տե՛ս **Ա. Մարգարյան,** Պետական պարտքի ներգրավման երկու կարևոր սկզբունքների մասին, «Բանբեր ՀՊՏՀ », 2008, N1, էջ 78:

արժեթղթերի դերը: Միայն պետական արժեթղթերն են ներդրողներին գումարների վերադարձման պետական երաշխիքով օժտված, իսկ երաշխիքն այն է, որ պետությունը կարող է բարձրացնել հարկերը և իրականացնել փողի էմիսիա՝ իր պարտավորությունների կատարման նպատակով: Դա է պատճառը, որ պետական արժեթղթերը համարվում են ոչ ռիսկային եկամտաբերությամբ ակտիվներ: Դրանք հիմք են այլ գործիքների գնանշումների, ինչպես նաև ֆինանսական շուկայում ռեսուրսների արդյունավետ բաշխման համար:

Պետական արժեթղթերի միջոցով ֆինանսական շուկաների կայացումը ձեռնտու է բոլոր մասնակիցներին: Առաջին հերթին դա անհրաժեշտ է հենց պետությանը, քանի որ զարգացած շուկայի առկայության դեպքում պետությունը կարող է առանց մեծ դժվարությունների տեղաբաշխել պարտատոմսեր և ներգրավել պետական ծախսերի ֆինանսավորման համար անհրաժեշտ ռեսուրսներ: Երկրորդ՝ դա անհրաժեշտ է Կենտրոնական բանկին, քանի որ այդ դեպքում վերջինս կարող է առավել արդյունավետ կերպով իրականացնել իր դրամավարկային քաղաքականությունը՝ ավելի հեշտ վերահսկելով տնտեսության մեջ փողի քանակությունը: Եվ երրորդ՝ դա անհրաժեշտ է ֆինանսական շուկայում այնպիսի ներդրողների, ինչպիսին են առևտրային բանկերը, կենսաթոշակային ֆոնդերը, ապահովագրական ընկերությունները և այլ «խաղացողներ»:

Հասարակական ընտրություն և հարկաբյուջետային պատրանք: Վերոնշյալ հայեցակարգերը մեծ դերակատարում ունեն պարտքային քաղաքականության արդյունավետ ուղղությունների մշակման և իրականացման գործում, սակայն դրանց բնորոշ է նաև մի թերություն: Այդ հայեցակարգերը հաշվի չեն առնում այն հանգամանքը, որ տնտեսությունը իրականում «ղեկավարում են» ոչ թե տնտեսագետները, այլ քաղաքական գործիչները, ուստի կարևորվում է հենց քաղաքական համակարգում վարքագծի փոփոխությունների պատճառների ուսումնասիրությունը: Այս բացը գալիս է լրացնելու հասարակական ընտրության տեսությունը: Հարկաբյուջետային քաղաքականության հարցերի ուսումնասիրությամբ աչքի են ընկնում այս տեսության ներկայացուցիչներից հատկապես Ջեյմս Բյուքենենը և Գորդոն Տուլոկը: Նրանք բյուջետային գործընթացը վերլուծում են որպես մի շուկա, որտեղ ընտրողների ձայների համար միմյանց հետ մրցում են քաղաքական գործիչները՝ առաջարկելով պետական ծախսերի ֆինանսավորման տարբեր ծրագրեր:

Ընտրողներն այս կամ այն ծրագրին նախապատվություն տալիս որպես հիմք են ընդունում սեփական նկատառումները՝ գնահատելով հարկերի և պետական պարտքի ազդեցությունը սեփական դրամապանակի վրա: Ընտրողները նախապատվությունը տալիս են պետական պարտքին, քանի որ հիմնականում ներկա իրավիճակի մասին են մտածում: Նրանք շարժվում են հետևյալ տրամաբանությամբ. հարկերը պարտավորեցնում են վճարել, սակայն պետությանը փոխառություն տրամադրելը պարտադիր չէ: Այս երևույթի վերաբերյալ Բյուքենենի տեսակետը հետևյալն է. «Եթե անհատը պետական ծախսերից իր համար որոշակի ընթացիկ օգուտ է ակնկալում, ապա նա միշտ նախընտրում է պարտքային ֆինանսավորումը: Ուստի ընտրական գործընթացներից, որոնք մարմնավորվում են դեմոկրատական ինստիտուտնե-

րում, չի կարելի սպասել ճիշտ որոշումներ, ինչպիսին էլ որ լինեն ճշմարտության չափանիշները»[17]:

Ճիշտ որոշումներ չեն ընդունվում, որովհետև միջին ընտրողը երևույթի միայն մի կողմի՝ օգուտների մասին է մտածում, սակայն հնարավոր են նաև կորուստներ, այսինքն՝ նա գտնվում է «հարկաբյուջետային պատրանքի» ներքո: Միջին ընտրողը չի պատկերացնում, որ պարտքերը հետաձգված հարկեր են: Եթե նույնիսկ պատկերացնում է, ապա չի կարող ճշգրիտ հաշվարկել ապագա հարկային բեռը և հիմնականում թերագնահատում է՝ անկատար տեղեկատվության և հարկային համակարգը սխալ պատկերացնելու պատճառով:

Հարկաբյուջետային պատրանքն է այն հիմնական պատճառը, որ հաճախ քաղաքական գործիչները, օգտվելով այդ իրավիճակից, բյուջեն հաստատում են համեմատաբար մեծ պակասուրդով և պարտքով:

Պետության պարտքային ֆինանսավորման վերոնշյալ հայեցակարգերի վերլուծությունը թույլ է տալիս միասնական համակարգային մոտեցում ձևավորել պետական պարտքի և պարտքային ֆինանսավորման նկատմամբ: Այդ հայեցակարգերը հնարավորություն են տալիս առանձնացնելու հետևյալ հիմնական կառուցվածքային մոտեցումները, որոնք պետք է հաշվի առնվեն ցանկացած պետության հարկաբյուջետային և պարտքային քաղաքականության մշակման և իրականացման գործում.

1. Անհրաժեշտ է առաջնորդվել ոչ թե պետական բյուջեն, այլ տնտեսությունը հավասարակշռելու սկզբունքով: Պլանավորվող պետական բյուջեն պետք է հնարավորինս արտացոլի տնտեսական զարգացումներին համահունչ քաղաքականության ուղղությունները, իսկ բյուջեի եկամուտներն ու ծախսերը լինեն առավել հասցեական: Պետական պարտքի ներգրավումը պետք է հնարավորություն ընձեռի կառավարությանը՝ վարելու տնտեսական տատանումներին համահունչ արձագանքման քաղաքականություն:

2. Տնտեսական վերելքի փուլում հարկ է ձևավորել հատուկ ֆոնդեր, որոնք հնարավորություն կտան կառավարությանը՝ ստեղծելու «բուֆերներ»՝ հետագա հնարավոր անկումներին ճիշտ արձագանքելու և տնտեսությունը խթանելու համար:

3. Տնտեսության երկարաժամկետ ցնցումներին արձագանքելու տեսանկյունից հարկերի դրույքաչափերի բարձրացման և նոր հարկերի ներմուծման նկատմամբ ընդգծված առավելություն ունի պետական պարտքի ներգրավումը, որը հնարավորություն է տալիս խուսափելու հարկաբյուջետային քաղաքականության հետևանք հանդիսացող երկու երևույթներից՝ ավելցուկային հարկային բեռից և հարկերի խեղաթյուրող էֆեկտից: Այստեղ կարևորվում է այն, որ հարկային քաղաքականության և հարկային օրենսդրության զարգացման ու կատարելագործման նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել վերոնշյալ երկու էֆեկտների հնարավոր ազդեցությունները տնտեսության վրա, մյուս կողմից՝ քաղաքականությունը մշակել և հարկերի դրույքաչափերը որոշել ու նոր հարկեր ներմուծել՝ ելնելով ինչպես առանձին հարկատեսակների, այնպես էլ առանձին ճյուղերի առանձնահատկությունների, հարկատեսակների նկատմամբ հարկման բազաների առաձգականության և այդ

[17] Տե՛ս **Buchanan J.,** Public Principles of Public Debt. A Defence and Restatemen, Richard D. Irwin, 1958, էջ 157:

հարկատեսակներին տնտեսավարող սուբյեկտների արձագանքման վերլուծություններից ու համապատասխան հիմնավորումներից:

4. Պետք է առաջնորդվել պետության համար կենսական նշանակություն ունեցող երկու կարևոր կանոններով՝ «ոսկե կանոն» և «կայուն ներդրման կանոն»: Այսինքն՝ պետական պարտքի ներգրավումը չպետք է լինի ինքնանպատակ. դա պետք է բխի տնտեսությունում ներդրումներ կամ, այլ կերպ ասած՝ կապիտալ ծախսեր կատարելու անհրաժեշտությունից, որոնք երկարաժամկետ տնտեսական աճի կարևոր գործոն են: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ հնարավոր չէ անընդհատ պարտք ներգրավել կամ իրականացնել. այսպես կոչված՝ «Պոնցիի խաղեր»[18] (պարտքի անընդհատ վերաֆինանսավորում): Եվ այս տեսանկյունից կարևորվում է տնտեսության վրա պետական պարտքի հնարավոր ազդեցության գնահատումը և դրա արդյունքների հիման վրա պետական պարտքի չափերի պահպանումը ՀՆԱ-ի նկատմամբ խելամիտ մակարդակում, որը չի խաթարի ինչպես տնտեսության, այնպես էլ հարկաբյուջետային կայունությունը, այլ կերպ ասած՝ պարտք ներգրավելուց առաջ անհրաժեշտ է սթրես-թեստերի միջոցով պարտքի կայունության վերլուծություն կատարել՝[19] հաշվի առնելով տնտեսության հնարավոր զարգացումները:

5. Պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորելիս փողի էմիսիայի նկատմամբ առաջնայնությունը պետք է տալ պետական պարտքին՝ ելնելով հնարավոր ինֆլյացիայի և տնտեսության վրա դրա բացասական հետևանքների վերացման կարևորությունից:

6. Տնտեսության վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության գնահատումը և դրա միջոցով քաղաքականության համապատասխան միջոցառումների մշակումը պետք է հիմնվի ոչ թե պետական բյուջեի, այլ պետական բյուջեի կառուցվածքային պակասուրդի, այլ կերպ ասած՝ դիսկրետ հարկաբյուջետային քաղաքականության ճշգրիտ գնահատման վրա: Եվ կառավարությանը, ինչպես նաև հասարակությանը պետք է անհանգստացնի ոչ թե տնտեսական տատանումների հետևանքով ձևավորված պետական բյուջեի պակասուրդների, այլ կառուցվածքային պակասուրդի հաշվին պետական պարտքի կուտակման երևույթը:

7. Պետության պարտքային քաղաքականության մշակումը պետք է ելնի նաև տնտեսության համար կենսական նշանակություն ունեցող շուկաներից մեկի՝ ֆինանսականի զարգացման անհրաժեշտությունից: Պետությունը, գործելով ֆինանսական շուկաներում, պետք է առաջնորդվի ոչ թե միայն պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորելու, այլ ֆինանսական շուկայի մյուս մասնակիցների համար ուղենիշ լինելու, այդ շուկան համապատասխան գործիքներով ապահովելու և այստեղ կայուն սպասումներ ձևավորելու անհրաժեշտությունից ելնելով:

8. Պետությունը և հասարակությունը պետք է գիտակցեն, որ տնտեսական համակարգը չեզոք իրողություն չէ. այն ածանցյալ է քաղաքական, սոցիալական, մշակութային, բարոյական, արժեքային և այլ համակարգերից, և

---

[18] Տե՛ս http://en.wikipedia.org/wiki/Ponzi_scheme

[19] Տե՛ս International Monetary Fund, Staff Guidance Note on the Application of the Joint Bank-Fund Debt Sustainability Framework for Low-Income Countries, November 5, 2013: International Monetary Fund, Staff guidance note for public debt sustainability analysis in market-access countries, May 9, 2013:

որ տնտեսական քաղաքականության ուղղությունների տարբեր համադրություններ չեն կարող արդյունավետ լինել հասարակության բոլոր անդամների համար, քանի որ դրանք պարադոքսներ են: Եվ հենց այս հանգամանքը պետք է հնարավորինս անշահախնդրորեն հաշվի առնվի տնտեսական քաղաքականություն մշակելիս, քանի որ նաև այս պայմաններում ձևավորված պարտքը իսկապես կարող է վտանգավոր լինել և բեռ դառնալ ապագա սերունդների համար:

Այսպիսով՝ պետական պարտքի՝ տնտեսության վրա հնարավոր դրական և բացասական ազդեցությունների ռիսկերը հավասարակշռելու և դրանց հետևանքները արդյունավետ կառավարելու նպատակով կարևոր է պետության կողմից արդյունավետ և համակարգված պարտքային քաղաքականության մշակումն ու իրականացումը, որը հաշվի կառնի վերոնշյալ կառուցվածքային մոտեցումները և հնարավորություն կտա արդյունավետ և խելամիտ կառավարելու պետական պարտքը:

ЭДУАРД АКОПЯН
Аспирант кафедры ,,Экономической теории" АГЭУ

Концептуальные вопросы государственного долга и долгового финансирования государства.- Мир вступил в такой период развития, когда высокий уровень государственных долгов уже является реальностью, и во многих странах он приближается к историческому максимуму. Низкий экономический рост во многих странах мира усложняет задачу обеспечения устойчивости долга, который ставит дополнительную нагрузку на налогово-бюджетную политику, в то время, когда она и так уже находится под давлением. Естественно что Армения тоже находится под влиянием этих развитий. Эти тенденции создают потребность в формировании системного подхода к институту государственного долга.

Принимая во внимание важную роль вышеуказанных событий, в статье рассматриваются восемь основных и важных, практических концепций долгового финансирования государства, такие как фискальный консерватизм, избыточное налоговое бремя, "Золотое правило" государственных финансов и "Правило устойчивого инвестирования", займы вместо денежной эмиссии, краткосрочная стабилизация, концепция структурного дефицита, неполный финансовый рынок, общественный выбор и фискальная иллюзия. Эти понятия обосновывают роль государственного долга в качестве наиболее эффективного источника финансирования государственного бюджета.

Анализ концепций долгового финансирования позволил авторам предложить основные структурные подходы, которые правительство должно принимать во внимание при разработке налогово-бюджетной и долговой политики. Принятие этих подходов также позволит правительству эффективно управлять государственным долгом.

Ключевые слова: *Государственный долг, долговое финансирование, здоровые финансы, фискальный консерватизм, краткосрочная стабилизация, антициклическая политика, избыточное налоговое бремя, кривая Лаффера, золотое правило, правило устойчивого инвестирования, структурный дефицит, фискальная иллюзия, долговая устойчивость.*

EDUARD HAKOBYAN
Post-graduate at the Chair of
,,Theory of Economics" at ASUE

Conceptual Issues of the Government Debt and Debt Financing of Government.- The world has entered such a period of development that high government debt levels are already reality and in many countries they are approaching historical heights. Low economic growth in many countries of the world complicates the task of ensuring debt sustainability, which puts an additional burden on the fiscal policies at a time when they are already under pressure. Certainly, Armenia is also under the influence of these developments. These trends create the need for forming a systematic approach to the institution of goverment debt.

Taking into account the important role of the abovementioned developments the article discusses eight basic and important practical concepts of debt financing of the government, such as fiscal conservatism, excess burden of taxation, "Golden rule" of public finance and "Sustainable investment rule", borrowing instead of the emission of money, short-term stabilization, the concept of structural deficit, incomplete financial market, public choice and fiscal illusion. These concepts substantiate the role of goverment debt as the most effective source of financing the state budget.

The analysis of the concepts of the debt financing allowed the authors to offer the main structural approaches that governments should take into account when designing fiscal and debt policies. The adoption of these approaches will also enable the governments to effectively manage the government debt.

Key Words: *Public debt, debt financing, sound finances, fiscal conservatism, short-term stabilization, countercyclical policy, the excess burden of taxes, Laffer curve, golden rule, sustainable investment rule, structural deficit, fiscal sustainability, debt sustainability.*

ГОР ХАЧАТРЯН
Преподаватель кафедры ,,Микроэкономики и организации предпринимательской деятельности" АГЭУ, кандидат экономических наук

АШОТ ЯХШИБЕКЯН
Соискатель кафедры ,,Финансов и экономики" Российско-Армянского Славянского университета

РЫНОЧНАЯ КОНЦЕНТРАЦИЯ И ДОМИНИРОВАНИЕ КАК ФАКТОРЫ ВЛИЯЮЩИЕ НА ЭКОНОМИЧЕСКОЕ И СОЦИАЛЬНОЕ РАЗВИТИЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Статья посвящена проблеме рыночной концентрации и доминирования, которая отражается на экономических и социальных показателях Армении. В статье анализируется ряд таких показателей, выявляется их корреляционная взаимосвязь. В статье также делается определенное прогнозирование о том, каким образом рыночная концентрация и доминирование будут влиять на эти показатели в будущем.

Ключевые слова: *рыночная концентрация, рыночное доминирование, экономический рост, коинтеграция, корреляция, векторная авторегрессионная модель, информационные критерии*

Для проведения эффективной конкурентной политики, необходимо изучать конкретные экономические и социальные показатели, которые могут стать оценкой проведенной политики. В процессе данного исследования, были изучены, такие показатели как: экономическая активность в

РА, уровень безработицы в РА, уровень занятости в РА, показатели бедности в РА, уровень инфляции в РА, налоги в РА, валовой внутренний продукт в РА, индекс потребительских цен в РА и другие показатели. Указанные выше социально-экономические показатели были изучены для того, чтобы проводить корреляцию с некоторыми показателями рыночной власти хозяйствующих субъектов на товарных рынках РА, такие как: показатели рыночного доминирования[1] и концентрации[2], показатели увеличения и снижения количества доминирующих субъектов на товарных рынках РА, показатели размеров совокупной рыночной доли доминирующих субъектов на рынках продовольственных товаров РА, совокупные рыночные доли первых трех крупных субъектов на товарных рынках РА и т.д. Однако, для анализа, из представленных выше показателей, подошли только, ВВП в рыночных ценах в РА, показатели бедности в РА и показатели увеличения и снижения количества доминирующих субъектов на товарных рынках РА. Остальные указанные выше показатели не подошли для анализа, поскольку, корреляция, осуществленная с помощью программы “СТАТА”, показала отрицательную взаимосвязь между остальными социально-экономическими показателями и цифрами рыночной власти на рынках РА. В то же время, следует отметить, что той или иной показатель количества доминирующих субъектов на товарных рынках РА, не означает, что это все субъекты имеющие доминирующее положения на рынке, а только те, которые в определенных годах, были признаны Государственной комиссией по защите экономической конкуренции РА, в качестве рыночных хозяйствующих субъектов, имеют доминирующее положение. Таким образом, имея четкое представление о том, какие именно показатели будут использоваться для нижеследующего эксперимента, необходимо оценить степень взаимосвязи между ними. Для анализа корреляционной взаимосвязи, будут использоваться показатели из следующих двух рисунков:

---

[1] Доминированием в РА признается положение хозяйствующего субъекта на рынке, которое дает ему возможность повлиять на уровень рыночной конкуренции, на уровень рыночных цен и создавать барьеры для входа на определенный рынок. Показателем доминирующего положения хозяйствующего субъекта является его рыночная доля, которая превышает 1/3 доли на рынке, то есть, наличие 33.3% доли на рынке. См.: Закон Республики Армения “О защите экономической конкуренции” Статья 6. Монополия или доминирующее положение.

[2] Рыночная концентрация в РА определяется как совокупный объем рыночной доли доминирующих хозяйствующих субъектов на рынке. Согласно пункту 2 статьи 6 Закона Республики Армения “О защите экономической конкуренции”, хозяйствующий субъект признается доминирующим, если он в качестве продавца (покупателя) занимает по объемам реализации (приобретения) не менее одной третьей данного рынка.



Рисунок 1. ВВП в рыночных ценах, млн. драмов с 2001 по 2013 годы[3]

Корреляция проводится между ВВП в рыночных ценах с 2001 по 2013 годы и количеством доминирующих субъектов с 2001 по 2013 годы.



Рисунок 2. Количество доминирующих субъектов на товарных рынках РА с 2001 по 2013 годы[4]

Если обратить внимание на вышеуказанные показатели, можно заметить, что даже при поверхностном изучении динамики рыночного доминирования, становится очевидным, что динамика доминирования на товар-

[3] Источник: построено авторами на основе данных из Национальной статистической службы РА http://www.armstat.am

[4] Источник: построено авторами на основе данных из ежегодных отчетов Государственной комиссии по защите экономической конкуренции РА с 2001 по 2013 годов. http://competition.am/

ных рынках РА, фиксирует более резкие изменения, чем показатель ВВП. Для анализа и подтверждения вышесказанного была применена векторная авторегрессионная модель (The vector autoregression (VAR) model) с двумя переменными показателями для того, чтобы показать взаимосвязь между динамикой ВВП и динамикой доминирования на товарных рынках РА, что можно представить в следующей формуле[5]:

$$GDP_t = \delta + \sum_{i=1}^{p} \alpha_{1i} GDP_{t-i} + \sum_{j=1}^{p} \beta_{1j} DI_{t-j} + u_{1t} \quad (1.1)$$

$$DI_t = \theta + \sum_{i=1}^{p} \alpha_{2i} GDP_{t-i} + \sum_{j=1}^{p} \beta_{2j} DI_{t-j} + u_{2t} \quad (1.2)$$

Где δ и θ являются первоначальными базовыми величинами, а α_{1i} , α_{2i} , β_{1j} , β_{2j} являются показателями конкретного периода и поправочными коэффициентами, GDP - это валовой внутренний продукт, DI – это количество доминирующих субъектов в процентном соотношении, t - это (t=1, 2, 3…13) временной период исследования по годам, p - это показатель количества временной задержки между ВВП и доминированием на рынке, выраженное по годам, u_{1t}, u_{2t} - это оценка стохастических ошибок, которые также называются “шоками” или острыми сигналами.

На основе этого, можно сделать следующие предположения:

$$E(u_{1t}) = E(u_{2t}) = 0 \ ,$$

$$E(u_{1t}u_{2t}) = \Sigma = \begin{pmatrix} var(u_{1t}) & cov(u_{1t}u_{2t}) \\ cov(u_{1t}u_{2t}) & var(u_{2t}) \end{pmatrix}$$

которые, в свою очередь, подлежат следующим версиям:

$$E(u_{1t}u_{2t}) = \sigma^2 \ for \ t = 1,2 \ ,$$

$$E(u_{1t}u_{2t}) = 0 \ for \ t = \tau \ :$$

Также, был проведен анализ на основе существующих данных о доминирующих субъектах и ВВП, для того, чтобы определить зависимость временной задержки между показателями ВВП и доминирующими субъектами. Другими словами, для выяснения того, каким образом рыночные колебания доминирования во временной задержке отражаются на показатель ВВП. Вышеуказанная величина во временной задержке – количество лет - можно определить путем использования информационных критерий Акаике (AIC)[6] и Шварца (SC)[7]. Насколько малы статистические показатели Акаике и Шварца, настолько модель соответствующая. Взаимосвязь между ВВП и доминирующими субъектами, получилась достаточно убедительной, особенно, в течении первых трех лет, что дает основание полагать, что влияние количества доминирующих субъектов на величину ВВП будет играть решающую роль через год, будет значительным через два года, и будет существовать также значимая связь после трех лет. Данные, полученные с помощью программы EViews, представлены в следующей таблице:

---

[5] После заполнения статистических рядов программы STATA, данная программа предлагает ряд формул, которые наиболее приемлемы для применения в настоящем исследовании. Для анализа и создания формул, были использованы стандартные статистические инструменты программы STATA, они также были использованы и в других формулах.

[6] Hirotugu A., A new look at the statistical model identification, IEEE Transactions on Automatic Control, 1974, N 19 (6), p. 716-723.

[7] Schwarz G. E., Estimating the dimension of a model, Annals of Statistics, 1978, N 6 (2), p. 461-464.

Таблица 1

Критерия отбора показателя временной задержки [8]

Временная задержка по годам	FPE	AIC	SC
0	17548.16	35.98	35.02
1	69649.54	*12.65*	*12.828*
2	69360.54	13.92	13.68
3	95548.58	14.16	14.22

В таблице FPE это ошибка окончательного предсказания, AIC – информационный критерий Акаике, SC - информационный критерий Шварца.

В программных расчетах, представленная модель будет меняться соответствующим образом:

$$GDP_t = \alpha_{10} + \alpha_{11} GDP_{t-1} + \alpha_{12} DI_{t-1} + u_{1t} \quad (1.3)$$

$$DI_t = \alpha_{20} + \alpha_{21} GDP_{t-1} + \alpha_{22} DI_{t-1} + u_{2t} \quad (1.4)$$

Полученные статистические данные, которые являются основой данного исследования, а также возможного прогнозирования, *внушают достаточное доверие, однако, также необходимо* проведение тестирования взаимосвязей между величинами или испытание **коинтеграции.** Вышеуказанное испытание, проводится для определения долгосрочных равновесных отношении между ВВП и количеством доминирующих субъектов.

Для этой цели, мы применяем тест коинтеграции Энгла – Грейнджера:

$$GDP_t = \beta_0 + \beta_1 DI_t + e_{1t} \quad (1.5)$$

$$DI_t = \alpha_0 + \alpha_1 GDP_t + e_{2t} \quad (1.6)$$

Тест также проверяет значения величин для следующих моделей

$$\Delta \hat{e}_{1t} = \emptyset e_{1t-1} + \varepsilon_{1t} \quad (1.7)$$

$$\Delta \hat{e}_{2t} = \theta e_{2t-1} + \varepsilon_{2t} \quad (1.8)$$

С помощью последних двух формул, также методом наименьших квадратов, на основе данных 2001-2013 годов, результаты расчетов представлены ниже:

В тексте выше, подтверждается, что существует долгосрочное равновесное соотношение между показателями ВВП и количеством доминирующих субъектов. Программный расчет дает возможность предположить, что есть взаимосвязь между показателями двух переменных согласно указанным ниже формулам, а также, данные переменные, учитывают расчет корректировки резких колебаний, которые наблюдаются во временных рядах:

$$\Delta GDP_t = \alpha_{10} + \beta EC_{t-1} + \alpha_{11} \Delta GDP_{t-1} + \alpha_{11} \Delta DI_{t-1} + \varepsilon_{1t} \quad (1.9)$$

$$\Delta DI_t = \alpha_{20} + \beta_2 EC_{t-1} + \alpha_{21} \Delta GDP_{t-1} + \alpha_{22} \Delta DI_{t-1} + \varepsilon_{2t} \quad (1.10)$$

где EC_{t-1}- представляет компонент корректировки ошибок в модели.

[8] Источник: составлено авторами, эндогенными переменными являются показатели ВВП и количество доминирующих субъектов 2001-2013 годов.

$\hat{e}_{2t-1}$ Результаты теста для переменных

Переменный	Коэффициент	Стандартное отклонение	Т статисти-ческий ряд	Вероятность
$\hat{e}_{1t-1}$				
R-квадрат	0.129397	Средняя зависимая переменная	2.084321	
Скорректированный R-квадрат	0.129397	Стандартное отклонение зависимой переменной	271.1607	
Стандартное отклонение регрессии	258.0163	Информационный критерий Акаике	13.801548	
Остаточная сумма квадратов	2711820.	Информационный критерий Шварца	13.924845	
Вероятность доступа	-264.1641	Критерий Ханнана Куина	13.908154	
Индикатор Дурбан-Уотсона	1.635221			

$\hat{e}_{2t-1}$ Результаты теста для переменных

Переменный	Коэффициент	Стандартное отклонение	Т статисти-ческий ряд	Вероятность
$\hat{e}_{2t-1}$				
R-квадрат	0.233553	Средняя зависимая переменная	0.102966	
Скорректированный R-квадрат	0.233553	Стандартное отклоне-ние зависимой переменной	1.774051	
Стандартное отклонение регрессии	1.493003	Информационный критерий Акаике	5.623987	
Остаточная сумма квадратов	72.02678	Информационный критерий Шварца	5.643587	
Вероятность доступа	-65.13151	Критерий Ханнана Куина	3.458919	
Индикатор Дурбан-Уотсона	1.228933			

Оценки корректировок ошибок в модели заключаются в следующем:

$$\Delta GDP_t = 3039.694 + 0.0001054\,EC_{t-1} + 0.280236\,\Delta GDP_{t-1} - 22.77501\,\Delta DI_{t-1}$$

$$t = \quad [2.11021]\,[0.01724]\,[1.56491]\,[-1.35348]$$

$$F(3,36) = 1.263,\ Prob(F-statistic) = 0.302$$

$$\Delta DI_t = 0.224875 + 0.00105248\,EC_{t-1} + 0.001045\,\Delta GDP_{t-1} - 0.056301\,\Delta DI_{t-1}$$

$$t = \quad [1.01302]\,[2.68469]\,[0.51709]\,[-0.37421]$$

$$F(3,36) = 3.258,\ Prob(F-statistic) = 0.0302$$

Учитывая тот факт, что выбранные переменные взаимозависимы, представленная модель (1.1) была оценена, применяя (1.3) и (1.4) уравнения, а оценки представлены ниже:

Оценки показателей ВВП и количество доминирующих субъектов для 2001-2013 годов[9]

		GDP			DI	
GDP(-1)	1.095049	(0.5985)	[13.2896]	0.000764	(0.00051)	[2.81761]
DI(-1)	-8.82927	(13.0015)	[-0.95104]	0.270275	(0.12657)	[3.19048]
C	1005.093	(316.196)	[0.12204]	2.448792	(1.15047)	[3.24154]
Скорректированный R-квадрат		0.841354			0.541315	
Остаточная сумма квадратов		105.3945			114.2548	
Стандартное уравнение отклонении		146.0836			1.045687	
F-статистика		398.2217			71.891547	
Вероятность доступа		-287.1548			-67.25874	

Оцененное векторное авторегрессионное уравнение можно представить следующим образом:

$$\begin{pmatrix} \Delta GDP_t \\ \Delta DI_t \end{pmatrix} = \begin{pmatrix} 1005.093 \\ 2.448792 \end{pmatrix} + \begin{pmatrix} 1.095049 & -8.82927 \\ 0.000764 & 0.270275 \end{pmatrix} \begin{pmatrix} \Delta GDP_{t-1} \\ \Delta DI_{t-1} \end{pmatrix}$$

Для этой же модели расчетные значения первого порядка будут выглядеть следующим, дифференцированным образом:

$$\begin{pmatrix} \Delta GDP_t \\ \Delta DI_t \end{pmatrix} = \begin{pmatrix} 3136.621 \\ 0.360659 \end{pmatrix} + \begin{pmatrix} 0.330098 & -30.02004 \\ 0.000267 & -0.210741 \end{pmatrix} \begin{pmatrix} \Delta GDP_{t-1} \\ \Delta DI_{t-1} \end{pmatrix}$$

Для того, чтобы проверить возможность прогнозирования, можно применить его для 2001-2012 годов и на основе этого, прогнозировать показатель 2013 года и в дальнейшем сравнить зафиксированную величину с прогнозированной.

Оценки показателей ВВП и количество доминирующих субъектов для 2003-2012 годов[10]

		GDP			DI	
GDP(-1)	1.104841	(0.04985)	[13.9848]	*0.001843*	(0.00072)	[2.45568]
DI(-1)	-9.38457	(15.0015)	[-0.80545]	*0.556871*	(0.15075)	[3.24334]
C	863.837	(151.004)	[0.30658]	*4.964564*	(1.39237)	[3.06619]
R-квадрат		0.923141			0.720068	
Скорректированный R-квадрат		0.922989			0.718905	
Остаточная сумма квадратов		1257482.			101.4582	
Стандартное уравнение отклонении		159.6331			1.446598	
F-статистика		322.0747			54.441789	
Шансы доступа		-259.4857			-77.45805	

[9] Составлено авторами, стандартные отклонения отмечены в кавычках () , а t статистические ряды - в кавычках [ ]

[10] Составлено авторами, стандартные отклонения отмечены в кавычках - (), а t статистические ряды в кавычках - [ ]

Данные переориентированной модели представлены ниже:

$$DI_{2013} = 4.964564 + 0.001843\, GDP_{2012} + 0.556871\, DI_{2012}$$
$$DI_{2013} = 4.964564 + 0.001843 * 3039.694 + 0.556871 * 23.942 = 23.898_{\%}$$

Представленный расчет фиксирует отклонения от фактических данных на 0.042%. После определения прямой взаимосвязи между показателями ВВП и количеством доминирующих хозяйствующих субъектов на товарных рынках Армении, следует определить, может ли рост рыночной доли доминирующих субъектов привести к препятствии роста ВВП или к другим социальным проблемам, например к росту уровня бедности? Основываясь на показателях Национальной статистической службы РА, а именно, на динамику индекса потребительских цен, и на ИПЦ на отдельные виды продуктов (сахар, молочные продукты, яйца, мука, зерно и т.д.) и на динамику роста и спада средних розничных цен на эти продукты, была проведена корреляция, которая, показала отрицательную связь между этими показателями и ВВП. Однако, также была проведена другая корреляция, а именно, корреляция между показателями количества доминирующих субъектов и четырех видов товарных рынков (рынок продовольственных товаров, рынок непродовольственных товаров, рынок лекарств и рынок топлива). В результате, все четыре вида рынков, показали положительную корреляцию, однако, в то же время, в случае трех рынков (рынок непродовольственных товаров рынок лекарств и рынок топлива) корреляция была незначительной, что означает, что нет необходимости в продолжении изучения этих рынков с этой точки зрения. Единственный рынок, где корреляция была значительной - это рынок продовольственных товаров[11]. В Армении количество доминирующих субъектов всегда было больше, именно на продовольственных рынках. Например, в 2011 году, из общего количества доминирующих субъектов, 49.52% были обнаружены в продовольственных рынках. В 2013 году 52.54%, доминирующих субъектов, из общего количества, были участниками на продовольственных рынках. С помощью программы Стата предназначенная для статистических исследований, можно выяснить, каким образом количество доминирующих субъектов, присутствующих на рынках продовольственных товаров, влияет на экономический рост или на показатель ВВП и автоматически отражается на социальную сферу, в частности, на уровень бедности. Для этой цели, возникает необходимость, с помощью модели линейной регрессии, найти один образец, в котором продовольственный рынок будет занимать значимое место.

Данная модель будет иметь следующий вид:

$$y_{it} = \alpha_0 + \beta\, \text{продовольственный рынок}_{it} + \alpha_1 X_{1,it} + \cdots + \alpha_k X_{k,it} + u_i + e_{it} \quad (1.11)$$

[11] Только на этом рынке наблюдается корреляционная связь выше цифры 0.5, во временной задержке до трех лет, когда определяется зависимость показателей ВВП временных рядов с 2001 по 2013 годов и показателями количества доминирующих субъектов зафиксированных 1,2 или 3 года раньше.

На левой стороне уравнения рассматривается экономический рост для того, чтобы обнаружить воздействие количества доминирующих. Следует также подчеркнуть, что такую модель, можно также применять, используя показатели бедности, безработицы или занятости. Уровень влияния переменного рынка продовольственных товаров на показатель ВВП можно представить следующим образом: $X_{it1} \cdots X_{itk}$, которое может оценить степень воздействия на показатель ВВП. Переменная для рынка продовольственных товаров является размером эффекта на показатель ВВП, которое отражается в представленной модели. Данные показатели также могут оценить другие факторы, влияющие на ВВП: объем инвестиций в секторах экономики, структуру занятости по отраслям, данные о частных трансфертах и т.д. В качестве основы, принимается подход стационарного и фиксированного эффекта (u_i включает в себя все фиксированные эффекты), единица ошибок – ε_{it} , i и t величины показывают отрасль и период времени, год. В представленной модели, есть вероятность, что она будет содержать риск однородных переменных, однако, как уже отмечалось, особенной корреляции не наблюдается между количеством доминирующих субъектов на других товарных рынках и ВВП, за исключением рынков продовольственных товаров, что говорит о том, что вышеупомянутый риск значительно снижается для данной модели и в случае с рынками продовольственных товаров, корреляция показывает положительный результат, поскольку, как уже говорилось, именно рынок продовольственных товаров находился под наблюдением Государственной комиссии по защите экономической конкуренции РА больше всего, соответственно данные об этом рынке имеются в наличии больше остальных. Таким образом, была изучена устойчивость основных переменных, используя метод скорректированных наименьших квадратов и фиктивных переменных для того, чтобы увеличение числа переменных не увеличило степень отклонения и проценты в ошибке. В нижеследующем, выявляется, насколько количество доминирующих субъектов, функционирующих на продовольственных рынках, препятствует экономическому росту.

Все переменные представлены в процентном выражении от 0 до 100. Полученные оценки, показывают в каждой строке, насколько количество доминирующих субъектов противодействует экономическому росту или, говоря другими словами, насколько в процентном выражении, увеличение объемов импорта или реализаций, осуществляемое доминирующими субъектами на 1%, обеспечивает спад ВВП. В частности, увеличение объемов импорта или реализаций, осуществляемое доминирующими субъектами на рынках продовольственных товаров на 1%, может привести к сокращению ВВП на 0.481%. Является ли это значимым показателем? Сравнивая с другими секторами экономики, можно сделать вывод, что это значимый результат, в то же время, данный результат является значимым по абсолютному значению. Из этого, можно полагать, что политика, нацеленная на обеспечение экономического роста, будет более эффективной, если сосредоточить антимонопольные меры, в первую очередь, именно на продовольственных рынках. Это также означает, что при переформировании структуры рынков продовольственных товаров в пользу соз-

дания свободной экономической конкуренции и предотвращения увеличения рыночной доли доминирующих субъектов на каждый процент их расширения на рынке, **обеспечит рост экономики на 0.481%.**

Особенности экономического роста, зависимых от количества доминирующих субъектов[12]

	Benchmark Ориентир	*Boot.[13]*	*Weighted Взвешенный*	*Shock appr. Абстрактные потрясения*
	1	2	3	4
Продовольственный рынок	4.418*	4.418*	4.089**	5.9624***
	(2.338)	(2.368)	(2.042)	(1.251)
Топливный рынок	0.996***	0.996***	1.145***	0.826***
	(0.200)	(0.434)	(0.150)	(0.344)
Рынок лекарств	1.598***	1.598***	1.810***	1.808***
	(0.428)	(0.551)	(0.149)	(0.394)
Непродовольственный рынок	2.122**	2.122**	1.277	
	(0.962)	(1.292)	(0.813)	
*-90%,	**-95%,	***-99%		

Применяя эту же методику и статистическую базу по отношению определения уровня влияния на социальные явления (например на бедность), применяя в основу статистические данные, касательно домашнего хозяйства и тот принцип, согласно которому, факт бедности определяется, как менее чем на 2 доллара в день на каждого человека, которое, регулируется по паритету покупательной способности и независимо от того, что не звучит убедительно, рост количества доминирующих субъектов на продовольственных рынках, существенным образом влияя на рост ВВП, одновременно негативно влияет на показатель бедности, обеспечивая рост последнего.

Из вышесказанного можно сделать вывод о следующем:

изменение совокупного объема рассмотренной рыночной доли доминирующих хозяйствующих субъектов на 1% в сторону увеличения уровня рыночной концентрации, приведет к сокращению ВВП на 0.481% и за счет прямых последствий, в то же время, обеспечит рост уровня бедности на 0.267%. После таких очевидных результатов, еще раз возникает строгая необходимость в ужесточении конкурентных требований, по отношению всех участников рынка, особенно, по отношению крупных хозяйствующих субъектов, что приведет к жестой антимонопольной политике. В данном случае, такая политика должна по крайней мере соответствовать текущей рыночной действительности Республики Армения и стать основой для решения вопросов несовершенной рыночной конкуренции в стране.

---

[12] Источник: составлено авторами на основе данных, полученных с помощью программы “СТАТА”

[13] Varian H., Bootstrap Tutorial, Mathematica Journal, 2005, N 9, p. 768-775.

ԳՈՌ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու

ԱՇՈՏ ՅԱԽՇԻԲԵԿՅԱՆ
Հայ – ռուսական (Սլավոնական) համալսարանի ֆինանսների և էկոնոմիկայի ամբիոնի հայցորդ

Շուկայական համակենտրոնացումը և գերիշխանությունը որպես Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացման վրա ազդող գործոններ.- Հոդվածը նվիրված է շուկայական համակենտրոնացման և գերիշխանության խնդրին, որն ազդում է Հայաստանի տնտեսական և սոցիալական ցուցանիշների վրա: Քննարկվում են մի քանի ցուցանիշներ, բացահայտվում է դրանց հարաբերակցությունը: Արվում է նաև այդ ցուցանիշների վրա շուկայական համակենտրոնացման ազդեցությանն առնչվող որոշակի կանխատեսում:

Հիմնաբառեր. *շուկայական համակենտրոնացում, շուկայական գերիշխանություն, տնտեսական աճ, կոինտեգրացիա, հարաբերակցություն, վեկտորային մոդել, տեղեկատվական չափանիշներ:*

GOR KHACHATRY
Lecturer at the Chair of "Microeconomics and Organization of Entrepreneurial Activities" at ASUE, PhD in Economics

ASHOT YAKHSHIBEKYAN
Research at the Chair of "Finance and Economy" at Russian – Armenian Slavolic University

Factors of Market Concentration and Dominance Influencing the RA Economic and Social Development.- The article focuses on the problem of market concentration and dominance, which is reflected in the economic and social indicators in Armenia. The article analyzes a number of indicators and reveals a correlation relationship between them. The article also makes certain prediction how the market concentration and dominance will affect these figures in the future.

Key Words: *market concentration, market dominance, economic growth, cointegration, correlation, vector autoregression model, information criteria.*

Կառավարում

ՄԵՐԻ ԲԱԴԱԼՅԱՆ
ՀՊՏՀ աշխատանքի տնտեսագիտության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

ՄԱՐԻՆԵ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

ԼԻԼԻԹ ԴԱԴԱՅԱՆ
ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

ԲՈՒՀԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԴՐԴՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ժամանակակից պայմաններում յուրաքանչյուր բուհի գործունեության արդյունավետությունը հիմնականում կախված է պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի որակից: Ամեն բարձրագույն ուսումնական հաստատություն, որը կրթական ծառայությունների շուկայում առաջատար դիրք զբաղեցնելու նպատակ է հետապնդում, պետք է հատուկ ուշադրություն դարձնի պրոֆեսորադասախոսական կազմի շահադրդման խնդիրներին:

Հոդվածում ներկայացված են ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը պայմանավորող շարժառիթների բացահայտման և շահադրդման խնդիրների հետազոտության արդյունքները:

Հիմնաբառեր. *շահադրդում (մոտիվացիա), պրոֆեսորադասախոսական կազմ, գիտամանկավարժական գործունեություն, բարձրագույն կրթություն, մասնագիտական գործունեություն, շարժառիթ (մոտիվ), աշխատանքի արդյունավետություն*

Ժամանակակից պայմաններում մարդկային գործոնը ցանկացած կազմակերպությունում առանցքային դերակատարություն ունի: Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարմամբ է պայմանավորված մրցակցային շուկայում կազմակերպության կայունությունը, տնտեսական գործունեության հաջողությունը և ռազմավարական զարգացման հեռանկարը: Բարձրագույն կրթության համակարգում աշխատակիցների հիմնական կազմի հոգևոր, մտավոր և ստեղծագործական մեծ ներուժի շնորհիվ մարդկային գործոնն այսօր էլ ավելի է արժևորվում: Բարձրագույն դպրոցի գիտնական մանկավարժի աշխատանքը բավականին բարդ է. այն ներառում է գիտամեթոդական, դաստիարակչական և կազմակերպչական գործառույթներ: Դասախոսների աշխատանքի բնույթի և բովանդակության վրա լուրջ ազդեցություն են թողնում նաև կրթության բնագավառի արդի տեխնիկական և տեխնոլոգիական փոփոխությունները, որոնք հաճախ հակազդում են դասախոսական աշխատանքի շարժառիթներին և խթաններին: Այդ իսկ պատճառով տնտեսավարման արդի պայմաններում բուհերի կազմակերպական և մանկավարժական կադրերի աշխատանքի կառավարման գործընթացների համապատասխանեցման անհրաժեշտություն է առաջանում: Վերջիններիս աշխատանքային գործունեության հետ կապված խնդիրների լուծումը, կրթական տեխնոլոգիաների ներդրմանը զուգընթաց, կնպաստի բարձրորակ կադրերի ներգրավմանը, նորարարական ծրագրերի և տեխնոլոգիաների մշակմանն ու ներդրմանը, նոր գիտելիքի զարգացմանը: Գիտելիքահենք տնտեսության պայմաններում, երբ մշտապես աճում է գիտելիքի նկատմամբ պահանջարկը, կրթական ծառայությունների շուկայում մրցակցությունը սրվում է՝ կրթական հաստատություններին առաջադրելով նորանոր խնդիրներ: Ինչպես արդարացիորեն նշում է պրոֆ. Գ.Վարդանյանը՝ «Հայաստանի մրցունակության մեծացումը հնարավոր է բացառապես գիտելիքահենք տնտեսության ու գիտելիքի հասարակության ազդեցիկ հիմքերի ստեղծմամբ, տնտեսական գործուն խթանների և պետական արդյունավետ կառույցների կայացմամբ, ուսումնառող ազգ դառնալուն նպաստող կրթության և վերապատրաստման ճկուն համակարգի ստեղծմամբ, մարդկանց կենսագործունեության բոլոր ոլորտներ տեղեկատվական տեխնոլոգիաների ներթափանցման դյուրացմամբ[1]»:

Շուկայական մրցակցության պայմաններում բուհում աշխատանքի արդյունավետ կառավարման համակարգի մշակումը և կատարելագործումը բարձրագույն կրթության անշեղ զարգացման կարևորագույն նախապայմաններից են: Բարձրագույն ուսումնական հաստատության դասախոսի գործունեությունը ներառում է երկու հիմնական բաղադրիչներ՝ գիտական և մանկավարժական:

Գիտամանկավարժական աշխատանքի բնութագրիչ գծերն են.

- գիտելիքի կուտակման, փոխանցման և գործադրման նկատմամբ մասնագիտական պատասխանատվությունը, ինչպես նաև դրա ընդլայնումն ինչպես տեսական, այնպես էլ փորձարարական առումներով,
- մասնագիտական ինքնավարությունը, ակադեմիական ազատությունը. հնարավորություն է ընձեռված ուսումնական նյութը ներկայաց-

[1] **Գ. Վարդանյան,** Գիտելիքահենք տնտեսություն, ՀՀ ԳԱԱ, Եր., 2008, էջ 8:

նելու ըստ սեփական հայեցողության, ինքնուրույն ընտրելու ուսուցման մեթոդներն ու միջոցները,

- աշխատանքի արդյունքներն արտահայտվում են ոչ միանգամից. անհնար է դրանք գնահատել միայն քանակական ցուցանիշներով,
- առավելապես անհատական և ստեղծագործական բնույթը,
- ուսուցման արդյունավետության համար հավասարապես պատասխանատու են և՛ սովորեցնողը, և՛ սովորողը,
- բուհի դասախոսի գործունեության շարժառիթը տարբերվում է այլ մասնագիտությունների շարժառիթներից. առավել, քան վարձատրությունը, այս դեպքում կարևորվում են գործընկերների կողմից մասնագիտական ճանաչումը, հասարակական հեղինակությունը, վարկանիշը և այլն:

Ըստ գիտամանկավարժական գործունեության առանձնահատկությունների ուսումնասիրության՝ դասախոսի աշխատանքը, շարժառիթային առումով, կարող է ներկայացվել որպես բարդ մոտիվացիոն գործունեություն, որը ներառված է անձի ողջ կենսական համատեքստում:

Դասախոսի մասնագիտական գործունեության շարժառիթը ձևավորվում է իր անհատական զարգացման գործընթացում, բայց նրա աշխատանքային վարքագիծն այս կամ այն իրավիճակում դրսևորվում է ոչ թե ըստ ցանկացած կամ բոլոր հնարավոր դրդապատճառների, այլ, որպես կանոն, ըստ այն շարժառիթների, որոնք համապատասխան աստիճանակարգում ամենացայտունն են:

Աշխատողի ցանկալի վարքն ապահովելու և դա կազմակերպության շահերին առավելագույնս ծառայեցնելու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել այն իրական մղումները, որոնք դրդում են աշխատողին գործելու այս կամ այնկերպ: Յուրաքանչյուր բարձրագույն ուսումնական հաստատություն, որը կրթական ծառայությունների շուկայում առաջատար դիրք զբաղեցնելու նպատակ է հետապնդում, պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի պրոֆեսորադասախոսական կազմի շահադրդման խնդիրներին: Միայն սեփական գործունեությունն արժևորող և բուհի առաքելության գերակայությունը կարևորող պրոֆեսորադասախոսական կազմի շնորհիվ հնարավոր կլինի հասնել ցանկալի արդյունքների և դիմակայել մրցակցությանը, իսկ նմանօրինակ աշխատակազմի ձևավորման հիմքը շահադրդման արդյունավետ մեխանիզմների կիրառումն է: Այսօր բարձրագույն դպրոցի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը միայն նյութական խթանման ավանդական ձևերով այլևս հնարավոր չէ ապահովել: Ուստի անհրաժեշտ է բացահայտել այն գործոններն ու իրական մղումները, որոնք կշահագրգռեն պրոֆեսորադասախոսական կազմին առավելագույնս իրացնելու սեփական ներուժը[2]: Բուհերի գործունեության արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի որակով: Հնարավոր չէ բուհի ռազմավարության մեջ արմատական փոփոխություններ կատարել՝ առանց հաշվի առնելու անձնակազմի ներուժը[3]:

---

[2] Տե՛ս **Лазарев В.,** Когда работа не теряет ценности (как сделать руководство эффективным) // ,,Народное образование”, 1997, № 9, էջ 128-131:

[3] Տե՛ս **Романкова Л.,** Научно-педагогические кадры высшей школы России. Современное состояние и концепция развития . М.: ИПР ВПО МАДИ (ГТУ), 2004, էջ 200-213:

Մանկավարժական աշխատանքի շարժառիթների բացահայտմանը նվիրված բազմաթիվ հետազոտողների (Բոլոտին Ի., Բուսիգինա Լ., Վասիլենկո Օ., Վելց Ե., Զամալուդինով Գ., Իլյին Ե., Կոկորև Ա., Նիկոլյուկինա Ն. և այլն) աշխատանքների ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել դրանցից առավել արտահայտվածները: Չնայած որոշ տարբերություններին, բոլոր հեղինակները մասնագիտության ընտրության շարժառիթները կապում են գիտամանկավարժական աշխատանքի բովանդակության և մասնագիտացման հետ: Դրանց թվին են դասվում գիտելիքները փոխանցելու ձգտումը, գիտական կոչման իրացումը, գիտական հետազոտություններով զբաղվելու ցանկությունը, ուսանողների հետ շփումը, ստեղծագործելու հնարավորությունը և այլն:

Մեր ուսումնասիրության շրջանակներում փորձել ենք պարզել մասնագիտության ընտրության շարժառիթները հետևյալ տարիքային խմբերի դասախոսների պարագայում. մինչև 30 տարեկան, 31–40, 41–50, 50–60 և 60–ից բարձր: Որպես հետազոտության օբյեկտ է ընտրվել ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական կազմը: Մասնագիտության ընտրության շուրջ հարցման (11.10.2014 թ. – 29.11.2014 թ.) արդյունքները ներկայացված են գծանկար 1-ում.



Գծանկար 1. *ՀՊՏՀ ՊԴԿ-ի՝ մասնագիտության ընտրության շարժառիթների կառուցվածքն ըստ տարիքային խմբերի*

Մասնագիտության ընտրության առաջնային շարժառիթը բոլոր տարիքային խմբերի ներկայացուցիչների համար դասախոսի աշխատանքի ստեղծագործական բնույթն է: Սույն հետազոտության շրջանակներում կազմակերպված ֆոկուս-խմբի արդյունքները ևս հանգեցրել են վերոնշյալ եզրակացության: Մասնագիտության ընտրության վրա ամենամեծ ազդեցությունն

ունեցող գործոնների վերաբերյալ հարցին ի պատասխան՝ դասախոսների 46%-ը նշել է մանկավարժի կոչումը, իսկ 23%-ը՝ ամբիոնի՝ ասպիրանտուրայում ուսման և բուհում աշխատանքի երաշխավորությունը:

Հարցման մասնակիցները, որպես մասնագիտության ընտրության առավել փոքր նշանակություն ունեցող շարժառիթ, նշել են ընկերների և դասախոսների հորդորը. ընդամենը 0.6%՝ ամբողջ ընտրանքում:

Դասախոսի՝ մասնագիտության ընտրության շարժառիթների ուսումնասիրությունն ու վերլուծությունը թույլ են տալիս առանձնացնել շահադրդման երեք տեսակ և դրանց համապատասխան շարժառիթների երեք խումբ.

1. ուղղակի շահադրդում, որն արտահայտվում է գործընթացի և աշխատանքի արդյունքների նկատմամբ հետաքրքրությամբ. այս խմբում կարելի է ներառել հետևյալ շարժառիթները՝ մասնագիտական առաջխաղացման հնարավորություն և դասախոսական աշխատանքի ստեղծագործական բնույթ,
2. անուղղակի շահադրդում, որն արտահայտվում է հեղինակության, գործընկերության դրսևորումներով. այս խմբում կարելի է ներառել այնպիսի շարժառիթներ, ինչպիսիք են՝ մասնագիտության բարձր վարկանիշ և ստեղծագործելու հնարավորություն,
3. հարկադիր շահադրդում, որի հիմքում պարտքի զգացումն է և պայմանավորված է մի շարք արտաքին հանգամանքներով. այս խումբը ներառում է այնպիսի շարժառիթներ, ինչպիսիք են՝ մասնագիտության ընտրություն հանգամանքների բերումով, հրավերով, ընտանեկան ավանդույթի համաձայն կամ ընկերների և դասախոսների հորդորով:

Դիտարկենք վերոնշյալ խմբերը ՀՊՏՀ ՊԴԿ տարբեր տարիքային կազմերում (գծանկարներ՝ 2, 3, 4):



Գծանկար 2. *Ուղղակի շահադրդման խմբի կառուցվածքն ըստ տարիքային կազմի*



Գծանկար 3. *Անուղղակի շահադրդման խմբի կառուցվածքն ըստ տարիքային կազմի*



Գծանկար 4. *Հարկադիր շահադրդման խմբի կառուցվածքն ըստ տարիքային կազմի*

Վերլուծության արդյունքների հիման վրա հնարավոր է դառնում վերոնշյալ մոտիվների խմբերի փոփոխություններն ըստ տարիքային խմբերի դիտարկելը (գծանկար 5):



Գծանկար 5. *Ուղղակի, անուղղակի և հարկադիր շահադրդման խմբերն ըստ տարիքային հատկանիշի*

Դիտարկենք շարժառիթների փոփոխությունները ներկայացված երեք խմբերում՝ ըստ դասախոսների տարիքի: Երիտասարդ դասախոսներն ավելի առաջադեմ են և մասնագիտական գործունեություն ընտրելիս հիմնականում կողմնորոշվում են իրենց հետաքրքրություններով, մտավոր հակումներով և ձգտումներով: Ավելի մեծ տարիքի դասախոսներն առաջնորդվում են հարկադիր շահադրդման խմբի շարժառիթներով:

Անուղղակի շարժառիթների դինամիկայում նկատվում է բուհի դասախոսի մասնագիտության վարկանիշի կտրուկ նվազում երիտասարդների շրջանում, ինչը պայմանավորված է վերջին տարիներին հասարակության մեջ աշխատանքի այդ տեսակի նշանակալիության նվազմամբ:

Հարկադիր շարժառիթների խմբում հետաքրքրություն են ներկայացնում տղամարդկանց՝ զինվորական ծառայությունից խուսափելու հանգամանքը, իսկ կանանց՝ չնորմավորված ժամանակացույցով աշխատանքի այլընտրանքների սահմանափակությունը:

Բարձրագույն ուսումնական հաստատության դասախոսի մասնագիտության ընտրության՝ մեր ուսումնասիրությամբ բացահայտված շարժառիթների

իմացությունը կօգնի բուհում ներգրավված դասախոսների շահադրդման համակարգի կատարելագործման շուրջ որոշումների կայացմանը՝ հաշվի առնելով տարբեր տարիքային խմբի դասախոսների շարժառիթային առաջնահերթությունները: Միևնույն ժամանակ, շահադրդման կառավարման համար, գիտամանկավարժական կադրեր պատրաստելու առումով, անհրաժեշտ է հասկանալ, թե որ շարժառիթներն են հատկապես պայմանավորում մասնագիտության ընտրության հաստատակամությունը:

Հարցման ժամանակ, դասախոսի՝ աշխատանքից բավարարվածության կառուցվածքի ուսումնասիրության նպատակով առաջարկվել է պայմաններից յուրաքանչյուրը գնահատել 5-միավորային սանդղակով: Արդյունքում՝ բավարարվածության ամենաբարձր գնահատականը տրվել է ուսանողների հետ փոխըմբռնմանը, աշխատակիցների և ղեկավարության հետ փոխհարաբերություններին և ինքնիրացման հնարավորությանը: Միջին մակարդակում գտնվում են ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորությունները, առաջխաղացման, ուսումնամեթոդական ապահովվածությունը, իսկ ամենացածր մակարդակում՝ աշխատավարձը, աշխատանքի պայմանները, աշխատանքի ռեժիմն ու ծանրաբեռնվածությունը (գծանկար 6):



Գծանկար 6. *Աշխատանքի պայմաններից բավարարվածության կառուցվածքը*

«Բավարարվա՞ծ եք Ձեր աշխատանքից» հարցին 43,7%-ը պատասխանել է այո՛, 45,2%-ը ավելի շատ՝ այո՛, քան ո՛չ, 11.1%-ը ավելի շատ՝ ո՛չ, քան այո՛ (գծանկար 7):



Գծանկար 7. *Դասախոսների՝ աշխատանքից բավարարվածության մակարդակը*

Դիտարկենք հարցմանը մասնակցած դասախոսների՝ աշխատանքի պայմաններից բավարարվածության մակարդակը ուղղակի, անուղղակի և հարկադիր շահադրդման խմբերում.



Գծանկար 8. *Աշխատանքով բավարարվածությունն ըստ ուղղակի, անուղղակի և հարկադիր շահադրդման խմբերի*

Գծանկարից երևում է, որ մասնագիտության ընտրության ուղղակի շահադրդում ունեցող հարցվածների բավարարվածության մակարդակն ամենաբարձրն է, որին հետևում է անուղղակի շահադրդում ունեցողների ցուցանիշը: Երրորդ տեղում է հարկադիր շահադրդմամբ հարցվածների բավարարվածության մակարդակը: Օրինաչափության սահմաններից դուրս է միայն ցածր բավարարվածություն ունեցող հարցվածների բաշխվածությունն ուղիղ շահադրդման խմբում. նրանց թիվը գերազանցում է անուղղակի շահադրդման խմբում գտնվողների քանակը:

Դասախոսների կարծիքն ու վերաբերմունքն աշխատանքի տարբեր շարժառիթների նկատմամբ ավելի խորն ուսումնասիրելու նպատակով նրանց առաջարկվել է գնահատել դրանցից յուրաքանչյուրը: Արդյունքում, առանձնացնելով առավելագույն արժեքներ ստացած շարժառիթները, ստացվել է հետևյալ պատկերը.



Գծանկար 9. *Աշխատանքային շարժառիթների կառուցվածքն ըստ առավելագույն գնահատականի*

Փաստորեն, բուհի դասախոսների մեծ մասն առավելագույն արժեքով գնահատել է դասավանդվող առարկայի նկատմամբ հետաքրքրության, մտավոր աշխատանքով զբաղվելու և գիտելիքների հաղորդման շարժառիթները, իսկ ամենաքիչ չափով առավելագույն արժեք տվել են նյութական օգուտներին՝ 14,6%:

Այժմ, ավելի ամբողջական պատկեր ստանալու համար, ցույց տանք, թե ինչ փոխկապվածություն կա առավելագույն արժեքով գնահատված շարժառիթների և աշխատանքից բավարարվածության գործոնի միջև: Այդ նպատակով SPSS քանակական տվյալների վիճակագրական վերլուծական ծրագրի օգնությամբ կառուցենք կոռելյացիոն դաշտը (աղյուսակ 1):

Աղյուսակից երևում է, որ դասախոսների՝ աշխատանքից բավարարվածությունը ամենամեծ չափով պայմանավորված է նրանց գիտական աշխատանքով զբաղվելու հնարավորությամբ, որին հետևում է մանկավարժական ունակությունների իրացման հնարավորությունը:

Աղյուսակ 1

Աշխատանքի շարժառիթների նշանակության և բավարարվածության մակարդակի փոխադարձ կապը

	Բավարարվա՞ծ եք Ձեր աշխատանքից	
	կոռելյացիոն գործակից	նշանակալիություն
Բավարարվա՞ծ եք Ձեր աշխատանքից	1	
բարձր վարկանիշով մասնագիտություն	.155*	.012
մանկավարժական ունակությունների իրացման հնարավորություն	.251**	.000
գիտական աշխատանքով զբաղվելու հնարավորություն	.313**	.000
դասավանդվող առարկայի նկատմամբ հետաքրքրություն	.202**	.001
ինքնարտահայտման հնարավորություն	.177**	.004
ուսանողների հետ շփման հնարավորություն	.143*	.021
շփումներ ստեղծագործական կոլեկտիվում	.086	.164
մտավոր աշխատանք	.176**	.004
գիտելիքների հաղորդման ձգտում	.242**	.000
նյութական օգուտներ	.155*	.012

* կոռելյացիան նշանակալի է 0,01 մակարդակում (երկկողմանի)
** կոռելյացիան նշանակալի է 0,05 մակարդակում (երկկողմանի)

Դրան հակառակ, «շփումներ ստեղծագործական կոլեկտիվում» շարժառիթի հետ բավարարվածության գործոնը կոռելացվում է 0.086 գործակցով, որը նվազագույնն է: Ինչ վերաբերում է դասավանդվող առարկայի նկատմամբ հետաքրքրության, մտավոր աշխատանքով զբաղվելու և գիտելիքների հաղորդման շարժառիթներին, ապա աղյուսակից պարզ է դառնում, որ դրանց կոռելյացիոն գործակիցները բավականաչափ ցածր են, այսինքն՝ դասախոսի համար մեծ նշանակություն ունեցող շարժառիթները շատ փոքր դերակատարություն ունեն նրա՝ աշխատանքից բավարարվածության առումով. գոյություն ունի խզում շարժառիթների կարևորության և իրացման միջև: Այս հանգամանքի խորացումը կարող է բացասաբար անդրադառնալ տվյալ մասնագիտությամբ կադրերի աշխատանքի արդյունավետության վրա՝ նպաստելով հոսունության աճին:

Ամփոփելով նշենք, որ մեր կատարած հետազոտության արդյունքում բացահայտվել են դասախոսի աշխատանքի արդյունավետությունը պայմանավորող շարժառիթները, գնահատվել է դրանց ազդեցության աստիճանը, ուսումնասիրվել նշված աշխատանքից բավարարվածության և այդ շարժառիթներից յուրաքանչյուրի փոխազդեցությունը:

Բուհի շահադրդման մթնոլորտի բարձրացման (ակտիվացման) նպատակով պետք է առաջին հերթին խթանել հատկապես բարձր նշանակալիությամբ և ազդեցության բարձր աստիճանով օժտված գործոնը՝ դասախոսների գիտական աշխատանքով զբաղվելը: Այդ ուղղությամբ, առաջարկում ենք ապահովել դասախոսների ավելի լայն ընդգրկվածություն հետազոտական աշխատանքներում, խթանել նրանց մասնակցությունը միջազգային գիտական ծրագրերին և գիտաժողովներին:

МЕРИ БАДАЛЯН
Доцент кафедры "Экономики труда" АГЭУ, кандидат экономических наук

МАРИНЕ НИКОГОСЯН
Доцент кафедры "Маркетинга" АГЭУ, кандидат экономических наук

ЛИЛИТ ДАДАЯН
Доцент кафедры "Маркетинга" АГЭУ, кандидат экономических наук

Проблемы мотивации профессиональной деятельности преподавательского состава вуза.- В современных условиях эффективность деятельности любого вуза полностью зависит от качества труда преподавательского состава. Каждое высшее учебное заведение, которое преследует цель занять лидирующие позиции на рынке образования, обязано уделять должное внимание к проблемам мотивации преподавательского состава. В статье представлены результаты исследования труда преподавательского состава АГЭУ, цель которого выявить мотивы эффективности труда и изучить проблемы мотивации.

Ключевые слова: *мотивация, преподавательский состав, научно-педагогическая деятельность, высшее образование, профессиональная деятельность, мотивы, производительность труда.*

MERI BADALYAN
Associate Professor at the Chair of ,,Labor Economics" at ASUE, PhD in Economics

MARINE NIKOGHOSYAN
Associate Professor at the Chair of ,,Marketing" at ASUE, PhD in Economics

LILIT DADAYAN
Associate Professor at the Chair of ,,Marketing" at ASUE, PhD in Economics

Issues Related to Faculty Motivation at Higher Educational Institution.- The productivity of any university is currently completely dependent on the quality of the faculty's work. Each higher education institution that strives to become a pioneer in the education field, should firstly pay attention to the motivation of the faculty.

This article presents the research results that considered the factors of productivity and motivation for the faculty members at the ASUE.

Keywords: *motivation, faculty, research and teaching, higher education, professional work, motives, productivity.*

ԹԱԳՈՒՀԻ ՕՀԱՆՅԱՆ
ՀՊՏՀ կառավարման ամբիոնի դասախոս,
տնտեսագիտության թեկնածու

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՈՒՄԸ. ՆՊԱՏԱ՞Կ, ԹԵ՞ ՄԻՋՈՑ

Համայնքների խոշորացման հարցը երկարատև քննարկման թեմա է դարձել, և այսօր էլ ՀՀ Կառավարության որոշմամբ արդեն նախատեսված է երեք խումբ համայնքների խոշորացումը՝ որպես պիլոտային ծրագիր: Սակայն եթե խոշորացումը դիտենք որպես ֆինանսական միջոցներ տնտեսելու նպատակ, դա չի կարող արդարացված լինել, քանի որ անհրաժեշտ է շարժվել համայնքների եկամուտների ավելացման և ոչ թե ծախսերի կրճատման ճանապարհով: Իսկ եթե դիտարկենք որպես բնակչին տեղական ինքնակառավարման մարմինների լիարժեք ծառայություններ մատուցելու միջոց, դարձյալ արդարացված չէ, քանի որ այս դեպքում ծառայությունները բնակչին մոտեցնելու փոխարեն, դրանք հաճախ դարձնում ենք ավելի դժվարհասանելի:

Հիմնաբառեր. *համայնքների խոշորացում, տեղական ինքնակառավարում, համայնք, բնակավայր, բնակչություն, միջհամայնքային միավորում*

Երկար ժամանակ է, ինչ տարբեր մակարդակներում քննարկման թեմա է դարձել ՀՀ-ում համայնքների խոշորացման հարցը: Դրա վերաբերյալ կան իրարամերժ մոտեցումներ:

Այսպես. խոշորացման կողմնակիցները կարծում են, որ համայնքների խոշորացման արդյունքում կտնտեսվեն շոշափելի ֆինանսական միջոցներ՝ հաշիվ վերջիններիս ղեկավար աշխատակազմի թվի կրճատման, ինչն էլ հնարավորություն կտա որոշակի մեծածավալ խնդիրներ լուծելու խոշորացված համայնքում:

Խոշորացմանը դեմ արտահայտվողներն էլ համարում են, որ տարածական մեծ հեռավորությունը բնակավայրերի միջև բնակչության մեծ մասին կզրկի տեղական ինքնակառավարման մարմինների ծառայություններից օգտվելու հնարավորությունից, խոչընդոտ կհանդիսանա բնակչության ակ-

տիվ մասնակցությանը տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքներին:

Դեռևս 2007 թ. մեր հրատարակած հոդվածներում անդրադարձել ենք այս խնդրին[1]: Այժմ էլ, երբ խնդիրն օրակարգում է, և ՀՀ Կառավարության որոշմամբ նախատեսվում է երեք խումբ համայնքների խոշորացում՝ որպես պիլոտային ծրագիր, մենք նույն կարծիքին ենք մնում. ելնելով ներկայիս իրավիճակից՝ համայնքների խոշորացումն առանձին դեպքերում անխուսափելի է, սակայն միայն առանձին դեպքերում և համապատասխան հիմնավորմամբ, քանի որ համայնքների խոշորացումը չի կարող լինել նպատակ: Եթե խոշորացումը դիտենք որպես ֆինանսական միջոցներ տնտեսելու նպատակ, այն արդարացված չի լինի, քանի որ հարկ է առանցքային համարել համայնքների եկամուտների ավելացումը, այլ ոչ թե ծախսերի կրճատումը: Խնդրի դիտարկումը բնակչին տեղական ինքնակառավարման մարմինների լիարժեք ծառայություններ մատուցելու տեսանկյունից՝դարձյալ արդարացված չէ, քանի որ, այս դեպքում ծառայությունները բնակչին մոտեցնելու փոխարեն, շատ դեպքերում, դրանք ավելի դժվարհասանելի կարող են դառնալ:

Համայնքների ֆինանսական միջոցներն ավելացնելու և բնակչությանը տեղական ինքնակառավարման մարմինների լիարժեք ծառայություններ մատուցելու նպատակով անհրաժեշտ է զարգացնել համայնքների տնտեսությունները: Համայնքների խոշորացման արդյունքում բնակչության թվի մեխանիկական մեծացումը տնտեսության զարգացման երաշխիք լինել չի կարող, քանի որ, ըստ բնակավայրերի, բնակչության թիվը չի ավելանում. որոշ դեպքերում կարող է նույնիսկ նվազել՝ կապված միավորվող համայնքների աշխատակազմի քանակի կրճատման հետևանքով գործազրկության ավելացման հետ:

Փաստորեն, գործ ունենք խնդրի հետևանքների և ոչ թե պատճառների հետ: Իսկ խոշորացման միջոցով փորձելով վերացնել հետևանքները՝ մենք չենք լուծում խնդիրը:

Որպես օրինակ՝ անդրադառնանք Լոռու մարզի Թումանյան համայնքի կազմավորմանը (աղյուսակ 1):

Եթե հաշվի առնենք, որ Լորուտ, Շամուտ, Աթան և Ահնիձոր համայնքները Թումանյան համայնքից 20–26 կմ հեռավորության և ծովի մակերևույթից 1500–1650 մ բարձրության վրա են գտնվում, իսկ Թումանյան համայնքը՝ 810 մ բարձրության վրա, ապա, կարծում ենք, արդարացված կլիներ այս չորս համայնքների խոշորացումը Լորուտ կենտրոնով, որն ունի բնակչության կայուն քանակ և ծառայություններ մատուցելու անհրաժեշտ ենթակառուցվածքներ՝ ավագ դպրոց, հիվանդանոց, մանկապարտեզ, մշակույթի տուն և այլն: Քարինջ և Մարց համայնքները կարելի էր միացնել Թումանյան համայնքին. հեռավորությունը 3–5 կմ է: Արդյունքում՝ կունենանք երկու խոշորացված հա-

---

[1] **Թ. Օհանյան,** Կադրային քաղաքականության հիմնախնդիրները ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում, Ազգային կրթական համակարգի բարեփոխումները. պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների 21-րդ գիտական նստաշրջանի նյութեր: Եր., «Տնտեսագետ», 2007, էջ 145-148:

Թ. Օհանյան, Միջհամայնքային միավորումների ձևավորման անհրաժեշտությունը ՀՀ-ում, ՀՀ և ՌԴ տնտեսությունների նորաստեղծական զարգացման հիմնախնդիրները. միջազգային գիտաժողովի նյութեր: Եր., «Տնտեսագետ», 2011, էջ 538-540:

Թ. Օհանյան, Գյուղացիական տնտեսությունների զարգացման հիմնախնդիրները ՀՀ սահմանամերձ համայնքներում: Եր., «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», 2012, N5 (143), էջ 53-55:

մայնք՝ համապատասխանաբար 1653 և 2913 բնակիչներով: Միաժամանակ, կխուսափենք տրանսպորտային անհարկի ծախսերից:

Աղյուսակ 1

Լոռու մարզի խոշորացվող համայնքները

	Համայնք	Բնակչության թիվը (մարդ, 01.01.2014 թ.)[2]	Բարձրությունը ծովի մակերևույթից (մ)
1.	Թումանյան (քաղաք)	1696	810
2.	Աթան	218	1650
3.	Ահնիձոր	199	1500
4.	Լորուտ	1026	1500
5.	Մարց	568	1050
6.	Շամուտ	210	1500
7.	Քարինջ	649	1230

Անհրաժեշտ է վերացնել համայնքների տնտեսությունների զարգացմանը խոչընդոտող պատճառները: Դրանք, մեր համոզմամբ, պայմանավորված են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերության և տեղական ինքնակառավարման համակարգի անկատարությամբ ու անարդյունավետությամբ: Այս տեսանկյունից՝ առաջարկում ենք խնդրի լուծման երկու տարբերակ.

1. Վերանայել ՀՀ վարչատարածքային բաժանումը, վերադառնալ նախկինում գործող շրջանային համակարգին. ձևավորել համայնքների ղեկավարների շրջանային խորհուրդ և խորհրդի նախագահին օժտել նաև պետական կառավարման լիազորություններով շրջանի տարածքում՝ ապահովելով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման հնարավորությունների համադրումը շրջանի տնտեսության զարգացման նպատակով, ինչը ենթադրում է երկմակարդակ տեղական ինքնակառավարման համակարգ:
2. Կազմակերպել շրջանային կառուցվածքին համահունչ միջհամայնքային միավորումներ (կամ համայնքների միություններ)՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 78–80 հոդվածների, համայնքների ղեկավարների խորհրդի նախագահին տալ նաև պետական կառավարման լիազորություններ՝ աստիճանաբար մարզպետարանների լիազորությունները հանձնելով վերջինիս: Մարզպետարանների լուծարման արդյունքում կկրճատվեն վարչական ծախսերը, կավելանան միջհամայնքային միավորումների լրացուցիչ ֆինանսավորման հնարավորությունները: Փոխարենը՝ Կառավարության լիազոր մարմնի կազմում կարելի կլինի, ըստ անհրաժեշտության, ավելացնել տարածաշրջաններում աշխատանքները համակարգող փոխնախարարների հաստիքներ:

Եթե առաջարկվող առաջին տարբերակում անհրաժեշտ է քաղաքական որոշում, այն է՝ վարչատարածքային բաժանման հետ կապված սահմանադրական փոփոխություններ, ապա երկրորդ տարբերակի պարագայում քա-

[2] Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզը թվերով, 2014 (http://armstat.am/file/doc/99489488.pdf):

ղաքական որոշման անհրաժեշտություն չկա: Ավելին, դա պարունակում է համայնքների խոշորացման տարրեր: Այսպես՝

- ֆինանսական որոշակի միջոցների կենտրոնացում,
- միջհամայնքային համատեղ ծրագրերի կազմում և իրականացում,
- ըստ համայնքների՝ գյուղատնտեսական աշխատանքների ծրագրավորում և իրագործում,
- գյուղատնտեսական տեխնիկայի արդյունավետ օգտագործում,
- վառելիքի, սերմացուի, քիմիկատների, պարարտանյութերի պաշարների ստեղծում,
- ստացված բերքի իրացման և վերամշակման կենտրոնացված կազմակերպում և այլն:

Արդյունքում՝ կպահպանվի համայնքների ինքնուրույնությունը, ինչը հնարավորություն կտա բնակչին ստանալու տեղական ինքնակառավարման մարմինների լիարժեք ծառայություններ և, ցանկության դեպքում, ակտիվորեն մասնակցելու դրանց աշխատանքներին: Այդ իրավունքը Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հիմնարար սկզբունքներից է: Ավելին, 2013 թ. փետրվարի 2-ին ՀՀ ԱԺ-ն ընդունել է որոշում «ՀՀ Ազգային ժողովի որոշումը Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի «Տեղական ինքնակառավարման մարմիններում մասնակցության իրավունքի վերաբերյալ» լրացուցիչ արձանագրությունը վավերացնելու մասին», որով նախատեսվում է «վավերացնել 2009 թվականի նոյեմբերի 16-ին Ուտրեխտում ստորագրված՝ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի «Տեղական ինքնակառավարման մարմիններում մասնակցության իրավունքի վերաբերյալ» լրացուցիչ արձանագրությունը՝ ելնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2013 թվականի հունվարի 22-ի ՍԴՈ-1067 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումից՝ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին համապատասխան»: Հետևապես՝ վերը նշված հիմնարար սկզբունքների և ՀՀ Սահմանադրական դատարանի ընդունած որոշման պահանջների խախտումը, որևէ հիմնավորմամբ, անընդունելի է:

ТАГУИ ОГАНЯН
Преподаватель кафедры ,,Менеджмента" АГЭУ,
кандидат экономических наук

Укрупнение общин – цель или средство?.- Долгое время в разных кругах стал темой обсуждения вопрос об укрупнении общин, и уже сегодня решением правительства РА в качестве пилотной программы предусмотрено укрупнение трех групп общин. Укрупнение общин с целью экономии финансовых средств не может быть оправданным, так как нужно думать об увеличении доходов, нежели находить пути сокращения расходов. С другой стороны, укрупнение как средство предоставления гражданам полноценных услуг органов местного самоуправления также не может быть оправданным, так как в этом случае услуги, возможно, могут стать труднодоступными для граждан.

Ключевые слова: *укрупнение общин, местное самоуправление, община, населенный пункт, население, межобщинное объединение.*

TAGUHI OHANYAN
Lecturer at the Chair of ,,Management" at ASUE,
PhD in Economics

Is Community Enlargement a Purpose or a Means?- The issue of community enlargement has been one of the main dispute questions. Armenian government has currently launched a pilot programme providing the enlargement of three groups of communities. Community enlargement aiming to save financial means can't be justified as first of all we should be concerned about an increase in incomes rather than reducing costs. On the other hend, enlargement as a means of providing citizens with full – range services by local government can't be justified either, as in this case services may be inaccessible or beyond reach for citizens.

ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ
ՀՊՏՀ կառավարման ամբիոնի պրոֆեսոր,
փիլիսոփայական գիտությունների դոկտոր

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԸ՝ ՀԱՅՈՑ ՎԱՐՔԱԲԱՆ

Հոդվածում քննարկվում են հայ մեծ երգիծաբանի ասույթները հանրային և անհատական կյանքի կարգավորման վերաբերյալ: Բնութագրվում են պարոնյանական հեգնաբանության մեթոդի առանձնահատկությունները, հանրային կյանքի հակասությունները, «այր – կին» փոխհարաբերությունների կարգավորման լուծումները, հայոց համայնքային կյանքին բնորոշ երևույթների գնահատականները, օտարամոլության դրսևորումների պախարակումը, հրապարակային խոսքի հանդեպ պատասխանատվության շեշտադրումը և այլն: Պարոնյանի բազում ասույթներ արդիական են և գործադրելի հանրային կառավարման հայաստանյան ներկայիս համակարգում:

Հիմնաբառեր. *Հակոբ Պարոնյան, ազգաշահ հեգնաբանություն, հայոց վարքագիծ, սեռադաշնություն, վարքականոն, հրապարակային խոսք*

Ժամանակն եկած է, որ հայն սկսի
վստահություն տածել յուր վրա:

Համաշխարհային գրականությունը հարուստ է վճռակի (աֆորիզմ) ժանրով: Մարդկանց հանրային վարքուբարքը խորապես բնութագրող, սեղմ ու իմաստալից, տպավորիչ ու հիշվող ասույթներ են թողել Կոնֆուցիոսը, Սենեկան, Մոնտենը, Բեկոնը, Շեքսպիրը, Հելվեցիուսը, Բեյլը, Գյոթեն, Լառուշֆուկոն, Շոպենհաուերը, Նիցշեն… Հակոբ Պարոնյանը (1843–1891) եղավ մեզանում այս ժանրի սկզբնավորողն ու անզուգական հեղինակը, թեպետ նրա այս վաստակը զարմանալիորեն անտեսվում է հանրագիտարանային և դասագրքային մեկնաբանություններում: Մինչդեռ, մեծ երգիծաբանի հանրահայտ («Ատամնաբույժն արևելյան», «Պաղտասար աղբար», «Քաղաքավարության վնասները», «Մեծապատիվ մուրացկաններ», «Ազգային ջոջեր», «Հոսհոսի ձեռատետրը») և ոչ այնքան հայտնի երկերում շռայլորեն սփռված են նրբագեղ ու խորիմաստ ասույթներ, բարոյախոսական հզոր ներուժի դիտարկում-

ներ, մարդկային փոխհարաբերությունների կարգավորմանն ուղղված խորհուրդներ:

Ազգաշահ հեգնաբանությունը որպես վարքագրության մեթոդ

Իհարկե, Պարոնյանը նախևառաջ հանճարեղ երգիծաբան է. կենսական ամենատարբեր իրավիճակները տեսնում է երգիծաբանի աչքերով: Հայ մեծ գրողի ամեն մի էջը երգիծանքի շքահանդես է, անզուսպ քրքիջ է կորզում ընթերցողից: Ծիծաղը, սակայն, երբեք ինքնանպատակ չէ: Իր իսկ բնութագրմամբ՝ գրում է ոչ թե փափուկ ստամոքսի տեր ընթերցողների համար, ոչ էլ ախորժակ բացելու համար. «քանի մը ժպիտ քաղել յուր ընթերցողներեն»՝[1] սա է նվազագույն ակնկալիքը:

Զավեշտի պարոնյանական մեթոդաբանության սկզբունքներից մեկը շատ նման է «մի՛ վնասիր» հինավուրց պահանջին: «Ազգային ջոջեր» դիմանկարների շարքի առաջաբանում Պարոնյանը բացատրում է, որ ձեռնարկել է ազգի երևելիների կենսագրական նկարագրությունը (որքա՜ն ենք այսօր զգում նման ձեռնարկի կարիքը)՝ ձգտելով «անոնց թերություններն ցույց տալ այն անաչառությամբ, որ կենսագրե մը կը պահանջվի՝ առանց սակայն դուրս ելնելու հեգնաբանության սահմանեն»[2]: Կանանց վարքուբարքին վերաբերող դիտարկումների առթիվ նրբին կնամեծարությամբ նկատում է. «Չպիտի ջանամ ձեզի հաճելի լինելու, ջանահնար պիտի լինիմ ձեզի օգտակար ըլլալու: Ուստի, մի՛ բարկանաք, եթե դառն ճշմարտությանց բախիք ճառիս ընթացքին մեջ: Վստահ եղեք, որ կը սիրեմ զձեզ և ձեր բարվույն համար կ'աշխատիմ»[3]:

Կարելի է, անտարակույս, կյանքում ու գրականության մեջ գերլավատեսություն քարոզել, փառաբանել սեփական ազգի եղած ու չեղած բարեմասնությունները, սակայն հարց տանք մեզ՝ ո՞ր դիրքորոշումն է առավել ազգային ու նաև մարդասիրական՝ անհիմն գովաբանությո՞ւնը, թե՞ սթափ քննադատությունն ու ինքնաքննադատությունը: Պարոնյան մարդասերը տեսնում և արձանագրում է համամարդկային ու ազգային թերությունները՝ որպես ճշմարիտ ազգասեր ու մարդասեր. «Մարդերու թերությունները տեսնելուս համար է որ չեմ սիրեր զանոնք և ո՛չ թե զանոնք չսիրելու համար անոնց թերությունները միայն կը տեսնեմ»[4]: Բացի դրանից, եթե որևէ թերություն, մոլորություն, արատ ծաղկում ենք, ապա նպատակը դրա ոչ թե ամրագրումն է, առավել ևս՝ անմիտ կրկնօրինակումն ու բազմապատկումը, այլ վերացումը. «Մոլություններու վրա ծիծաղիլն առաքինության ճամբուն մեջ գտնվիլ կ'ենթադրե և, այս հաշվով, որչափ շատ ծիծաղ քաղեմ՝ այնքան նվազ մոլություն պիտի գտնեմ»[5]:

Իսկ արտաքուստ անխնա, մանավանդ հասցեագրված վերաբերմունքը բացատրվում է ծիծաղաբուժության պարոնյանական մեթոդաբանությամբ: Չէ՞ որ ինքը կամովին է ընտրել երգիծաբանի դերը, ուրեմն այդ դերը պիտի կատարի, և նրանից այլ բան պահանջելը պահանջողի սխալ ակնկալիքը, զուր պահանջն է: Հենց ինքն է մեզ դա հայտնում՝ գործածելով փայլուն մի

---

[1] **Հ. Պարոնյան**, Ազգային ջոջեր // Երկերի ժողովածու տասը հատորով (այսուհետև՝ ԵԺ), հ. 2, Եր., 1964, էջ 7:
[2] Անդ:
[3] Այս և հաջորդաբար նշվող բոլոր ստեղծագործությունների հեղինակը **Հ. Պարոնյանն** է: Առտնին տեսարաններ // ԵԺ, հ. 6, Եր., 1968, էջ 325:
[4] Լուսարարի նամակները // ԵԺ, հ. 4, Եր., 1965, էջ 483:
[5] Հոսհոսի ձեռատետրը // ԵԺ, հ. 4, Եր., 1965, էջ 375–376:

փոխաբերություն. «Կ'ուզեն, որ քծնիմ, շողոքորթեմ՝ երբ պաշտոնիս բնությունը հակառակն կը հրամայե ինձ: Պարտեզիս մեջ եղինճ կը բուսնի, անոնք դափնի կ'ուզեն»[6]: Եվ չմոռանանք, որ երգիծաբանի դերակատարումը որոշակի պահանջներ է ներկայացնում իրեն՝ երգիծաբանին. «Երգիծանքը նետ մ' է,– բացատրում է Պարոնյանը՝ վերստին գործածելով մի տպավորիչ փոխաբերություն,– որքան ի հեռուստ արձակվի, այնքան ավելի կը կորուսնե յուր ուժն մինչև որ նպատակին հասնի և, ինչ որ ցավալի է, շատ անգամ նպատակեն կը շեղի և կերթա ուրիշ մը վիրավորելու»[7]:

Պարոնյանն ինքը անվրեպ «նետաձիգ» է: Դյուրին է համոզվել, թե ինչպես կենցաղային, ընտանեկան, զուտ միջանձնային հաղորդակցման զանազան իրադրությունները («առտնին տեսարանները», «առտնին կռիվները», «քաղաքավարության վնասները») պատկերվում են մեղմ, բարյացակամ, հանդուրժող, խնայող գույներով, ինչպես են փոխվում հեղինակի բառապաշարն ու ոճը երեսպաշտներին, կեղծավորներին, շահամոլներին, պոռոտախոսներին ծաղկելիս, վերջապես՝ որքան սպանիչ է նրա քաղաքական ծաղրը՝ ուղղված թուրքական «բարեխնամ» կառավարության սուտ բարենորոգումների, անօրինությունների, բռնադատումների, բարոյազրկող իրականության, հայոց օտարամոլության, համայնքի վերնախավի անմիաբանության, պառակտիչ կուսակցամոլության դրսևորումների դեմ:

Իհարկե, ամեն ոք ընդունակ չէ ստույգ ընկալելու զավեշտը, և որքան վերջինս նրբահնար է, հիմնված ոչ թե բացեիբաց ասվածի, այլ ակնարկության, այլաբանության, բառախաղի վրա, այնքան ավելի նեղ է ընկալողների շրջանակը: Պարոնյանի օրոք չեն եղել այն հավելյալ միջոցները, որոնցից այսօր հեռուստաեթերի երգիծաբաններն են օգտվում, օրինակ՝ հաղորդման փոքրիշատե զավեշտական (իրենց ընկալմամբ) դրվագներն ուղեկցելով յուրատեսակ «հուշարարով»՝ ձայնագրված հռհռոցով: Մինչդեռ Պարոնյանը շիփ-շիտակ արտահայտում է իր վերաբերմունքը, խոստովանում, որ չի էլ ձգտում բոլորին գոհացնել, հատկապես նրանց, «որք ուխտ և երդում ըրած են բնավ չխնդալու»: Այս մտքի շարունակությունը պարոնյանական ծաղրի գլուխգործոցներից է. «Այդպիսիններու հետ գործ չունիմ, վասնզի ատոնց երեսեն ժպիտ քաղելն ավելի դժվար է, քան թուրք կառավարութենե բարենորոգում հուսալն, մանավանդ երբ նկատողության առնեք, որ ճնշում բանեցնելու համար չունիմ ես ո՛չ ծանուցագիր, ո՛չ դեսպանաժողով և ո՛չ էլ նավատորմիղ»[8]:

Վերջապես ամենաէականն այն է, որ պարոնյանական անողոք երգիծանքն անգամ հագեցած է հայ մարդու և հայ հանրության բարեփոխման հնարավորության անսասան հավատով: Ահավասիկ մարդկային փոխհարաբերությունների գիտակի հավատո հանգանակը՝ սեփական ընթերցողներին ուղղված խոստովանություն-խոստումի ձևով. «Այսօրվնե սկսյալ ամեն օր պիտի խնդաք. և ասոր պատճառն ուրիշ բան չէ՝ եթե ոչ իմ սա համոզումս, թե մարդիկ այս դժբախտությամբ լի աշխարհին մեջ ամեն օր խնդալու պետք ունին, իսկ մեր ազգին հիմակվան վիճակին մեջ հայերն ամեն ժամ, ամեն վայրկյան խնդալու պետք ունին…. Այս մեծ պաշտոնը՝ որուն փոքրիկ պաշ-

[6] Ծիծաղ // ԵԺ, հ. 5, Եր., 1965, էջ 23:
[7] Անհայտ էջեր և աֆորիզմներ, Եր., 1964, էջ 186:
[8] Հոսհոսի ձեռատետրը, էջ 376:

տոնյան ըլալու անարժանությունն ունիմ, ազգին շատ օգտակար պիտի ըլլա»[9]:

Եվս մի նկատառում Պարոնյանի մեթոդի վերաբերյալ: «Ազգային ջոջերի» շարքում նա կերտում է նաև ազգաշահ գործունեություն ծավալած անձանց: Ի՞նչ աներ, հրաժարվեր դրական կերպարներից, այսինքն՝ այն վիճակից, երբ «հեգնելու վարժված գրիչ մը» հարկադրված է դրվատական խոսք ասելու: Ահա և Պարոնյանը զավեշտն ուղղում է իր իսկ դեմ՝ ճարտար երկխոսությամբ հիմնավորում դրական բնութագրումը. «Ի՞նչ ընելու է ուրեմն, թո՞ղ տալու է, որ բարի մարդերն առանց հիշատակի անցնին երթան, որովհետև իմ գրիչս գովել չգիտեր: Բնա՛վ երբեք: Այդ բարի մարդերն իմ գրիչիս հարմարցնելու համար անոնց վրա թերություննե՞ր ստեղծելու է: Քավ լիցի»[10]:

Ազգաշահ հեգնաբանության հիմնադիրը կյանքով ու գործով է ապացուցել իր համոզումի ճշմարտացիությունը: Եվ մեզանից՝ մեծ զավեշտաբանի հետնորդներից է նաև կախված, թե որքանով իրոք ազգօգուտ կլինի Պարոնյանի ժառանգությունը, ինչկերպ առավելագույնս կօգտվենք նրա խրատներից ու դատողություններից: Դե, իսկ եթե Պարոնյանի ծաղրը ոմանց խիստ անձնավորված թվա, ապա դա էլ է նա գուշակել ու կանխել՝ պարզեիպարզ հայտարարելով. «Եթե կուզես որ դադրեմ զքեզ ծաղրելե, դադրե ծաղրելի ըլլալե»[11]: Արդ՝ մեր խնդիրը պիտի լինի զավեշտի խորքը թափանցել և տեսնել Պարոնյան խրատատուին, ըմբռնել նրա խրատներն ու հորդորները, դարձնել դրանք մեր վարքականոնի հիմքը, դրանցով հագեցնել հայազգիների դաստիարակությունը: Դա է իրական հարգանքը մեր մեծերի հանդեպ և ազգային ինքնության պահպանման ու զորացման երաշխիքը:

Վարքաբանի դիտարկումները

Մարդկանց համակեցության զանազան կողմերին վերաբերող խորը դիտարկումներով մեր առջև հառնում է Պարոնյան հոգեբանը, բարոյագետը, հանրաբանը, մանկավարժը: Այստեղ հարկ է նկատել, որ ամեն մի հայ գրողի առումով էլ կարող ենք, թերևս, գործածել «հայոց վարքագիր» բնութագրումը, քանի որ նրա երկերում անխուսափելիորեն արտացոլվում են հայկական իրողությունները, հայոց ապրելակերպը, գործելակերպը, մտածելակերպը, վարքուբարքը: Բայց եթե շատերի դեպքում արտացոլումը միջնորդավորված է, ապա Պարոնյանի պարագան այլ է. նա նպատակադրված է ուսումնասիրում իր ժամանակի, այսինքն՝ XIX դարի երկրորդ կեսի Արևմտյան Հայաստանի քաղաքաբնակ և գյուղաբնակ հայ մարդկանց վարքը: Հենց միայն «Պտույտ մը Պոլսո թաղերու մեջ» ակնարկաշարը մեզ եզակի տեղեկություն է տալիս Պոլսի թաղամասերի հայության ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձնահատուկ հոգեբանության, բարոյականության, կենցաղի, սովորույթների մասին: «Ազգային ջոջերի» կերպարները տարբեր զբաղմունքի տեր հայ մարդիկ են, որոնց հեղինակը մեզ է մատուցում ոչ միայն երգիծաբանի գունեղ գրչով, այլև պարսավական կամ դրվատական գնահատական տալիս նրանց իրական մասնակցությանը հայոց համայնքային կյանքին, հաղորդում կենսագրական արժեքավոր տեղեկություններ՝ դառնալով սկզբնաղբյուր այդ մարդկանց գործունեության հետագա ուսումնասիրության համար:

---

[9] Վերջին ծանուցում // ԵԺ, հ. 9, Եր., 1975, էջ 137:
[10] Ազգային ջոջեր, էջ 187:
[11] Անհայտ էջեր և աֆորիզմներ, էջ 136:

Պարոնյանն ինքն էլ հստակորեն բացահայտել է իր վարքաբանական դիտարկումների անսպառ աղբյուրը. «**Լավագույն է մարդ մ'ուսումնասիրել քան տասն գիրք»**[12]**:** Եվ կարևոր է հասկանալ, որ մարդ արարածի հայի տեսակի վարքագծին վերաբերող պարոնյանական դիտարկումները ոչ թե դրվագային, մեկուսի, ցրված արձանագրումներ են, այլ ամբողջական մի համակարգ, որի արժեքը մենք՝ XXI դարի հայերս, ըստ արժանվույն դեռ նոր պիտի գնահատենք ու, ամենակարևորը, գործադրենք մեր հանրային կյանքի կազմակերպման խնդիրների լուծման մեջ:

«Աշխարհը թատրոն է, իսկ ես՝ հուշարար»[13]**,-** մի առիթով նկատում է Պարոնյանը: Հավելենք, որ այդ հուշարարը խորազգաց է, նրբանկատ, բնավ չի պարտադրում իր կարծիքը: Այդուհանդերձ, մեկ անգամ իսկ կարդալով Պարոնյան՝ հասկանում ենք, որ կյանքի թատերաբեմում մեր դերերն արժանապատվորեն կատարելու համար նման հուշարարն անփոխարինելի է: Պարոնյանի բարոյախոսությունը խորապես մարդասիրական է՝ ուղղված բանական մարդու ինքնաճանաչմանը, առօրյա նիրհից, կենցաղային թմբիրից արթնացնելուն. «Մարդիկ կան որոնք կապրին և կը շարժին առանց ամենևին տեղեկություն մը ունենալու այն աշխարհին վրա, զոր աղմուկով կը լեցնեն, ինչպես ճանճերը կը թռչին և կը բզզան առանց կենդանաբանություն գիտնալու»[14]:

Մարդը հասարակական էակ է, ուստի ամենից առաջ պիտի կարողանա կարգավորել համակեցությունը: Իսկ հանրային բնականոն կյանքի ապահովման համար մարդը պիտի ձգտի ճանաչել իր նմանին. սա է Պարոնյան վարքաբանի հիմնադրույթը. «Մարդս որչափ որ պարտավոր է ինքզինքը ճանչնալ՝ նույնչափ և թերևս ավելի պարտավոր է դիմացինը ճանչնալ, որովհետև դիմացինը ճանչնալը իր չափը ճանչնալու մեծ դյուրություն կուտա մարդուս»[15]: Այս հիմնադրույթի փայլուն մասնավորեցումներից մեկը՝ «Այլոց հաջողություններեն ավելի սխալանքեն օգուտ կը քաղվի»[16]:

Հանրային կյանքի հակասությունները Հակոբ Պարոնյանն արձանագրում ու բնութագրում է՝ ստեղծելով փայլուն համեմատություններ, փոխաբերություններ, ակնարկություններ, բառախաղեր.

- Իրավ է, որ շատ աղքատներ առանց բժշկի կը մեռնին. բայց ո՞րչափ բժիշկներ ալ կան, որ առանց հիվանդ կը մեռնին[17]:
- Հիվանդություններն ալ այն ատեն կը ճանաչեն՝ երբ հիվանդը մեռնի: Չկա մեռյալ մը՝ որուն ի՛նչ հիվանդութենե մեռած ըլլալն չհասկցվի, ինչպես որ չկա հիվանդ մը, որուն ինչ հիվանդութենե բռնված ըլլալը հասկցվի[18]:
- Առաքինությունն լավ բան է, բայց ո՞ւր գտնելու է այն կլիման, որու ներքո միայն կարող է ապրիլ այն[19]:
- Մեր բոլոր ժողովներուն մեջ արդարությունը միշտ կը փայլի յուր բացակայությամբը[20]:

---

[12] Քաղվածք // ԵԺ, հ. 7, Եր., 1969, էջ 362:
[13] Ի՞նչ է կինը // ԵԺ, հ. 6, Եր., 1968, էջ 198:
[14] Անհայտ էջեր և աֆորիզմներ, էջ 133:
[15] Անդ:
[16] Խորհրդածություն «Թատրոնի» // ԵԺ, հ. 9, Եր., 1975, էջ 311:
[17] Հոսհոսի ձեռատետրը, էջ 382:
[18] Անդ, էջ 421:
[19] Ծիծաղ, էջ 112:
[20] Ազգային ջոջեր, էջ 21:

- Ծերք կը սիրին բարի խրատներ տալը, ի մխիթարություն չար օրինակ ըլլալու անկարող ըլլալուն[21]:
- Ավելորդ բաներ գնողը՝ հարկավորները կը հարկադրի ծախելու[22]:
- Մարդիկ գինիի կը նմանին, որ հիննալով, աղեկները լավագույն կ'ըլլան, իսկ գեշերը կը թթվին[23]:
- Չարագործք գայլերու կը նմանին, որոնք մեկզմեկ երբեք չեն հոշոտեր[24]:
- Շահասիրությունը ամեն դերերեն զատ մինչև իսկ անշահասիրության դերերն կատարող լավ գուսան մ' է[25]:
- Մի՛ զարմանաք, երբ տեսնեք, որ տգետները խրատ մտիկ չեն ըներ: Խրատ դեղ մ' է, որ ականջով կ'ուտվի. կա՞ տղա մը, որ դյուրությամբ դեղ առնե[26]:

Կարծես սրածայր նշտարով՝ Պարոնյանը կտրում է **մարդկային արատների** թարախապալարները, բացահայտում անողոք ճշմարտությունը և, միաժամանակ, մատուցում դա իբրև սպեղանի.

- Ծուլությունն է, որ տաղտուկը ստեղծած է աշխարհիս վրա[27]:
- Անամոթն ամեն մտահոգութենե և ամեն մտատանջութենե զերծ է, անամոթն բանե մը չամչնար, միայն ամչնալու կ'ամչնա[28]:
- Չես սիրվիր՝ թե որ զքեզ միայն կը սիրես[29]:
- Ապերախտ մարդիկ այն շուներուն կը նմանին, որ ոսկոր մը նետողեն ավելի ոսկորը կը սիրեն[30]:
- Ինքզինքեն գոհ մարդ մը ամեն բանե դժգոհ է[31]:
- Չլսել ուզողներն ամենախուլ մարդիկ են[32]:

Լավատեսական կենսափիլիսոփայությամբ և վարքակարգավորիչ հզոր ներուժով են օժտված, նաև հույժ արդիական են Հակոբ Պարոնյանի ձևակերպած **համակեցության կանոնները**.

- Անձիդ անաչառ, իսկ այլոց ներող եղիր[33]:
- Տվածդ մոռցի՛ր, իսկ առածդ հիշե[34]:
- Ավելի կը վախնամ, որ իմ ուրիշներուն վրա ունեցած կարծիքս չփոխվի, քան թե ուրիշներուն իմ վրա ունեցած կարծիքը[35]:
- Մարդ ըսելու մարդն ան է՝ որ ըլլալու չարյաց նախատես կ'ըլլա, ու երբոր չարիքը հասնի՝ սիրով կը համբերե ու կը հաղթե[36]:
- Գիտուն ըլլալու ամենեն պարկեշտ և ուղիղ ճամբան յուր տգիտությունն ճանչնալն է[37]:

---

[21] Քաղվածք, էջ 336:
[22] Առածներ // ԵԺ, հ. 10, Եր., 1979, էջ 172:
[23] Քաղվածք, էջ 336:
[24] Խորհրդածություն «Թատրոնի», էջ 310:
[25] Անդ, էջ 311:
[26] Խորհրդածություն Մեղուի // ԵԺ, հ. 8, Եր., 1972, էջ 374:
[27] Անհայտ էջեր և աֆորիզմներ, էջ 134:
[28] Ժամանակիս պահանջմանց համաձայն կրթական ծրագիր մը // ԵԺ, հ. 10, Եր., 1979, էջ 344:
[29] Առածներ, էջ 171:
[30] Խորհրդածություն «Թատրոնի», էջ 310:
[31] Քաղվածք, էջ 361:
[32] Խորհրդածություն «Թատրոնի», էջ 311:
[33] Քաղվածք, էջ 361:
[34] Անդ:
[35] Խորհրդածություն Մեղուի // ԵԺ, հ. 8, Եր., 1972, էջ 375:
[36] Քաղվածք, էջ 356:
[37] Ծիծաղ, էջ 29:

- Եթե ո՛չ լավ՝ գոնե մարդու պես խոսելու համար քիչ խոսելու է[38]:
- Հայհոյությունը այնպիսի տկար զենք մ' է, որ զենք կրողին տկար ըլլալը կը հայտնե: Այդպիսի զենք մը զինք գործածողին վնասակար և թշնամվույն շահավոր է[39]:
- Տեղ մ' ալ չհասնիր ան մարդը, որն որ ամեն տեսած ճամբան կը բռնե[40]:
- Շատեր իրենց մեկ սխալն արդարացնելու համար անարդարանալի և ծիծաղելի սխալներ կը գործեն: Սխալն ճանչնալը խելացություն է, իսկ զայն խոստովանիլն՝ մեծ քաջություն[41]:
- Բարիին վարժեցուցեք ձեր լեզուն, ձեր աչերը, ձեր սիրտը, ձեր ոտները և մի՛ վախնաք, վասնզի պիտի գա օր մը, որ բարի մարդը պիտի հարգվի[42]:
- Զգուշացե՛ք տկարներեն[43]:
- Պարտություն խոստովանիլը հայտնապես քաջերու գործ է[44]:
- Ավելի կ'ուզեմ սատանայից օգնությամբը իրավունքս վայելել, քան թե հրեշտակաց դասուն մեջ իրավունքես զրկվիլ[45]:
- Քիչ տալ և մխիթարելը ավելի հաճո է, քան թե շատ տալ և հանդիմանել[46]:
- Պատվավոր մարդն պարտավոր է կամ յուր հանձն առած պաշտոնը կատարել, կամ պաշտոնե հրաժարիլ՝ առանց յուր խոստման հակառակ վարվելու[47]:

Սեռադաշնության տեսաբանը

Մեծ երգիծաբանի գրական-տեսական ժառանգության մեջ իրենց ուրույն տեղն ունեն նրա դատողությունները «կին – տղամարդ» փոխհարաբերությունների զանազան կողմերի մասին: Զավեշտական ձևի մեջ հաճախ այնպիսի խորություն ենք հայտնաբերում, որ նրա մեկ հատիկ վճռակը մի ամբողջ հետազոտության արժեք է ստանում: Արդ, փորձենք դասդասել Պարոնյանի վճռակները՝ առանձնացնելով այն, ինչ մեզ համար այսօր հատկապես ուսանելի է: Ահավասիկ **կնոջ և տղամարդու հոգեբանական առանձնահատկություններին** վերաբերող նրբին դիտարկման փայլուն օրինակներ.

- Կանայք կը տեսնեն առանց նայելու, մինչդեռ իրենց էրիկներն կը նային առանց տեսնելու[48]:
- Կանայք ավելի երջանիկ են այն սիրով, զոր կը ներշնչեն, քան այն սիրով, զոր կը կրեն. մարդիկ ասոր բոլորովին հակառակն են[49]:
- Կինը ամեն բան գիտե, բայց բան մը չգիտեր կամ գիտնալ չ'ուզեր[50]:

---

[38] Լուսարարի նամակները, էջ 487:
[39] Թատրոն արևելյան // ԵԺ, հ. 8, Եր., 1972, էջ 411:
[40] Առածներ, էջ 171:
[41] Ծիծաղ, էջ 34:
[42] Անդ, էջ 68:
[43] Խորհրդածություններ «Թատրոնի», էջ 304:
[44] Առտնին տեսարաններ, էջ 330:
[45] Խորհրդածություններ Մեղուի, էջ 374:
[46] Խորհրդածություններ «Թատրոնի», էջ 311:
[47] Ծիծաղ, էջ 82:
[48] Քաղվածք, էջ 342:
[49] Փունջ // ԵԺ, հ. 10, Եր., 1979, էջ 680:
[50] Ի՞նչ է կինը, էջ 197:

- Կնոջ գեղեցկությունն կնկան մը շուրջառն է, անոր բոլոր տգեղ բնավորություններն կը ծածկե[51]:
- Կինը ընդհանրապես արական սեռը շատ դյուրությամբ կը խաբե, եթե երբեմն կը խաբվի անկե, այդ ալ գիտնալով է, եթե չգիտնալով խաբվի, այդ ալ բացառություն մ' է[52]:
- Կան կիներ, որ եղինճին կը նմանին և սակայն բռնվելու տեղ ունին. խեղճ էրիկներն զանոնք ինչպես բռնելու եղանակն չգիտնալով շատ անգամ կը խայթվին[53]:

Պակաս խորաթափանց չեն պարոնյանական այն ասույթները, որ վերաբերում են **կնոջ բնավորության** յուրահատկություններին:

- Աստված յուր կանխատեսությամբը կանանց մորուս չտվավ, որովհետև չպիտի կրնային լուռ կենալ ածիլված ատեննին[54]:
- Վրեժ առնել կրնալու համար կին ըլլալու է[55]:
- Հայելին կնոջ մը միակ բարեկամն է, որուն իր պակասությունները հայտնելե չզգուշանար[56]:
- Լռությունը կնոջ տրված է իր միտքը լավ հասկցնելու համար[57]:
- Կին մը օր մը իր էրկանը հետևյալ նամակը գրած է. «Քեզի նամակ կը գրեմ՝ վասնզի ընելիք գործ մը չունիմ, և կը վերջացնեմ՝ վասնզի ըսելիք խոսք չունիմ»[58]:

Ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ կնոջ թեման շոշափելը հաճախ Պարոնյանի համար առիթ է՝ ընդհանուր, **երկու սեռերին** էլ առհասարակ բնորոշ վարքուբարքն առավել ցայտուն ներկայացնելու.

- Մարդ ըսված արարածն մխիթարվելու համար կուզե որ յուր զգացած ցավեն քիչ մ' ավելին զգա ուրիշ մը: Հիսուն տարեկան հասակին մեջ մազերը ճերմակցած կին մը չկրնար մխիթարվիլ, մինչև որ քառասուն տարեկան ճերմակ կին մը չտեսնա[59]:
- Կիներեն շատերն մեղք չգործած մեղա կ'ըսեն, ինչպես վաճառականներն, որ կանխավ ապահովել կուտան նավերն, որոնց մեջ ապրանք կը դնեն[60]:

Կնոջ և տղամարդու բարոյահոգեբանական առանձնահատկություններն էլ, ըստ Պարոնյանի, պայմանավորում են նրանց **հանրային դերակատարումները**.

- Օրենքները հաստատողները այրերն են, իսկ բարքերը հաստատողները կիներն են[61]:
- Սիրո պատերազմին մեջ ընդհանրապես այրերն հարձակողական դիրք կը բռնեն և կիներն պաշտպանողական. հաղթվողներն միշտ հարձակվողներն են[62]:

---

[51] Ծիծաղ, էջ 113:
[52] Ի՞նչ է կինը, էջ 197:
[53] Ծիծաղ, էջ 131:
[54] Քաղվածք, էջ 343:
[55] Անդ, էջ 329:
[56] Անդ, էջ 331:
[57] Անդ, էջ 328:
[58] Անդ, էջ 312:
[59] Անհայտ էջեր և աֆորիզմներ, էջ 156:
[60] Ծիծաղ, էջ 149–150:
[61] Քաղվածք, էջ 331:
[62] Ծիծաղ, էջ 149:

- Կնիկներեն քիչերը չեն կրնար հաջողիլ իրենց էրիկը կառավարելու, բայց էրիկ մը չկա, որ կարենա հաջողիլ յուր կնիկը կառավարելու[63]:
- Ցավալի է, որ կիներեն ոմանք տկար էակն իրենց բերնին մեջ անպակաս ընելով՝ պարկեշտության գծեն կը շեղին ճիշտ այն էակներու նման, որ չքավորության կռթնելով ամեն չարագործություն կ'ընեն[64]:

Այր մարդկանց տրված խորհուրդներն ուղղված են սեփական պատասխանատվության գիտակցմանը, սեռերի **ներդաշնակության** անհրաժեշտության ըմբռնմանը.

- Կենաց ամենեն կարևոր գործը կնոջ մ' ընտրությունն է[65]:
- Ավելի ականջներով, քան թե աչվներով փնտրելու է կին մը[66]:
- Առանց երջանկության հարուստ ըլլալը, առանց սիրո կին ունենալու կը նմանի[67]:
- Երջանիկ ամուսիններն անոնք են, որ հոգվո գեղեցկությամբ օժտված կնոջ մը հետ կը կարգվին[68]:
- Պարկեշտ կինը գաղտնի գանձ մ' է, զոր գտնողը խիստ լավ կ'ընե, եթե անոր վրա չպարծենա[69]:
- Մարդուս ամենեն մեծ հաճույքն իր սիրած անձին հաճույք պատճառելն է[70]:
- Կանանց մեզի ըրած բոլոր չարիքները մեզմե են, բայց մեզի ըրած բոլոր բարիքներն ալ իրենցմե են[71]:

Ամփոփենք կանանց շիտակ դերի գնահատումը Հակոբ Պարոնյանի մի ասույթով՝ ուղղված այրերին, ասույթ, որն անվարան կարելի է անմահացնել սեռադաշնության դրոշին. «Կանանց տրված հարգն ընկերական կենաց մեջ ազգի մը հառաջադիմության չափն է»[72]:

Հայոց ախտորոշումն ու բուժումը

Խոսե՞լ ազգիս թերություններից, թե՞ դա ոչ միայն անօգուտ է, այլև վնասակար: Սա հին երկընտրանք է, որի առջև կանգնած են եղել ազգայնական մտքի շատ ու շատ ներկայացուցիչներ: Եվ միշտ էլ ամեն ազգի հեռատես մտավորականները գերադասել են թեպետ դառը (և կարճատես ժամանակակիցների կողմից բնավ հավանության չարժանացող), սակայն բուժիչ, ապաքինիչ, ազգափրկիչ ճշմարտախոսությունը: Առավել ևս կարևորվում է դառը ինքնաճանաչումը, քանի որ ազգային սնապարծությունը սպառնում է վերածվել ազգային հատկության. «Այս ազգը խաբվիլ կ'ուզե, խաբվիլ կը սիրե»[73]: Եվ այս ազգակործան ինքնագոհությանը, ազգային թմբիրին Պարոնյանը հակադրում է ազգային թերությունների անողոք բացահայտումը՝ համադրելով դա հրապարակախոսի պարտավորվածությանը. «Հրապարակախոսի մը

---

[63] Քաղվածք, էջ 345:
[64] Ծիծաղ, էջ 104:
[65] Քաղվածք, էջ 330:
[66] Անդ:
[67] Անդ, էջ 328:
[68] Առտնին տեսարաններ, էջ 329:
[69] Քաղվածք, էջ 328:
[70] Անդ, էջ 332:
[71] Անդ, էջ 329:
[72] Անդ, էջ 333:
[73] Ճշմարտախոսություն և հայհոյություն // ԵԺ, հ. 10, Եր., 1979, էջ 454:

պարտքն է ազգին վերքերն մատնանիշ ընելու ժամանակ ցույց տալ նաև անոնց դարմաններն, դարմաններ, որ ազգին կարողութենեն վեր չըլլան»[74]:

Ի վերջո՝ ճշմարտության մատուցման ձևն է վճռորոշը. ասում ենք սրտացավորե՞ն, ազգի ներսի՞ց, որպես սեփակա՞ն ցավ, թե՞ օտարի պես, օտարված, ինքներս մեզ վեր դասելով ազգահատուկ թերություններից: Խորապես ազգային մտածող Պարոնյանի ցավն ու մտահոգությունը ակնհայտ են. ախտորոշումը շուտափույթ բուժմանն է ուղղված: Թերություններից պիտի ազատվել. սա՛ է հայ ազգայնականի հավատո հանգանակը. «Թերություններու վրա լալն թերություններու մեծագույնն է. խեղճության վրա արտասուք թափելն ապացուցել է թե արյուն չունինք թափելու»[75]:

Արդ՝ շա՞տ է արդյոք մեր ներկան տարբերվում պարոնյանական ախտորոշումից. «Ընթերցո՛ղ, աչքիդ առջև բեր ծովն, որ սաստկաշունչ հողմոց առջև տակնուվրա կ'ըլլա: Լեռնաձև ալեաց ձեռքը խաղալիք եղած նավ մը երևակայե, լեցո՛ւր այս նավն ոչխարներով, դի՛ր այս նավուն մեջ նավապետ մը, որ կը հորանջե, դի՛ր ղեկավար մ'ալ, որ ղեկը ձգած գլուխը կը քերե և ահա աչքիդ առջևը բերած կ'ըլլաս ազգերնուս վիճակը»[76]: Պարոնյանի հիշատակած ալիքներն այսօր ավելի են ահագնացած: Միայն մեկ զուգահեռը բավական է. «Բողոքական եղբայրներն մեր նավապետին և նավաստիներուն անտարբերութենեն օգուտ քաղելով՝ ամեն գավառ դպրոցներ բանալ և հայ ժողովուրդն ուղղակի բողոքականության հրավիրել սկսած են: Բողոքականք գանձեր կը մսխեն մարդ մը որսալու, իսկ մենք լումա մը չենք տար մարդ մը չգողցունելու համար»[77]:

Ազգային (նաև համամարդկային) ամենամեծ արատներից մեկի՝ **օտարամոլության** վերաբերյալ Պարոնյանն արտահայտվում է անզիջում սկզբունքայնությամբ. «Ուրիշներու նմանելու և հետևելու մեջ առաջին տեղն կը բռնեն հայ կապիկները»[78]: Իսկ ավելի ընդարձակ հետևյալ դատողությունը, կարծում ենք, և՛ հարազատ է խնդրով մտահոգ ամեն մի ազգայնականին, և՛ հույժ կարևոր՝ մեր օրերում. «Չեմ կրցած ըմբռնել, թե օտարին թերությունն իբրև առավելություն և տգեղությունն իբրև գեղեցկություն տեսնելու աչքի տկարությունն ի՛նչպես մուտ գտած է մեր մեջ: Ընդունիմ, որ մարդս կ'ընդօրինակե ուրիշներեն՝ ինչ որ բարի է, գեղեցիկ է, ճշմարիտ է, և այս օտարասիրություն չսեպվիր. բայց, կարծել, թե ինչ որ օտար է՝ բարի է, գեղեցիկ ու ճշմարիտ, այս է ահա օտարամոլությունն, որ կարծես մեր արյան մեջ մեծ մաս մ'ունի»[79]: Իսկ ինչո՞ւ է այդպես: Պարոնյանի ըմբռնմամբ՝ պակասում է սեփական ուղու, սեփական անելիքների յուրահատկության ըմբռնումը: «Ինչո՞ւ համար հայերը միշտ օտար ազգաց ետևեն երթալ կ'ուզեն»,– հարցնում է Պարոնյանը ու պատասխանում. «Որովհետև իրենք ճամբան չեն գիտեր, ճամբա մ' ալ չեն գիտեր»[80]:

Ազգային ինքնաճանաչման, սեփական ուղու առանձնահատկությունների իմացության, ազգային ուրույն շահերի գիտակցության պակասը հանգեցնում է խառնափնթոր քաղաքական լուծումների՝ հնուց ի վեր մեզ ուղեկցող

---

[74] Անդ, էջ 453:
[75] Հոսհոսի ձեռատետրը, էջ 375:
[76] Մեր վիճակը // ԵԺ, հ. 9, Եր., 1975, էջ 239:
[77] Անդ:
[78] Բնական պատմության զվարթություն // ԵԺ, հ. 10, Եր., 1979, էջ 268:
[79] Մեր օտարամոլությունը // ԵԺ, հ. 10, Եր., 1979, էջ 650:
[80] Ինչո՞ւ համար, որովհետև // ԵԺ, հ. 6, Եր., 1968, էջ 67:

կենտրոնախույս հակվածությունից մինչև այսօրվա «քոմպլետարիզմ» (ասել է թե՝ բոլորին բավարարելու ցանկություն): Ի՞նչ է ասում Պարոնյանը. «Ինչպես ամեն անհատ նույնպես ամեն ընտանիք, ամեն վարչություն և վերջապես ամեն ազգ իրեն հարմար և շահավոր գիծ մը գծելու է և այն գծին վրայեն քալելու է: Հայկական լուսահոգի խնդիրը ցույց տվավ մեզ թե՝ ամեն գծին վրայեն քալել ուզողը ճանբա չկրնար առնել»[81]:

Ընդ որում, Պարոնյան հոգեբանը ցավով արձանագրել է մի իրողություն. այն է՝ հայերիս օտարամոլությունը, այսինքն՝ ուրիշների հանդեպ անքննադատ վերաբերմունքը, հեզությունը, որպես կանոն, վերածվում են ներքին ագրեսիայի, դառնում անհանդուրժողություն իր ազգակցի հաջողությունների հանդեպ. «Չկա երեսփոխան մ'որ հաճի յուր ընկերին վրա փշուր մ'արժանիք տեսնել: Ամենքը կ'ուզեն խելքի մենավաճառ կանգնիլ և չեն ներեր, որ ուրիշներն ալ քիչ մը խելք ունենան»[82]:

Զարմանալի չպիտի թվա, որ Պարոնյանը չի շրջանցել հայոց ազգը պառակտող զազրելի երևույթներից մեկը՝ **կուսակցամոլությունը**: Ոչ միայն ներկայում, այլև Պարոնյանի ժամանակ օրեցօր ավելացող կուսակցությունները հայտարարում են, թե «կը խորհին, կը խոսին և կը վիճաբանին նպատակ ունենալով իրենց միայն և մի միայն ազգին շահն, որ բերնե բերան կը հափշտակվի»[83]: Եվ, առհասարակ, ազգի կազմակերպվածությունը, ներքին արդարությունը, մեկը մյուսին ըստ արժանվույն գնահատելը Պարոնյան մտածողի համար գերագույն արժեքներից են: Ահա թե ինչու է նա դառնությամբ արձանագրում. «Դժբախտաբար մեր ազգին մեջ շատերու բարձրանալուն գաղտնիքը բնական օրենքով միայն կը լուծվի: Ծանրերը միշտ գետնաքարշ կը կմնան և թեթևները վեր կելնեն»[84]: «Մեր ազգին մեջ կան այնպիսի անձեր, որ հպարտության գագաթը բարձրացած են. և այս անձերն այնպիսի մարդեր են, որ բնավ իրավունք չունին... հպարտանալու»[85]:

Անսկզբունքայնությունը ինքնին բացասական հատկություն է, և Պարոնյանը դա հատկապես կապում է ազգայնական դիրքորոշման հետ՝ սպանիչ ծաղրի ենթարկելով ազգի ցավերն ուրացողներին. «Այսօր կը տեսնեմ, որ կերակուրները մեծ ազդեցություն ունին մարդուս կարծիքներուն վրա: Կը ճանչնամ մեկին, որ տարի մը առաջ յուր կյանքը պանիր հացով կանցներ և ամեն օր ազգային գործերուն վրա կը խոսեր, իսկ հիմա որ կովու միսով կապրի՝ ազգային խնդիրներու վրա խոսողները կը ծաղրե»[86]:

Պարոնյան ազգայնականը մտահոգ է սնամեջ պարծենկոտության համար և զգուշացնում է, պահանջում ազգակիցներից հոգալ հայոց ապագայի մասին, ամենից առաջ սեփական ջանքերով և ինքնուրույն կերտել ցանկալի կյանքը՝ չմերժելով այլոց օգնությունը, բայց և չխաբվելով ամեն մի խոստումի.

- Եվրոպիո բոլոր ժողովները, ողջ ըլլան, մեր գործերուն վրա կը խոսին, կը վիճեն, երբեմն ալ որոշում անգամ կուտան կոր առանց մեզի հարցունելու[87]:

---

[81] Խտղտում // ԵԺ, հ. 4, Եր., 1965, էջ 333:
[82] Օրակարգ // Երկ. ժող. տասը հատ., հ. 10, Եր., 1979, էջ 657:
[83] Կուսակցություններ դից կաճառին մեջ // ԵԺ, հ. 5, Եր., 1965, էջ 286:
[84] Անհայտ էջեր և աֆորիզմներ, էջ 161:
[85] Անդ, էջ 161:
[86] Անդ, էջ 126:
[87] Կսմիթներ // ԵԺ, հ. 4, Եր., 1965, էջ 201:

- Ես Հայկական խնդիրն երազ չեմ համարիր, ո՛չ ալ Եվրոպայեն բարիք հուսալն հիմարություն, այլ կը հավատամ, որ եթե մենք ալ աշխատինք, Հայաստանի վիճակն անպատճառ փոփոխություն մը պիտի կրե դեպի լավն[88]:
- Գերեզմաններեն միայն պարծանք ակնկալելն մեռնելու որոշում տված ազգաց վայել է[89]:
- Ազգային գործերնիս ասկեց տարի մը առաջ ինչ վիճակի մեջ էին նե նույն վիճակին մեջ են նաև այսօր, պիտի ըլլան նաև վաղը, մյուս օրը, գալ շաբաթ, գալ ամիս, գալ տարի և այլն[90]:
- Հայե՛ր, մեղք է մեր ապագային. խղճանք վրան[91]:

Հայոց հին ցավերից մեկը դիմացինի փաստարկները լսելու անկարողությունն է, սեփական տեսակետը միակողմանի, կուրորեն պնդելը: Պարոնյանը հեգնանքով **«ազգային տրամաբանություն»** է բնորոշում բանավիճելու այդ հոռի եղանակը. «Հայտնի է, որ մեր մեջ ոևէ խնդիր մը լուսաբանելու համար երբ վիճաբանություն կը բացվի՝ բանակռվո մեջ իբրև փաստ մեծ տեղ կը բռնեն վիճաբանողներու մորուքը, հասակը, հագուստը, ծնած քաղաքն և մինչև անգամ այդ քաղաքին բերքը»[92]:

Եվ պարզ է, որ եթե միմյանց չենք ընդունում, ապա ամեն մի քննարկում, բանավեճ, խորհրդակցություն՝ լինի կենցաղային, թե գիտական թեմայով, դյուրին այլափոխվում է, վերածվում անպտուղ ու հյուծող վիճաբանության. «Կարծյաց ընդհարումեն ցայտող բանին ուրիշ ազգերը ճշմարտություն կ'ըսեն, մեր մեջ եթե այս ընդհարումը երկու կարծյաց մեջ տեղի ունենա, անկե ցայտողին հայհոյություն կ'ըսվի, թե որ շատ կարծյաց մեջ տեղի ունենա, անորոշություն կ'ըսվի»[93]: Հիշենք ուրեմն և հետևենք պարոնյանական պատգամին. «Աշխատեցեք, այսուհետև գործն քննել և ո՛չ գործավորն: Պատշաճից օրինաց համաձայն խոսեցե՛ք իրարու հետ և ունայն վեճերով ժամավաճառ մի՛ լինիք[94]»:

Պարոնյանի համար հայ մարդու մեծագույն հանցանքը լեզվական օտարամոլությունն է. «Մեծ, շատ մեծ տրտմություն է տեսնելն, որ հայ մը հայու հետ տեսակցելու համար օտար լեզվով խոսի»[95]: Իսկ եթե լեզվական ուրացումը կամովին է կատարվում, Պարոնյանի գրիչն անողոք է դառնում. «Դժբախտություն ունեցած ենք տեսնվելու այնպիսի էֆենտիներու կամ պեյերու, որոնք եթե աստիճան մը բարձրանան՝ հայերեն չխոսելու ուխտ կընեն. եթե պատվանշան մ' ալ առնեն՝ հայերեն խոսողն ականջեն պատի մը վրա գամելու չափ հառաջ կերթան, և եթե քիչ մ' ալ բարձրանան՝ ազգային իրավունքներն աճուրդի կը հանեն, կարծելով, թե այս ընթացքով ավելի բարձր աստիճաններու կը հասնին»[96]:

Խոսքի ճարտար վարպետը խիստ պահանջկոտ է **լեզվագործածության** հարցում: Այսօր էլ տեղին է նրա ծաղրը փքախոսությանը հակված ճարտասանների վերաբերյալ. «Խոսքն արդարև բառերե կը կազմի, բայց չեմ գիտեր,

---

[88] Լուսարարի նամակները, էջ 485:
[89] Անհայտ էջեր և աֆորիզմներ, էջ 162:
[90] Կանոնավորություն // ԵԺ, հ. 9, Եր., 1975, էջ 116:
[91] Ազգային խնդիրներն ի՞նչ վիճակի մեջ են // ԵԺ, հ. 9, Եր., 1975, էջ 182:
[92] Ազգային ջոջեր, էջ 161:
[93] Բառագիտական // ԵԺ, հ. 6, Եր., 1968, էջ 17:
[94] Կարծիք հայտնելու հազար ու մեկ եղանակ // ԵԺ, հ. 10, Եր., 1979, էջ 516:
[95] Անհայտ էջեր և աֆորիզմներ, էջ 39:
[96] Անդ, էջ 162:

թե բառերն քովէ քով դրվելով անպատճառ խոսք մը գոյացնելու արտոնություն ունի՛ն»[97]: Պարոնյանի հորդոր-պահանջը շատ հստակ է. «Շատ լեզուներ սորվիլ մեկ երկու տարվան գործ է, իրենին մեջ պերճախոս ըլլալու համար ամբողջ կյանք մը պետք է»[98]: Ասվածի լավագույն ապացույցը հայ անմահ երգիծաբանի սեփական խոսքն է, որում հայոց արքայական լեզուն փայլատակում է, բոցկլտում, հիացնում իր ճոխությամբ, ճկունությամբ, խորությամբ: Պարոնյանն անկաշկանդ խաղում է բառերով, աճպարարի հմտությամբ անակնկալներ մատուցում ընթերցողին, բայց ոչ ինքնանպատակ, այլ իմաստալից ու խրատական բնույթի, վարքաբանի գիտակությամբ և լեզվաբանի ճարտարությամբ, ազգայնականի մտահոգությամբ ու ազգաշահ միտվածությամբ:

Իսկ որքա՜ն արդիական է **հրապարակային խոսքի** հանդեպ Հակոբ Պարոնյանի պահանջկոտությունը.

- Չեմ պնդեր, բայց գոնե հաստատապես կը կարծեմ, թե հրապարակավ խոսելու, գրելու և ի մասնավորի խոսելու գրելու մեջ տարբերություն մը ըլլալու է: Կան հրապարակի վրա խոսողներ, որ բնավ տարբերություն չունին շոգենավի մը մեջ խոսող երկու բարեկամներե, ինչպես նաև կան հրապարակի վրա գրողներ, որ կարծես թե վաճառականի մը պես կը գրեն, այսինքն՝ միայն իրենց վերաբերյալ գործերուն վրա[99]:
- Գլուխը մարդուս ջրամբարն է, որուն ծորակն է լեզուն: Ո՛վ բնություն, ինչո՞ւ ծորակ դրեր ես այն ջրամբարին՝ որուն մեջ լեցուցած չէ[100]:
- Իրավունքը հիմա ճաշակի տեղ անցած է, ամեն մարդ ազատ է այսօր խնդրո մը վրա ամենեն այլանդակ կարծիքը հայտնել առանց կարմրելու[101]:
- Մեր մեջ խիստ քիչ բառ կը գտնվի, որ յուր բնիկ նշանակությամբը գործածվի[102]:
- Կ'աղաչենք խմբագիրներն որ բառերը իրենց հատուկ նշանակությամբը գործածելով քիչ մը զոհողություն ընեն, որ ամեն կարգի ընթերցողք հասկնան իրենց կարդացածը[103]:
- Ո՜վ մարդ լակոնական, այդ հասակիդ ոճը ինչո՞ւ չես գործածեր ատենախոսություններուդ մեջ[104]:
- Մարդիկ կան, որք խոսքերը կը բարձրացնեն, խոսքեր ալ կան, որ զմարդիկ կը բարձրացնեն: Շատ անգամ ոչինչ խոսք մը նշանավոր մեկու մը բերանեն ելած ըլլալուն համար իբրև պատգամ կ'ընդունվի և շատ անգամ նշանավոր խոսք մը աննշան մեկե մը ըսված ըլլալուն համար կարևորություն չառներ[105]:

Իսկ սեփական խոսքի և գործի ներդաշնակ համադրման պահանջի առումով, ամեն մի քաղաքական գործչի, պետական այրի համար ստույգ

---

[97] Երկու բառագիրներու վեճն հասարակաց կարծյաց կշռույն մեջ // ԵԺ, հ. 10, Եր., 1979, էջ 285:
[98] Քաղվածք, էջ 362:
[99] Ծիծաղ, 145–146:
[100] Անհայտ էջեր և աֆորիզմներ, էջ 138:
[101] Ազգային ջոջեր, էջ 195:
[102] Ազգասիրություն // ԵԺ, հ. 8, Եր., 1972, էջ 34:
[103] Խտղտում, էջ 296:
[104] Ազգային ջոջեր, էջ 25:
[105] Լրագրական դիցաբանության ապիսը // ԵԺ, հ. 8, Եր., 1972, էջ 143:

վարքականոն կարող է լինել պարոնյանական հրամայականը. «Լավ է ժողովրդյան օրհնությամբ մեռնիլ, քան թե անոր անեծքովն ապրիլ»[106]:

Հայոց հանրային և անհատական կյանքում եղած այլևայլ երևույթների մասին Պարոնյանի դատողությունները ոչ թե կողքից են արվում կամ անտարբերությամբ, այլ հաստատուն հավատով, որ հայոց առաջընթացն արգելակող խոչընդոտները վերանալու են: Վերանալու են մեկ պարտադիր պայմանով, այն է՝ «ժամանակն եկած է, եթե անցած չէ, որ հայն սկսի վստահություն տածել յուր վրա, որ փոխանակ օտարն քաջալերելու, վերջը անորմե նախատվելու համար՝ յուր արյունակիցն, յուր եղբայրը խրախուսե....»[107]:

Պարոնյանի ապրած տարիներից անցել է մեկ դարից ավելի, բայց մի՞թե հնացել է նրա որևէ դիտարկում: Հայոց վարքագծին վերաբերող նրա մի շարք դիտարկումներ ազգային ինքնաճանաչման և հանրային-պետական կյանքի կարգավորման համար այժմ, թերևս, ավելի գործադրելի են, քան իր ժամանակին են եղել: Եվ միգուցե հենց այսօր է պահը՝ նորովի ըմբռնելու հայոց խորամուխ վարքաբանի, հայ ազգայնականության կարկառուն ներկայացուցչի տեսական ժառանգությունը: Վստահությամբ կարող ենք ասել, որ Հակոբ Պարոնյանի դարը նոր է սկսվում:

---

[106] Անհայտ էջեր և աֆորիզմներ, էջ 137:
[107] Մեր օտարամոլությունը, էջ 653:

ВАЛЕРИЙ МИРЗОЯН
Профессор кафедры “Управления” АГЭУ,
доктор философских наук

Акоп Паронян о поведенческой характеристике армян.– *В статье рассматриваются высказывания великого армянского сатирика о проблемах управления общественной и личной жизни армян. Анализированы особенности сатирического метода Пароняна, данная им общая характеристика противоречий социальной жизни, предложенные им способы гармоничного регулирования взаимоотношений полов, высказанные им оценочные суждения о многих явлениях общинной жизни армян в Западной Армении, его критика проявлений среди некоторой части армян настроений преклонения перед всякой иностранщиной, его требования к ответственности при публичной речи и т.п. Многие высказывания и афоризмы Пароняна актуальны и действенны для применения в рамках современной системы социального управления.*

VALERI MIRZOYAN
Professor at the Chair of “Management” at ASUE,
Doctor of Philosophy

Hakob Paronyan as the Researcher of Armenians’ Behavior.– *In this article the great Armenian writer’s quotes about management of public and private life are discussed. There are analyses of Paronyan’s satirical methods peculiarities, description contradictions of public life, characteristic phenomena of Armenian community life in West Armenia, some modes of harmonic regulation of man – woman relationship, offered by him his criticism of many Armenians’ attitude to admire everything foreign, his emphasis of responsibility for public speaking, etc. Paronyan’s many quotes and aphorisms are actual and workable for modern system of public administration.*

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում միջազգային կազմակերպությունների կատարած վերլուծությունները թույլ տվեցին ճշգրտել ճգնաժամի հիմնական պատճառները և որոշել դրանց հաղթահարման համապատասխան ուղին: Ձեռնարկված միջոցառումները հետևանքային ազդեցություն ունեցան ինչպես առանձին երկրների ներքին տնտեսական քաղաքականության ոլորտում որոշումների ընդունման, այնպես էլ ամբողջ համաշխարհային տնտեսական համակարգի կարգավորման վրա:

Հիմնաբառեր. *ճգնաժամ, միջազգային կազմակերպություններ, տնտեսական միջոցառումներ, ֆինանսական քաղաքականություն, հիմնադրամ, վարկանիշ*

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում միջազգային կազմակերպությունների կատարած վերլուծությունները թույլ տվեցին ճշգրտել ճգնաժամի հիմնական պատճառները և որոշել դրանց հաղթահարման համապատասխան ուղին: Ձեռնարկված միջոցառումները հետևանքային ազդեցություն ունեցան ինչպես առանձին երկրների ներքին տնտեսական քաղաքականության ոլորտում որոշումների ընդունման, այնպես էլ ամբողջ համաշխարհային տնտեսական համակարգի կարգավորման վրա: Տարաբնույթ եզրակացություններից վճռական են համարվում նրանք, որոնք հռչակվել էին միջազգային կազմակերպությունների կողմից՝ իբրև մոտակա գործընթացների (դեկլարատիվ միջոցառումներ) իրականացման պլան: Պետք է նշել, որ միջազգային կազմակերպությունների վերլուծական եզրակացություններն ու դեկլարատիվ միջոցառումները փոխկապված են և լրացնում են միմյանց:

Ընդհանուր առմամբ, համաշխարհային ֆինանսական շուկաների անկայունությունն ակնհայտ դրսևորվեց դրանց ոչ բավարար իրացվելիության մակարդակով: ԱՄՆ-ի հիպոթեքային պարտատոմսերի և դրանց ածանցյալ արժեթղթերի շուկաների փլուզումից հետո ճգնաժամի ալիքը տարածվեց ֆինանսական շուկաների բոլոր հատվածներում՝ իրացվելիության լուրջ խնդիրներ առաջադրելով բոլոր կազմակերպություններին, որն էլ շղթայական ռեակցիայով արագորեն տարածվեց աշխարհով մեկ: Իրացվելիության հետ կապված խնդիրները դարձան արդեն սկիզբ առնող համաշխարհային տնտեսական ճգնաժամի հիմնական գործոնները, ուստի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների առավել վաղ խորհրդատվությունները վերաբերում էին հենց իրացվելիության ճգնաժամի հակազդեցության միջոցառումներին:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում իրացվելիության հիմնախնդիրներին հատուկ ուշադրություն հատկացրեց Արժույթի միջազգային հիմնադրամը: Արդեն 2007-ի աշնանը վերջինս խորհուրդ տվեց բոլոր ներդրողներին բարդ ֆինանսական ապրանքների գնման դեպքում հաշվի առնել դրանց իրացվելիության բնույթը և «ապրանքի գնի մեջ ներառել համապատասխան հավելավճար իրացվելիության ռիսկի համար»: Միաժամանակ, ոլորտի կարգավորման և հսկողական մարմիններին խորհուրդ էր տրվում մեծ ուշադրություն հատկացնել իրացվելիության ռիսկերի ցուցանիշներին: Սակայն 2008 թ. հունվարին իրացվելիության հետ կապված իրավիճակը ֆինանսական շուկաներում առանձնապես չփոխվեց, և Արժույթի միջազգային հիմնադրամը կոչով դիմեց երկրներին՝ «վերականգնել գործընկերների միջև վստահությունն ու ֆինանսական կազմակերպության կայունությունը, մեղմել իրացվելիության առկա խնդիրները՝ հնարավորություն տալով միջազգային շուկաներին նորից նորմալ գործելու»:

2008 թ. սկզբին Արժույթի միջազգային հիմնադրամի պատրաստած համաշխարհային ֆինանսական կայունացման մասին զեկույցի մեջ ասվում է. «Կենտրոնական բանկերը պետք է շարունակեն աջակցել ֆինանսական շուկաներում իրացվելիության փոփոխված պայմանների կառավարմանն այնքան ժամանակ, քանի դեռ դա անհրաժեշտ է այդ շուկաների անխափան գործունեության ապահովման համար, որպեսզի տնտեսության իրական հատվածում նվազագույնի հասցվի ճգնաժամի երկրորդային ազդեցությունը»[1]:

[1] www.imf.org/external/pubs/ft/gfsr/2008/02/– IMF Global Financial Stability Report2008

Արժույթի միջազգային հիմնադրամի զեկույցի՝ իրացվելիության կառավարման գործիքների վերաբերյալ կենտրոնական բանկերի համապատասխան որոշումները կարող էին օգնել նվազեցնելու այն դժվարությունները, որոնք հանդիպում էին ֆինանսական կայունացման հասնելու ճանապարհին: Այսպիսով՝ կենտրոնական բանկերը պետք է գնահատեին, թե որքանով են իրենց գործադրած մեթոդներն ընդգրկուն և նպաստում շուկաներում առկա լարվածության թուլացմանը:

Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետները համոզված էին, որ վերահսկողության մարմինները պետք է ընդլայնեն իրենց լիազորությունների շրջանակը: Նշենք, որ երբ այդ մարմինները բավարարված չեն ռիսկերի կառավարման համակարգով, կամ չնախատեսված դեպքերի համար համապատասխան ծրագրերը բացակայում են, ապա պետք է հնարավորություն ունենան պայքարելու ֆինանսական հիմնարկությունների (կազմակերպությունների) կապիտալի ընդլայնման և իրացվելիության համար: Արժույթի միջազգային հիմնադրամի դիտարկման համաձայն՝ ֆինանսական հիմնարկությունների հաշվեկշռում առավել մեծ ծավալի բարձրորակ ակտիվների առկայությունը լարվածության շրջանում կարող էր բարձրացնել ֆինանսավորման աղբյուրների հասանելիության աստիճանը:

Մասնավորապես՝ ԱՄՀ-ն առաջարկում էր, որ կենտրոնական բանկերն իրենց տրամադրության տակ ունենային գործընկեր բանկերի (կոնտրագենտներ) լայն շրջանակ, որոնք ճգնաժամի ընթացքում իրացվելիության ստացման իրավունք ունենային:

Ճգնաժամի ազդեցությունները կրող երկրի կառավարությունը սովորաբար նպաստում է, այսպես կոչված, դելևերեջի[2] անցկացմանը և բանկային հատվածի վերակապիտալացմանը՝ նպատակ ունենալով նվազեցնելու ֆինանսական շուկաներում բացասական գործընթացների ազդեցությունը տնտեսության իրական հատվածի վրա: Դա, ըստ Համաշխարհային բանկի փորձագետների, կարող է պահանջել ներքին շուկայում լրացուցիչ իրացվելիության ապահովում և միջոցների ներդրում ֆինանսական հիմնարկներում: ԵՄ կառավարությունը հայտարարեց ֆինանսական հիմնարկություններին համապատասխան իրացվելիության ծավալների հասանելիության ապահովման անհրաժեշտության մասին:

Նման կարծիք հնչեց նաև G8-ի ֆինանսների նախարարների հանդիպման ժամանակ, որտեղ առաջարկվել է նաև փոխել կենսունակ ֆինանսական հիմնարկությունների կապիտալի կառուցվածքը: Կարևորվում էր «վատ» ակտիվների, ինչպես նաև պահուստների և բանկային ակտիվների գնահատման ոլորտում հետագա միջազգային համագործակցությունը: Նշված հանդիպման ժամանակ առաջարկվեց ընդհանրացնել տնտեսության մեջ պետության կողմից փողերի ներարկումների սկզբունքները և դրանց պայմանները:

Հարկ է նշել, որ միջազգային տնտեսական կազմակերպությունների հակաճգնաժամային կարգավորման կարևոր ուղղություններից էր համաշխարհային առևտրի ոլորտը:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի սկզբնական փուլում միջազգային կազմակերպություններից շատերը պաշտոնապես հայտարարում էին ազատ առևտրի խոչընդոտման միջոցառումների՝ որպես ազգային արտադրողների աջակցման հակաճգնաժամային միջոցի կիրառման

[2] Փոխառված միջոցների՝ սեփականի համեմատությամբ ծավալի նվազեցում:

անթույլատրելիության մասին: Հատկապես ակտիվ դիրքորոշում ուներ Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, սակայն առանձին երկրների ղեկավարներ չկարողացան դիմադրել ազգային արդյունաբերության ներկայացուցիչների լոբբինգին: Արդյունքում՝ կիրառվեցին մի շարք առևտրային սահմանափակումներ՝ «գնի՛ր հայրենականը» կարգախոսից մինչև արտասահմանյան ապրանքների ներմուծման վրա քվոտաների սահմանում (օրինակ՝ չինական պողպատի արտահանման սահմանափակումը ԱՄՆ-ում):

Պետք է նշել, որ, ի պատասխան տարբեր երկրների կառավարությունների կողմից իրականացվող միջոցառումների, Առևտրի համաշխարհային կազմակերպությունը ծանրակշիռ փաստարկներ էր բերում հօգուտ այն բանի, որ ազատ առևտրի չափանիշները նպաստում են ճգնաժամի հետևանքների մեղմացմանը և տնտեսության արագ վերականգնմանը: Հուշագրերում ասվում էր, որ առևտրային սահմանափակումների նվազեցումը թույլ կտա ողջ աշխարհում նվազեցնել ծախսերն ու գները, իսկ տրամադրվող լրահատկացումներն արժե օգտագործել ոչ թե արտադրության, այլ սպառման խթանման նպատակով: Հիմնական դիրքորոշումն արտահայտվում էր հետևյալ կերպ. միջոցառումը պետք է լինի թափանցիկ, ոչ խտրական, ժա-մանակին, համատեղ քննարկվի մյուս երկրների հետ հնարավոր այլ տարբերակների որոնման համար:

Համաշխարհային առևտրի ոլորտում իրականացվող միջոցառումների շարքում միջազգային կազմակերպությունների կողմից ընդգրկվեց վարկային շուկաների արագ վերականգնման անհրաժեշտությունը՝ մատչելի տոկոսադրույքներով առևտրային ծրագրերի ֆինանսավորման նպատակով:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը նույնպես ընդգծում է ներդրումների ոլորտում հովանավորչության անթույլատրելիությունը, քանի որ երկրների միջև ոչ միայն ապրանքային, այլև ներդրումային շուկաներում մրցակցությունը պատճառ է դառնում մեծ ծախքերի և ազգային տնտեսության արդյունավետության նվազման:

Ինչպես հայտնի է, համաշխարհային ճգնաժամի տևական փուլում կտրուկ նվազեցին իրացման ծավալները: Դրա հետ մեկտեղ ի հայտ եկավ վարկերի վերադարձելիության խնդիրը, որի պատճառով բանկային համակարգը կտրուկ նվազեցրեց տնտեսության իրական հատվածի վարկավորման ծավալները: Ժամանակակից աշխարհում համաշխարհային առևտուրը մեծ մասամբ կախված է միջբանկային հաշվարկների համակարգից, և տարբեր երկրների բանկերի փոխվստահության կորստի պայմաններում առևտրի վարկավորումն աստիճանաբար դառնում է խնդրահարույց: Այս իրավիճակի շտկման նպատակով 2008 թ. նոյեմբերին Համաշխարհային բանկի խմբի մեջ մտնող Միջազգային ֆինանսական կորպորացիան ընդլայնեց համաշխարհային առևտրի աջակցման ծրագրի ֆինանսավորումը 1,5 մլրդ դոլարով՝ մոտ ապագայում նախատեսելով այդ թիվը հասցնել 3 մլրդ դոլարի: Ծրագիրը հնարավորություն էր տալիս աղքատ երկրների բանկերին տրամադրելու առևտրային գործարքների դիմաց լրիվ կամ մասնավոր չվճարումների փոխհատուցման երաշխիքներ[3]:

2009 թ. ապրիլին Համաշխարհային բանկի նախաձեռնությամբ առևտրի ոլորտում սկսեց իրագործվել լայնածավալ ծրագիր կառավարությունների և կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր բանկերի մասնակցու-

[3] Տե՛ս http://www.worldbank.org/projects

թյամբ: Նախատեսվում էր կատարել 5 մլրդ ԱՄՆ դոլարի ներդրում միջազգային առևտրի հակաճգնաժամային ֆինանսավորման նպատակով՝ զարգացող երկրների բանկերին դրամաշնորհների հատկացմամբ՝ կանխատեսելով համաշխարհային առևտրի ծավալների աճ շուրջ 50 մլրդ դոլարով[4]:

Լոնդոնյան G20 գագաթնաժողովում որոշվեց, որ այն անդամ երկրները, որոնք Արժույթի միջազգային հիմնադրամում ունեն 50%-ից ավելի ձայներ, այդ միջոցներից 250 մլրդ դոլարը ճգնաժամի ընթացքում պետք է հատկացնեն առևտրաֆինանսական ոլորտի զարգացմանը:

Աֆրիկյան զարգացման բանկը 2009-ի գարնանը հիմնեց Առևտրի ֆինանսավորման ծրագիրը (TFI)՝ 1 մլրդ դոլար ընդհանուր գումարով՝ նպատակ ունենալով վարկեր տրամադրելու աֆրիկյան բանկերին՝ առևտրային ծրագրերի ֆինանսավորմանն աջակցելու համար[5]:

2009 թ. սեպտեմբերին Ասիական զարգացման բանկը նույնպես ձեռնամուխ եղավ առևտրի ֆինանսավորման աջակցման ծրագրի կենսագործմանը (TFFP), որը երաշխիքներ էր տրամադրելու զարգացող անդամ երկրների բանկերին՝ արտահանման և ներմուծման ֆինանսավորման ծրագրերի իրականացման նպատակով:

Նշենք, որ համաշխարհային առևտրի ֆինանսավորման ձեռնարկումները նպաստում են ճգնաժամի հետևանքների մեղմացման, բայց չեն վերացնում դրանք: Միջազգային տնտեսական կազմակերպությունները ճգնաժամի հաղթահարումը տեսնում էին 21-րդ դարի իրականությանը համահունչ՝ ֆինանսական շուկաների հսկողության նոր նորմերի ստեղծման ճանապարհով, որոնք կկարողանան ապահովել դրանց անխափան գործունեությունը և բարձրացնել շուկայի մասնակիցների փոխվստահության մակարդակը:

Ճգնաժամային երևույթների սրընթաց զարգացման հետ կապված՝ արդեն 2008-ին պարզ դարձան հնարավոր վտանգի չափերը ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների տնտեսությունների համար: Առաջատար միջազգային կազմակերպությունների վերլուծաբանները ֆինանսական շուկաներում ոչ բավարար կարգավորումն ու հսկողությունը դիտարկում էին որպես ֆինանսական ճգնաժամի անմիջական պատճառներ: Այսպես՝ ֆինանսական գործիքների աճին զուգահեռ, տեղի ունեցավ ֆինանսական գործառնությունների վերահսկողության որոշակի լիբերալացում: Թեև դա ամենասկզբում արտահայտվեց ԱՄՆ-ի շուկայում, սակայն վերահսկողության և նորամուծության միջև խզումը բնորոշ էր բոլոր առաջավոր տնտեսություններին, այդ թվում՝ եվրոպականին:

Կորպորատիվ մշակույթի ոլորտում ընկերության կայուն զարգացմանն անհարիր խթանման համակարգը նպաստում էր ֆինանսական հատվածից դեպի տնտեսության իրական հատված ճգնաժամային երևույթների ներթափանցմանը: Ընկերությունների բարձրագույն կառավարման բոնուսային վճարները կապված էին կարճ ժամանակահատվածում (տարի, երբեմն՝ եռամսյակ) ընկերության ֆինանսական հաջողությունների հետ, ինչը նպաստում էր առավել ռիսկային ծրագրերի ընտրությանը, որոնք կարճաժամկետում կապահովեին բարձր եկամուտներ: Ըստ այդմ, առևտրային բանկերում և այլ ընկերություններում կուտակվեց «չաշխատող» ակտիվների հսկայական ծավալ, որոնց դուրսգրումը հանգեցրեց զգալի կորուստների:

---

[4] Տե՛ս նույն տեղը:
[5] Տե՛ս http://www.afdb.org/en/projects-and-operations/

Այսպիսով՝ շատ միջազգային կազմակերպությունների վերլուծական եզրակացությունները դեկլարատիվ բնույթ էին կրում՝ հայտարարելով ներդրողների կողմից ռիսկերին համապատասխան որոշումների ընդունման պայմանների ստեղծման անհրաժեշտության մասին: Այդպիսի պայմաններից են ֆինանսական շուկաներում հեղինակավոր կազմակերպությունների նկատմամբ պատշաճ վերահսկողության ապահովումը, ինչպես նաև ընկերությունների կառավարիչների բոնուսային պարգևատրման համակարգի կատարելագործումը:

Ճգնաժամի պայմաններում տնտեսագետները գիտակցեցին ֆինանսական գործառնությունների հսկողության, կարգավորման և վերահսկողության ուժեղացման անհրաժեշտությունը: Դրա համար պահանջվում էր ընդլայնել արդեն գոյություն ունեցող վերահսկողական մարմինների ռեսուրսային հիմքը և լիազորությունները:

Լոնդոնյան G20 գագաթնաժողովից մի տարի անց ընդգծվեց վարկային և ածանցյալ արժեթղթերի շուկայում ստանդարտացման կարևորությունը: Քլիրինգային հաշվարկների կենտրոնը պետք է կատարեր նաև արդյունավետ կարգավորման և հսկողության գործառույթները, դրա հետ մեկտեղ, հարկային «ծպտյալ խորշերի» և բանկային գաղտնիքների դեմ պատժամիջոցների կիրառումը կնպաստեր միջազգային ֆինանսական համակարգի ամրապնդմանը:

Կարևորվում էր նաև տարբեր երկրների հսկողական մարմինների և կենտրոնական բանկերի համագործակցության զարգացումը՝ ներառյալ ֆինանսական կայունության ռիսկի գնահատումը: Պահանջվում էր համատեղ պայքարել ինչպես խարդախության, այնպես էլ շուկայական չարաշահումների դեմ: Սակայն պետք էր զգուշությամբ խստացնել պայմանները, քանի որ «գոյություն ունի կարգավորման չմտածված և չափազանց թանկ նորմերի ներմուծման վտանգ»: Կարգավորման կտրուկ միջոցները կարող էին կանխել ֆինանսական շուկաների զարգացումը, իսկ «դիրեկտիվ մարմինները պետք է խուսափեն շուտափույթ կարգավորումից, որը կարող է ճնշել նորամուծությունները ֆինանսական համակարգում»*:

Այսպիսով՝ «ֆինանսական շուկաների կարգավորման քաղաքականությունը պետք է կարողանա արագ արձագանքել ֆինանսական նորամուծություններին և ֆինանսական շուկաների աստիճանական զարգացմանը» (G20): Գործնականում վարկային կազմակերպությունների հսկողության ստանդարտներով զբաղվում է Միջազգային հաշվարկային բանկին կից գործող Բազելյան կոմիտեն:

Հաջորդ կարևոր պահանջը ֆինանսական ծառայություններից օգտվողների ֆինանսական գրագիտության ու իրազեկման մակարդակի բարձրացումն էր: Արդյունավետ ուսուցումը և ֆինանսական գրագիտության ապահովումը կօգնեն մարդկանց կողմնորոշվել ֆինանսական ակտիվների և դրանց հետ կապված ռիսկերի ոլորտում, քանի որ կրթված քաղաքացիներին դժվար է ապակողմնորոշել և մոլորեցնել:

Անդրադառնալով կարգավորման նորմերի և սկզբունքների մշակմանը՝ հարկ է նշել, որ առաջին քայլը տվյալ գործընթացում դարձավ 2007 թ. վերջին ԱՄՀ «Ֆինանսական կայունության ցուցիչների կազմման ուղեցույցի» ստեղծումը՝ ազգային կարգավորման մարմիններին օժանդակելու՝ ճգնաժամի

* Արժույթի միջազգային հիմնադրամ:

հետ կապված նոր տեղեկատվության ստացման նպատակով[6]: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված էր համաշխարհային ֆինանսական շուկայում անկայունության դեպքերի աճով: Նշված հրապարակումը զուգադիպեց ֆինանսական շուկաներում արդեն գրանցված տատանման հերթական դեպքին՝ կանխատեսելով գալիք համաշխարհային ճգնաժամը:

2008 թ. աշնանը Բազելյան կոմիտեն թողարկեց «Բանկային հսկողության և իրացվելիության ռիսկի հուսալի կառավարման սկզբունքների» նոր տարբերակը, որը բանկերի գործունեության կարգավորման որոշակի կանոնների հավաքածու է: Նոր կանոններին համապատասխան՝ բանկերը պարտավոր էին հաստատել և պահպանել իրացվելիության ռիսկի սահմանային չափը: Անհրաժեշտ էր նաև կատարել իրացվելիության ռիսկերի ամբողջական համակարգի գնահատում և նույնականացում՝ ներառելով չնախատեսված ծախսերի ռիսկը, ինչպես նաև օգտագործել մանրակրկիտ մշակված սթրես-թեստեր: Բացի այդ, կարևոր էր բանկում չնախատեսված ծախսերի ֆինանսավորման օպերատիվ պլանի առկայությունը:

Եվրոպական միությունն ակտիվ մասնակցություն է ունեցել իր անդամ պետությունների համար հակաճգնաժամային նորմերի մշակման և ներդրման գործում: Այսպես՝ 2009 թ. հուլիսին համապատասխան հանձնաժողովի կողմից Եվրոխորհրդարանի հաստատմանը ներկայացվեցին կապիտալի համարժեքության, ակտիվների վերաարժեթղթավորման, ինչպես նաև ֆինանսական կառույցների ղեկավարների պարգևատրման քաղաքականության վերահսկման նոր պահանջների վերաբերյալ որոշումները[7]: Վերջիններս 2008 թ. ԵՄ-ում հնչած դեկլարատիվ միջոցառումների և վերլուծական եզրակացությունների արդյունքն էին:

2009 թ. սեպտեմբերի 6-ին կայացած հանդիպմանը կենտրոնական բանկերի ղեկավարները և 27 առավել զարգացած երկրների վերահսկողության մարմինների տնօրենները համաձայնության եկան՝ իրենց երկրներում բանկային հատվածի կարգավորման ներքոհիշյալ միջոցառումների կիրառման վերաբերյալ: Դրանք են.

- Առաջին մակարդակի կապիտալի վերաբերյալ տեղեկատվության որակի և թափանցիկության մակարդակի բարձրացում: Նշված կապիտալում գլխավորը պետք է լինեն սովորական բաժնետոմսերը և չբաշխված շահույթը. համապատասխան սկզբունքներ մշակվելու էին նաև ոչ բաժնետիրական ընկերությունների համար: Հսկողության նորմերը պետք է ընդհանուր լինեն նաև առանձին երկրների համար:
- Նոր միջոցառումները նախատեսում են լևերեջի գործակցի ներմուծում՝ որպես ռիսկի գնահատման լրացուցիչ չափորոշիչ Բազել-II համաձայնագրի շրջանակներում: Վերջինս մշակվել է Բազելյան կոմիտեի կողմից 2004 թ.՝ բանկային համակարգում ռիսկերի կարգավորման որակի բարելավման նպատակով, ինչը պետք է նպաստեր ֆինանսական համակարգի կայունացման ամրապնդմանը:
- Նոր միջոցառումներն ենթադրում են իրացվելիության պահուստավորման նվազագույն չափանիշի սահմանում, որը ներառում է անբարենպաստ պայմաններում իրացվելիության ցուցանիշի սահման-

[6] Տե՛ս www.imf.org/external/pubs/ft/wp/.../wp13263.pdf
[7] Տե՛ս ec.europa.eu/environment/.../recovery_plan.htm

ներին վերաբերող պահանջները, ինչպես նաև երկարաժամկետ իրացվելիության գործոնի կիրառման ընդլայնումը:

- Նոր միջոցառումները, բացի նվազագույն պահուստավորման պահանջներից, ուղղված են նաև հակապարբերաշրջանային պահուստավորման համակարգի ստեղծմանը: Տվյալ համակարգը ենթադրում է կապիտալի պահուստավորման այնպիսի միջոցառում, ինչպիսին դրա տարածման սահմանափակումներն են: Բազելյան կոմիտեն ծրագրում էր անցկացնել համապատասխան ցուցիչների հավաքածուի ծայրակետային ուսումնասիրություն (մասնավորապես՝ վարկի կամ եկամտի վրա հիմնված փոփոխականների)՝ կապիտալի պահուստի ստեղծման կամ դրա նվազեցման պահի որոշման նպատակով: Կոմիտեն նաև նախատեսում էր խթանել առավել երկարաժամկետ պահուստների ստեղծումը՝ հիմնված ենթադրվող վնասների վրա:
- Ծրագրվում էր թողարկել համակարգային ռիսկի նվազմանն առնչվող հանձնարարականներ՝ կապված միջսահմանային բանկերի կողմից իրականացվող գործառնությունների հետ:

Մեկ այլ կարևոր խնդիր էր համարվում վարկանշային ընկերությունների նկատմամբ արդյունավետ հսկողության սահմանումը: Ճգնաժամի պայմաններում ակնհայտ դարձավ, որ նշված ընկերությունների գործունեությունը արդիականացման կարիք ունի: Դա հատկապես վերաբերում էր ֆինանսական գործիքների վարկանիշների և համեմատական մեթոդների թափանցիկությանը:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ Արժույթի միջազգային հիմնադրամն արձանագրեց. «Անհրաժեշտ է ստեղծել վարկանշի առավել ածանցված սանդղակ՝ ավելի բարդ գործիքների համար»: Վերջինս, տարբեր վարկանիշների առկայության պարագայում կնպաստի ներդրողների կողմից իրականացվող պատշաճ ստուգմանը: Կարևոր է նաև, որ նոր վարկանշային սանդղակը ապահովի լրացուցիչ տեղեկություններ կառուցվածքավորված վարկային գործիքների՝ առավել ցածր մակարդակ տեղափոխվելու հնարավորության վերաբերյալ:

2008-ի ապրիլին G8-ի գագաթնաժողովում ուշադրություն դարձվեց նաև վարկանշային ընկերությունների գնահատման որակի բարելավման հարցին: Ընդհանուր առմամբ, հանդիպման ժամանակ առաջարկված միջոցառումները խիստ համահունչ էին Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումներին: Որոշվեց, որ վարկանշային ընկերությունները պետք է իրականացնեն արդյունավետ միջոցառումներ իրենց գործունեության մեջ հնարավոր հակասությունների վերացման համար, հարկ է կատարել ռիսկերի հստակ դասակարգում՝ կառուցվածքային գործիքների գնահատման դեպքում անհրաժեշտ է բարելավել գնահատման մեթոդները, ինչպես նաև ստուգել տարբեր փոխառուների վերաբերյալ տեղեկատվության որակը: Դրա հետ մեկտեղ, ներդրողները պետք է վարկանիշների հուսալիության վերաբերյալ ինքնուրույն հետազոտություն կատարեն՝ հիմնվելով գնահատման մեթոդաբանության վրա:

Այսպիսով՝ G8-ի գագաթնաժողովում հայտարարվեց վարկանշի և ներդրողների կողմից որոշումների ընդունման գործընթացում դրա դերի և օգտագործման մեթոդի փոփոխման անհրաժեշտության մասին: ԵՄ-ի՝ 2008 թ. հոկտեմբերին հրապարակված զեկույցում նշվում է, որ վարկանիշային ընկե-

ությունները «պարտավոր են բացահայտել այն մոդելները և գլխավոր չափորոշիչները, ըստ որոնց սահմանվել են իրենց վարկանիշները, ինչպես նաև հրապարակել ամենամյա զեկույց՝ ապահովելով իրենց գործունեության թափանցիկությունը»: Բացի այդ, «ընկերությունները պարտավոր են ստեղծել համապատասխան բաժանմունքներ՝ վարկանիշների որակի ստուգման համար»:

Ամփոփելով նշենք, որ ԵՄ-ի որոշումները հստակ և գործնականում տնտեսության մեջ ճգնաժամային երևույթներին արձագանքման օպերատիվ միջոցառումներ էին: Դա կարելի է բացատրել ԵՄ կարգավիճակով, որը համադրում է ինչպես միջազգային կազմակերպության, այնպես էլ միասնական պետության բնորոշ գծերը, ինչը թույլ է տալիս ընդունել միասնական որոշումներ բոլոր անդամ երկրների համար:

ВЛАДИМИР АРУТЮНЯН
Директор Института экономики им. М.Котаняна НАН РА,
член-корреспондент НАН РА, доктор экономических наук, профессор

КАРЕН САРГСЯН
Старший сотрудник Института экономики
им. М.Котаняна НАН РА, кандидат экономических наук

Антикризисные меры международных экономических организаций в контексте кризисных развитий глобальной экономики.- В процессе мирового финансово-экономического кризиса принятые со стороны международных организаций аналитические заключения консультативного характера позволили уточнить основные причины кризиса и соответствующее направление выхода из этих ситуаций. Связанные с упомянутым направлением мероприятия, продемонстрировали последствие воздействия, как на принятие решений в сфере внутренней экономической политики отдельных стран, так и на регулирование мировой экономической системы, взятой в целом.

Ключевые слова: *кризис, международные организации, экономические мероприятия, финансовая политика, фонд, рейтинг.*

VLADIMIR HARUTYUNYAN
Director of the Institute of Economics after M.Kotanyan, NAS RA,
Corresponding Member of NAS RA, Doctor of Economics, Professor

KAREN SARGSYAN
Senior Researcher at the Institute of Economics
after M. Kotanyan, NAS RA, PhD in Economics

Anticrisis Measures of International Economic Organizations in the Context of Crisis Developments of Global Economy.- During the global financial crisis, the analytical conclusions of advisory nature adopted by international organizations allowed to adjust the main causes of the crisis and the situation getting out of the way. The measures connected with the latter showed consequential effects on the decision-making within domestic economic policy in separate countries, as well as, on the whole global economic regulation.

Key words. *crisis, international organizations, economic measures, financial policy, fund, rating.*

ՄԻԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԶԱՏ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ
ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

ՀԱՅԿԱԶ ԻԳԻԹՅԱՆ
ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի ասպիրանտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Երկրի տնտեսական զարգացման ուղենիշների բացահայտման գործում կարևորվում է դրա անվտանգության կամ խոցելիության բաղադրիչի նկատմամբ հետևողական մշտադիտարկումը՝ որպես տնտեսական ճգնաժամերի, արտաքին և ներքին ցնցումների ազդեցությունների նկատմամբ համակարգի կայունության ապահովման գրավական: Սերգեյ Գլազևի առաջարկած մեթոդաբանությամբ հեղինակները հաշվարկել են Հայաստանի տնտեսական անվտանգության համաթիվը, քննարկել դրա հիմքում առկա հիմնական փոփոխականների վարքագիծը, ինչպես նաև տնտեսական անվտանգության մակարդակից դրանց շեղվածության աստիճանը:

Հիմնաբառեր. *տնտեսական անվտանգություն, ճգնաժամ, կենսամակարդակ, մասնավոր սպառում, ներդրումներ*

ՀՀ տնտեսական անվտանգության ներկա վիճակի գնահատման համար մենք առաջարկում ենք երկրի տնտեսական անվտանգության (ՏԱ) հասկացության սահմանման հետևյալ բազմաբովանդակ տարբերակը. «Տնտեսական անվտանգությունն ազգային անվտանգության բաղկացուցիչ մասն է, որը բնութագրվում է տնտեսական համակարգի արդյունավետությամբ և մրցունակությամբ՝ նույնիսկ ներքին և արտաքին վտանգների անբարենպաստ զարգացումների պարագայում»:

Ռուսաստանի ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Գլազևի առաջարկած մեթոդաբանությամբ[1] գնահատել ենք 2006-2013 թվականներին Հարավկովկասյան երեք հանրապետությունների ՏԱ մակարդակն ըստ ընտրված 18 ցուցանիշների: Հայաստանը երկրորդն է իր ՏԱ մակարդակով՝ Ադրբեջանից հետո (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. *ՏԱ համաթիվը*

ՏԱ համաթվի 0,5–0,699 միջակայքում գտնվելու դեպքում երկիրը բավարար անվտանգ է համարվում[2]: 2007 և 2008 թվականներին ՏԱ համաթիվը տատանվել է անվտանգության սահմանագծի շուրջ՝ համապատասխանաբար կազմելով 0,707 և 0,695: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով էականորեն նվազեց Հայաստանի ՏԱ համաթիվը՝ 2009-ին կազմելով 0,591: Դա հիմնականում պայմանավորված է ՀՆԱ անկմամբ՝ դոլարային արտահայտությամբ, տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշռի, արտաքին պարտքի և աղքատության մակարդակի աճով: Տնտեսության համար ամենավտանգավոր ցուցանիշներից մեկի՝ «հետազոտությունների ու մշակումների (ՀուՄ) վրա կատարված ծախսերը ՀՆԱ-ի մեջ» ցուցանիշով և դրանից բխող նորարարության կատարողականով մեր երկիրն անբարենպաստ դիրքում է, ինչի հետևանքով որոշակի վնասներ է կրում տնտեսական անվտանգության առումով:

Համաձայն մեր կատարած հետազոտությունների՝ հետճգնաժամային հատվածում, տնտեսական աճի վերականգնմանը զուգահեռ, երկրի ՏԱ համաթիվը բարելավվել է՝ 2012 և 2013 թվականներին կազմելով համապատասխանաբար 0,674 և 0,656, ինչը շեղվում է անվտանգության մակարդակից, համապատասխանաբար՝ 3,7 և 6,3 տոկոսով (աղյուսակ 1): Ինչպես Հայաստանը, այնպես էլ Վրաստանը և Ադրբեջանը բացարձակ անվտանգության մակարդակից բավականին ցածր հարթության վրա են: Մեր երկրում 2013 թվականին ՏԱ համաթիվը բացարձակ անվտանգության մակարդակից ցածր է եղել 34,4%-ով:

---

[1] Տե՛ս **Глазьев С.,** Основа обеспечения экономической безопасности страны: альтернативный реформационный курс // „Российский журнал”. 1997, № 1.

[2] Տե՛ս **Илларионов А.,** Критерии экономической безопасности// ,,Вопросы экономики”. 2002, № 3.

Աղյուսակ 1

ՏԱ համաթվի շեղվածությունը

	Շեղվածության չափը անվտանգության մակարդակից (%)							Շեղվածության չափը բացարձակ անվտանգության մակարդակից (%)						
	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Հայաստան	**-1**	**0,7**	**15,6**	**3,3**	**6,8**	**3,7**	**6,3**	**29,3**	**30,5**	**40,9**	**32,3**	**34,8**	**32,6**	**34,4**
Վրաստան	9,8	24,1	26	14,8	12,7	8,7	10,7	36,9	46,9	48,2	40,4	38,9	36,1	37,5
Ադրբեջան	7,3	4,4	-6,8	-7,5	1,6	-5	-9,7	35,1	33,1	25,2	24,7	31,1	26,5	23,2

Հայաստանի Հանրապետությունում 2000-ականների ընթացքում պահպանվել է կայուն տնտեսական աճի վարքագիծ: Միևնույն ժամանակ, կայուն տնտեսական հիմնադրույթները՝ պարտքի ցածր մակարդակը, աճող խնայողությունները և զգուշավոր ֆիսկալ դիրքը, պահպանեցին տնտեսությունը թողարկման ծավալների համընդգրկուն անկման և ֆինանսական ճգնաժամի սկզբնական ազդեցությունից, իսկ արտաքին պահանջարկի և կապիտալ հոսքերի ծավալների անկման ազդեցությունը զգացվեց սկսած 2008-ի չորրորդ եռամսյակից, երբ արդեն իսկ գրանցվեց 5,9% տնտեսական անկում, իսկ տարեկան ՀՆԱ աճը կազմեց 6,9%՝ 2007 թ. 13,7% երկնիշ աճի դիմաց: Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, սկսած 2010 թվականից, վերականգնվել է տնտեսական աճը, և այս ցուցանիշի մասով ՏԱ համաթվում արդեն 2012 և 2013 թվականներին գնահատվել է, համապատասխանաբար՝ 1 և 0,64 միավոր:



Գծապատկեր 2. ***Տնտեսական աճ***[3]

[3] Այս և հետևյալ բոլոր գծապատկերների տվյալները վերցված են ՀՀ ԱՎԾ, Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակի, Ադրբեջանի վիճակագրական կոմիտեի, Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի պաշտոնական կայքէջերից:

Աղյուսակ 2

Տնտեսական աճի շեղվածությունը ՏԱ մակարդակից և գնահատականը[4]

	Շեղվածության չափը շեմային մեծությունից (%)							Գնահատականը (0-1)						
	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Հայաստան	**-149**	**-23**	**356**	**52,7**	**20**	**-30**	**36,3**	**1**	**1**	**0**	**0,47**	**0,8**	**1**	**0,64**
Վրաստան	-123	56,3	169	-16	-30	-18	41,8	1	0,44	0	1	1	1	0,58
Ադրբեջան	-454	-96	-69	9,1	98,2	60	-5,4	1	1	1	0,91	0,02	0,4	1

Դիտարկվող ժամանակաշրջանում ներդրումները նվազել են աճող տեմպերով, իսկ բնակելի շենքերի շինարարության հատվածն ամենամեծ չափով է անկում ապրել: Նման անկման պատճառը տնտեսական միջավայրի կտրուկ փոփոխությունն է: Տնտեսական ցուցանիշների վերլուծությունը հաստատում է, որ խոր անկում է արձանագրվել նաև այլ ճյուղերում, մասնավորապես՝ 2009-ին գրանցվել է իրական ՀՆԱ 14,1% անկում, որին հաջորդել է դանդաղ վերականգնում՝ սկսած 2010 թ. (2010-ին ՀՆԱ հավելաճը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 2.2%, 2011 թ.՝ 4,7%): Բավականին զգալի էր 2012 թ. ՀՆԱ աճը՝ 7,2%, սակայն դա դեռևս բավարար չէր՝ հասնելու 2008 թ. մակարդակին: Այս ամենին զուգահեռ, 2009 թ. մարտին ազգային արժույթը արժեզրկվեց մոտ 20%-ով, ինչի հետևանքով 1 շնչին բաժին ընկնող ընթացիկ դոլարային գներով արտահայտված, ՀՆԱ-ն նվազեց 25,6-ով՝ կազմելով 2913 ԱՄՆ դոլար (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. *Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար)*

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, մինչև 2008 թվականը շեղվածության չափը շեմային մեծությունից կայուն կերպով նվազել է՝ 2008-ին կազմելով ընդամենը 1,9%: Այս ցուցանիշը հիմնականում արտահայտում է 1 շնչի հաշվով ՀՆԱ այնպիսի մակարդակ, որն ապահովում է յուրաքանչյուր բնակչի

[4] Այս և հետևյալ բոլոր աղյուսակներում նշված շեղվածության չափը շեմային մեծությունից սյան մեջ «-» նշանն արտահայտում է տնտեսական անվտանգության մակարդակից դրական շեղվածություն, ինչը գնահատվում է 1 միավոր:

հաշվով նվազագույն պարենային զամբյուղի արժեքի եռապատիկը: Տնտեսական աճի վերականգնմանը զուգահեռ, 2012 և 2013 թթ. շեղվածության չափը կազմել է 22,5 և 22,8%՝ համապատասխանաբար 0,78 և 0,77 միավոր: Հետճգնաժամային փուլում այս ցուցանիշի անկայուն վիճակի պատճառը հիմնականում ազգային արժույթի արժեզրկման հետ կապված ռիսկերն են:

Աղյուսակ 3

1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ շեղվածության չափը շեմային մեծությունից և գնահատականը

	Շեղվածության չափը շեմային մեծությունից (%)							Գնահատականը (0-1)						
	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Հայաստան	**21,3**	**1,9**	**28,5**	**24,8**	**19,3**	**22,5**	**22,8**	**0,79**	**0,98**	**0,72**	**0,76**	**0,81**	**0,78**	**0,77**
Վրաստան	40,8	26,9	40,1	37,1	24,1	19,3	17,4	0,59	0,73	0,59	0,62	0,76	0,81	0,83
Ադրբեջան	1,6	-39	-21	-40	-69	-65	-91	0,98	1	1	1	1	1	1

Կենսամակարդակը բնութագրող դեցիլային ցուցանիշով (10% ամենահարուստ և 10% ամենաաղքատ ընտանիքների եկամուտների հարաբերությունը), որը կարելի է բնորոշել որպես Ջինիի գործակցի այլընտրանք, տարածաշրջանում ամենաբարենպաստ վիճակը Հայաստանում է, որը 2012 և 2013 թթ. կազմել է, համապատասխանաբար՝ 6,75 և 6,65:



Գծապատկեր 4. *Կենսամակարդակը բնութագրող դեցիլային ցուցանիշ*

Դիտարկվող ողջ ժամանակաշրջանում այս ցուցանիշի գնահատականը դրսևորել է կայուն, ոչ տատանողական վարքագիծ՝ 2013 թ. շեղվելով ՏԱ մակարդակից 10,8%-ով և կազմել 0,89 (աղյուսակ 4): 2007 թ. 10% ամենահարուստ ընտանիքներին բաժին է ընկել եկամտի 27,6%-ը, իսկ 10% ամենաաղքատ ընտանիքներին՝ 3,54%-ը: 2012 թվականին այս ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 25,86% և 3,88%:

Աղյուսակ 4

Կենսամակարդակը բնութագրող դեցիլային ցուցանիշի շեղվածությունը շեմային մեծությունից և գնահատականը

	Շեղվածության չափը շեմային մեծությունից (%)							Գնահատականը (0-1)						
	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Հայաստան	**13**	**13,3**	**13,2**	**14**	**13,6**	**12,5**	**10,8**	**0,87**	**0,87**	**0,87**	**0,86**	**0,87**	**0,88**	**0,89**
Վրաստան	107	160	153	179	161	153	170	0	0	0	0	0	0	0
Ադրբեջան	43,2	32,8	30,2	29,3	28,2	25,5	24,8	0,57	0,67	0,7	0,71	0,72	0,75	0,75

Ճգնաժամային՝ 2009 թվականին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ նվազել է ընդամենը 4%-ով՝ 14,1% տնտեսական անկման պայմաններում, ինչը պայմանավորված է հարստության էֆեկտով: 2010 թվականից սկսած՝ վերջնական սպառման ցուցանիշը սկսել է աճել, ընդ որում, 2010 թվականին տնօրինվող եկամտի իրական աճի համեմատությամբ առաջանցիկ է աճել, իսկ 2011 թվականին աճել է 3,4%-ով՝ տնօրինվող իրական եկամտի 5,5% աճի պայմաններում. փաստորեն, տեղի է ունեցել խնայողությունների աճ: 2012 թվականին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ աճել է 6,7%-ով, որը պայմանավորված է հիմնականում մասնավոր սպառման շուրջ 7,9% աճով, իսկ պետական սպառումը նվազել է 2,6%-ով: Վերջնական սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները 2012 թվականի նույն ժամանակահատվածում կազմել են, համապատասխանաբար՝ 12,6 և 86,2%:

Մինչև 2008 թ. շեղվածությունը շեմային ցուցանիշից կայուն կերպով նվազել է՝ 2008-ին շեղվելով ՏԱ մակարդակից 19,3%-ով: 2009 թ. սկսած՝ այս ցուցանիշի մասով միշտ տեղի է ունեցել վատթարացում, իսկ 2012 թ. շեղվածության չափը հասել է աննախադեպ բարձր մակարդակի՝ 47,3%-ի, գնահատականը նույն տարվա համար եղել է 0,53 միավոր (աղյուսակ 5): Նշենք, որ 2013 թ. աննշան է նվազել մասնավոր սպառման կշիռը ՀՆԱ-ում՝ կազմելով 86,2%:



Գծապատկեր 5. ***Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)***

Աղյուսակ 5

Տնային տնտեսությունների վերջնական սպառման շեղումը շեմային մեծությունից և գնահատականը

	Շեղվածության չափը շեմային մեծությունից (%)							Գնահատականը (0-1)						
	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Հայաստան	**19,3**	**19,3**	**33,8**	**36,6**	**39,3**	**47,3**	**43,6**	**0,81**	**0,81**	**0,66**	**0,64**	**0,61**	**0,53**	**0,56**
Վրաստան	21,3	29,8	36,1	25,1	24,8	20,3	19,1	0,79	0,70	0,64	0,75	0,75	0,8	0,81
Ադրբեջան	-52	-49	-31	-37	-38	-34	-32	1	1	1	1	1	1	1

2008 թվականից հետո ՀՀ-ում ներդրումների ցուցանիշը ևս նվազել է: Ճգնաժամային 2009-ին այն ինքնաբերաբար դեռևս բարձր էր՝ 34,6%, սակայն ներդրումների նվազումն ավելի շարունակական բնույթ ստացավ; 2011 թ. այդ ցուցանիշն իջավ 27,3%-ով, 2012 թ.՝ 23,7%-ով (գծապատկեր 6): Միջնաժամկետ ծախսային ծրագրով (2011–13 թթ.) կանխատեսվեց, որ 2013-ին ներդրումների մակարդակը փոքր-ինչ կվերականգնվի, սակայն տեղի ունեցավ հակառակը: Հայաստանը տնտեսական ճգնաժամից դուրս է եկել, սակայն ներդրումային ակտիվությունը չի վերականգնվում:



Գծապատկեր 6. ***Ներդրումների ծավալը ՀՆԱ-ում (%)***

Ներդրումների ֆինանսավորման խնդիրն առայսօր լուծված չէ: Թեև վարկերի կշիռը ՀՆԱ-ում արդեն գերազանցում է 36%-ը (2010 թ. 27% էր), սակայն վարկերի աճի հիմնական լոկոմոտիվը սպառողական նշանակության վարկերն են: Այսինքն՝ Հայաստանում տնտեսական մոդելը կորցրել է աճի ուղղվածությունը, վերածվել է սպառողական մոդելի՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով: Սպառողական տնտեսական մոդելներն առավել զգայուն են ճգնաժամերի նկատմամբ, քանի որ ճգնաժամին հակադրվող ռեսուրսը փոքր է:

2012 և 2013 թթ. նույն տեմպերով ներդրումները նվազել են՝ շեղվելով ՏԱ մակարդակի շեմից 21 և 31,6%-ով, համապատասխանաբար՝ 0,79 և 0,69 գնահատականներով:

Աղյուսակ 6

Ներդրումների շեղվածության չափը շեմային մեծությունից և գնահատականը

	Շեղվածության չափը շեմային մեծությունից (%)							Գնահատականը (0-1)						
	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Հայաստան	**-26**	**-36**	**-15**	**-9,3**	**9**	**21**	**31,6**	**1**	**1**	**1**	**1**	**0,91**	**0,79**	**0,69**
Վրաստան	-13	9,8	56,3	27	13	10,3	12,6	1	0,91	0,44	0,73	0,87	0,9	0,87
Ադրբեջան	28,3	34	38,8	38,2	29,4	23,7	28	0,72	0,66	0,61	0,62	0,71	0,72	0,72

Ինչպես հայտնի է, տնտեսության բարձր և կայուն աճը նախադրյալներ է ստեղծում կենսամակարդակի բարձրացման և աղքատության նվազեցման համար: Միևնույն ժամանակ, աղքատության կրճատման աստիճանը կախված է այն բանից, թե զուգորդվե՞լ է տնտեսական աճը եկամուտների բաշխվածության փոփոխությամբ: Դա, իհարկե, կախված է նաև եկամուտներում, առկա ռեսուրսներում և հնարավորություններում նախնական անհավասարությունից, որը, իր հերթին, սակավ ապահովվածներին զրկում են տնտեսական աճի պտուղներից օգտվելու հնարավորություններից:

Բնակչության բարեկեցության, կենսամակարդակի գնահատման կարևոր ցուցանիշ է համարվում տվյալ երկրում աղքատության մակարդակը: Աղքատությունն արտահայտվում է տարբեր ձևերով և շոշափում կյանքի տարբեր կողմերը՝ սպառում, պարենային անվտանգություն, առողջություն, կրթություն, իրավունքներ (ներառյալ՝ ձայնի), անվտանգություն, արժանապատվություն և արժանապատիվ աշխատանք:

Մինչև 2008 թվականը աղքատության մակարդակը Հայաստանում կայուն կերպով նվազել է՝ 2008-ին կազմելով 27,6%: 2009 թ. 14,1% տնտեսական անկման և մասնավոր տրանսֆերտների կրճատման հետևանքով աղքատությունն աճել է 23,5%-ով՝ 2009-ին կազմելով 34,1%: Հետճգնաժամային տնտեսական աշխուժացմանը զուգահեռ, աղքատության մակարդակը սկսել է նվազել՝ 2013 թ. կազմելով 32%, ինչը էականորեն բարձր է ՏԱ մակարդակից՝ շեղվելով վերջինից 255%-ով (գծապատկեր 7): Իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը 2013 թ. կազմել է 2.7%՝ 2008 թ. արձանագրված 1.6%-ի դիմաց:

2011-2012 թթ. այս ցուցանիշի շեղվածությունը շեմային մեծությունից եղել է հսկայական՝ 298% և 260%: Դիտարկվող ամբողջ ժամանակաշրջանում դա գնահատվել է 0 միավոր (աղյուսակ 7):

Աղյուսակ 7

Աղքատության մակարդակի շեղվածությունը շեմային մեծությունից և գնահատականը

	Շեղվածության չափը շեմային մեծությունից (%)							Գնահատականը (0-1)						
	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Հայաստան	**220**	**206**	**279**	**298**	**298**	**260**	**255**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**
Վրաստան	160	152	174	176	156	147	132	0	0	0	0	0	0	0
Ադրբեջան	75,5	47	22,2	-1,1	-15	-33	-41	0,25	0,53	0,78	1	1	1	1



Գծապատկեր 7. *Աղքատության մակարդակ (%)*

Գործազրկության մակարդակը 2009 թվականին աճել է՝ պայմանավորված ֆինանսատնտեսական ճգնաժամով՝ կազմելով 18.4%: Տնտեսության վերականգնմանը զուգընթաց, գործազրկության մակարդակը, 2011 թ. արդյունքներով, նվազել է՝ հասնելով 2009 թվականի համեմատությամբ 0.3 տոկոսային կետով ցածր մակարդակի: 2013 թվականին այն կազմել է 16,2, ինչը էականորեն բարձր է ՏԱ մակարդակից (գծապատկեր 8): Պետք է նշել, որ Հայաստանում գործազրկության մեջ մեծ մասնաբաժին ունի կառուցվածքային գործազրկությունը՝ պայմանավորված աշխատանքային ռեսուրսներում նախկին Խորհրդային Միության մասնագետների առկայությամբ, որոնց որակավորումը չի համապատասխանում ներկայիս շուկայական տնտեսավարման պայմաններին:

Հետճգնաժամային հատվածում թեև գործազրկության շեղվածության չափը ՏԱ մակարդակից՝ 90%-ից նվազել և 2013 թ. կազմել է 62%, բայց դա դեռևս բավականին զգալի ցուցանիշ է. 2012 և 2013 թթ. գնահատվել են, համապատասխանաբար՝ 0,23 և 0,38 (աղյուսակ 8):



Գծապատկեր 8. *Գործազրկության մակարդակ*[5]

[5] Ադրբեջանում գործազրկության ցուցանիշում ներառվում է այն մարդկանց թիվը, ովքեր հաշվառված են զբաղվածության պետական ծառայությունում:

Աղյուսակ 8

Գործազրկության մակարդակի շեղվածությունը շեմային մեծությունից և գնահատականը

	Շեղվածության չափը շեմային մեծությունից (%)							Գնահատականը (0-1)						
	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Հայաստան	**71**	**64**	**87**	**90**	**84**	**73**	**62**	**0,29**	**0,36**	**0,13**	**0,1**	**0,16**	**0,23**	**0,38**
Վրաստան	33	65	69	63	51	50	43	0,67	0,35	0,31	0,37	0,49	0,5	0,57
Ադրբեջան	-41	-42	-43	-44	-46	-48	-49	1	1	1	1	1	1	1

Մինչև 2008 թվականը Հայաստանի արտաքին պարտքը կայուն կերպով նվազում էր: 2009 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 1,270.7 մլրդ դրամ (3,362.7 մլն ԱՄՆ դոլար)՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 686.1 մլրդ դրամով (1,456.7 մլն ԱՄՆ դոլարով): Նախորդ տարվա համեմատությամբ ՀՀ պետական պարտքի աճը պայմանավորված է եղել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով և ՀՀ տնտեսության վրա վերջինիս ազդեցությամբ: Նման պարագայում ՀՀ Կառավարությունը ստիպված եղավ 2009 թ. ընթացքում ներքին և արտաքին աղբյուրներից ներգրավել պետական բյուջեով նախատեսվածից 365.2 մլրդ դրամով ավելի փոխառու միջոցներ: Այսպես՝ ներքին աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների հաշվին պետբյուջեի պակասուրդը ֆինանսավորվել է 42.2 մլրդ դրամով, որը ՀՀ 2009 թ. պետական բյուջեով նախատեսված ցուցանիշից ավելի է 18.5 մլրդ դրամով: Արտաքին աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների հաշվին պետբյուջեի պակասուրդը ֆինանսավորվել է 389.3 մլրդ դրամով, որը ՀՀ 2009 թ. պետական բյուջեով նախատեսված ցուցանիշից ավելի է 346.7 մլրդ դրամով: 2009 թվականի վերջին արտաքին պետական պարտքը կազմել է ՀՆԱ 33,4%՝ ճեղքելով ՏԱ մակարդակի գիծը (գծապատկեր 9):



Գծապատկեր 9. ***Արտաքին պարտքը ՀՆԱ-ում (%)***

ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման տեսանկյունից 2013 թվականին շարունակվել են դեռևս 2009 թվականին արձանագրված միտումները: 2013-ին ՀՀ արտաքին պարտքն աճել է 3,3 տոկոսով: ՀՀ արտաքին

պետական պարտքի կառուցվածքում, 2012 թ. տարեվերջի համեմատությամբ, 5,2 տոկոսային կետով նվազել է ՀՀ ԿԲ արտաքին պարտքի կշիռը: ՀՀ Կառավարության պարտքն աճել է 5,2 տոկոսով՝ 3143,7 միլիոն ԱՄՆ դոլարից հասնելով 3307,1 միլիոն ԱՄՆ դոլարի, իսկ ՀՀ ԿԲ պարտքը նվազել է 14,5 տոկոսով՝ 594,6 միլիոն ԱՄՆ դոլարից հասնելով 508,3 միլիոն ԱՄՆ դոլարի:

Մինչև 2008 թ. Հայաստանի արտաքին պարտքը գտնվել է ՏԱ գծից ցած: 2008-ին դրական շեղվածությունը կազմել է 46 տոկոս, և մենք գնահատել ենք 1 միավոր: 2009-ից մինչև 2012 թ. շեղվածությունը շեմային մեծությունից անընդհատ աճել է՝ 37,2%-ից հասնելով 50,4%-ի, իսկ 2013-ին փոքր-ինչ նվազել է՝ կազմելով 49,6%: 2013-ին այս ցուցանիշը գնահատվել է 0,5 միավոր (աղյուսակ 9):

Աղյուսակ 9

Արտաքին պարտքի շեղվածությունը շեմային մեծությունից և գնահատականը

	Շեղվածության չափը շեմային մեծությունից (%)							*Գնահատականը (0-1)*						
	2007	*2008*	*2009*	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2007*	*2008*	*2009*	*2010*	*2011*	*2012*	*2013*
Հայաստան	**-37**	**-46**	**37,2**	**42,4**	**40,8**	**50,4**	**49,6**	**1**	**1**	**0,63**	**0,58**	**0,59**	**0,51**	**0,5**
Վրաստան	13,2	10,4	49,2	56,8	35,6	30,8	27,2	0,87	0,9	0,51	0,43	0,64	0,69	0,73
Ադրբեջան	-66	-70	-51	-54	-59	-55	-53	1	1	1	1	1	1	1

ՏԱ վրա ազդող գործոնների՝ համապատասխան մակարդակից շուրջ 36% շեղվածություն ունենք կրթության վրա կատարվող ծախսերի առումով, արդյունաբերական արտադրության մեջ մեքենաշինության տեսակարար կշռի ցուցանիշի մասով՝ մոտ 90% շեղվածություն ՏԱ մակարդակից, դրամական զանգվածը ՀՆԱ-ում ցուցանիշով՝ 29,6%, ներմուծման տեսակարար կշիռը ներքին սպառման մեջ ցուցանիշի առումով՝ 18,3%[6]: Թերևս տնտեսական անվտանգության ապահովման ամենակարևոր ցուցանիշներից մեկը՝ գիտության վրա կատարվող ծախսերը ՀՆԱ-ում, գտնվում է առավել անբարենպաստ վիճակում. 2013 թ. կազմել է ՀՆԱ 0,27%-ը:

[6] Այս ցուցանիշը հաշվարկվել է ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության վարչությունում, սակայն պաշտոնապես հրապարակված չէ: Ցուցանիշում ներառված չեն գազը և էլեկտրաէներգիան:

N	Տնտեսական անվտանգության ցուցանիշները (SUS)	Շեմային մեծու-թյունները	Փաստացի մեծությունը							Շեղվածության չափը շեմային մեծությունից (%)							Գնահատականը (0-1)						
			2007	2008	2009	2010	2011	2012	2013	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2007	2008	2009	2010	2011	2012	2013
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24
1	ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	1980 թ.՝ 2250	3917	3995	4075	4157	4240	4325	4411														
	Հայաստան		3079	3916	2913	3124	3421	3351	3405	21,3	1,9	28,5	24,8	19,3	22,5	22,8	0,79	0,98	0,72	0,76	0,81	0,78	0,77
	Վրաստան		2317	2919	2440	2613	3219	3490	3643	40,8	26,9	40,1	37,1	24,1	19,3	17,4	0,59	0,73	0,59	0,62	0,76	0,81	0,83
	Ադրբեջան		3851	5574	4950	5843	7189	7163	8454	1,6	-39,5	-21,4	-40,5	-69,5	-65,6	-91,6	0,98	1	1	1	1	1	1
2	Կենսամակարդակը բնութագրող դեցիլային ցուցանիշ (10% ամենահարուստ և 10% ամենաաղքատ ընտանիքների եկամուտների հարաբերությունը)	ոչ ավելի, քան 6 անգամ																					
	Հայաստան		6,78	6,8	6,79	6,84	6,82	6,75	6,65	13	13,3	13,2	14	13,6	12,5	10,8	0,87	0,87	0,87	0,86	0,87	0,88	0,89
	Վրաստան		12,45	15,65	15,2	16,75	15,67	15,22	16,25	107	160,8	153	179	161	153,6	170	0	0	0	0	0	0	0
	Ադրբեջան		8,59	7,97	7,81	7,76	7,69	7,53	7,49	43,2	32,8	30,2	29,3	28,2	25,5	24,8	0,57	0,67	0,7	0,71	0,72	0,75	0,75
3	Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)	ոչ ավելի, քան 60%																					

	Հայաստան		71,6	71,6	80,3	82	83,6	88,4	86,2	19,3	19,3	33,8	36,6	39,3	47,3	43,6	0,81	0,81	0,66	0,64	0,61	0,53	0,56
	Վրաստան		72,8	77,9	81,7	75,1	74,9	72,2	71,5	21,3	29,8	36,1	25,1	24,8	20,3	19,1	0,79	0,70	0,64	0,75	0,75	0,8	0,81
	Ադրբեջան		28,7	30,5	41,4	37,4	37,2	39,6	42,2	-52,1	-49,1	-31	-37,6	-38	-34	-32	1	1	1	1	1	1	1
4	Ինֆլյացիայի միջին մակարդակը (%)	ոչ ավելի, քան 6%																					
	Հայաստան		4,4	9,0	3,4	8,2	7,7	2,6	5,8	-26,6	50	-43,3	36,6	28,3	-56,6	-0,33	1	0,5	1	0,63	0,72	1	1
	Վրաստան		9,2	10,0	1,7	7,1	8,5	-0,9	-0,5	53,3	66,6	-71,6	18,3	41,6	-	-	0,47	0,33	1	0,82	0,58	1	1
	Ադրբեջան		16,6	20,7	1,4	5,6	7,8	1,0	2,4	176	245	-76	-6,6	30	-83,3	-60	0	0	1	1	0,7	1	1
5	Գործազրկության մակարդակը (%)	ոչ ավելի, քան 10%																					
	Հայաստան		17,1	16,4	18,7	19	18,4	17,3	16,2	71	64	87	90	84	73	62	0,29	0,36	0,13	0,1	0,16	0,23	0,38
	Վրաստան		13,3	16,5	16,9	16,3	15,1	15	14,3	33	65	69	63	51	50	43	0,67	0,35	0,31	0,37	0,49	0,5	0.57
	Ադրբեջան		5,9	5,8	5,7	5,6	5,4	5,2	5,1	-41	-42	-43	-44	-46	-48	-49	1	1	1	1	1	1	1
6	Տնտեսական աճը (%)	ոչ պակաս, քան 5,5%																					
	Հայաստան		13,7	6,8	-14,1	2,6	4,4	7,2	3,5	-149	-23,6	356	52,7	20	-30,9	36,3	1	1	0	0,47	0,8	1	0,64
	Վրաստան		12,3	2,4	-3,8	6,4	7,2	6,5	3,2	-123	56,3	169	-16,3	-30,9	-18,2	41,8	1	0,44	0	1	1	1	0,58
	Ադրբեջան		25	10,8	9,3	5	0,1	2,2	5,8	-454	-96	-69	9,1	98,2	60	-5,4	1	1	1	0,91	0,02	0,4	1
7	Ներքին պետա-կան պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	ոչ ավելի, քան 20%																					
	Հայաստան		2,4	2,77	4,7	5,2	5,7	6,4	6,6	-88	-86,1	-76,5	-74	-71,5	-68	-67,5	1	1	1	1	1	1	1
	Վրաստան		8,7	7,7	9,3	8,8	7,7	7,3	7,5	-56,5	-61,5	-53,5	-56	-61,5	-63,5	-62,5	1	1	1	1	1	1	1
	Ադրբեջան		0,2	0,1	0,4	0,3	0,3	0,2	0,3	-99	-99,5	-98	-98,5	-98,5	-99	-98,5	1	1	1	1	1	1	1
8	Աղքատության ցուցանիշի «բնական» մակարդակը (%)	ոչ ավելի, քան 9%																					

	Հայաստան		28,8	27,6	34,1	35,8	35	32,4	32	220	206	279	298	298	260	255	0	0	0	0	0	0	0
	Վրաստան		23,4	22,7	24,7	24,9	23,1	22,3	20,9	160	152	174	176	156	147	132	0	0	0	0	0	0	0
	Ադրբեջան		15,8	13,2	11,0	9,1	7,6	6,0	5,3	75,5	47	22,2	-1,1	-15,5	-33,3	-41,1	0,25	0,53	0,78	1	1	1	1
9	Կրթության համար կատարված ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	ոչ պակաս, քան 5%																					
	Հայաստան		3,02	3,17	3,84	3,25	3,14	3,16	3,21	39,6	36,6	23,2	35	37,2	36,8	35,8	0,61	0,64	0,77	0,75	0,73	0,73	0,74
	Վրաստան		2,69	2,91	3,22	2,81	2,69	1,98	2,15	46,2	41,8	35,6	43,8	46,2	60,4	57	0,54	0,58	0,65	0,58	0,54	0,4	0,43
	Ադրբեջան		2,54	2,44	3,22	2,78	2,43	2,52	2,48	49,2	51,2	35,6	44,4	51,4	49,6	50,4	0,51	0,49	0,64	0,55	0,49	0,51	0,5
10	Գիտության համար կատարված ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	ոչ պակաս, քան 2%																					
	Հայաստան		0,24	0,21	0,22	0,29	0,23	0,26	0,27	88	89,5	89	85,5	88,5	87	86,5	0,12	0,11	0,11	0,14	0,12	0,13	0,13
	Վրաստան		0,24	0,17	0,19	0,16	0,18	0,19	0,2	88	91,5	90,5	92	91	90,5	90	0,12	0,09	0,10	0,08	0,09	0,10	0,10
	Ադրբեջան		0,17	0,17	0,16	0,25	0,21	0,22	0,22	91,5	91,5	92	87,5	89,5	89	89	0,09	0,09	0,08	0,12	0,11	0,11	0,11
11	Արդյունաբերական արտադրության մեջ վերամշակող արդյունաբերության տեսակարար կշիռը (%)	ոչ պակաս, քան 70%																					
	Հայաստան		66,7	68,8	66,4	66,1	64,5	62,4	64,1	4,7	1,7	5,1	5,6	7,8	10,8	8,4	0,95	0,98	0,95	0,94	0,92	0,89	0,91
	Վրաստան		70,6	73,3	74,3	76,7	78,9	79,3	80,2	-0,8	-4,7	-6,1	-9,5	-12,7	-13,3	-14,5	1	1	1	1	1	1	1
	Ադրբեջան		8,3	9,5	9,8	7,8	6,1	6,4	6,2	88,1	86,4	86	88,8	91,2	90,8	91,1	0,12	0,14	0,14	0,11	0,09	0,10	0,09
12	Արդյունաբերական արտադրության մեջ մեքենաշինության տեսակարար կշիռը (%)	ոչ պակաս, քան 20%																					

	Հայաստան		2,8	3	2,2	1,3	1,4	1,4	1,5	86	85	89	93,5	93	93	92,5	0,14	0,15	0,11	0,07	0,07	0,07	0,075
	Վրաստան		4,2	5,1	6,5	4,2	3,1	2,9	2,5	79	74,5	67,5	79	84,5	85,5	87,5	0,21	0,26	0,33	0,21	0,16	0,15	0,12
	Ադրբեջան		0,63	0,58	0,61	0,48	0,38	0,39	0,41	96,8	97,1	96,5	97,6	98,1	98,3	97,9	0,03	0,03	0,04	0,03	0,02	0,02	0,02
13	Ներդրումների ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	ոչ պակաս, քան 30%																					
	Հայաստան		37,8	40,8	34,6	32,8	27,3	23,7	20,5	-26	-36	-15,3	-9,3	9	21	31,6	1	1	1	1	0,91	0,79	0,69
	Վրաստան		34,17	27,05	13,1	21,9	26,1	26,9	26,2	-13,9	9,8	56,3	27	13	10,3	12,6	1	0,91	0,44	0,73	0,87	0,9	0,87
	Ադրբեջան		21,5	19,8	18,37	18,53	21,19	22,9	21,5	28,3	34	38,8	38,2	29,4	23,7	28	0,72	0,66	0,61	0,62	0,71	0,72	0,72
14	Կյանքի սպասվելիք տևողությունը (տարի)	ոչ պակաս, քան 70 տարի																					
	Հայաստան		73,7	73,9	74,1	74,2	74,3	74,4	74,5	-5.2	-5,5	-5,8	-6	-6,1	-6,3	-6,4	1	1	1	1	1	1	1
	Վրաստան		73,2	73,4	73,5	73,6	73,8	73,9	74	-4,5	-4,8	-5	-5,1	-5,4	-5,5	-5,7	1	1	1	1	1	1	1
	Ադրբեջան		69,7	70	70,3	70,4	70,5	70,6	70,6	0,4	0	-0,4	-0,5	-0,6	-0,8	-0,8	1	1	1	1	1	1	1
15	Արտաքին պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	ոչ ավելի, քան 25%																					
	Հայաստան		15,7	13,5	34,3	35,6	35,2	37,6	37,4	-37,2	-46	37,2	42,4	40,8	50,4	49,6	1	1	0,63	0,58	0,59	0,51	0,5
	Վրաստան		28,3	27,6	37,3	39,2	33,9	32,7	31,8	13,2	10,4	49,2	56,8	35,6	30,8	27,2	0,87	0,9	0,51	0,43	0,64	0,69	0,73
	Ադրբեջան		8,4	7,3	12,1	11,4	10,2	11,2	13,4	-66,4	-70,8	-51,6	-54,4	-59,2	-55,2	-53,6	1	1	1	1	1	1	1
16	Բյուջեի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	ոչ ավելի, քան 5%																					
	Հայաստան		0,8	0,7	7,7	4,9	2,9	1,5	0,08	-84	-86	54	-2	-42	-70	-98,4	1	1	0,46	1	1	1	1
	Վրաստան		-0,83	2	6,54	4,78	0,87	0,76	0,62	-116	-60	31	-5	-82	-84	-87,6	1	1	0,69	1	1	1	1
	Ադրբեջան		-2,29	-20	-6,57	-14	-11,3	-3	-3.3	-145	-500	-231	-380	-326	-160	-166	1	1	1	1	1	1	1
17	Դրամական զանգվածը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	ոչ պակաս, քան 50%																					

	Հայաստան		21,9	19,8	25,9	26,3	29,8	33,7	35,2	56,2	60,4	48,2	47,4	40,4	32,6	29,6	0,44	0,40	0,52	0,53	0,6	0,68	0,7
	Վրաստան		24,1	23,2	26,5	29,9	29,1	30,2	33,5	51,8	53,6	47	40,2	41,8	39,6	33	0,48	0,46	0,53	0,60	0,58	0,61	0,67
	Ադրբեջան		20,8	21,6	23,8	24,7	26,7	31	32,1	58,4	56,8	52,4	50,6	46,6	38	35,8	0,42	0,44	0,48	0,50	0,54	0,62	0,64
18	Ներմուծման տեսակարար կշիռը ներքին սպառման մեջ (%)	ոչ ավելի, քան 30%																					
	Հայաստան		38,6	38,6	38,6	35,5	35,5	35,5	35,5	28,6	28,6	28,6	18,3	18,3	18,3	18,3	0,71	0,71	0,71	0,82	0,82	0,82	0,82
	Վրաստան		41,2	41,2	43,4	43,4	43,4	43,4	43,4	37,3	37,3	44	44	44	44	44	0,63	0,63	0,54	0,54	0,54	0,54	0,54
	Ադրբեջան		27,1	27,1	25,2	25,2	25,2	25,2	25,2	-9,6	-9,6	-16	-16	-16	-16	-16	1	1	1	1	1	1	1
	ՏԱ համաթիվը																						
	Հայաստան																0,707	0,695	0,591	0,677	0,652	0,674	0,656
	Վրաստան																0,631	0,531	0,518	0,596	0,611	0,639	0,625
	Ադրբեջան																0,649	0,669	0,748	0,753	0,689	0,735	0,768

АЗАТ КАЛАНТАРЯН
Доцент кафедры "Микроэкономики и организации предпринимательской деятельности" АГЭУ, кандидат экономических наук

АЙКАЗ ИГИТЯН
Аспирант кафедры "Микроэкономики и организации предпринимательской деятельности" АГЭУ

Оценка текущей экономической безопасности Армении.- Важным фактором экономического развития страны является наблюдательный мониторинг его безопасности, как фактор обеспечения стабильности системы при экономических кризисах, внешних и внутренних неблагополучных сотресениях экономики. В этой статье с применением метода Сергея Глазьева мы вычислили индекс экономической безопасности Армении и исследовали поведение образующих этот индекс переменных, а также их отклонение от экономически безопасного состояния.

AZAT KALANTARYAN
Associate Professor at the Chair of "Microeconomics and Organization of Entrepreneurial Activities" at ASUE, PhD in Economics

HAYKAZ IGITYAN
Post-graduate at the Chair of "Microeconomics and Organization of Entrepreneurial Activities" at ASUE

Estimation of Current Economic Security of Armenia.- One of the key factors of economic security of the country is observational monitoring of its security as a factor for stability of the system during economic crises, external and internal shocks for the economy. In this paper, using the method of Sergey Glazev, we calculated the index of economic security of Armenia and discussed the behavior of the key variables included in the index, and their departure from the economically secure state.

ԶԵՆՖԻՐԱ ԹՈՒՄԱՍՅԱՆ
ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

ՄԱՐԻՆԱ ՏՈՆՈՅԱՆ
ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի դասախոս

ԷՄՄԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու

ՀՀ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Սույն հոդվածում վերլուծության է ենթարկվում է որոշ ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության իրավիճակը: Նման վերլուծությունը նպատակ ունի ներկայացնելու համապատասխան ապրանքային շուկայում յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի իրացման ծավալները, փայաբաժինը շուկայում և շուկայի կենտրոնացվածության աստիճանը:

Հիմնաբառեր. *սահմանային արդյունավետություն, կարգավորվող մրցակցություն, իրացման ծավալներ, ապրանքային շուկա, շուկայական փայաբաժին, շուկայի կենտրոնացվածության աստիճան*

Շուկայական տնտեսության պայմաններում յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի ձեռնարկատիրական գործունեության հաջողությունը նախևա-

ռաջ կախված է այն բանից, թե որքանով է նա ուսումնասիրել մրցակցության կանոնները, պայմանները, դրա դրսևորման ձևերը: Զարգացած շուկայական համակարգով երկրներում մրցակցության պաշտպանության քաղաքականությունը տնտեսական քաղաքականության որոշիչ գործոններից մեկն է: Ժամանակակից շուկային բնորոշ է կարգավորվող մրցակցությունը: Դա մի մեխանիզմ է, որի օգնությամբ արտադրության և սպառման տարերային փոխազդեցությունը վերածվում է օպերատիվորեն գործող փոխկախված համակարգի:

Տնտեսական մրցակցությունը շուկայական տնտեսության մասնակիցների միջև ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեություն է, ինչի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանիորեն ազդելու հնարավորությունները: Մրցակցությունը պայքար է ապրանքի առք ու վաճառքի լավագույն պայմանների համար, որտեղ հաղթում են առավել արդյունավետ գործող մասնակիցները: Մրցակցությունը շուկայի՝ որպես տնտեսական համակարգի ամենակարևոր բաղկացուցիչ մասն է, քանզի դրա շնորհիվ շուկայի «անտեսանելի ձեռքը», տնտեսական հարաբերությունների ամեն մի մասնակցի շահը հետապնդելով, թույլ է տալիս թողարկել տնտեսական բարիքներ, որոնք անհրաժեշտ են հասարակությանը:

Շուկայական տնտեսությունում, որպես մրցակցային պայքարի մասնակիցներ, հանդես են գալիս, նախևառաջ, ֆիրմաները, որոնք պայքարում են շուկայում ապրանքների առք ու վաճառքի համար: Ապրանքային շուկան տվյալ երկրի տարածքում որոշակի ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների շրջանառության ոլորտն է, որի սահմաններն որոշվում են գնորդի կողմից համապատասխան տարածքում ապրանքի ձեռքբերման տնտեսական հնարավորություններով ու նպատակահարմարությամբ:

Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը նպատակ ունի ներկայացնելու համապատասխան ապրանքային շուկայում յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի իրացման ծավալները, նրա փայաբաժինը շուկայում և շուկայի կենտրոնացվածության աստիճանը:

Ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանի վերլուծությունը ցույց է տալիս, որ մի շարք շուկաներում դրանց մասնակիցներից առնվազն երկուսը կամ երեքը ձեռք են բերել համատեղ շուկայական իշխանության ներուժ (աղյուսակ 1)[1]:

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, ներկայացված 11 ապրանքային շուկաներից 10-ում կենտրոնացվածության աստիճանը բավականին մեծ է (առաջին երկու սուբյեկտների մասնաբաժինը՝ 50, առաջին երեքինը՝ 70 տոկոսից): Ընդ որում, 11 ապրանքային շուկաներից 8-ում առաջին երեք սուբյեկտների մասնաբաժինը մեծ է 80 տոկոսից: Սա վկայում է այդ ապրանքային շուկաներում երկու կամ երեք տնտեսավարող սուբյեկտների համատեղ շուկայական իշխանություն ունենալու մասին: Շուկաներից ինը ընդգրկում են պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչքներ ու ծխախոտ): Կենտրոնացվածության աստիճանն առավել բարձր է տնտեսության հենց այս ճյուղում:

---

[1] Ստորև բերված աղյուսակները կազմվել են ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ապրանքային շուկաների տնտեսական մրցակցային իրավիճակի ուսումնասիրության և վերլուծության արդյունքների հիման վրա (2009-2014 թթ.):

Աղյուսակ 1

Առանձին ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը

Հ/հ	Ապրանքային շուկա	Իրացման ընդհանուր ծավալում խոշոր տնտեսավարող սուբյեկտների բաժինը (%)		
		առաջինը	առաջին երկուսը	առաջին երեքը
1	2	3	4	5
1	Կերակրի և տեխնիկական աղ	99.99	100	-
2	Գարեջուր	74.62	99.53	99.56
3	Հանքային ջրերի շշալցում	37.10	57.40	74.80
4	Սուրճ	34.86	55.50	72.00
5	Զովացուցիչ ջրեր	66.41	87.01	88.15
6	Ծխախոտ	39.74	75.22	84.17
7	Կոնյակ	83.60	91.10	95.10
8	Փրփրուն գինի և շամպայն	84.70	91.10	95.30
9	Պաղպաղակ	38.60	73.70	86.30
10	Գաջ	55.70	100	-
11	Դեղորայք	12.67	22.95	28.83

Ուսումնասիրված ապրանքային շուկաներում տնտեսավարող սուբյեկտների շուկայական իշխանության մասին են վկայում աղյուսակ 2-ի տվյալները: Այսպես՝ շուկաներից հինգն ունեն ոչ ավելի, քան տասը մասնակից, երկու ապրանքային շուկաները (գաջի, կերակրի ու տեխնիկական աղի)՝ երկուական մասնակից: Տասնմեկ ապրանքային շուկաներից տասում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներ: Պարենային ապրանքների (ներառյալ՝ ոգելից խմիչքներ և ծխախոտ) բոլոր ինն ապրանքային շուկաներում առկա են գերիշխող դիրք ունեցող սուբյեկտներ:

Աղյուսակ 2

Առանձին ապրանքային շուկաներում տնտեսավարող սուբյեկտների թիվը, գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների առկայությունը

Հ/հ	Ապրանքային շուկա	Մրցակցող տնտեսավարող սուբյեկտների թիվը	Գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների առկայությունը /+/, բացակայությունը /-/
1	2	3	4
1	Սուրճ	20	+
2	Գարեջուր	5	+
3	Գաջ	2	+
4	Կերակրի և տեխնիկական աղ	2	+
5	Զովացուցիչ ջրեր	54	+
6	Ծխախոտ	12	+
7	Կոնյակ	17	+
8	Փրփրուն գինի և շամպայն	6	+
9	Պաղպաղակ	8	+
10	Դեղորայք	77	-
11	Հանքային ջրերի շշալցում	20	+

Սուրճի ապրանքային շուկայում բացահայտվել է գերիշխող դիրք ունեցող մեկ տնտեսավարող սուբյեկտ, սակայն ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից դրա վերաբերյալ որոշում չի կայացվել, քանի որ ուսումնասիրության պահին տվյալ սուբյեկտը լուծարված է եղել: Միաժամանակ, հարկ է նշել, որ կենտրոնացվածության ցուցանիշները (համապատասխանաբար՝ 56 և 72 տոկոս) չեն բացառում շուկայական իշխանությամբ օժտված տնտեսավարող սուբյեկտների առկայությունը: Բացի նշված շուկաներից, ուսումնասիրվել են նաև հանքային ջրերի արդյունահանման յոթ ապրանքային շուկաներ, որոնցում 100 տոկոս մասնաբաժնով գերիշխող դիրք գրավող են ճանաչվել հինգ տնտեսավարող սուբյեկտներ:

Հետազոտված շուկաներից կենտրոնացվածությունը մեծ է այն շուկաներում, որտեղ գործում են այնպիսի տնտեսավարող սուբյեկտներ, որոնք ԽՍՀՄ տարիներին կառուցվել են որպես խոշոր մասնագիտացված կազմակերպություններ և կոչված են եղել ամբողջովին բավարարելու ոչ միայն Հայաստանի պահանջարկը, այլև միութենական պահանջարկի զգալի մասը: Ներկայումս, զրկված լինելով նախկին շուկաների մեծ մասից, նման կազմակերպությունները հիմնականում աշխատում են ներքին շուկայում (գարեջրի, գաջի, կոնյակի, շամպայն-գինիների գործարանները, աղի կոմբինատը): Այդ մասին է վկայում և վերը բերված աղյուսակը, ըստ որի ակնհայտ է, որ նշված շուկաներում առկա են գերիշխող դիրք գրավող տնտեսավարող սուբյեկտներ, ընդ որում՝ առավել մեծ իրացման ծավալներ ունեցող մեկ սուբյեկտի մասնաբաժինը տատանվում է 55,7–99.9 տոկոսի, իսկ առաջին երեք խոշոր սուբյեկտներինը՝ 95,1–99.9 տոկոսի միջև: Տեղական արտադրության վրա հիմնված ապրանքային այդ շուկաների կենտրոնացվածության բարձր աստիճանը մասամբ պայմանավորված է շուկայի մուտքի մի շարք խոչընդոտներով՝

- արդեն իսկ հագեցված շուկայում մեծ կապիտալ ծախսեր կատարելու անհրաժեշտությամբ.
- կապիտալի պտույտի դանդաղությամբ (հետգնման երկարատև ժամկետի առկայությամբ).
- տնտեսության իրական հատվածի համար փոխառու միջոցների դժվարհասանելիությամբ և այլն:

Ի տարբերություն տեղական արտադրությամբ ստեղծված ապրանքային շուկաների, ներկրման հաշվին ձևավորված ապրանքային շուկաներում կենտրոնացվածության աստիճանը համեմատաբար ցածր է: Այսպես՝ այդպիսի շուկաներից չորսում չկան գերիշխող դիրք գրավող տնտեսավարող սուբյեկտներ, առավել մեծ իրացում ունեցող մեկ սուբյեկտի մասնաբաժինը տատանվում է 15,7 – 82,5 տոկոսի միջև, իսկ առաջին երեք խոշոր սուբյեկտներինը՝ 35,5 – 95,5 տոկոսի սահմաններում: Ներկրման վրա հիմնված ապրանքային շուկաներում կենտրոնացվածության աստիճանի ցածր լինելը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալ շուկաները հիմնված են արագ շրջանառվող և կայուն շահութաբերություն ապահովող առևտրային կապիտալի վրա: Շուկայի հասանելիության աստիճանն, այնուամենայնիվ, բարձր է, և երկրի արտաքին առևտրային ռեժիմն ազատական է: Այդ է պատճառը, որ ներկրման վրա հիմնված՝ ուսումնասիրված ապրանքային շուկաներում տնտեսավարող սուբյեկտ-մասնակիցների քանակն անհամեմատ ավելի մեծ է, քան արտադրության վրա չհիմնված շուկաներում:

Ուսումնասիրված ապրանքային շուկաներից միայն մեկում (դեղորայքի)

չկան գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներ: Դեղորայքի շուկայում կենտրոնացվածության աստիճանի ցածր մակարդակը (առաջին երկու և առաջին երեք սուբյեկտների մասնաբաժինները կազմում են, համապատասխանաբար՝ 23 և 29 տոկոս) վկայում է շուկայի մրցակցային լինելու մասին:

ՀՀ-ում այսօր արտադրվում է ավելի քան 450 դեղատեսակ, և արտադրանքի գրեթե կեսն արտահանվում է ԱՊՀ երկրներ: Արտադրված դեղերի տեսականին ու քանակն ապահովում են հանրապետության կարիքների գրեթե 10 տոկոսը, այն դեպքում, երբ ռազմավարական առումով պաշտպանված է համարվում այն երկիրը, որը կարողանում է գոնե 20 տոկոսի չափով ապահովել իր պահանջը:

Շուկայում գրանցված են 12 լիցենզավորված դեղարտադրողներ և 178 ներմուծող կազմակերպություններ:

Դեղագործական արտադրանքի ներմուծման ծավալները ՀՀ-ում գերազանցում են արտահանման ծավալները: Մասնավորապես՝ 2013 թ. արտահանման ծավալը ավելացել է ընդամենը 10.6 տոկոսով, իսկ ներմուծմանը՝ 15.9 տոկոսով:

Մի շարք պարենային ապրանքային շուկաների առաջատար սուբյեկտներ և մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշներ ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Պարենային ապրանքային շուկաներ

Հ/Հ	Ապրանքային շուկա	Առաջատար դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտ		Ապրանքային շուկայի մասնակիցների թիվը	Կենտրոնացվածության աստիճանը	
		անվանումը (%)	բաժինը		տոկոսը	աստիճանը
1.	Շաքարավազ	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ	99.99	6	99.99	բարձր
2.	Արևածաղկի և եգիպտացորենի բուսական յուղ(ձեթ)	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ	37.5	36	63.8	միջին
3.	Ձիթապտղի բուսական յուղ (ձեթ)	«Վեգեքոմ» ՍՊԸ	66.0	14	88.0	բարձր
4.	Կարագ	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ	35.04	20	67.59	միջին
5.	Բնական հյութեր	«Սարգիս Կարոլինա» ՍՊԸ	26.9	28	57.6	միջին
6.	Բրինձ	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ	33.6	27	62.8	միջին
7.	Ցորենի ալյուր	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ	47.3	51	87.6	բարձր
		«Մանանագրեյն» ՍՊԸ	34.4			
8.	Պահածոյացված ձիթապտուղ	«Վեգեքոմ» ՍՊԸ	56.3	21	89.0	բարձր
9.	Սառեցված ձկներ	«Մոկոնաթ» ՍՊԸ	33.55	20	62.4	միջին
10.	Խտացրած կաթ	«Ֆելիքս Սարգ» ՍՊԸ	40.1	17	74.0	բարձր
11.	Մայոնեզ	«Մելիքա ՁՄ» ՍՊԸ	52.8	20	87.3	բարձր
12.	Հավի ձու՝ կճեպով	«Արաքս թռչնաբուծական ֆաբրիկա» ՓԲԸ և «Երևանի թռչնաբուծական ֆաբրիկա» ԲԲԸ	29.2	6	80.6	բարձր
		«Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ՍՊԸ	26.1			

Այսպես՝ 12 պարենային ապրանքների շուկաներից 7-ի կենտրոնացվածության աստիճանը 74.0–99.99 տոկոսի սահմաններում է: Ուսումնասիրված շուկաներում մասնակիցների թիվը տատանվում է 6-ից («Հավի ձու՝ կճեպով» և «Շաքարավազ» ապրանքային շուկաներ) մինչև 51-ը («Ցորենի ալյուր» ապրանքային շուկա): Դրանցից 5-ը միջին կենտրոնացված են՝ 57.6–67.6 տոկոս, իսկ մասնակիցների թիվը՝ 20-ից («Կարագ» և «Սառեցված ձկներ» ապրանքային շուկաներ) մինչև 36 («Արևածաղկի և եգիպտացորենի բուսական յուղ (ձեթ)» ապրանքային շուկա): Ապրանքային շուկաներից 11-ում գործում են գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներ, ընդ որում՝ մեկ ապրանքային շուկայում՝ երկու տնտեսավարող սուբյեկտ («Ցորենի ալյուր» ապրանքային շուկա), իսկ մեկ ապրանքային շուկայում երկու տնտեսվարող սուբյեկտներ միասին են գերիշխող դիրք զբաղեցնում:

Գարեջրի ապրանքային շուկայի հիմնական ծավալն ապահովվում է խոշոր արտադրող ընկերությունների՝ «Երևանի գարեջուր» ՓԲԸ-ի (59.39%), «Գյումրի գարեջուր» ՍՊԸ-ի (21.99%) և «Կոտայք» գարեջրի գործարան (18.3%) ՍՊԸ-ի կողմից:

2014 թ. տվյալներով գարեջրի ներկրման ծավալները կազմել են 2.715.208.3 լիտր, արտադրության ծավալները՝ 19.830.638.5 լիտր, արտահանման ծավալները՝ 2.341.338 լիտր:

«Հավի ձու՝ կճեպով» ապրանքային շուկայում գործող 3 խոշոր տնտեսավարող սուբյեկտներ՝ «Լուսակերտի տոհմային թռչնաֆաբրիկա» ՍՊԸ (գերիշխող), «Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ և «Երևանի թռչնաբուծական ֆաբրիկա» ԲԲԸ, իրենց համաձայնեցված գործողություններով «Հավի ձու՝ կճեպով» ապրանքային շուկայում արհեստականորեն բարձրացնում են հավի ձվի գները:

2010 թ. արտադրվել է 32,5 հազ. տ, 2011 թ.՝ 72,2 հազ. տ, 2012 թ.՝ 69,3 հազ. տ շաքար: Շաքարի պահանջարկը 2010 թ. կազմել է 14,9 հազ. տ, 2011 թ.՝ 99.6, իսկ 2012 թ.-ին՝ 91.3 հազ. տ[2]:

Աղյուսակ 4-ում դիտարկվել են 2012–2013 թթ. ներմուծման ծավալները.

Աղյուսակ 4

Շաքարի ներմուծման ծավալները

			2012	*2013*
1	քանակ	հազ. տ	82.4	79.7
2	մաքսային արժեք	մլն դոլար	51.3	40.5

2013 թ. ներմուծման ծավալները նվազել են 3.2%-ով, 1 կգ-ի արժեքը նվազել է 48 դրամով, իսկ մանրածախ գինը՝ 54 դրամով: Հիմնական ներկրումներն իրականացվել են Գերմանիայից, Ավստրիայից, Բելգիայից և Իսրայելից[3]:

ՀՀ-ում շաքարավազի արտադրությամբ զբաղվող միակ խոշոր ընկերությունը «ԼուսԱստղ շուգրն» է՝ Ախուրյանի շաքարի գործարանը: 2012-ին արտահանվել է 400 տ՝ 296.5 հազ. դոլար, իսկ 2013-ին՝ 899.2 տ՝ 555.4 հազ. դոլար մաքսային արժեքով շաքար:

---

[2] Տե՛ս ՀՀ վիճակագրական տարեգրքերի ՀՀ արտաքին առևտրի մաքսային վիճակագրությունը 2012-2013 թթ.:

[3] Տե՛ս http://agro.am/index.php

Մսամթերքի շուկայում գերիշխող է (իրացման 40%-ից ավելին) «Գեղարդ մսամթերքի կոմբինատ» ՍՊԸ-ն, որն արտադրում է մսամթերքի լայն տեսականի: Այն ունի սեփական, այսպես կոչված, «խանութներ անիվների վրա», որտեղ վաճառվում է ընկերության արտադրանքի ողջ տեսականին: Դրանք տեղակայված են ամենուրեք ու տեղադրման տեսանկյունից մատչելի են գնորդին: Բացի դրանից, ընկերությունն ունի սեփական մեքենաներ, որոնց միջոցով ապրանքը մատակարարվում է առևտրի կետերին:

2010 թ. իրացվել է 128,4 հազ. տ, 2011 թ.՝ 130,4 հազ. տ, 2012 թ.՝ 133,3 հազ. տ, իսկ 2013 թ.՝ 137.6 հազ. տ. կենդանի քաշով միս, ինչը 12.7%-ով ավելի է 2012 թ. ցուցանիշից: Փաստացի սպառման պահանջարկի բավարարման գործում նշանակալից է եղել ներմուծումների դերը: Մեկ տոննա մսամթերքի մանրածախ և ներկրման գների տարբերությունն անցած տասը տարիներին աճել է 401 հազար դրամով, իսկ սպառողները կորցրել են 47,9 մլրդ դրամ:

Այժմ ներկայացնենք ՀՀ կաթնամթերքի շուկա ներմուծված տեսականու քանակական և գումարային տվյալները և վերլուծենք դրանք:

Աղյուսակ 5

ՀՀ կաթնամթերքի տեսականու ներմուծումը քանակական տվյալներով 2005-2013 թթ[4].

(տոննա)

Կաթնամթերքի տեսակը	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2013
Կաթ և սերուցք	187,6	262,1	284,1	282,4	333.6	344.6	377.1	431.1
Կաթ և սերուցք, խտացրած կաթի փոշի	3649,3	3123,9	4946,3	3211,8	4007.1	3827.4	3130	2664.1
Թան, սերուցք, մածուն, կեֆիր	728,6	673,6	643	754,2	721.6	1111.6	888.1	1178.5
Կաթնային շիճուկ	55,5	0.2	21,6	25,3	137.5	234	330.8	594.5
Կարագ, կաթնային մածուկներ	4039,5	2644,8	2051,9	4581,2	1783.2	3058.5	4540.2	4749.0
Պանիր և կաթնաշոռ	546,8	696,6	880,8	759,9	569.5	725.8	1019.2	1243.7
Ընդամենը	9207,6	7401,4	8827,9	9615,3	7552,5	9301,9	10285.2	10860.9

Աղյուսակ 6

ՀՀ կաթնամթերքի տեսականու ներմուծումը գումարային արտահայտությամբ 2005-2013 թթ.[5]

(հազար ԱՄՆ դոլար)

Կաթնամթերքի տեսակը	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Կաթ և սերուցք	153.8	207.9	273	375.5	447.1	496.2	565.1	528.6	964.2
Կաթ և սերուցք, խտացրած կաթի փոշի	5206.1	4509.8	9381.6	7086.1	7972.9	9724.3	9421.5	7136.0	8578.5
Թան, սերուցք, մածուն, կեֆիր	1002.4	964.3	1079.7	1539.5	1215.5	2077.6	1683.9	1684.3	2610.1
Կաթնային շիճուկ	59	1	28.5	30.3	197	339.4	493.8	681.1	927.6
Կարագ, կաթնային մածուկներ	6097	4938.1	5109.7	13539.3	5602.9	9305.2	14444.2	21403.7	20105.1
Պանիր և կաթնաշոռ	1294.7	2076.4	3114.2	4351.7	3186.4	3836.1	5594	5433.9	6758.9
Ընդամենը	13813	12797.5	18986.7	26922.4	18621.8	25778.6	32202.3	36867.6	39944.4

[4] ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե, Տարեկան տեղեկագիր (2005–2013 թթ.):
[5] Նույն տեղում:

Ինչպես երևում է աղյուսակներից, համեմատաբար մեծ քանակությամբ ներմուծվում են կաթ և սերուցք, խտացրած կաթի փոշի, կարագ, կաթնային մածուկներ: Նշենք, որ ՀՀ ներմուծվող հիմնական ապրանքատեսակը կաթի փոշին է, որը կաթ վերամշակող և կաթնամթերք արտադրող ընկերություններին ապահովում է հումքով: Դրա ներմուծման ծավալների անկման տեմպեր են նկատվել 2006 թ., 2008 թ., 2011 թ. և 2012 թ.: Առավելագույն աճի ցուցանիշ է գրանցվել 2011 թ.՝ 158.3%: Կարագի ներմուծումը 2006 թ. կազմել է 65.5%, 2007 թ.՝ 77.6%: 2008 թ. ներմուծման ծավալներն աճել են 2.2 անգամ, սակայն 2009 թ. նվազել են 2.5 անգամ, որից հետո դարձյալ աճ է արձանագրվել: Ամբողջ ներմուծումը հիմնականում կատարվում է Ռուսաստանից, Ուկրաինայից, Բելառուսից: Նշենք, որ, ունենալով բավականին բարձր որակի պանրի տեսականի, ներմուծում ենք ԵՄ երկրների պանիրներ, ինչը, իհարկե, բացասաբար է ազդում թե՛ տնտեսության, թե՛ տեղական արտադրության վրա: Ուստի անհրաժեշտ է մշակել նոր տեխնոլոգիաներ և մեխանիզմներ պանրի արտադրության զարգացման նպատակով:

Աղյուսակ 7

ՀՀ կաթնամթերքի արտահանումը քանակական տվյալներով 2006-2013 թթ.[6]

(տոննա)

Կաթնամթերքի տեսակը	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Կաթ և սերուցք		0.2						
Կաթ և սերուցք, խտացրած կաթի փոշի		2.6	9.7	0.7	0.6	34.4	154.4	441.7
Թան, սերուցք, մածուն, կեֆիր	1.6	3.3	5.3	4.5	7	0.6	7.5	17.3
Կաթնային շիճուկ	0.06	0.1	0.2	0.2	0.4		10.0	66.3
Կարագ, կաթնային մածուկներ	932.8	567.1	473.8	336.7	496.4	440	903.6	1541.2
Պանիր և կաթնաշոռ	934.4	573.3	489	342.2	503.7	474.5	1065.6	2066.5

Աղյուսակ 8

ՀՀ կաթնամթերքի արտահանումը գումարային տվյալներով[7]

(հազ. ԱՄՆ դոլար)

Կաթնամթերքի տեսակը	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Կաթ և սերուցք			2.0						
Կաթ և սերուցք, խտացրած կաթի փոշի	0.1		10.2	31.6	2.6	3	140.9	414.5	2016.3
Թան, սերուցք, մածուն, կեֆիր	8.5	3.8	9.5	19.0	17	12	6	14.7	30.7
Կաթնային շիճուկ		0.4	1.3	2.3	1	0.3		0.3	137.4
Կարագ, կաթնային մածուկներ	3260,6	1575.9	1142.1	1421.1	1112	1688	1854.9	2335.4	4610.1
Ընդամենը	3268.5	1580.1	1165.1	1474	1133	1703	2001.8	2764.9	6794.5

[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում:

Աղյուսակ 7-ից և 8-ից պարզ երևում է, որ կաթնամթերքի արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ ունի պանիրը, որն ապահովում է արտահանման մոտ 98%-ը: 2005 թ. արտահանման ծավալներն աճել են՝ 2.2 անգամ, աճ է արձանագրվել նաև 2010–2013 թթ.: Մնացած տարիներին պանրի արտահանման խոշոր աճ չի նկատվել: Մյուս՝ թան, սերուցք, մածուն, կեֆիր ապրանքատեսականու ծավալները 2007 թ., 2008 թ., 2009 թ. աճել են՝ համապատասխանաբար կազմելով 207%, 159%, 154%, սակայն 2010 թ. արտահանման ծավալները սկսել են նվազել: ՀՀ արտադրանքի 83–85% արտահանվում է Ռուսաստան, Ուկրաինա, իսկ Վրաստան՝ 0.1-11%: Պետք է նշել, որ արտաքին շուկայում ՀՀ արտադրանքը որակական հատկանիշներով չի համապատասխանում միջազգային չափորոշիչներին, ուստի արտահանվող արտադրանքը մրցունակ չէ: Կարծում ենք՝ հնարավոր է գտնել շուկաներ, որտեղ հայկական արտադրանքը կունենա հարաբերական առավելություն:

Ինչ վերաբերում է կաթնամթերքի արտադրությանը, ապա դրանով զբաղվում են «Աշտարակ-կաթ» ՓԲԸ, «Դուստր Մարիաննա» ՍՊԸ, «Չանախ» ՍՊԸ, «Թամարա» ՍՊԸ, «Դիլի» ՍՊԸ, «Բիո կաթ» ՍՊԸ, «Արզնի կաթ» ՍՊԸ, «Էջմիածին» ՍՊԸ և այլ ընկերություններ, որոնք իրենց արտադրանքի լայն տեսականիով ներկայանում են հայկական շուկայում, սպառողն ունի ընտրության մեծ հնարավորություն, ինչը խոսում է մրցակցային դաշտի մասին: Նշված կազմակերպությունները արտադրում են պաստերիզացված կաթ, թթվասերներ, տարբեր յուղայնությամբ մածուն, կաթնաշոռ, յոգուրտներ, ըմպելի յոգուրտներ, կեֆիրներ, պանրի լայն տեսականի, կարագ, պաղպաղակ և այլն: Այս կազմակերպությունների արտադրությունը կազմում է սննդարդյունաբերողների արտադրանքի ընդհանուր ծավալի մոտ 15%-ը:

ՀՀ-ում 2011–2013 թթ. արտադրված կաթնամթերքի քանակը, ընդհանուր առմամբ, գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը, բացառություն է կազմում միայն թթվասերի արտադրությունը, որը նվազել է 9.2 %-ով: Այժմ ներկայացնենք, թե այս ոլորտում որ կազմակերպություններն են զբաղեցնում գերիշխող դիրք, և թե որքան է նրանցից յուրաքանչյուրի մասնաբաժինը շուկայում: Այսպես՝ «Թթվասեր», «Պաստերիզացված կաթ», «Մածուն և քամած մածուն» և «Կաթնաշոռ» ապրանքային շուկաներում իրացման առավել մեծ ծավալներ ունեն «Աշտարակ-կաթ» ընկերությունը. համապատասխանաբար՝ 50%, 44%, 31%, 51%, «Դուստր Մարիաննա» ընկերությունը. համապատասխանաբար՝ 35%,16%, 36%, 30%, «Չանախ» ընկերությունը. համապատասխանաբար՝ 4%, 8%, 6%, 6% բաժիններով (գծապատկեր 1):

Նշենք, որ և՛ «Թթվասեր», և՛ «Կաթնաշոռ» ապրանքային շուկաներում գործում են 9 տնտեսավարող սուբյեկտներ, «Պաստերիզացված կաթ» ապրանքային շուկայում՝ 37 տնտեսավարող սուբյեկտներ, որոնցից 7-ը ներկրողներ են, տվյալ շուկան համարվում է միջին կենտրոնացված, «Մածուն և քամած մածուն» ապրանքային շուկայում մածուն արտադրվում և իրացվում է 9 տնտեսավարող սուբյեկտների կողմից: Գյուղացիական տնտեսությունների՝ մածունի իրացման ընդհանուր ծավալը կազմում է 4,5%:



Գծապատկեր 1. *Գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունների տեսակարար կշիռն ըստ մի քանի ապրանքատեսակների իրացման ծավալների*

Այժմ ներկայացնենք մի շարք ոչ պարենային ապրանքային շուկաների առաջատար սուբյեկտների մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշներ (աղյուսակ 9):

Աղյուսակ 9

Ոչ պարենային ապրանքային շուկաներ

հ/հ	*Ապրանքային շուկա*	*Առաջատար դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտ*		*Ապրանքային շուկայի մասնակից-ների թիվը*	*Կենտրոնաց-վածության աստիճանը*	
		անվանումը	*բաժինը (%)*		*տոկոսը*	*աստի-ճանը*
1.	Լամինացված մանրահատակ	«Իմեքս-գրուպ» ՍՊԸ	20.8	54	42.6	ցածր
2.	Ձրի սառեցման-տա-քացման սարքեր	«ՄԳԱ Վոթքը» ՍՊԸ	47.03	40	67.27	միջին
3.	Մարդատար ավտոմեքենաների նոր անվադողեր	«Բելռոս» ՍՊԸ	26.29	36	66.69	միջին
		«Մեծանիվ» ՍՊԸ	22.18			
		«Ավտոշեմ» ՍՊԸ	18.22			
4.	Պատի երեսպատման սալիկներ	«Իմեքս-գրուպ» ՍՊԸ	26.2	23	53.3	միջին
5.	Հատակի երեսպատման սալիկներ	«Իմեքս-գրուպ» ՍՊԸ	28.6	24	50.8	միջին
6.	Դիզելային վառելիք	«Ֆլեշ» ՍՊԸ «Սիթի Պետրոլ-գրուպ» ՍՊԸ	47.3 40.8	7	95.1	բարձր
7.	Բենզին	«Ֆլեշ» ՍՊԸ	42.3	5	93.9	բարձր
		«Սիթի Պետրոլ-գրուպ» ՍՊԸ	41,8			

Բենզինը և դիզելային վառելիքն ամբողջությամբ ներկրվում են հանրապետություն: Բենզինի ներկրման 80 տոկոսից ավելին բաժին է ընկնում երկու խոշոր ընկերությունների՝ «Ֆլեշ» ՍՊԸ և «Պետրոլ Սերվիս» Ա/Կ, որոնք էլ համարվել են գերիշխող դիրք ունեցող: «Ֆլեշ» ՍՊԸ-ն առաջատար է նաև դիզելային վառելիքի շուկայում. ապահովում է ներկրման մոտ 40 տոկոսը: Նշված ընկերություններն ունեն սեփական բաշխման ցանցեր՝ լիցքավորման կայաններ, որոնց միջոցով իրականացնում են վառելիքի մանրածախ վաճառք: Բացի այդ, վառելիքը սեփական պահեստներից իրացնում են նաև այլ լցակայանների և խոշոր սպառողների: Դիտարկումները ցույց են տալիս, որ խոշոր ներկրողները մեծացնում են մանրածախ կետերը՝ ներառելով իրենց վերահսկողության ներքո, ինչը ռիսկային է հորիզոնական համաձայնության տեսանկյունից:

Ըստ 104 ապրանքային խմբերում կատարված գնահատականների՝[8] հետազոտված ապրանքային շուկաներից 10-ը մենաշնորհային են (սերմացու ցորեն, ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրական և ջերմային էներգիայի հաղորդում և այլն), 43-ը՝ դուոպոլիստական (ցեմենտ, գաջ, կերային ցորեն և այլն), 4-ը՝ օլիգոպոլ (գրանիտ, բենզին, պաղպաղակ և այլն), 20-ը՝ մենաշնորհային - մրցակցային (զովացուցիչ ջրեր, բազալտ, սեղմած բնական գազ, օղու-լիկյորի և այլն), մյուսները՝ զուտ մրցակցային (խաղողի գինի, տուֆ, տուրիզմ, բուսական յուղ և այլն):

[8] **Մ. Միքայելյան,** Տնտեսական մրցակցության և մենաշնորհի պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., 2005:

ЗЕНФИРА ТУМАСЯН
Доцент кафедры "Микроэкономики и организации предпринимательской деятельности" АГЭУ, кандидат экономических наук

ГАЯНЕ ГРИГОРЯН
Доцент кафедры "Микроэкономики и организации предпринимательской деятельности" АГЭУ, кандидат экономических наук

МАРИНА ТОНОЯН
Преподаватель кафедры "Микроэкономики и организации предпринимательской деятельности" АГЭУ, кандидат экономических наук

ЭММА КАРАПЕТЯН
Ассистент кафедры ,,Международных экономических отношений" АГЭУ, кандидат экономических наук

Анализ и оценка экономической конкуренции некоторых товарных рынков РА.- В статье дается анализ экономической конкуренции в некоторых товарных рынках. Проведение подобного анализа дает возможность выявить в соответствующих товарных рынках обьем реализации каждого экономического субьекта, его долю в рынке, уровень концентрации рынка.

Ключевые слова: *конкуренция, совершенная конкуренция, уровень концентрации рынка. товарный рынок, обьем реализации, рыночная доля.*

ZENFIRA TUMASYAN
Associate Professor at the Chair of "Microeconomics and Organization of Entrepreneurial Activities" at ASUE, PhD in Economics

GAYANE GRIGORYAN
Associate Professor at the Chair of "Microeconomics and Organization of Entrepreneurial Activities" at ASUE, PhD in Economics

MARINA TONOYAN
Lecturer at the Chair of "Microeconomics and Organization of Entrepreneurial Activities" at ASUE, PhD in Economics

EMMA KARAPETYAN
Assistant at the Chair of ,,International Economic Relations" at ASUE, PhD in Economics

Evaluation and Analysis of Economic Competition of Some Commodity Markets in the RA.- The article illustrates analysis of the economic competition of some commodity markets. The purpose of the analysis is to present sales volume, share of market and the percentage of market centralization of each economic entity in relevant commodity markets.

Key Words: *marginal productivity, adjustable competition, sales volume, commodity market, share of market, the percentage of market centralization.*

ԱՐՄԵՆ ՂԱՄԲԱՐՅԱՆ
ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի ասպիրանտ

ՕՐԳԱՆԱԿԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Հաշվի առնելով օրգանական սննդամթերքի համաշխարհային շուկայի զարգացման արդի միտումները՝ անհրաժեշտություն է առաջանում խորությամբ ուսումնասիրելու տվյալ ապրանքատեսակների նկատմամբ պահանջարկի վրա ազդող գործոնները: Ընդ որում, վերլուծության ընթացքում կարևորվում է համակարգային մոտեցման կիրառումը:

Հոդվածում առանձնացվում են օրգանական սննդամթերքի շուկայի զարգացման հիմնական փուլերը: Վերլուծվում են նաև այն հիմնական գործոնները, որոնք ազդում են օրգանական սննդամթերքի պահանջարկի վրա շուկայի զարգացման փուլերից յուրաքանչյուրում, ուսումնասիրվում են օրգանական գյուղատնտեսության հետագա զարգացման հնարավոր ուղղությունները:

Հիմնաբառեր. *օրգանական սննդամթերք, պահանջարկ, առաջարկ, գին, շուկա, բնակչության եկամուտներ, տեղեկատվություն*

Օրգանական արտադրահամակարգերը հիմնված են արտադրության առանձնահատուկ չափորոշիչների վրա, որոնք նպատակ ունեն հասնելու սոցիալապես, էկոլոգիապես և տնտեսապես կայուն ու օպտիմալ ագրոէկոհամակարգերի ստեղծմանը: Օրգանական գյուղատնտեսության առկայությունը, ընդհանուր շրջակա միջավայրի աղտոտվածության պատճառով, լիովին չի երաշխավորում վնասակար մնացորդների բացակայությունը: Այնուամենայնիվ, օգտագործվող մեթոդները նվազեցնում են օդի, հողի և ջրի աղտոտման մակարդակը: Օրգանական սննդամթերքի նկատմամբ պահանջարկին առնչվող վերջին տարիների հետազոտությունները վկայում են, որ բավարար ուշադրություն չի դարձվել այնպիսի հայեցակարգի մշակմանը, որը

թույլ կտար պարզաբանել պահանջարկի ձևավորման օրինաչափությունները, ինչպես նաև շուկայի ձևավորման պայմաններում դրա վերափոխման հնարավորությունները: Նշված խնդրի ծագումը հիմնականում պայմանավորված է համապատասխան տեղեկատվական բազայի բացակայությամբ և տվյալ ոլորտի նորարարական լինելով: Այս ամենը ընդգծում է տարբեր գործոնների ազդեցությունների վերլուծության անհրաժեշտությունը, որոնցից էլ հենց կախված է նշված ապրանքատեսակների նկատմամբ ձևավորված պահանջարկի մեծությունը: Ընդ որում, վերլուծություն հարկ է իրականացնել հասարակության տարբեր խմբերի համար, քանի որ վերջիններիս դրսևորած սպառողական վարքագիծը կարող է էապես տարբերվել միմյանցից:

Կարևոր է նշել, որ օրգանական սննդամթերքի համաշխարհային շուկայի ծավալները կայուն աճի միտում են դրսևորում (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. *Օրգանական սննդամթերքի համաշխարհային շուկայի ծավալների փոփոխությունը 1999-2013 թթ.՝ արժեքային արտահայտությամբ*[1]

Ինչպես երևում է գծապատկերից, 2008-ին սկսված ֆինանսատնտեսական ճգնաժամը բացասական ազդեցություն է ունեցել նաև տվյալ ոլորտի վրա՝ որոշ չափով դանդաղեցնելով աճի միտումները: Միջին տարեկան աճի տեմպը 1999-2013 թթ. կազմում է 12%: Ըստ «Grand View Research, Inc» հետազոտական կազմակերպության կանխատեսումների՝ 2020-ին օրգանական սննդամթերքի համաշխարհային շուկան կարող է ունենալ 211.44 մլրդ դոլարի շրջանառություն[2]:

Կարևոր է նշել, որ շուկայի տվյալ հատվածի ընդլայնման բավականին մեծ միտումներ են ցուցաբերում այնպիսի երկրներ, ինչպիսիք են Չինաս-

[1] Տե՛ս **Willer H., Lernoud J.,** The world of organic agriculture. Statistics and emerging trends. Germany, 1999-2013:

[2] Տե՛ս http://althealthworks.com/2075/organic-food-market-report-says-industry-expected-to-skyrocket -to-over-211-billion-in-2020/

տանը և Բրազիլիան: Բրազիլիայում տվյալ ցուցանիշը ավելանում է տարեկան մոտ 40%-ով, իսկ Չինաստանում էկոլոգիապես մաքուր սննդամթերքի շուկան վերջին հինգ տարիների ընթացքում ավելի քան քառապատկվել է[3]:

Ուսումնասիրվող ոլորտում ծագող ամենաբարդ հարցերից է էկոլոգիապես մաքուր սննդամթերքի գնային բնութագիրը: Միաժամանակ, գների մակարդակից է կախված տվյալ ապրանքատեսակների նկատմամբ ձևավորվող պահանջարկի մեծությունը: Ակնհայտ է, որ ապրանքների այս կատեգորիան պետք է վաճառվի ավելի բարձր գնով, քան սովորականը, սակայն գնային տարբերության որոշումը բավականին բարդ խնդիր է՝ պայմանավորված մի շարք գործոններով: Դրանցից են արտադրության վայրը, արտադրանքի տեսակը, ապրանքանիշը, արտադրողի ճանաչվածության աստիճանը և այլն: Որոշ դեպքերում օրգանական սննդամթերքը սուպերմարկետներում, սովորականի հետ համեմատած, նույն գինն է ունենում կամ անգամ ավելի էժան է լինում, որը, սակայն, բացառությունների շարքը կարելի է դասել: Ավելի հաճախ գնային տարբերությունը կարող է տատանվել 30%–110%-ի շրջանակներում՝ տվյալ երկրի սպառման համակարգի առանձնահատկություններով պայմանավորված: Այսպես՝ այն երկրներում, որտեղ սովորական մթերային խանութները օրգանական ապրանքատեսակների հիմնական վաճառողներն են, գնային տարբերությունը, օրգանականի պարագայում, սովորաբար ավելի փոքր է, քան այն երկրներում, որտեղ հիմնական դերը տվյալ ոլորտում պատկանում է մասնագիտացված խանութներին:

Ակնհայտ է, որ օրգանական սննդամթերքի սպառման մակարդակը հիմնականում կախված է տվյալ արտադրատեսակի գծով ձևավորված առաջարկից: Էկոլոգիապես մաքուր սննդամթերքի վաճառքի ցանցի կառուցվածքը տարբեր երկրներում կարող է էականորեն առանձնանալ: Վաճառքը կարող է կատարվել 4 հիմնական եղանակով՝

- սովորական մթերային խանութներում և սուպերմարկետներում,
- մասնագիտացված խանութներում,
- ուղղակիորեն գյուղացիական տնտեսություններից,
- հասարակական սննդի ցանցից:

Դրանցից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները և թերությունները: Սովորական մթերային խանութների միջոցով օրգանական սննդամթերքի վաճառքը տեղի է ունենում աշխարհի գրեթե բոլոր երկրներում, որտեղ էկոլոգիապես մաքուր արտադրանք ընդհանրապես վաճառվում է: Տվյալ եղանակի կիրառումը խորհուրդ է տրվում հատկապես այն երկրներին, որոնցում օրգանական սննդամթերքի շուկան նոր է ձևավորվում: Զարգացման այս փուլում, երբ օրգանական սննդամթերքի գծով դեռևս չկա բավարար տեղեկատվություն, սպառողը դժվար թե օգտվի մասնագիտացված օրգանական խանութներից: Սովորական խանութում, տեսնելով տվյալ ապրանքատեսակը, սպառողն այն փորձնական ձեռք է բերում, և եթե արտադրանքը արդարացնում է նրա սպասելիքները, ապա նա դառնում է այդ ապրանքատեսակի մշտական սպառող: Այս դեպքում խանութը ապահովագրում է իրեն օրգանական սննդամթերքի նկատմամբ ցածր պահանջարկի պատճառով առաջացող տնտեսական խնդիրներից: Այսպիսով՝ սովորական սուպերմարկետները կարևոր դեր ունեն օրգանական սննդամթերքի շուկայի զարգացման գործում:

[3] Տե՛ս Organic market report 2012 - Soil Association, 2012, էջ 3:

Օրգանական սննդամթերքի մասնագիտացված խանութները նախատեսված են այն սպառողների համար, ովքեր բավարար չափով տեղեկացված են տվյալ ապրանքատեսակների որակական հատկանիշների վերաբերյալ և, միաժամանակ, մշտական գնորդներ են: Նշված խանութներում սովորաբար առկա է օրգանական սննդամթերքի լայն տեսականի: Սակայն պետք է նշել նաև, որ այս տեսակի խանութների թիվն աշխարհի ցանկացած երկրում ավելի քիչ է, քան սովորական սուպերմարկետներինը, ուստի սպառողները ստիպված են լինում ավելի մեծ ճանապարհային ծախսեր կատարել: Մասնագիտացված խանութների զարգացումը տնտեսապես արդարացված է միայն այն երկրներում, որտեղ օրգանական սննդամթերքի շուկան զարգացման բարձր մակարդակի վրա է գտնվում:

Գյուղացիական տնտեսություններից անմիջական վաճառքը տվյալ ոլորտի արագ զարգացող ուղղություններից է: Դրա հիմնական առավելությունն այն է, որ սպառողը հնարավորություն ունի ավելի հստակ պատկերացում կազմելու, թե ինչպես են արտադրվել տվյալ ապրանքատեսակները, և արդարացվա՞ծ է արդյոք գնային տարբերությունը: Հաջորդ էական առավելությունն այն է, որ տվյալ արտադրանքը ավելի թարմ է լինում: Հարկ է նշել, որ տվյալ դեպքում գյուղացիական տնտեսություններից պահանջվում է ավելացնել ռեսուրսօգտագործման մակարդակը, իսկ սպառողների՝ սպառման տվյալ կետ հասնելու ճանապարհային ծախսերը կրկին ավելանում են: Որոշ ապրանքատեսակների գծով առաջարկը կարող է կայուն չլինել (հատկապես մսամթերքի գծով), ինչը նույնպես որոշակի բարդություններ է առաջացնում:

Ռեստորանային ցանցերի միջոցով օրգանական սննդամթերքի վաճառքի ծավալները համեմատաբար փոքր են, սակայն տվյալ ուղղությունը ևս կարևորվում է այս ոլորտի զարգացման ճանապարհին:

Այսպիսով՝ էկոլոգիապես մաքուր սննդամթերքի վաճառքի ցանցի արդյունավետ կառուցվածքը կարևոր նախադրյալ է շուկայի տվյալ հատվածի հետագա զարգացման համար: Այս առումով, մեծ նշանակություն ունեն նաև տեղական ավանդույթները և իրականացվող մարքեթինգային քաղաքականությունը: Ներքին շուկայի զարգացման միտումներից կախված՝ փոփոխության է ենթարկվում նաև օրգանական սննդամթերքի վաճառքի կազմակերպումը՝ ելնելով դրա նկատմամբ ձևավորված պահանջարկի մակարդակից: Օրգանական սննդամթերքի նկատմամբ առկա պահանջարկի մեծությունը հիմնականում պայմանավորված է տվյալ արտադրանքի գնի և որակի հարաբերակցությամբ: Արտադրանքի գինը շուկայի զարգացման հնարավորությունների սահմանափակման հիմնական գործոն է:

Որպես պահանջարկի վրա ազդող գործոն կարելի է առանձնացնել նաև բնակչության եկամուտները: Այս ցուցանիշի աճը նպաստում է օրգանական սննդամթերք նախընտրող սպառողների թվի ավելացմանն անգամ այն դեպքում, երբ գնային տարբերությունը մնում է անփոփոխ:

Օրգանական արտադրանքի նկատմամբ պահանջարկի վրա ազդող հաջորդ գործոնը տեղեկատվությունն է: Եթե սովորական արտադրանքի վաճառքի համար լրացուցիչ տեղեկատվությունը պարտադիր չէ, ապա օրգանական սննդամթերքի դեպքում իրավիճակն այլ է, և, տվյալ պարագայում, «պատահական» գնորդներն ավելի քիչ են: Գնորդը պետք է հստակ տեղեկացված լինի օրգանական սննդամթերքի առավելությունների մասին, քանի որ վերջինիս գինն ավելի բարձր է:

Այսպիսով՝ տեղեկատվությունը օրգանական սննդամթերքի շուկայի զարգացման վրա ազդող կարևոր գործոններից է: Սպառողները որքան ավելի տեղեկացված լինեն տվյալ ապրանքատեսակների առավելությունների վերաբերյալ, այնքան ավելի մեծ գումար պատրաստ կլինեն վճարել դրանց համար:

Զարգացող երկրներում կարևորվում է բնակչության իրազեկումը նոր ուղղության ընդհանուր սկզբունքների և առանձնահատկությունների վերաբերյալ: Զարգացած երկրներում բնակչության տեղեկացման գործընթացում շեշտը պետք է դնել գիտական հետազոտությունների արդյունքների հրապարակման վրա, ինչպես նաև կարելի է ներկայացնել համապատասխան ապացույցներ՝ կապված այն հանգամանքի հետ, որ տվյալ ապրանքատեսակները ավելի օգտակար են մարդու առողջության համար: Տեղեկատվությունը, այս դեպքում, պահանջարկի համապատասխան առաձգականության ձևավորման հիմնական գործոնն է, որն ապահովում է օրգանական սննդամթերքի շուկայի զարգացման կայունությունը:

Ամփոփելով վեր ասվածը՝ կարելի է ներկայացնել օրգանական սննդամթերքի նկատմամբ պահանջարկի վրա ազդող գործոնների պատկերը (գծապատկեր 2): Գծապատկերի կենտրոնում օրգանական արտադրանքի որակի նկատմամբ ներկայացվող պահանջների բուրգն է: Վերջինս բաժանված է երեք մասի՝ պայմանավորված օրգանական սննդամթերքի շուկայի զարգացման մակարդակներով:



Գծապատկեր 2. *Օրգանական սննդամթերքի նկատմամբ պահանջարկի վրա ազդող գործոնները*

Բուրգը շրջապատված է չորս հիմնական գործոններով, որոնք օրգանական սննդամթերքի շուկայի զարգացման բոլոր փուլերում ազդում են տվյալ արտադրանքի վաճառքի ծավալների վրա: Այդ գործոններից է օրգանական

սննդամթերքի գինը, որը գրեթե բոլոր դեպքերում ավելի բարձր է ոչ օրգանականի գնից: Հաջորդ գործոնը բնակչության եկամուտներն են, որոնք նույնպես ազդում են սպառման ծավալների փոփոխության վրա: Կարևոր է նշել նաև օրգանական սննդամթերքին վերաբերող այն տեղեկատվությունը, որը հայտնի է սպառողներին: Եվ վերջին՝ չորրորդ գործոնը առաջարկն է, այսինքն՝ ապառման կետերում տվյալ ապրանքատեսակների առկայությունը և համապատասխան ընտրության հնարավորությունը:

Բուրգի հիմքում «առողջության համար օգտակար» չափանիշն է: Վերջինս համարվում է գյուղատնտեսության տվյալ ուղղության զարգացման շարժիչ ուժը: Այդ չափանիշը կարևոր դեր է խաղում նաև այսօր: Միայն ԱՄՆ-ում օրգանական սննդամթերքի ձեռքբերման դեպքում կարելի է վստահ լինել, որ այդ արտադրանքի արտադրության ընթացքում չեն օգտագործվել գենային ինժեներիայի տեխնոլոգիաներ, քանի որ ոչ օրգանական սննդամթերքի դեպքում հատուկ պիտակը բացակայում է: Եվրոպայում համապատասխան պիտակ է ունենում միայն այն արտադրանքը, որի բաղադրության մեջ առկա է գենետիկորեն ձևափոխված բաղադրատարրերի էական քանակություն:

Պահանջների բուրգի հիմքում առկա չափանիշը նպաստել է նաև մանկական օրգանական սննդի լայն տարածմանը: Դրա հետ կապված կարելի է նշել, որ անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքները ավելի են հակված գնելու օրգանական ապրանքներ, քան չափահաս երեխաներ ունեցողները: Որոշ երկրներում (մասնավորապես՝ Իտալիայում և Շվեյցարիայում) էկոլոգիապես մաքուր սննդամթերքը վաճառվում է ուսումնադաստիարակչական հաստատությունների ճաշարաններում:

Մեծ թվով երկրներում առողջության համար օգտակար լինելը առայժմ մնում է այն միակ հիմքը, որի համար մարդիկ պատրաստ են վճարել ավելի մեծ գումար: Դա բնորոշ է այն երկրներին, որտեղ էկոլոգիապես մաքուր սննդամթերքի շուկան գտնվում է զարգացման ցածր մակարդակում:

Շուկայի զարգացման մակարդակից կախված՝ ավելանում են նաև տվյալ ապրանքատեսակների նկատմամբ պահանջները: Տնտեսապես զարգացած երկրների բնակչությունը գնում է էկոլոգիապես մաքուր արտադրանքը ոչ միայն վերը նշված չափանիշի առկայության դեպքում, այլև այն բանի համար, որ այս ոլորտի առկայությունը նպաստում է շրջակա միջավայրի պահպանությանը:

Օրգանական գյուղատնտեսությունը սպառողներին ապահովում է առողջության համար օգտակար սննդամթերքով՝ նպաստելով նաև բնական ռեսուրսների պահպանությանը: Մեծանում են պահանջները փաթեթավորման որակի նկատմամբ, որը պետք է կատարված լինի էկոլոգիապես անվտանգ եղանակով: Այսպիսով՝ շրջակա միջավայրի պահպանությունը հաջորդ չափանիշն է, որը օրգանական սննդամթերքի նկատմամբ ներկայացվող պահանջների բուրգի երկրորդ մակարդակում է:

Վերջին տարիներին զարգացած երկրներում օրգանական սննդամթերք նախընտրողները սկսել են ավելի մեծ ուշադրություն դարձնել օրգանական գյուղատնտեսության ոլորտում սոցիալական պատասխանատվությանը, որն էլ օրգանական արտադրանքի որակի երրորդ չափանիշն է: Սոցիալական գործոնները դեռևս լիովին չեն արտացոլվում օրգանական սննդամթերքի արտադրության մեթոդաբանության մեջ: Այս առումով, կարելի է նշել, որ տնտեսապես զարգացած երկրների բնակչությունը սկսել է ավելի մեծ ուշադ-

ություն դարձնել տեղական արտադրողներին աջակցությանը: Ներկայումս ավելացել է նաև պահանջարկը «արդար առևտրի» ապրանքների նկատմամբ, որոնք հաճախ նաև օրգանական են: Տվյալ ուղղության զարգացումը վկայում է, որ ավելի մեծ թվով մարդիկ են սկսել կարևորել արտադրանքի արտադրության սոցիալական կողմը: Գոյություն ունեն «արդար առևտրի» արտադրանքի վաճառքի ծավալների ավելացման մեծ հեռանկարներ, առավել ևս, եթե այդ արտադրանքը լինի նաև օրգանական:

Հետագայում օրգանական սննդամթերքի առնչությամբ կարող են ներկայացվել նոր պահանջներ, սակայն դրանք կապված կլինեն վերը նշված երեք հիմնական հանգամանքներից որևէ մեկի հետ: Շուկայի զարգացման որոշակի մակարդակի պայմաններում սպառողները, հնարավոր է, դիտարկեն որակի երեք չափանիշներից յուրաքանչյուրը (առողջության համար օգտակար, շրջակա միջավայրի պահպանություն, սոցիալական պատասխանատվություն): Ելնելով դրանից, ինչպես նաև հաշվի առնելով սեփական ֆինանսական կարողությունները՝ սպառողը համապատասխան որոշում կկայացնի սննդամթերք ընտրելիս:

Այս ոլորտի զարգացման գործում կարևոր դեր ունի պետական քաղաքականությունը: Այն երկրներում, որտեղ ակտիվորեն քարոզվում է առողջ ապրելակերպը, շրջակա միջավայրի վիճակի բարելավման անհրաժեշտությունը, աղքատության դեմ պայքարը, մարդիկ ավելի են հակված գնելու օրգանական սննդամթերք: Կարևորվում է նաև իրականացվող մարքեթինգային քաղաքականությունը: Էկոլոգիապես մաքուր արտադրանքի սպառման ծավալների ավելացման առումով էական ազդեցություն է ունենում տվյալ արտադրանքի գովազդը, ինչպես նաև դրան վերաբերող համապատասխան տեղեկատվության տարածումը ԶԼՄ-ների օգնությամբ:

Աշխարհի շատ երկրներում օրգանական սննդամթերքի նկատմամբ պահանջարկը սահմանափակվում է դրա առաջարկով: Ավելի մեծ առաջարկի և համապատասխան գովազդի միջոցով հնարավոր կլիներ զգալի չափով ավելացնել տվյալ ապրանքատեսակների նկատմամբ պահանջարկը:

Օրգանական սննդամթերքի շուկայի զարգացումը մեծ հեռանկարներ է բացում զարգացող երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար: Ներկայումս զարգացող երկրների օրգանական գյուղատնտեսական արտադրանքի հիմնական մասը զարգացած երկրներ արտահանման համար է նախատեսված: Աշխատանքային, ինչպես նաև արտադրական ծախսումների հարաբերականորեն ցածր մակարդակի պայմաններում զարգացող երկրներում արտադրված էկոլոգիապես մաքուր ապրանքները ավելի էժան են: Որոշ օրգանական արտադրատեսակներ բավականին մեծ պահանջարկ ունեն զարգացած երկրների շուկաներում այն պատճառով, որ դրանք չեն արտադրվում Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներում, հետևապես՝ զարգացող երկրների համար այդ արտադրատեսակների արտադրությունը, առաջարկի և պահանջարկի ճեղքվածքի պայմաններում, տնտեսապես շահավետ է:

«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ 2002-ին Արմավիրի մարզի Լուսակն համայնքում հիմք դրվեց ՀՀ օրգանական գյուղատնտեսությանը: Կարևոր է նշել, որ այս կազմակերպությունն աջակցում է գյուղացիական տնտեսությունների կայուն զարգացմանը: 2000 թ. սկսած՝ «Շեն»-ը շվեյցարական HEKS-EPER ընկերության ֆինան-

սական և տեխնիկական աջակցությամբ խթանում է օրգանական գյուղատնտեսության զարգացումը՝ համապատասխան տեխնիկական և տեղեկատվական ծառայություններ մատուցելով ոլորտում ներգրավված գյուղացիական տնտեսություններին:

ՀՀ-ում օրգանական գյուղատնտեսության բնագավառի ձևավորման և զարգացման գործում կարևորագույն դեր ունի 2002-ին հիմնված «Էկոգլոբ» ընկերությունը: Վերջինս օրգանական գյուղատնտեսության և սննդամթերքի արտադրության հավաստագրման միջազգային ճանաչում ունեցող մարմին է, որը համապատասխանում է ISO Guide 65-ին և EN 45011-ին: Հավաստագրման իրավունքը նշված ընկերությունը ստացել է գերմանական «DAP» հավատարմագրող կազմակերպության կողմից Եվրոմիության շուկայի համար: Բացի այդ, «Էկոգլոբն» ունի ԱՄՆ-ի գյուղդեպարտամենտի Ազգային օրգանական ծրագրի հավաստագիրը: Հավաստագրման նշված մարմնի՝ օրգանական եղանակով արտադրված մթերքի արտադրության, վերամշակման, մակնշման և մարքեթինգի չափորոշիչը համարժեք է (EC) No 834/2007 և 889/2008 կանոնակարգերին: «Էկոգլոբի» գործունեությունը հիմնված է ԱՄՆ-ի գյուղդեպարտամենտի Ազգային օրգանական ծրագրի պահանջների (USDA NOP 7 CPR 205) վրա և վավեր է ԱՄՆ-ի և Կանադայի շուկաներում: «Էկոգլոբի» գործունեությունը հիմնված է նաև «Codex Alimentarius»-ի և «IFOAM Standard»-ի վրա:

Օրգանական գյուղատնտեսության զարգացման կարևոր նախադրյալ էր նաև 2008-ին ընդունված «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքը, որը ուժի մեջ մտավ 2009 թ. մայիսից: Օրենքը կարգավորում է օրգանական գյուղատնտեսական մթերքի և հումքի արտադրության, պահպանման, վերամշակման, փոխադրման, իրացման, ինչպես նաև վայրի բույսերի մթերման հետ կապված հարաբերությունները, սահմանում օրգանական գյուղատնտեսության վարման իրավական հիմքերը, սկզբունքները, արտադրանքի շրջանառությանը ներկայացվող հիմնական պահանջները, պետական աջակցության ուղղությունները և լիազոր մարմնի պարտավորությունները[9]: 2012-ին ընդունվեց նաև «Օրգանական գյուղատնտեսական սննդամթերքի ներմուծման և արտահանման կարգը և ներմուծվող օրգանական գյուղատնտեսական սննդամթերքն ուղեկցող օրգանական սերտիֆիկատի ձևը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության որոշումը:

Օրգանական գյուղատնտեսության խթանման ծրագրի իրականացումը ներառված է ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010–2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկում:

Ըստ վերը նշված նախադրյալների՝ հավաստագրված և անցումային շրջանում գտնվող օրգանական գյուղատնտեսական հողատարածքների մակերեսները 2013 թ. հասել էին 1000 հա-ի: Նույն ժամանակաշրջանում «Էկոգլոբի» կողմից հավաստագրված էր օրգանական սննդամթերք արտադրող և վերամշակող 34 ընկերություն:

Վերջին տարիներին ՀՀ Կառավարությունը ֆինանսավորում է օրգանական գյուղատնտեսության ոլորտը՝ դա համարելով լուրջ ներուժ արտաքին շուկայում արդյունավետ տնտեսական գործունեություն իրականացնելու համար: Օրգանական գյուղատնտեսության զարգացման նպատակով Կա-

[9] Տե՛ս «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենք, 2008 թ.:

ռավարությունը 2009-ի փետրվարի 12-ի որոշմամբ «Թամարա ֆրութին» 300 մլն դրամի չափով լրահատկացում կատարեց օրգանական այգիների ստեղծման ծրագրի շրջանակներում: Հարկ է նշել, որ գյուղատնտեսական մթերքների վերամշակման արդյունավետ համակարգի ձևավորումը արտահանման ուղղվածություն ունեցող գյուղատնտեսության զարգացման հիմնական նախապայմանն է: Հետևապես՝ բարձր ավելացված արժեք ունեցող օրգանական պատրաստի արտադրանքի արտադրությամբ զբաղվող ընկերությունների թվի ավելացումը կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսության տվյալ ուղղության հետագա զարգացման հարցում:

Օրգանական անասնապահությունը նույնպես համարվում է տվյալ ոլորտի հեռանկարային ուղղություններից մեկը, որը ներառված է ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղությունների շարքում:

Այսպիսով՝ օրգանական գյուղատնտեսությունը արագ զարգացող ուղղություն է, որը ձևափոխվում և կատարելագործվում է՝ պայմանավորված սպառողների ցանկություններով, նոր տեխնոլոգիաներով և այլ գործոններով, որոնք ազդում են տվյալ ոլորտի վրա: Էկոլոգիապես մաքուր արտադրանքի նկատմամբ պահանջարկի վրա ազդող գործոնները տարբերվում են՝ կախված երկրների զարգացման աստիճանից, սակայն առկա են նաև մի շարք ընդհանրություններ: Օրգանական գյուղատնտեսությունը հեռանկարային ուղղություն է նաև Հայաստանի Հանրապետության համար: Դրա զարգացման կարևոր նախադրյալներ կարելի է համարել հավաստագրման համակարգի ձևավորումը և ոլորտը կարգավորող օրենքի ընդունումը: Օրգանական սննդամթերքի արտաքին շուկայի ծավալների ընդլայնումը տեղական արտադրողներին հնարավորություն է տալիս արտահանելու իրենց արտադրանքը զարգացած երկրներ:

АРМЕН ГАМБАРЯН
Аспирант кафедры „Экономики природопользования" АГЭУ

Современные тенденции формирования спроса на органические продукты питания.- Учитывая современные тенденции развития рынка органических продуктов питания, необходимо наиболее тщательно изучить факторы, влияющие на спрос по отношению к данной продукции. В процессе анализа важным является применение системного подхода.

В статье выделяются основные этапы развития рынка органических продуктов питания, а также анализируются основные факторы, которые влияют на спрос на каждом из этапов развития рынка. В конечном счете изучаются возможные направления дальнейшего развития органического сельского хозяйства.

Ключевые слова: *органические продукты питания, спрос, предложение, цена, рынок, доходы населения, информация.*

ARMEN GHAMBARYAN
Post-graduate at the Chair of „Environmental Economics" at ASUE

Current Trends in Organic Food Demand Formation.- Having the current trends in organic food market, there is a need of detailed analysis of the factors influencing the demand for organic products. It is important to use the systematic approach in the process of these analyses.

The article highlights the main stages of development of the organic food market and analyzes the factors that influence the demand in each stage. Ultimately, the article explores possible directions for further development of organic agriculture.

Key Words: *organic food, demand, supply, price, market, population's income, information.*

ՀԱԿՈԲ ԱՐՇԱԿՅԱՆ
ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՎՐԱ. ՔԼԱՍՏԵՐԱՅԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Զբոսաշրջությանը վերաբերող գործոնների միջև կախվածությունները գնահատելու նպատակաուղղված հաշվարկները ցույց են տալիս, որ այս ոլորտում պետական ծախսերը կարող են լինել ավելի արդյունավետ, որին հասնելու ճանապարհներից մեկն էլ քլաստերային մոտեցումն է:

Հետազոտության արդյունքում պարզվել է նաև, որ առկա քաղաքականության պարագայում 2029-2030 թթ. կանխատեսվում է զբոսաշրջիկների թվի աճի տեմպի որոշակի անկում, ինչն էլ, իր հերթին, կհանգեցնի զբաղվածության աճի տեմպի դանդաղեցման և այս ոլորտում զբաղվածության կրճատման:

Հիմնաբառեր. *զբոսաշրջություն, քլաստերային քաղաքականություն, զբոսաշրջիկների թիվ, պետական ծախսեր, կապիտալ ներդրումներ, միջին զգայունություն*

Զբոսաշրջությունը տնտեսության առանձնահատուկ ճյուղ է, որն ընդգրկում է մեծ թվով տնտեսական սուբյեկտների գործունեությունը, որոնց որոշումները պայմանավորված են բազմաթիվ որակական և քանակական ցուցանիշներով:

Ազգային տնտեսության վրա զբոսաշրջության ազդեցության աստիճանը գնահատելիս կարևորվում են արտադրական, բնակչության զբաղվածության ապահովման, եկամտի ստեղծման, տարածքային զարգացման անհամաչափությունների նվազեցման, վճարային հաշվեկշռի հարթեցման տնտեսական գործառույթները, որոնց միջոցով զբոսաշրջությունից ստացված արդյունքներն արտացոլվում են երկրի տնտեսական կյանքում:

Արտադրական գործառույթն արտահայտվում է զբոսաշրջային կազմակերպությունների կողմից ստեղծված ապրանքների և ծառայությունների միջոցով, որոնք լրացուցիչ ավելացված արժեք ներառող միավորներ են և ուղղակիորեն ազդում են ՀՆԱ ձևավորման և ավելացման վրա: Համաձայն տուրիզմի և ճամփորդության համաշխարհային խորհրդի (WTTC) կատարած հետազոտության՝ 2014 թ. համաշխարհային տնտեսությունում զբոսաշրջություն/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 9,8%՝ 7,6 տրիլիոն ԱՄՆ դոլար[1]: Նույն թվականին համաշխարհային տնտեսությունում զբոսաշրջության ոլորտում զբաղված է եղել մոտավորապես 277 մլն մարդ, այսինքն՝ ամեն տասնմեկերորդը:

Բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացմանը նպաստող գործառույթը կապված է այն հանգամանքի հետ, որ զբոսաշրջային արդյունքներն ու ծառայությունները ոչ նյութական են և ենթադրում են մարդկային գործոնի մեծ միջամտություն, ինչն էլ պայմանավորում է զբոսաշրջային ոլորտի աշխատատարությունը: Զբաղվածների թիվը կարող է կրճատվել միայն տեխնիկական նորարարական հայտնագործությունների ներդրման պարագայում, սակայն ոչ մի տեխնիկական գյուտ չի կարող լիովին փոխարինել կենդանի շփումը: Քանի որ զբոսաշրջության ճյուղն իր բնույթով աշխատատար է, այստեղ կարող են ներգրավվել նաև մեծ թվով չորակավորված աշխատողներ: Մեր հանրապետությունում զբոսաշրջության բնագավառում զբաղվածության պատկերը հետևյալն է. 22 300 մարդ՝ 2013-ին, որը կազմում է ընդհանուր զբաղվածների թվի գրեթե 2%-ը[2]:

Հայաստանը՝ իր հրաշալի բնությամբ և հազարամյակների պատմությամբ, ունի էական առավելություններ, որոնք պետք է և կարող են օգտագործվել զբոսաշրջության զարգացման նպատակով: Զբոսաշրջության ոլորտն արդյունավետ կառավարելու տեսանկյունից ստեղծվում են քլաստերներ, որոնք զարկ են տալիս ոչ միայն զբոսաշրջության զարգացմանը, այլև նպաստում են դրանցում ներառված բոլոր տարածաշրջանների տնտեսությունների վերելքին: Այս առումով, զբոսաշրջության ոլորտը քլաստերների միջոցով կառավարելու մոտեցումը կարող է շատ արդյունավետ լինել: Զբոսաշրջության ոլորտում քլաստերային քաղաքականության զարգացման նպատակով հաշվարկված տարբեր ցուցանիշների փոխադարձ կախվածությունների պատկերը թույլ է տալիս անել դատողություններ այն մասին, թե քլաստերների ներդրումը ինչպես կարելի է կազմակերպել, որ զբոսաշրջության զարգացման ուղին լինի արդյունավետ և' տնտեսական աճի, և' զբաղվածության տեսանկյունից (աղյուսակ 1):

Զբոսաշրջությանը վերաբերող գործոնների միջև կախվածությունները գնահատելուց առաջ ցուցանիշներն ընտրվել են երկքայլ մեթոդի օգնությամբ: Այսպես՝ առաջին հերթին իրականացվել է գործոնների տեսական ընտրություն, իսկ երկրորդ քայլով որոշակի փոփոխականների միջև առկա կապվածությունները նկարագրելու համար հաշվարկվել են մասնակի կոռելյացիայի գործակիցները[3].

---

[1] Տե՛ս WTTC “The Economic Impact of Travel & Tourism 2015”.
[2] Տե՛ս Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ (2008-2012):
[3] Տե՛ս Эконометрика:учеб./под ред. Елисеевой И.: Проспект, 2009, էջ 54-66:

Աղյուսակ 1

Զբոսաշրջության ոլորտի գործոնների փոխադարձ կապերի նկարագրություն

	CI	NFP	GS	NT	NTG	INT	EMP	RG
CI	1							
NFP	-0.21	1						
GS	0.9	-0.08	1					
NT	0.89	-0.50	0.86	1				
NTG	-0.33	-0.17	-0.33	-0.28	1			
INT	-0.45	0.24	-0.34	-0.38	0.5	1		
EMP	-0.14	0.21	0.01	-0.18	0.36	0.82	1	
RG	-0.4	0.19	-0.3	-0.39	0.47	0.94	0.89	1

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս ՀՀ ժամանած զբոսաշրջիկների թվի (NT) և այնպիսի ցուցանիշների միջև ամուր կապերը, ինչպիսիք են կապիտալ ներդրումները (CI՝ 0.89), պետական ծախսերը (GS՝ 0.86) և ոչ պարենային ապրանքների գների ինդեքսը (NFP՝ 0.50):

Հաշվի առնելով մասնակի կոռելյացիաների աղյուսակի տվյալները՝ տնտեսաչափական մոդելի միջոցով դիտարկվում է զբոսաշրջիկների թվի (NT[4]), որը համարվում է զբոսաշրջության ոլորտի առանցքային ցուցանիշը, կախվածությունը հետևյալ գործոններից՝ ոչ պարենային ապրանքների գների ինդեքս (NFP[5]), զբոսաշրջության ոլորտում պետական ծախսեր (GS[6]) և կապիտալ ներդրումներ (CI[7]):

Տնտեսաչափական մոդելին անդրադառնալուց առաջ կատարվել է ընտրված ցուցանիշների վիճակագրական շարքերի մաքրում, քանի որ հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ դրանցում առկա են մի շարք խնդիրներ, որոնք կարող են կեղծ արդյունքների պատճառ դառնալ: Վերջինս նշանակում է, որ առանց շարքերը մաքրելու, գնահատված կախվածությունները մեծ հավանականությամբ կլինեն ոչ օբյեկտիվ, հետևապես՝ կարող են ճիշտ չարտահայտել զբոսաշրջության ոլորտում ձևավորված իրական պատկերը:

Օգտվելով Դևիսոն-Մակքինոնի[8] չափանիշից՝ վիճակագրական շարքերը մաքրելու նպատակով դիտարկվել են դրանց երկրորդ կամ առաջին կարգի տարբերությունները, և փոքրագույն քառակուսիների եղանակով[9] գնահատվել է ոչ թե սկզբնական մոդելը՝

---

[4] Տե՛ս http://knoema.ru/atlas

[5] http://www.armstat.am/file/doc/99489258.pdf.

[6] Government individual spending. բացառապես զբոսաշրջիկներին վերաբերող ծառայությունների վրա կատարված պետական ծախսեր, ինչպես օրինակ՝ մշակութային ծառայություններ (թանգարաններ) կամ ռեկրեացիոն ծառայություններ (արգելոցներ և այգիներ, անտառներ և այլ բնական ռեսուրսներ). spending by government on Travel & Tourism services directly linked to visitors, such as cultural services (eg musems) or recreational services (eg national parks).

[7] Capital investment. ներառում է զբոսաշրջության հետ ուղղակի առնչություն ունեցող բոլոր ճյուղերի կապիտալ ներդրումների վրա կատարվող ծախսերը: Ներառում է յուրահատուկ զբոսաշրջային ակտիվների վրա կատարված այլ բնագավառների ներդրումային ծախսերը (նոր այցելուների կացարաններ, ուղևորատար տրանսպորտ, ինչպես նաև ռեստորաններ և զբոսաշրջության ոլորտին անհրաժեշտ այլ կառույցներ):

[8] Տե՛ս **Магнус Я., Катышев П., Пересецкий А.,** Эконометрика. М., „Дело”, 2004, էջ 276-285:

[9] Տե՛ս նույն տեղը, էջ10:

$$NT_t = a0 + a1GS_t + a2NFP_t + a3CI_t + \varepsilon_t \quad , \qquad (1)$$

որտեղ՝ a0, a1, a2, a3 – ը մոդելի անհայտ պարամետրերն են,
ε_t – ն՝ մոդելի պատահական սխալն է՝ t-րդ տարում,

այլ հետևյալ ձևափոխված մոդելը՝

$$D(D(NT_t)) = a0 + a1D(D(GS_t)) + a2D(NFP_t) + a3D(D(CI_t)) + \varepsilon_t \qquad (2)$$

$D(D(NT_t))$, $D(D(GS_t))$, $D(NFP_t)$, $D(D(CI_t))$ ցուցանիշները վերը նկարագրված փոփոխականներն են՝ երկրորդ կամ առաջին կարգի տարբերություններով:

(2) մոդելի գնահատման արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը.

$$\widehat{D(D(NT_t))} = 17699 - 0{,}01D(D(GS_{t-1})) - 16756\,D(NFP_t) + 0{,}003\,D(D(CI_{t-2})), \quad (3)$$

Ստացված մոդելի վիճակագրական հատկությունները բավարար են. դրանում կարելի է համոզվել ստորև բերված արդյունքներով.

Աղյուսակ 2

Մոդել (2)-ի գնահատման արդյունքները

Բացատրող փոփոխականներ	Գործակիցներ
հաստատուն	17699 (1.59)[10]
$D(NFP_t)$	-16756 (-3.54)
$D(D(GS_{t-1}))$	-0.01 (-3.85)
$D(D(CI_{t-2}))$	0.003 (3.49)
R^2_{adj}=0,60	
DW=1,56	

Աղյուսակ 2-ից երևում է, որ բոլոր գործակիցները նշանակալի են՝ բացի ազատ անդամից, որը պայմանավորված է մոդելում առաջին և երկրորդ կարգի տարբերությունների առկայությամբ: Մոդելի ուղղված դետերմինացիայի գործակիցը 0,60 է, ինչը նշանակում է, որ մոդելը լավ որակի է, իսկ Դարբին–Վաթսոնի չափանիշը մոտ է երկուսի, որը նշանակում է՝ մոդելում ավտոկոռելյացիա չկա: Այսպիսով՝ մոդելի որակական չափանիշները հնարավորինս լավն են, որոշակի քայլերից հետո կարող ենք ստանալ հետևյալ վերջնական գնահատված մոդելը.

$$\widehat{NT_t} = 2{,}095{,}642 - 0{,}01GS_{t-1} - 16{,}756NFP_t + 0{,}003CI_{t-2}, \qquad (4)$$

որտեղ՝ $\widehat{NT_t}$ –ն օտարերկրյա զբոսաշրջիկների թվի կանխատեսվող արժեքն է t-րդ տարում,

GS_{t-1}–ը՝ զբոսաշրջության ոլորտում պետական ծախսերը (t-1)-րդ տարում,

NFP_t –ն՝ ոչ պարենային ապրանքների գների ինդեքսը t-րդ տարում,

CI_{t-2}–ն՝ զբոսաշրջության ոլորտում կապիտալ ներդրումների ցուցանիշը (t-2)-րդ տարում:

[10] Փակագծերում նշված են t վիճակագրի արժեքները:

Պարզ է, որ պետական ծախսերի և կապիտալ ներդրումների ցուցանիշները ուշացումով կազդեն զբոսաշրջիկների քանակի վրա, քանի որ զբոսաշրջության համար ստեղծվող ենթակառույցների շինարարությունը և գործարկումը, ինչպես նաև պետության կողմից մատուցվող ծառայությունների ներդրումը և մատուցումը պահանջում են որոշակի ժամանակահատված:

Ստացված գործակիցները նկարագրելու նպատակով հաշվարկենք զբոսաշրջիկների թվի միջին զգայունությունը[11], ըստ մոդելի գործոնների, հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$\overline{E_x} = \frac{\partial y \bar{x}}{\partial x \bar{y}},$$

որտեղ՝

$\overline{E_x}$ – ն կախյալ փոփոխականի (NT_t) միջին զգայունությունն է ըստ անկախ փոփոխականի՝ (GS_{t-1}, NFP_t, CI_{t-2}),

$\frac{\partial y}{\partial x}$ – ը՝ կախյալ փոփոխականի ածանցյալը՝ ըստ անկախ փոփոխականի,

$\bar{x}, \bar{y}$ – ը, համապատասխանաբար՝ անկախ և կախյալ փոփոխականների միջին արժեքները:

Կատարված հաշվարկները ներկայացված են ստորև.

Աղյուսակ 3

Զբոսաշրջիկների թվի միջին զգայունությունը

Ցուցանիշը	Ցուցանիշի միջին մակարդակի փոփոխությունը	Զբոսաշրջիկների թվի միջին զգայունությունը (էլաստիկությունը)՝ ըստ ցուցանիշների
NFP	1%	-4.65%
GSt-1	1%	-0.09%
CIt-2	1%	0.29%

Աղյուսակ 3-ի արդյունքները կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. ոչ պարենային ապրանքների գների միջին մակարդակի 1% աճը կհանգեցնի զբոսաշրջիկների թվի կրճատման միջինում 4,65%-ով, t-1-րդ տարվա պետական ծախսերի միջին մակարդակի 1% աճը՝ զբոսաշրջիկների թվի կրճատման միջինում 0,09%-ով, և, վերջապես, կապիտալ ներդրումների միջին մակարդակի 1% աճը կհանգեցնի զբոսաշրջիկների թվի աճի՝ միջինում 0,29%-ով: Կարելի է նշել, որ զբոսաշրջիկների թիվը շատ զգայուն է ոչ պարենային ապրանքների գների նկատմամբ: Պետական աջակցությունը բացասաբար է ազդում՝ չնայած փոքր գործակցով: Ե՛վ փոքր գործակիցը, և՛ բացասական միտումը կարող են վկայել այս ոլորտում ոչ արդյունավետ ծախսերի մասին:

Հաշվի առնելով, որ մոդել 4-ի որակական հատկությունները բավարար են, փորձ է արվել որոշելու, թե որքան կլինի զբոսաշրջիկների թվի փոփոխությունը 2030 թվականին 2014-ի նկատմամբ:

[11] Տե՛ս Эконометрика: учеб. / под ред. Елисеевой И./. М., ЮРАИТ, 2014, էջ 48-51:

Արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը.

Աղյուսակ 4

Զբոսաշրջիկների թվի կանխատեսվող մակարդակը

Ցուցանիշներ	*Ցուցանիշի աճը մնացած ցուցանիշների անփոփոխության պարագայում*	*Զբոսաշրջիկների թիվը 2030-ին՝ 2014 թ. նկատմամբ NT 2030, %*	*Զբոսաշրջիկների թվի աճի տեմպը 2030 –ին՝ 2014 թ. նկատմամբ*
GS2029	0%	41.6%	-58,33
GS2029	1%	41.5%	-58,42
GS2029	-1%	41.7%	-58,25

Ըստ աղյուսակ 4-ի տվյալների՝ զբոսաշրջիկների թիվն այդքան էլ զգայուն չէ պետական ծախսերի նկատմամբ, քանի որ և' հաստատուն մնալու, և' աճելու ու նվազելու պարագայում ստանում ենք գրեթե նույն արդյունքը: Այսինքն՝ պետական ծախսերի 2014 թ. մակարդակի նույնիսկ 1% աճը (10,100,000 դոլար), երբ մյուս փոփոխականները մնում են նույն մակարդակին, 2030 թ. կհանգեցնի զբոսաշրջիկների թվի 500,557 մակարդակի, որը 2014 թ. ՀՀ եկած զբոսաշրջիկների թվի մոտ 41,5%-ն է կազմում: Արդյունքում՝ 2030 թ., 2014 թ. համեմատությամբ, կունենանք զբոսաշրջիկների թվի աճի տեմպի մոտավորապես 58,42%-ով դանդաղեցում:

Այսպիսով՝ քանի դեռ բացասական կախվածություն կա պետական աջակցության և զբոսաշրջիկների թվի միջև, պետական ծախսերի նույնիսկ առավելագույն աճը կարող է հակառակ ազդեցությունը ունենալ, քանի որ պետության կատարած ծախսերը դեռևս, ամենայն հավանականությամբ, անարդյունավետ են: Հետևապես՝ մինչև 2030 թ. ծախսերի աճ ապահովելուն զուգահեռ, խորհուրդ է տրվում առավելագույնս ուշադրություն դարձնել ոչ թե ծախսերի ծավալին, այլ արդյունավետությանը: Միգուցե ծախսերի օպտիմալացմանը կարելի է հասնել քլաստերային մոտեցման պարագայում, երբ ծախսերը կատարվում են ոչ թե մասնատված, այլ առավել կենտրոնացված և որոշակի խնդիրներ լուծելու ներուժ ունեն:

Հաջորդ քայլով փորձ է արվել հասկանալու, թե ինչպիսի կախվածություն կա արտերկրից ժամանող և ներքին զբոսաշրջիկներից ստացված եկամուտների ու կատարված ծախսերի աճի տեմպի՝ INT[12]-ի և զբոսաշրջության ոլորտում զբաղվածության աճի տեմպի՝ EMP[13]-ի միջև: Առաջադրված նպատակը էական նշանակություն ունի այս ոլորտում ընդհանուր մակրոտնտեսական քաղաքականության իրականացման համար, քանի որ վերլուծվում

[12] Internal tourism consumption. տվյալ երկրի ներսում զբոսաշրջության հետ կապված ոլորտներից գեներացված ընդհանուր եկամուտ + երկրի տարածքում գործարարության և հանգստի նպատակներով միջազգային զբոսաշրջիկների կողմից կատարված ծախսեր, որոնք ներառում են տրանսպորտային ծախսերը, բայց չեն ընդգրկում արտերկրից ժամանած ուսանողների կրթության ծախսերը + բացառապես զբոսաշրջիկներին վերաբերող ծառայությունների պետական ծախսերը, ինչպես, օրինակ՝ մշակութային ծառայություններ (թանգարաններ) կամ ռեկրեացիոն ծառայություններ (արգելոցներ և այգիներ, անտառներ և այլ բնական ռեսուրսներ):

[13] Total contribution to employment. աշխատատեղերի քանակը, որը ներառում է նաև այլ ճյուղերում զբաղվածների այն թիվը, ովքեր մասնակցել են զբոսաշրջիկների պահանջմունքների բավարարմանը և զբոսաշրջային արդյունքի ստեղծմանը:

են զբոսաշրջության ոլորտի զարգացման մակարդակը և օգուտները զբաղվածության ապահովման տեսանկյունից:

Վերն առանձնացված ցուցանիշների կախվածության աստիճանը կարելի է պատկերացնել՝ դիտարկելով աղյուսակ 1-ում հաշվարկված մասնակի կոռելյացիայի գործակիցները: Ինչպես կարելի է նկատել ստացված արդյունքներից, INT և EMP ցուցանիշների կախվածության աստիճանը բարձր է:

Նախքան կախվածությունները տնտեսաչափական մոդելի օգնությամբ գնահատելը, կատարվել է շարքերի մաքրագրում, քանի որ հակառակ դեպքում մեծ է կեղծ կախվածություններ ունենալու հավանականությունը: Հիմք ընդունելով Դևիսոն-Մակքինոնի չափանիշը՝ պարզ է դարձել, որ մոդելում շարքերը կարելի է դիտարկել առաջին կարգի տարբերություններով, և կստանանք հետևյալ տնտեսաչափական մոդելը.

$$D(EMP_t) = b0 + b1D(INT_t) + \varepsilon_t \qquad (5)$$

որտեղ՝ $D(EMP_t), D(INT_t)$ – և համապատասխան փոփոխականներն են առաջին կարգի տարբերություններով,

$b0, b1$ – ը՝ մոդելի անհայտ պարամետրերը,

Գնահատելով (5) տնտեսաչափական մոդելը փոքրագույն քառակուսիների եղանակով՝ կստանանք հետևյալ պատկերը.

Աղյուսակ 5

Մոդել (5)-ի գնահատման արդյունքները

Բացատրող փոփոխականներ	Գործակիցներ
հաստատուն	0,61(0,22)[14]
$D(INT_t)$	0,99 (8.51)
R^2=0,80	
DW=2,44	

Ըստ աղյուսակ 5-ի տվյալների՝ (5) մոդելը լավ որակի է, քանի որ վերջինիս դետերմինացիայի գործակիցը մոտ է 1-ին՝ (0.80), Դարբին-Վաթսոնի չափանիշը մոտ է 2-ին: Գնահատված գործակիցները նշանակալի են, բացի հաստատունից, որը որոշվում է հետագա հաշվարկների միջոցով:

Կատարելով այդ հաշվարկները՝ կստանանք հետևյալ գնահատված մոդելը.

$$\widehat{EMP}_t = -7.2 + 0.99INT_t, \qquad (6)$$

որտեղ՝ $\widehat{EMP}_t$ -ն զբոսաշրջության ոլորտում զբաղվածության աճի տեմպի կանխատեսվող արժեքն է t-րդ տարում,

INT_t -ն՝ արտերկրից ժամանող զբոսաշրջիկների և ներքին զբոսաշրջիկներից ստացված եկամուտների ու կատարված ծախսերի աճի տեմպը t-րդ տարում:

Ստացված գործակիցները կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ.

INT_t-ի՝ տվյալ տարվա արժեքի 1% աճը կավելացնի զբաղվածության գործակիցը 0,9%-ով: Բացի այդ, հաշվարկենք նաև զբաղվածության միջին զգայունությունն ըստ INT գործոնի. կստանանք հետևյալը.

[14] Փակագծերում նշված են t վիճակագրի արժեքները:

Աղյուսակ 6

Զբոսաշրջիկների թվի միջին զգայունությունը

Ցուցանիշը	Ցուցանիշի միջին արժեքի աճը	Զբաղվածության միջին զգայունությունը (էլաստիկությունը)՝ ըստ ցուցանիշի
TNT	1%	2.55%

Աղյուսակ 6-ից պարզ է դառնում, որ զբաղվածության աճի տեմպը գերզգայուն է TNT-ի նկատմամբ, քանի որ վերջինիս աճի տեմպի միջին մակարդակի 1% աճը հանգեցնում է զբաղվածության աճի տեմպի աճին 2,55%-ով:

Ուսումնասիրել ենք նաև զբոսաշրջիկների մասնակցությամբ ապահովվող RG իրական ՀՆԱ[15], EMP զբաղվածության և NTG զբոսաշրջիկների թվի աճի տեմպերի միջև առկա կապերը: Նշված ցուցանիշների ընտրությունը հասկանալու նպատակով բավարար է դիտարկել դրանց մասնակի կոռելյացիայի ցուցանիշները: Ըստ աղյուսակ 1-ի՝ իրական ՀՆԱ և զբաղվածության աճի տեմպերի միջև կախվածությունը նկարագրող գործակիցը մոտ է 1-ին՝ 0,89, իսկ իրական ՀՆԱ և զբոսաշրջիկների թվի աճի տեմպերի միջև մասնակի կոռելյացիայի գործակիցը 0,47 է: Կոռելյացիոն ցուցանիշները բավականին բարձր են, հետևապես՝ այս գործոնները կարող են ազդել իրական ՀՆԱ աճի տեմպի վրա: Նկարագրված ցուցանիշների վիճակագրական շարքերը ևս մաքրվել են, և գնահատման համար ընտրվել է հետևյալ տնտեսաչափական մոդելը.

$$D(RG_t) = g0 + g1D(EMP_t) + g2D(NTG_{t-1}) + \varepsilon_t, \qquad (7)$$

որտեղ՝ $D(RG_t), D(EMP_t), D(NTG_{t-1})$ –ը համապատասխան փոփոխականների առաջին կարգի տարբերություններն են,

$g0, g1, g2$ – ը՝ մոդելի պարամետրերը:

(7) տնտեսաչափական մոդելը ևս կգնահատենք փոքրագույն քառակուսիների եղանակով և կստանանք հետևյալ գնահատականները.

Աղյուսակ 7

Մոդել (7)-ի գնահատման արդյունքները

Բացատրող փոփոխականներ	Գործակիցներ
հաստատուն	-0,61 (-0,21)[16]
$D(EMP_t)$	0,63 (5,25)
$D(NTG_{t-1})$	0,15 (3,33)
R^2_{adj}=0,75	
DW=2,17	

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ գնահատված մոդելն ունի բարձր վստահելիություն, քանի որ ուղղված դետերմինացիայի գործակիցը (0,75) մոտ է 1-ին, Դարբին-Վաթսոնի վիճակագիրը մոտ է 2-ին, իսկ մոդելի գործոնները նշանակալի են, բացի ազատ անդամից կամ հաստատունից, որը հետագայում կստանանք՝ հաշվարկներ կատարելով:

[15] Total contribution to GDP. ՀՆԱ այն մասը, որը ստացվել է բացառապես զբոսաշրջության ոլորտից՝ գումարած այն ոլորտներից ստացված արդյունքը, որից օգտվել են զբոսաշրջիկները:

[16] Փակագծերում նշված են t վիճակագրի արժեքները:

Այսպիսով՝ կատարված հաշվարկների արդյունքում գնահատված տնտեսաչափական մոդելը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

$$\widehat{RG}_t = 8.25 + 0.62EMP_t + 0.15NTG_{t-1}, (8)$$

որտեղ՝ $\widehat{RG}_t$-ն իրական ՀՆԱ աճի տեմպի կանխատեսվող արժեքն է t-րդ տարում,

NTG_{t-1}-ը՝ գբոսաշրջիկների թվի աճի տեմպը t-1-րդ տարում,

EMP_t-ն՝ զբաղվածության աճի տեմպը t-րդ տարում:

Մոդել 8-ից կարելի է եզրակացնել, որ զբաղվածության աճի տեմպի 1% աճը հանգեցնում է իրական տնտեսական աճի տեմպի ավելացման 0,6%-ով, իսկ զբոսաշրջիկների թվի աճի տեմպի 1% աճը հանգեցնում է իրական ՀՆԱ աճի տեմպի աճին՝ մոտավորապես 0,2%-ով:

Հաշվարկենք զբոսաշրջիկների մասնակցությամբ ապահովվող RG իրական ՀՆԱ աճի տեմպի միջին զգայունությունն ըստ մոդելի գործոնների.

Աղյուսակ 8

Իրական ՀՆԱ աճի տեմպի միջին զգայունությունը

Ցուցանիշը	*Ցուցանիշի աճը*	*Իրական ՀՆԱ աճի տեմպի միջին զգայունությունը (էլաստիկությունը) ըստ ցուցանիշների*
EMPt	***1%***	***0.2%***
NTGt-1	***1%***	***0.2%***

Այսպիսով՝ իրական ՀՆԱ աճի տեմպի միջին զգայունությունը, ըստ զբոսաշրջիկների թվի և զբաղվածության աճի տեմպի, միջինում նույնն է: Օրինակ՝ ՀՀ ժամանած զբոսաշրջիկների աճի տեմպի միջին մակարդակի 1% աճը հանգեցնում է RG-ի աճին՝ միջինում ընդամենը 0,2%-ով: Այս թիվը համարում ենք բավականին փոքր, ուստի անհրաժեշտ է այն մեծացնել զբոսաշրջության ոլորտում ճիշտ և նպատակաուղղված քաղաքականության իրականացման ճանապարհով:

Կատարված վերլուծության միջոցով կարելի է նկարագրել զբոսաշրջության ոլորտի զարգացման սցենարային տարբերակը, որի էությունը հետևյալն է. ըստ վերը կատարված հաշվարկների, առկա քաղաքականության անփոփոխության պարագայում, 2029-2030 թթ. կանխատեսվում է զբոսաշրջիկների թվի աճի տեմպի մոտավորապես 58% անկում (աղյուսակ 4): Ըստ այդմ՝ 2030-ին, 2014 թ. համեմատությամբ, կնկատվի զբաղվածության աճի տեմպի դանդաղում (անկում)՝ մոտավորապես 44,12%-ով, եթե ենթադրենք, որ 2014-ին գրանցված զբաղվածության 6,8% մակարդակը 2030-ին, զբոսաշրջիկների կրճատման հետ կապված, ևս կնվազի կիսով չափ և կկազմի 3,8%:

Հաշվի առնելով վերը նկարագրված զարգացումների տարբերակը՝ կստանանք հետևյալ հաշվարկների աղյուսակը.

Աղյուսակ 9

Իրական ՀՆԱ աճի տեմպի կանխատեսվող արժեքը

Ցուցանիշը	*2029-2030 թթ.ցուցանիշի աճի տեմպի փոփոխությունը 2014 թ. նկատմամբ*	*Իրական ՀՆԱ աճի տեմպի կանխատեսվող արժեքը*
EMP2030	-44,12%	-28%
NTG2029	-58%	

Ստացված արդյունքը մեկնաբանելու համար ներկայացնենք նկարագրված գործընթացների հետևյալ շղթայական կառուցվածքը.



Գծապատկեր 1. **Իրական ՀՆԱ աճի տեմպի կանխատեսման նպատակով ձևավորված սցենարի իրականացման շղթան**

Ձևավորված սցենարի իրականացումը ցույց տվեց, որ միայն պետական ծախսերի անսահման ավելացումը չի կարող էական օգուտներ տալ, քանի որ անհրաժեշտ է արդյունավետությունը բարձրացնել: Հատկապես այս ոլորտին տրամադրվող պետական ծախսերը պետք է որոշակի ուղղվածություն և արդյունավետություն ունենան, հետևաբար՝ մինչև 2030 թ. ծախսերի ավելացմանը զուգահեռ, պետք է ապահովել վերջիններիս առավելագույն հետդարձելիությունը: Հնարավոր է, որ լուծումներից մեկը լինի տուրիզմի զարգացման քլաստերային մոտեցումը՝ պետական ծախսերի խիստ վերահսկման պայմաններում:

АКОП АРШАКЯН
Аспирант кафедры ,,Макроэкономики" АГЭУ

Влияние туризма на занятость и экономический рост РА: эффективность кластерного подхода.- Расчеты сделанные в результате оценки взаимосвязи между факторами сферы туризма показали, что государственные расходы производимые в этой сфере могут быть более эффективными. Одним из путей достижения такой эффективности может являтся кластерный подход. Расчеты так-же показывают, что при условии безизменности нынешней политики к 2029-2030 гг. можно прогнозировать определенный спад темпа роста количества туристов, что в свою очередь повлечет за собой замедление темпа роста занятости и уменьшение числа занятых в этой сфере.

Ключевые слова: *туризм, кластерная политика, число туристов, государственные расходы, капитальные инвестиции, средняя эластичность.*

HAKOB ARSHAKYAN
Post-graduate at the Chair of "Macroeconomics" at ASUE

Impact of Tourism on Employment and the RA Economic Growth: the Efficiency of Cluster Approach.- Calculations made for the evaluation of the factors of tourism showed that government spending made in this field can be more effective. One of the ways to achieve that level of efficiency is cluster approach. Calculations have shown as well that if there are no changes expected to be made in the current policy a certain slowdown of growth in the number of tourists can be predicted in 2029-2030. In its turn this situation will lead to the slowing of the growth in employment and a decrease in the number of employees in this area.

Key Words: *tourism, cluster policy, number of tourists, government spending, capital investment, average elasticity.*

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾ

ԱՐԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՀՊՏՀ բանկային գործի և ապահովագրության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

ԲԱՆԿԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ

Հոդվածում քննարկվում են առևտրային բանկերի ժամանակակից գործառույթները, ինչպես նաև տնտեսության արդի պայմաններում ձևավորված նոր բանկերի դերը: Ժամանակակից բանկային տարատեսակ գործառնությունների դասակարգումը և դրանց ներկայացումը շատ կարևոր է, քանի որ ֆինանսական շուկայում առաջանում են նոր ծառայություններ, որոնք բնակչության շրջանում դեռևս լայն տարածում չունեն:

Հիմնաբառեր. *ֆինանսական համակարգ, բանկային գործունեություն, ժամանակակից բանկ, բանկային գործառույթներ, վարկեր, արժեթղթեր*

Հաճախ գրականության մեջ բանկային գործունեությունը բնութագրվում է որպես պասիվային և ակտիվային գործառնությունների համադրություն՝ ավանդների ընդունում ու վարկերի տրամադրում: Սակայն ներկայումս առևտրային բանկերը կատարում են ոչ պակաս կարևոր այլ գործառնություններ, մասնավորապես՝ տարատեսակ ֆինանսական գործիքներով հասարակության տարբեր խավերի դրամական միջոցների կառավարում, ժամանակակից վճարահաշվարկային համակարգի միջոցով բնակչությանը իրացվելի միջոցներով ապահովում, ինչն էլ հանգեցնում է առևտրային բանկերի ժամանակակից գործառույթների ստեղծմանը:

Մեր օրերում առևտրային բանկերը կատարում են բազում գործառնություններ: 2014 թվականի վերջին ՀՀ արժութային շուկայում տեղի ունեցած ցնցումը, ինչի հետևանքով ՀՀ բանկային համակարգում որոշ ծառայությունների մատուցումը դադարեցվեց, ապացուցեց բանկային համակարգի և տնտեսության սերտաճման բարձր աստիճանը: Տնտեսությունը մեկուսացավ, առևտրի, արտադրության և նույնիսկ սպասարկման ոլորտում նկատվեց աճի զգալի անկում, որն իր բացասական ազդեցությունն ունեցավ բնակչության մեծամասնության վրա: Փաստորեն, բանկերի կայունությունը և ժամանակին համընթաց քայլելը կարևոր են ինչպես յուրաքանչյուրիս, այնպես էլ ողջ տնտեսության համար: Առանցքային խնդիրներից են ժամանակակից բանկերի նոր գործառույթների և գործառնությունների սահմանումն ու ներդնումը, ինչը կարող է էապես բարելավել բանկային ծառայությունների որակը՝ նպաստելով երկրի տնտեսության ցուցանիշների աճին:

ՀՀ բանկային համակարգի արդյունավետության մակարդակի բարձրացման և ծառայությունների որակի բարելավման նպատակով վերլուծության են ենթարկվել ժամանակակից առևտրային (ունիվերսալ) բանկերի կողմից մատուցվող ծառայությունները:

Նշենք, որ միջազգային ֆինանսական շուկաներում գոյություն ունեն տարբեր բանկային մոդելներ, որոնցից առավել տարածված են ունիվերսալ, ներդրումային և զարգացման բանկերը:

Զարգացման բանկերի նպատակն է երկրների կայուն տնտեսական և ֆինանսական ապագայի ապահովումը բազմաբնույթ ֆինանսական օժանդակությունների տրամադրման միջոցով: Զարգացման բանկերի հիմնադիրներն առավել հաճախ պետություններն են, սակայն երբեմն բաժնետեր կարող են լինել նաև ոչ պետական կազմակերպությունները:

Աղյուսակ 1

Խոշորագույն զարգացման բանկերն ըստ տարածաշրջանների[1]

Միջազգային զարգացման բանկեր	*Եվրոպայի խոշորագույն զարգացման բանկեր*	*Ասիայի խոշորագույն զարգացման բանկեր*
Համաշխարհային բանկ (WB)	Ավստրիական զարգացման բանկ	Չինաստանի գյուղատնտեսական զարգացման բանկ
Գյուղատնտեսության զարգացման միջազգային ֆոնդ (IFAD)	Ներդրումների ազգային բանկ (Ֆրանսիա)	Չինաստանի զարգացման բանկ
Եվրոպական ներդրումային բանկ (EIB)	Բուլղարական զարգացման բանկ	Ճապոնիայի զարգացման բանկ
Իսլամական զարգացման բանկ (IsDB)	Գերմանական զարգացման բանկ (KfW)	Ղազախստանի զարգացման բանկ
Ասիական զարգացման բանկ (ADB)	Միջէկոնոմբանկ (ՌԴ)	Սինգապուրի զարգացման բանկ
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD)	Խորվաթիայի վերակառուցման և զարգացման բանկ	Ֆիլիպինների զարգացման բանկ

Վերոնշյալ միջազգային զարգացման բանկերի մեծ մասը ակտիվ գործունեություն է ծավալում նաև Հայաստանում:

[1] http://en.wikipedia.org/wiki/International_financial_institutions

Ներդրումային բանկը ֆինանսական հաստատություն է, որն օգնում է ֆիզիկական և իրավաբանական անձանց և պետություններին՝ ներգրավելու ֆինանսական կապիտալ, արժեթղթերի շուկայում կատարելու գործառնություններ: Խոշորագույն ներդրումային բանկերը ամերիկյան են (J.P. Morgan & Co., Bank of America, Goldman Sachs, Morgan Stanley, Citigroup):

Հայաստանում գործում են 21 առևտրային (ունիվերսալ) և մեկ զարգացման բանկ (Համահայկական բանկ), որը ստեղծվել է 2009 թվականին ՀՀ Կառավարության որոշմամբ: Համահայկական բանկը ձեռնարկությունների զարգացման բանկ է՝ բաց բաժնետիրական ընկերություն: Սա Հայաստանում նոր տեսակի ֆինանսական կառույց է, որի նպատակն է իրականացնել արտահանմանը միտված մասնավոր ձեռնարկությունների ներդրումային ծրագրերի երկարաժամկետ ֆինանսական՝ հավաքագրելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ զարգացմանն ուղղորդված ներքին և արտաքին տարբեր աղբյուրներից[2]:

Ժամանակավորապես ազատ միջոցների կուտակումը և սպառողների ու տնտեսավարող սուբյեկտների վարկավորումը միայն չեն բանկի գործառույթները, որոնք տարբերակում են բանկերը ֆինանսական մյուս ինստիտուտներից: Բանկն իրավաբանական անձ է, որը մատուցում է ֆինանսական ծառայություններ, իրականացնում հասարակության դրամական ռեսուրսների մասնագիտացված կառավարում, ինչպես նաև բազմաթիվ այլ գործառույթներ (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. *Ժամանակակից բանկի հիմնական գործառույթները*[3]

Գծապատկերից երևում է, որ, ժամանակին համընթաց, բանկային գործառույթները բազմազանեցվում են, առաջանում են նոր գործառույթներ, որոնք ավելի շատ կապված են սպառողների պահանջմունքների և շուկայում տեղի ունեցող փոփոխությունների հետ: Զարգացած շուկաներում, ինչպիսին է, օրինակ՝ ԱՄՆ-ինը (աշխարհում ամենազարգացածն է համարվում), առևտրային բանկերը նույնիսկ այնպիսի գործառույթներ են կատարում, որոնք, ըստ էության, չեն համարվում ֆինանսական: Օրինակ՝ ամերիկյան

[2] Տե՛ս http://www.panarmenianbank.am/?id=313&lang=am

[3] Պ. Ռոուզը իր «Բանկային մենեջմենթ» գրքում մանրամասն ներկայացնում է բանկային գործառույթները, ինչպես նաև արդի տնտեսական պայմաններում առևտրային բանկերի նոր ուղղություններում առաջարկվող ֆինանսական ծառայությունները և նոր գործառնությունները:

Umpqua[4] բանկն իր սպառողներին առաջարկում է Umpqua Life ծառայությունը, որն ուղղված է հաճախորդների հանգստի, տարբեր ոչ բանկային միջոցառումների կազմակերպմանը[5]: Ստանձնելով նոր գործառույթ՝ բանկը 15 տարվա ընթացքում ակտիվները 140 մլն ԱՄՆ դոլարից հասցրեց մինչև 22 մլրդ-ի[6]: Այսպիսով՝ բանկերը չպետք է իրենց սահմանափակեն միայն դասական բանկային երկու գործառույթներն իրականացնելով, պետք է փորձեն նոր ֆինանսական գործիքներ՝ սպառողների ավելի լայն շրջանակ սպասարկելու համար:

Այժմ վերլուծենք ՀՀ բանկային համակարգում առաջարկվող ժամանակակից ֆինանսական ծառայությունները: Նախևառաջ ներկայացնենք այս ոլորտում ամենատարածված երկու ֆինանսական գործիքների՝ ավանդների և վարկերի զարգացման արդի ուղղությունները:

Աղյուսակ 2

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից առաջարկվող ժամանակակից ավանդատեսակները 2015 թվականի առաջին եռամսյակի տվյալներով[7]

Բանկի անվանումը	*Ավանդի տեսակը*	*Ավանդի ներդրման պայմանները*
Զարգացման հայկական բանկ ԲԲԸ	Կայուն զամբյուղ	Տվյալ ավանդատեսակը թույլ կտա արտարժութային փոխարժեքների տատանման պարագայում ստանալ կայուն և բարձր եկամուտ: Բանկն առաջարկում է մեկ ավանդային պայմանագրի շրջանակներում կազմել ԱՄՆ դոլար – ՀՀ դրամ – եվրո արժույթներից բաղկացած ավանդային զամբյուղ՝ պահպանելով հետևյալ կանոնները. ա) ԱՄՆ դոլար – ՀՀ դրամ – եվրո, բ) ԱՄՆ դոլար – ՀՀ դրամ, գ) եվրո – ՀՀ դրամ: Զամբյուղում յուրաքանչյուր արժույթով ներդրված ավանդի տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ պետք է կազմի առնվազն 25%: Ավանդի ժամկետը 1 տարի է, իսկ տարեկան տոկոսադրույքը. 14%՝ ՀՀ դրամի, 9%՝ ԱՄՆ դոլարի, 7%՝ եվրոյի դեպքում:
Անելիք բանկ ՓԲԸ	Թեժ ամառ	Ավանդի ներդրման նվազագույն գումարը 100 հազ. դրամ կամ 200 դոլար է: Ավանդի ներդրման ժամկետը 1 տարի է, ՀՀ դրամի դեպքում՝ 18,5%, դոլարի դեպքում՝ 8,5% տարեկան տոկոսադրույքով:
Պրոմեթեյ բանկ ՓԲԸ	Ավանդ ՌԴ ռուբլով	Ավանդը կարելի է ներդնել 91–180 օր ժամկետով՝ տարեկան 8% անվանական տոկոսադրույքով: Ավանդի ներդրման նվազագույն գումարը 100 հազ. ռուբլի է, որը կարելի համալրել նվազագույնը 50 հազ. ռուբլով, սակայն համալրումների հանրագումարը չի կարող գերազանցել ավանդի ներդրման սկզբնական գումարը:

Ուսումնասիրության համար ընտրվել են վերջին եռամսյակում առևտրային բանկերի կողմից առաջարկվող նոր ավանդատեսակներ:

---

[4] Գործառույթների ընդլայնման շնորհիվ բանկը, 1994 թվականից սկսած, սպասարկում է սպառողների լայն շրջանակ՝ առաջարկելով ինչպես բանկային նոր գործառնություններ, այնպես էլ ոչ բանկային ծառայություններ: 2008 թվականին ամերիկյան հանրահայտ Fortune ամսագրում Umpqua բանկը զբաղեցնում էր 13-րդ տեղը 100 լավագույն ընկերությունների շարքում: Ներկայումս բանկը խոշորագույնն է ԱՄՆ-ի Օրեգոն նահանգում՝ ունենալով 394 մասնաճյուղ և 22 մլրդ ակտիվներ:

[5] Տե՛ս https://www.umpquabank.com/

[6] Տե՛ս **Matthew K.,** As deal closes, Umpqua readies for $22 billion challenge. *Portland Business Journal.* Retrieved 21 April, 2014.

[7] Աղյուսակը կազմվել է 2015 թ. մարտ ամսվա ընթացքում ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի համապատասխան մասնագետների հետ հեռախոսազրույցների և բանկերի պաշտոնական համացանցային կայքերում տեղադրված տեղեկությունների հիման վրա:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ, որպես ժամանակակից ավանդատեսակ, Հայաստանում դիտարկվում են բազմարժութային ավանդների տեսակները (ավանդի գործողության ժամկետում մեկ արժույթից մյուսին անցումը՝ առանց պայմանագրային փոփոխությունների), ինչը առաջ է եկել 2014 թ. դեկտեմբեր ամսին արժութային շուկայում դոլարի պահանջարկի մեծացմամբ և արտարժույթի ժամանակավոր պակասուրդով:

Աղյուսակ 3

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից առաջարկվող ժամանակակից վարկատեսակները 2015 թվականի առաջին եռամսյակի տվյալներով

Ժամանակակից գործառնություններ	*ՀՀ բանկային համակարգ*	*Արտասահմանյան բանկային համակարգ*
Երկարաժամկետ հիպոթեքային վարկեր	*ԿՏԲ –Հայաստան բանկ ՓԲԸ.* Բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերման հիպոթեքային վարկերի առավելագույն ժամկետը՝ 35 տարի, նվազագույն տոկոսադրույքը՝ 10%: *Ամերիաբանկ ՓԲԸ.* Բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերման հիպոթեքային վարկերի առավելագույն ժամկետը՝ 10 տարի, նվազագույն տոկոսադրույքը՝ 13%: *Կոնվերս բանկ ՓԲԸ.* Բնակարանի ձեռքբերման առավելագույն ժամկետը՝ 20 տարի, նվազագույն տոկոսադրույքը՝ Կոնվերս բանկի հաշվարկային տոկոսադրույք + 5.5%: 01.05.2015 թ. դրությամբ Կոնվերս բանկի հաշվարկային տոկոսադրույքը 5.5% է:	Համաձայն bankrate.com կայքի տվյալների՝ ԱՄՆ-ում հիպոթեքային վարկերը տրամադրվում են 20% կանխավճարի դեպքում մինչև 30 տարի ժամկետով, 3.91–4.19% տարեկան տոկոսադրույքով: Համաձայն Գերմանիայի ԿԲ տվյալների՝ Գերմանիայում հիպոթեքային վարկերը տրամադրվում են 20% կանխավճարի դեպքում մինչև 30 տարի ժամկետով, 3–5% տարեկան տոկոսադրույքով:
Արտահանման ֆակտորինգ (ներկայումս իրականացվում է միայն Ամերիաբանկի կողմից)	Դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորում, որի դեպքում ծառայության (ապրանքի վաճառքը և կազմակերպումը) բանկը գրանցված է և գտնվում է միևնույն երկրում, իսկ գնորդն այլ երկրի ռեզիդենտ է: Առավելություններ՝ • գնորդներին մինչև 180 օր վճարման հետաձգման հնարավորության ընձեռում • վաճառքի ծավալների կտրուկ աճ • չվճարման ռիսկի նվազեցում	Արտահանման ֆակտորինգը եվրոպական երկրներում առավել տարածված է Չեխիայի Հանրապետությունում և Ֆրանսիայում: Ֆակտորինգի տվյալ տեսակը տարածված է նաև ԱՄՆ-ում և Հնդկաստանում:
Ֆինանսական լիզինգ	*Ագրոլիզինգ ԼԿԿ ՍՊԸ.* Լիզինգի գումարի չափը՝ 500.000-50.000.000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ, ժամկետը՝ 12–60 ամիս, 16–20% տարեկան տոկոսադրույքով, կանխավճարի նվազագույն չափը՝ 0–50%: *ԱԿԲԱ լիզինգ ՈՒԿԿ ՓԲԸ.* Լիզինգի գումարի չափը՝մինչև 600.000.000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ, ժամկետը՝ 3–84 ամիս, 8–20% տարեկան տոկոսադրույքով, կանխավճարի նվազագույն չափը՝ 0–50%:	Տեխնիկայի լիզինգը ԱՄՆ-ում տրվում է մինչև 15 տարի ժամկետով՝ սկսած 3.8%-ից: 2013 թ. ԱՄՆ-ում տրվել է 280,0 մլրդ դոլարի սարքավորումների լիզինգ:

Աղյուսակ 3-ում ներկայացված են վերջին տարիներին ՀՀ ֆինանսական շուկայում նոր վարկային ծառայություններ, որոնք արագ զարգանում են նաև միջազգային ֆինանսական շուկաներում:

Աղյուսակից երևում է, որ որոշ առևտրային բանկեր Հայաստանում առաջարկում են *լողացող* տոկոսադրույքով հիպոթեքային վարկեր, ընդ որում՝ իրենց սահմանած հաշվարկային տոկոսադրույքներով: Միջազգային ասպարեզում լողացող տոկոսադրույքով հիպոթեքային վարկերի տրամադրումը փորձված տարբերակ է (օրինակ՝ Եվրոպայում հիպոթեքային վարկերի զգալի մասը տրամադրվում է ԼԻԲՈՐ լողացող տոկոսադրույքով):

Հայաստանի լիզինգի շուկայի համեմատությամբ, որը կազմում է վարկային ներդրումների 5%-ը, ԱՄՆ-ում, համաձայն ԱՄՆ դրամական զանգվածի պետական կարգավորման ծառայության տվյալների, 2013 թվականին լիզինգի բաժինը ներդրումներում 31.8% է:

Այժմ ներկայացնենք պլաստիկ քարտերի շուկայի հակիրճ վերլուծությունը:

Աղյուսակ 4

ՀՀ առևտրային բանկերի կողմից առաջարկվող պլաստիկ քարտերը [8]

Քարտի տեսակը	*Քանակը (հատ)*	*Քարտային շուկայում մասնաբաժինը (%)*
Visa	711,211	43,85
Arca	546,509	33,65
Master card	320,653	19,74
Միջազգային այլ քարտեր (Amex, Diners Club))	44,648	2,75

Հայաստանում 2011 թվականից ԱԿԲԱ Կրեդիտ–Ագրիկոլ բանկի կողմից ներդրվել են American Express քարտերը՝ American Express gold և American Express blue քարտատեսակներով: Այս քարտերն օժտված են մի շարք առավելություններով՝ American Express gold՝ ճանապարհորդության ընթացքում անհարմարություններից ապահովագրում, ճանապարհորդության ընթացքում բժշկական ծախսերի ապահովագրություն մինչև 50.000 ԱՄՆ դոլարի չափով, գնումների ապահովագրում: American Express blue քարտի առավելությունները հետևյալն են՝ ֆինանսական ճկունություն, cashback, օժանդակություն ճանապարհին: Տվյալ քարտատեսակները տրամադրում են նաև մինչև 2% cashback Հայաստանի լավագույն սուպերմարկետներում:

2013 թվականից Արարատբանկի կողմից ներդրվել է Diners Club վճարային համակարգը: Բանկն առաջարկում է երկու տեսակի պլաստիկ քարտեր՝ Diners Club Young Professional և Diners Club Super Premium: Diners Club Super Premium քարտը նախատեսված է հաճախակի գնումներ կատարող և ճամփորդող հաճախորդների համար: Diners Club Young Professional քարտը կայացած մասնագետների և երիտասարդ ղեկավարների համար է: Հարկ է նշել նաև, որ Diners Club-ը միջազգային առաջին վճարային համակարգն է, որը մուտք գործեց ԽՍՀՄ. 1969 թվականին ընկերությունը պայմանագիր կնքեց «Ինտուրիստի» հետ, որը սպասարկում էր Diners Club-ի քարտերը «Բերյոզկա» վալյուտային խանութներում, Մոսկվայի և Լենինգրադի ռեստորաններում ու հյուրանոցներում: Իհարկե, խոսքը միայն արտասահ-

[8] Աղյուսակը կազմվել է՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԲ հրապարակած տվյալները:

մանյան բանկերի թողարկած քարտերի մասին է. ԽՍՀՄ-ը նման քարտեր չէր թողարկում: Այս առումով, Ռուսաստանը բավական առաջ ընկավ. Diners Club Russia-ն հիմնադրվեց արդեն 1995 թվականին, իսկ հաջորդ տարի թողարկվեց առաջին քարտը[9]:

Աղյուսակ 5

Ամերիաբանկ ՓԲԸ-ի կողմից մատուցվող արդի բանկային ծառայությունները[10]

Շուկայում ներդրման ժամկետ	*Արդյունքի (պրոդուկտ)/ծառայության անվանում*
25.05.2010	Կառուցվածքային ավանդ (արդյունքը ներկայումս չի գործում)՝ միջազգային շուկաներում նավթի, ոսկու, Դոու-Ջոնսի ինդեքսի և այլ ակտիվների գների փոփոխությունից գումարներ վաստակելու հնարավորությամբ
10.11.2010	• Գնման պատվերի ֆինանսավորում • Դասական ֆակտորինգ
27.01.2011	Ոսկով մետաղական հաշիվներ՝ 999.9 հարգի ոսկով առարկայա-զուրկ մետաղական հաշիվների բացում և վարում
11.02.2011	Ոսկու կառուցվածքային ավանդ (արդյունքը ներկայումս չի գործում)
02.03.2011	Անհատական պահատուփեր
13.04.2011	Բրոքերային գործառնությունների AMERIA GLOBAL TRADING և WEB TRADER համակարգեր
21.04.2011	Հեռախոսային 1-ին բանկային հավելվածը App Store-ում
28.04.2011	Մաքսային քարտ՝ ՀՀ բոլոր մաքսակետերում անկանխիկ մաքսային վճարումների իրականացման հնարավորությամբ
08.06.2011	Ներդրումային վարկ ֆիզիկական անձանց համար
29.06.2011	Էքսպրես լիզինգ
01.11.2011	Խնայողական ավանդ
18.11.2011	• Ավանդով ապահովված հիպոթեքային վարկ • Այլ անշարժ գույքի գրավով ապահովված վարկ • Լրացուցիչ գրավով ապահովված հիպոթեքային վարկ [11]
19.12.2011	Visa Gift քարտ (Նվեր քարտ)
21.06.2012	«Ամերիաբանկ-Երևան Սիթի» համատեղ վճարային քարտ
19.09.2012	Չիպային վճարային քարտեր
30.05.2013	«Ամերիա» ավանդ՝ ավանդ պայմանների ինքնուրույն ընտրությամբ
05.11.2013	«Ամերիաբանկ-Յուքոմ» համատեղ վճարային քարտ
20.11.2013	VISA քարտերով ինտերնետ-էքվայրինգ (vPOS/virtual POS)
05.05.2014	24/7 կոնտակտային կենտրոն
26.08.2014	AmeriaToken մեկանգամյա գաղտնաբառ գեներացնող հեռա-խոսային հավելված
10.09.2014	Բրոքերային գործարքներ MetaTrader4 առևտրային տերմինալի միջոցով
14.11.2014	«Ամերիա Պերսոնա» «խելացի» ծառայությունների փաթեթ

[9] Տե՛ս http://168.am/2013/12/05/306664.html

[10] Աղյուսակը կազմվել է՝ հիմք ընդունելով Ամերիաբանկ ՓԲԸ պաշտոնական համացանցային կայքի տվյալները և նույն բանկում կատարված հետազոտությունները:

[11] Տվյալ արդյունքները հետագայում ենթարկվել են փոփոխության և ներկայումս կարող են հանդես գալ այլ տարբերակներով:

Միջազգային ասպարեզում ամենատարածվածը American Express, Diners club, Master card, Union pay, Visa վճարային համակարգերն են: Գործարքների թիվը կազմել է 195.56 միլիարդ ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համեմատությամբ աճել է 14.4%-ով): Վերլուծությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր 100 դոլարի գնումներից 55 դոլարինը կատարվում են Visa և Master card-ի քարտատեսակներով (Հայաստանում՝ 78 դոլար): Union Pay վճարային համակարգով 2014 թվականի գնումները կազմում են 38 դոլար յուրաքանչյուր 100 դոլարի գնումների դեպքում (նախորդ տարվա համեմատությամբ աճել է 5 դոլարով):

Վերլուծվել են Ամերիաբանկ ՓԲԸ-ի՝ որպես բանկային ոլորտում արդի միտումներին արագ արձագանքող և ժամանակակից բանկային գործառնություններով հարուստ բանկի վերջին 5 տարիների ընթացքում ներդրված ծառայություններն ըստ ներդրման ժամանակագրական բաշխվածության:

Ինչպես երևում է աղյուսակ 5-ի տվյալներից, 5 տարվա ընթացքում բանկում ներդրվել են տարատեսակ նոր ծառայություններ, և բանկը ստանձնել է ժամանակակից գործառույթներ և գործառնություններ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ բանկային համակարգում վերջին տարիներին դիտվում է նոր ծառայությունների ներդրման ակտիվ քաղաքականություն: Ակնհայտ է, որ տարեցտարի ՀՀ առևտրային բանկերը նորացնում են ծառայությունների փաթեթը՝ սպառողներին առաջարկելով ավելի մատչելի և հարմար բանկային ծառայություններ: Ընդհանուր առմամբ, կարելի է արձանագրել, որ ՀՀ բանկային համակարգը գործառնությունների բազմազանության առումով ունի միջինից բարձր զարգացման մակարդակ, սակայն միևնույն ժամանակ պետք է նկատել, որ տարատեսակ բանկային ծառայություններ, որոնք արդյունավետ են գործում ԱՊՀ երկրների և Եվրոպայի բանկային հաստատություններում, Հայաստանում կիրառություն չունեն: Դա ավելի ակնառու դարձնելու համար ներկայացնենք միջազգային Raiffeisen բանկի[12] գործառնությունները (աղյուսակ 6):

Կատարելով համեմատական վերլուծություն ՀՀ-ում գործող առևտրային բանկերի և Raiffeisen բանկի միջև՝ տեսնում ենք, որ շատ ֆինանսական գործառնություններ և ծառայություններ Հայաստանում դեռևս չկան: Դրանցից կարելի է առանձնացնել հատկապես հեջավորման գործիքների բացակայությունը, ինչի անհրաժեշտությունը ՀՀ ֆինանսական համակարգում անվիճելի է:

Միջազգային առևտրային բանկերի գործառույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջիններս նաև կենսաթոշակային ֆոնդի կառավարման գործառույթ են կատարում, սակայն Հայաստանում, պայմանավորված մեր շուկայի առանձնահատկություններով, կենսաթոշակային ֆոնդերի կառավարումն իրականացվում է առանձին մասնագիտացված կառույցների կողմից:

---

[12] Raiffeisen-ը Ավստրիայի երրորդ խոշորագույն բանկն է: 2013 թվականին The Economics ամսագիրն այն համարել էր աշխարհի ամենաժամանակակից բանկային գործառնություններ ունեցող ֆինանսական ինստիտուտներից մեկը:

Աղյուսակ 6

Միջազգային Raiffeisen բանկի հիմնական գործառնությունները[13]

Ծառայության անվանումը	*Ծառայության հակիրճ նկարագրությունը*
Ֆինանսավորում	Կորպորատիվ, կառուցվածքային ֆինանսավորում, պարտատոմսերի թողարկման միջոցով ֆինանսավորում, ֆակտորինգ
Լիզինգ	Վաճառողի գույքը ձեռք բերելու ֆինանսավորում (vendor finance), սարքավորումների լիզինգ, ավիատեխնիկայի լիզինգ, անշարժ գույքի լիզինգ
Ներդրումներ	Արժեթղթեր, դրամային շուկայում ներդրումներ, հատուկ լուծումներ
Հեջավորում	Արտարժույթի, տոկոսադրույքի հեջավորում
Առևտրի և արտահանման ֆինանսավորում	Արտահանման ֆինանսավորում, ակրեդիտիվ, երաշխիքներ
Ներդրումային բանկինգ	Սեփական կապիտալի շուկաներ, միաձուլումներ, սեփականաշնորհումներ, ակտիվների հիման վրա կորպորատիվ հաճախորդների ֆինանսավորումներ, ինչպես նաև բանկերի համար սինդիկացված վարկեր
Կանխիկի կառավարում	Հաշիվների, փոխանցումների, կենտրոնացված իրացվելիության կառավարման (cash pooling) ծառայություններ ֆինանսական կառույցների համար
Վճարահաշվարկային գործառնություններ	Քլիրինգի իրականացում, SWIFT և այլ փոխանցումներ
Արժեթղթերի և դեպոզիտար ծառայություններ	Ֆոնդերի կառավարում, բրոքերային ծառայություններ, դեպոզիտար ծառայություններ
Քարտային գործառնություններ	Միջազգային և կորպորատիվ քարտերի թողարկում

Ներկայացնենք բանկերի այն նոր գործառույթները և ծառայությունները, որոնք կարող են կիրառվել ՀՀ բանկային համակարգում և բարելավել առևտրային բանկերի ծառայությունների որակը: Յուրաքանչյուր ժամանակակից բանկ իր մրցակցային դիրքերը պահպանելու և հասարակական պահանջները բարձր որակով բավարարելու համար պետք է յուրացնի նոր դերեր: Այսպես՝

Աղյուսակ 7

Ժամանակակից բանկի նոր դերերը

Անվանում	*Նկարագրություն*
Միջնորդի դեր	Ներմուծող և արտահանող կազմակերպությունների բիզնես գործընթացներում միջնորդում (ինկասո, ակրեդիտիվ, փոխանցումներ), արագ դրամական փոխանցումներ, նոր ճկուն հնարավորություններով վարկային և ավանդային արդյունքներ, բրոքերային գործառնություններ
Վճարումների իրականացման դեր	Հաճախորդների հանձնարարությամբ ապրանքների ու ծառայությունների դիմաց նոր, առավել հարմարավետ մեխանիզմներով վճարումներ
Երաշխավորի դեր	Հաճախորդների գործարքների ոչ վարկային ֆինանսավորում (ակրեդիտիվներ, երաշխիքներ, գնման պատվերի ֆինանսավորում)
Հավատարմագրային (trust) գործակալի դեր	Հաճախորդների ակտիվների պահպանություն և կառավարում
Բաժանորդագրային (underwriting) գործակալի դեր	Հաճախորդի հանձնարարությամբ արժեթղթի թողարկում, տեղաբաշխում և մարում

[13] Կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով http://www.rbinternational.com կայքի ծառայություններ (products) բաժինը:

Եթե մեկ տասնամյակ առաջ վարկային գործառնությունների ժամանակակից մեթոդներից էին համարվում կոնտոկորենտային վարկերի տրամադրումը, վարկային գիծը կամ հիպոթեքային վարկերը[14], ապա ներկայումս առևտրային բանկերը տրամադրում են ներմուծման-արտահանման վարկեր, քարտային նոր տեսակի վարկեր, գործարարության տարածքների լիզինգ և այլն:

Թեպետ վերջին տասնամյակում բանկային համակարգում նկատվում է նոր ծառայությունների բազմազանեցում, սակայն դա բավարար չէ ֆինանսական ծառայությունների շուկան բարձր մակարդակի հասցնելու համար, և բանկային համակարգի զարգացման ներքին հիմնախնդիրներից է մնում ժամանակակից բանկային գործառնությունների բացակայությունը:

Հիմնախնդրի լուծման առաջնահերթ քայլերից են բանկերի կապիտալացման մակարդակի բարձրացումը, բնակչության և ներդրողների (այդ թվում՝ օտարերկրյա) վստահության ապահովումը, ռիսկերի կառավարման, վերահսկողության որակի բարձրացումը:

Բանկերի կապիտալացման ցածր մակարդակը խոչընդոտում է դրանց գործառութային զարգացմանը, սահմանափակում կառավարչական տեխնոլոգիաների, ժամանակակից բանկային ծառայությունների ներդրումը, բարձրացնում է բանկային գործունեության և ֆինանսական շուկայում մրցակցության մեծացման հետ կապված ռիսկերը[15]:

Բանկային համակարգի զարգացման հաջորդ քայլը ժամանակակից գործառնությունների ներդրումն է ՀՀ ֆինանսական շուկայում, որը կամրացնի տնտեսության իրական հատվածի և բանկային համակարգի միջև կապը, կբավարարի սպառողների պահանջմունքները, ինչը կհանգեցնի ինչպես մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման, այնպես էլ սպառողների կարիքների բավարարման ավելի բարձր մակարդակի: Ներկայումս միջազգային ֆինանսական շուկաներում առևտրային բանկերն առաջարկում են ծառայություններ, որոնք ՀՀ բանկային համակարգում դեռևս հասանելի չեն: Առանձնացնենք դրանցից մի քանիսը.

- Լողացող տոկոսադրույքով ավանդներ. բանկերը կկարողանան խուսափել արտարժութային ռիսկից, իսկ հաճախորդները ֆինանսական ներդրման գործիքից օգտվելու լրացուցիչ հնարավորություն կստանան:
- Ֆորֆեյթինգ արտահանողների վարկավորման առանձնահատուկ գործիք է, որը հաճախ կիրառվում է միջառևտրային հարաբերություններում[16]:
- Գործառնական լիզինգ. զարգացած երկրներում բանկային գործառնությունների անբաժան մասնիկը և տնտեսության մրցակցության մակարդակի բարձրացման խթաններից մեկը, ինչպես նաև առևտրային բանկերի լրացուցիչ եկամտի աղբյուր է:

---

[14] Տե՛ս **Тагирбекова К.,** Основы банковской деятельности, Издательский дом «Инфра-М», М., 2003, էջ 277:

[15] Տե՛ս **Տ. Սարգսյան,** Ֆինանսական համակարգը և ֆինանսական բարեփոխումները ԱՊՀ երկրներում, Եր., 21-րդ ԴԱՐ, թիվ 1 (11), 2006, էջ 11:

[16] Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2015 թ. հունվարին ՀՀ է ներմուծվել 196.9 մլն ԱՄՆ դոլարի չափով ապրանք, արտահանվել՝ 75.6 մլն ԱՄՆ դոլարի չափով: ՀՀ Կառավարությունը խրախուսում է արտահանումը, ինչը տնտեսական աճի և կայունության կարևոր պայման է:

- Վարկեր հեռախոսազանգերի միջոցով. վարկային գործառնությունը բանկերի ակտիվային գործառնություններում գերակշիռ մաս է կազմում, ուստի սպառողների և բանկերի համար առավել հարմար վարկավորման մեխանիզմները ժամանակակից բանկերի համար առաջնային լուծման խնդիր են:
- Ինտերնետ-բանկի ծառայությունների լայն շրջանակ. դեռևս մեկ տասնամյակ առաջ համացանցի միջոցով բանկային ծառայությունների մատուցումը իրատեսական չէր, սակայն այսօր դա ոչ միայն իրականություն է, այլև անփոխարինելի անհրաժեշտություն: Օրինակ՝ ՌԴ Տինկոֆ բանկն իր ծառայությունները մատուցում է միայն համացանցային եղանակով[17]: Մի շարք միջազգային բանկեր ևս՝ Fibank[18], ParkBank[19], հաճախորդին են ներկայանում վիրտուալ մասնաճյուղերով:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ բանկերի վճարահաշվարկային գործառույթը Հայաստանում դանդաղ է զարգանում, քանի որ բանկային քարտերը Հայաստանում իրենց բուն գործառույթը լիովին չեն կատարում (անկանխիկ գումարների տնօրինում՝ վճարումներ, գնումներ), դրանք զուտ գումարի կանխիկացման գործիք են: Պատճառները բազում են. տեխնիկական և տեխնոլոգիական թերություններ, շուկայի ենթակառուցվածքների թերհագեցում, առևտրային կետերի խրախուսման ծրագրերի պակաս, սպառողների՝ քարտային վճարումների առավելություններին անհիրազեկություն և այլն:

Զարգացող երկրներում փոքր բանկերն առավել խոշորների մրցակցությանը դիմակայելու նպատակով հաճախ ընտրում են խորշային գործառույթներ՝ սպասարկելով միայն որոշ հատվածների կարիքները: Այս մոտեցումը թույլ է տալիս մասնագիտանալ որոշակի ուղղությամբ՝ ստեղծելով մրցակցային առավելություն, ներկայանալով հաճախորդին բարձր մակարդակով: Սակայն հաշվի առնելով ՀՀ բանկային համակարգում տեղի ունեցած վերջին փոփոխությունները, մասնավորապես՝ ՀՀ բանկերի նվազագույն կապիտալի չափի մեծացումը և արտարժույթով ավանդների պահուստավորման նորմատիվների փոփոխությունը[20], ենթադրվում են փոքր բանկերի միաձուլումներ, ինչը կհանգեցնի համապատասխան գործառույթի կորստի կամ դրա դերի ժամանակավոր նվազման:

Հայաստանի 20-ամյա տնտեսական փոխակերպման արդյունքում այդպես էլ չհաջողվեց ստեղծել արդյունավետ ֆինանսական համակարգ, որը ի վիճակի լինի ամբողջ ծավալով իրականացնել որոշակի գործառույթներ: Պատճառը, թերևս, բանկային համակարգի շուրջ կենտրոնացումն էր և մյուս ֆինանսական կառույցների զարգացմանն ուղղված միջոցառումների սահ-

---

[17] Տե՛ս https://www.tcsbank.ru/
[18] Տե՛ս https://www.fibank.bg/en/
[19] Տե՛ս https://www.parkbank.com/
[20] 2014 թ. դեկտեմբերի վերջին ԿԲ-ն խստացրել է պահուստավորման նորմատիվները. 12%-ից նախ հասցրել է 24%-ի, ապա սահմանել 20%:

Համաձայն 25.03.15 թ. ՀՀ ԿԲ ֆինանսական համակարգի կայունության և զարգացման վարչության պետ Անդրանիկ Գրիգորյանի՝ tert.am լրատվական կայքին տրված հարցազրույցում արտահայտված տեսակետի՝ փոփոխությունը ՀՀ-ում գործող բանկերին հնարավորություն կտա հետագայում, տնտեսական աճի արագացման տեմպերին զուգընթաց, ավելի կայուն սպասարկելու տնտեսական գործընթացները և պոտենցիալ տնտեսական աճը:

մանափակությունը[21]: Վերջին շրջանում առևտրային բանկերն ամրապնդել են իրենց դիրքերը արժեթղթերի շուկայում՝ որպես կարևորագույն գործընկեր: Արժեթղթերի շուկայում առևտրային բանկերի ակտիվ դիլինգային գործառնությունները թույլ են տալիս բազմազանեցնել մի շարք ֆինանսական ռիսկեր: Սակայն, կատարելով համեմատական վերլուծություն, տեսնում ենք, որ ՀՀ բանկային համակարգում արժեթղթերի շուկայում ներդրումային գործառնությունները փոքր ծավալ ունեն: Օրինակ՝ ԱՄՆ-ի բանկային համակարգում ակտիվային գործառնությունների մոտ 20%-ը արժեթղթերում ներդրումներն են (որից՝ պետական արժեթղթերի մասնաբաժինը կազմում է 1%, հիպոթեքային արժեթղթերինը՝ 10%, այլ ներդրումային արժեթղթերինը՝ 9%)[22], ՀՀ համապատասխան համակարգում դրանք ընդամենը 7%[23] են: Հայաստանում պետության կողմից առևտրային բանկերի՝ բաց բաժնետիրական ընկերությունների կազմակերպաիրավական տարբերակով գործելու խթանիչ միջոցառումների իրականացումը կարող է ավելի ակտիվացնել բանկերի մուտքը ֆինանսական շուկաներ: Անշուշտ, տվյալ խնդիրը կապված է նաև զարգացած շուկաներում այլ ֆինանսական գործիքների ավելի ցածր եկամտաբերության հետ (օրինակ՝ վարկերի տոկոսադրույքները ՀՀ-ում 3 անգամ ավելի բարձր են, քան ԵՄ-ում կամ ԱՄՆ-ում), և միջազգային բանկերին ձեռնտու է ակտիվների մի մասը պահել արժեթղթերի տեսքով՝ հավելյալ եկամուտ ստանալու ակնկալիքով: ՀՀ բանկային համակարգում ներդրումային գործառույթի զարգացման այլ խոչընդոտ է ֆոնդային բորսայի թերզարգացումը: Հայաստանում ներդրումային գործառնություններով առանձնանում է Արմսվիսբանկ ՓԲԸ-ն: Վերջինս 2014 թվականին մշակել է նոր ծառայություն, համաձայն որի՝ բանկի հաճախորդներին հնարավորություն է տրվում ամսական վճարումներ կատարելու, որոնց հաշվին բանկը կատարում է ներդրումներ պետական երկարաժամկետ պարտատոմսերում, կառավարում միջոցները՝ հաճախորդների համար ապահովելով 15-17% եկամտաբերություն, ինչը ավանդների՝ 2014 թ. բանկերի սահմանած միջին տոկոսադրույքից ավելի բարձր է:

---

[21] Տե՛ս **Сандоян Э.,** Проблемы модернизации системы банковского регулирования в Армении: Монография, Ер. , Изд-во РАУ, РА, 2007, էջ 6:

[22] Տե՛ս **Buehler K., Noteboom P., Williams D.,** Between deluge and drought: The future of US Bank liquidity and funding, McKinsey&Company, July, 2013, էջ 8:

[23] Համաձայն ՀՀ ԿԲ 2014 թ. չորրորդ եռամսյակի տվյալների՝ 2014 թ. վերջի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ակտիվների 7%-ը ներդրումներ են պետական արժեթղթերում: Նմանատիպ ներդրումները ՀՀ-ում հիմնականում կրում են իրացվելիության մակարդակի պահպանման բնույթ: ՀՀ-ում գործող բանկերի՝ արժեթղթերում ներդրումները ընդհանուր ակտիվների չնչին մասն են կազմում:

АРАМ МХИТАРЯН
Доцент кафедры
,,Банковского дела и страхования" АГЭУ,
кандидат экономических наук

Современные преобразования основных функций и операций банков.- В статье рассматриваются функции коммерческих банков, а также экономические условия новых ролей банков. Классификация современных банковских операций, порядок их предоставления на сегодняшний момент очень актуальны, т. к. на рынке банковских услуг появляются новые, еще не распространенные среди населения, банковские продукты.

Ключевые слова: *финансовая система, банковская деятельность, современные банки, банковские процедуры, кредиты, ценные бумаги.*

ARAM MKHITARYAN
Associate Professor at the Chair of
"Banking and Insurance" at ASUE,
PhD in Economics

Modern Transformations of Basic Functions and Operations of Banks.- In the given article functions of commercial banks and also economic conditions of new roles of banks are considered. Classification of modern bank operations, the order of their granting is very actual for today since in the market of banking services there are new, yet not well - spread among the population, banking products.

Key Words: *financial system, banking activity, modern banks, banking procedures, credits, securities*

ԳՅՈՒԼԼՈ ԱՐԱԲՅԱՆ
ՀՊՏՀ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի հայցորդ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Հանրային հատվածում ֆինանսական արդյունքների վերահսկողության արդյունավետության աստիճանն էապես բարձրանում է, երբ իրականացվում է եկամուտների և ծախսերի ձևավորման կառավարչական հաշվառում: Այս պարագայում կազմակերպվում է օպերատիվ հաշվառում, կատարվում է ֆինանսական արդյունքների նախանշված մեծություններից շեղումների բացահայտում՝ հենց ձևավորման պահին, որն անուղղակիորեն կանխարգելում է բյուջետային կարգապահության խախտումները՝ տեղեկատվական հիմք ստեղծելով ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված կառավարչական որոշումների կայացման համար: Առաջարկվում է ծախսերի և եկամուտների նախահաշիվներից շեղումների հաշվառման համակարգ, որը լրացնում է հանրային հատվածում ֆինանսական արդյունքների վերահսկողության մեթոդաբանության գործիքակազմը:

Հիմնաբառեր. *նորմատիվային հաշվառում, նախահաշվից շեղումների հաշվառում, ֆինանսական արդյունքների հաշվառում, ֆինանսական վերահսկողություն*

Հանրային հատվածում ֆինանսական արդյունքների շեղումների բացահայտումները չեն հաշվառվում հաշվապահական հաշիվներով և ընդհանրապես դուրս են մնում հաշվապահական հաշվառման համակարգից: Այդ խնդիրները հիմնականում իրենց լուծումն են ստանում ֆինանսական վերահսկողության համակարգում, երբ հանրային ոլորտի կազմակերպություններում բացահայտվում են բյուջետային կարգապահության խախտումներն ըստ

եկամուտների ձևավորման աղբյուրների և ծախսային ուղղությունների[1]: Սակայն այս դեպքում էապես նվազում է ֆինանսական վերահսկողության արդյունավետությունը, քանի որ մի կողմից՝ շեղումների բացահայտումը կատարվում է «ուշացած»՝ միայն ստուգումների պահին, մյուս կողմից՝ դրանց վերացման միջոցառումները հաճախ լինում են ժամանակավրեպ և ոչ տեղին:

Ֆինանսական վերահսկողության իրականացման տեղեկատվական ապահովվածության տեսանկյունից արդիականացված հաշվապահական հաշվառման հաշվային պլանը էական նշանակություն ունի, քանի որ այն, առաջին հերթին, կազմակերպության վրա ազդող իրադարձությունների և վերջինիս կողմից իրականացվող գործառնությունների փաստերի՝ հաշվապահական հաշվառման մեջ գրանցման և խմբավորման սխեմա է: Հաշվային պլանը կազմված է ըստ տնտեսական բովանդակության դասակարգված հաշիվներից և ներառում է 9 դասեր, հաշիվների խմբեր, առաջին կարգի (սինթետիկ) և երկրորդ կարգի հաշիվներ:

Նորմատիվային հաշվառման կազմակերպման նպատակով նախօրոք կազմվում են տնտեսավարման արդյունքների նորմաներ, որոնք ապահովում են առավելագույն արդյունավետություն: Փաստորեն, կազմակերպությունները ձգտում են ստանալ հաշվարկված նորմաներին համապատասխան փաստացի արդյունքներ, իսկ սահմանված նորմաներից շեղումները վկայում են տնտեսավարման թերացումների և դրանց հրատապ շտկման անհրաժեշտության մասին[2]:

Այս նպատակով հանրային հատվածի կազմակերպություններում առաջարկում ենք ներդնել կառավարչական նոր հաշիվներ՝ «Գործառնական գործունեությունից նախահաշվային հասույթներ», «Գործառնական գործունեության նախահաշվային հասույթներից շեղումներ», «Գործառնական գործունեությունից նախահաշվային ծախսումներ», «Գործառնական գործունեության նախահաշվային ծախսումներից շեղումներ»:

Ընդ որում, ավանդաբար 8-րդ դասի կառավարչական հաշիվները, թղթակցում են ծախսային 7-րդ դասի հաշիվների հետ: Մեր կարծիքով՝ այսօր պետք է վերանայել այդ մոտեցումը, քանի որ կառավարչական հաշվառման զարգացման միջազգային փորձը ցույց է տալիս, որ այն շուրջ մեկ տասնամյակ է, ինչ դուրս է եկել ինքնարժեքի կառավարման շրջանակներից և ներկայացնում է շահույթին, եկամուտներին, ֆինանսական արդյունքներին առնչվող կառավարչական որոշումների տեղեկատվություն: 8-րդ դասում մեր կողմից ներմուծվող հաշիվները կարող են թղթակցել հաշվային պլանի ցանկացած դասի հետ:

Առաջարկվող հաշիվները հնարավորություն են ստեղծում մինչև ֆինանսական վերահսկողության գործառույթների իրականացումը, արդեն իսկ հաշվապահական հաշվառման համակարգում օպերատիվ արձանագրելու բյուջետային կարգապահության շեղումները՝ հաշվառելով եկամուտների և ծախսերի գծով սահմանված նախահաշիվներից շեղումները (գծապատկեր 1): Ընդ որում, առաջարկվող հաշիվները կարող են ներկայացվել նաև 2-րդ կարգով՝ դրանով իսկ արձանագրելով ոչ միայն բացահայտված շեղումների չափը, այլև ուղղությունները:

---

[1] Տե՛ս **Маркиш Е.,** Становление и развитие финансового механизма функционирования бюджетных учреждений // Финансы и кредит, 2009, №34(370), էջ 3-8:

[2] Տե՛ս **Ա.Ճուղուրյան,** Կառավարչական հաշվառում, «Տնտեսագետ», Եր., 2006, էջ 95-96:

Այսպես՝ «Գործառնական գործունեության հասույթներից շեղումներ» հաշիվը առաջարկում ենք կիրառել 2-րդ կարգի հետևյալ ենթահաշիվներով՝ «Չփոխանակվող գործարքներից հասույթի շեղումներ պետության մակարդակով», «Չփոխանակվող գործարքներից հասույթի շեղումներ կազմակերպության մակարդակով», «Ծառայությունների մատուցումից, ապրանքների վաճառքների հասույթից շեղումներ»:

Համանման մոտեցում է առաջարկվում ցուցաբերել ծախսային նախահաշիվներից շեղումների տեղեկատվական հոսքերը հաշվառելիս՝ «Գործառնական գործունեության ծախսումներից շեղումներ» հաշիվը ներկայացնելով 2-րդ կարգի հետևյալ հաշիվներով. «Իրականացված ծրագրերի նախահաշվային ինքնարժեքից շեղումներ», «Իրացված արտադրանքի, ապրանքների, ծառայությունների նախահաշվային ինքնարժեքից շեղումներ», «Վարչական ծախսումների նախահաշվից շեղումներ» և այլն:



Գծապատկեր 1. *Ֆինանսական արդյունքների տեղեկատվական հոսքերի ամփոփման պատկերը*[3]

Հանրային ոլորտի գործունեությանն առնչվող նախահաշիվները սահմանվում են առաջիկա ժամանակահատվածի, օրինակ՝ հաջորդ տարվա համար: Երբեմն կազմվում են իրացման ենթակա հատուկ ծրագրերի նախահաշիվներ, որոնք նույնպես վերլուծվում են ըստ ծրագրի իրականացման ժամանակահատվածի: Այսպես՝ եթե ծրագրի իրագործումը պահանջում է երկու տարի, ապա նախահաշիվը կազմվում է երկու մասով՝ առաջին և երկրորդ տարվա համար:

[3] Կազմել է ատենախոսը:

Նախահաշիվների վերլուծության գործընթացը բաղկացած է երկու տարրից՝ պլանավորում և վերահսկողություն: Պլանավորումն ընդգրկում է ապագա համապատասխան նախահաշիվների կազմման գործընթացը: Կառավարման տարբեր մակարդակները պետք է ընդգրկվեն նախահաշվային պլանավորման աշխատանքներում՝ ըստ պատասխանատվության բնագավառների: Միջին և խոշոր կազմակերպություններում այդ գործընթացը կարող է բավական ժամանակ պահանջել, քանի որ գործարարության տարբեր ոլորտների նախահաշիվների համակարգման անհրաժեշտություն կառաջանա՝ համոզվելու համար դրանց լիարժեքության և կազմակերպության որդեգրած քաղաքականության ու նպատակների համապատասխանության մեջ[4]:

Վերահսկողությունը համապատասխան ժամանակահատվածի նախահաշվային ու փաստացի արդյունքների համեմատումն է: Նախահաշիվներից փաստացի արդյունքների յուրաքանչյուր էական շեղում ներկայացվում է կառավարման համապատասխան օղակին՝ անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկման համար:

Նախահաշվային վերահսկողության պարբերաշրջանի տարրերն են.

- *պլանավորում.* նախահաշվային վերահսկողությունն ապահովում է պլանավորման ճշգրիտ գործընթացը, քանի որ բացահայտում է առկա հիմնախնդիրները և դրանց լուծման քայլերը,
- *համակարգում.* միասնացվում են գործարարության տարբեր բաժինները, կազմվում է գլխավոր նախահաշիվը, կառավարիչներն իրենց պլանները կազմելիս հաշվի են առնում կազմակերպության ընդհանուր նպատակները,
- *հանձնարարում.* հիմնական նախահաշվի կազմումը հնարավորություն է ստեղծում հստակ կողմնորոշվելու ստանձնած տնտեսական քաղաքականության մեջ, որի վարման պատասխանատվությունը հանձն են առնում առանձին կառավարիչներ,
- *արդյունքների գնահատում.* նախահաշիվը ներկայացնում է նպատակ, որի իրագործումով գնահատվում է կառավարչի աշխատանքը,
- *համագործակցություն և շահադրդում.* նախահաշվի կազմումով համագործակցում են կառավարման վերին և ստորին օղակները, որը խրախուսում է կառավարիչներին՝ հասնելու նախանշված նպատակներին,
- *վերահսկողություն.* փաստացի և նախահաշվային արդյունքների մշտական համեմատումը բացահայտում է այն տեղամասերը, որոնք անհրաժեշտ է վերահսկել:

Մեր կարծիքով՝ ներկայումս նորմատիվային հաշվառումը հանրային կազմակերպություններում հարկ է վերածել ֆինանսական վերահսկողության համակարգի ենթամասի: Այնուամենայնիվ, կարևոր է ընդգծել այնպիսի գործոններ, որոնք առանձնացնում են նորմատիվային հաշվառումը նախահաշվային վերահսկողությունից: Նորմատիվային ծախսերը միասնացված են հաշվապահական հաշիվներում, մինչդեռ նախահաշիվները հաշվապահական համակարգից դուրս հաշվետվություններ են: Բացի այդ, նորմատիվային

---

[4] Տե՛ս **Саакян Т.,** Основные направления совершенствования правового положения бюджетных учреждений в 2011-2012 гг. // Финансовый справочник бюджетной организации, 2010, № 8, էջ 14:

ծախսերը սահմանվում են միավոր ինքնարժեքի կամ ծրագրերի իրականացման առանձին գործառույթների գծով, մինչդեռ նախահաշիվները միտում ունեն ներկայացնելու ընդհանուր ծախսերը[5]:

Նախահաշվային վերահսկողությունը կարող է օգտագործվել հանրային հատվածում գործող կազմակերպության բոլոր գործառնությունների գծով, որտեղ հնարավոր է կանխատեսել ծախսեր և եկամուտներ՝ դրանք համեմատելով փաստացի արդյունքների հետ: Այս մեթոդի կիրառման շրջանակներն առավել ընդարձակ են, քան նորմատիվային հաշվառմանը, ուստի նախահաշիվները ընդունվում են որպես վերահսկողության ընդհանուր գործիք, որը կարող ենք ներկայացնել գերատեսչության մակարդակում:

Այսպես՝ գերատեսչությունը հաշվետու եռամսյակում պետությունից ստացել է 52 մլն դրամի հասույթ, որը նախահաշվով սահմանվել էր 51,5 մլն դրամ: Այդ նույն ժամանակահատվածում նախարարության գործառնական գործունեության փաստացի ծախսերը կազմել են 47,2 մլն դրամ՝ նախատեսված 47,5 մլն դրամի փոխարեն:

Աղյուսակ 1

Ֆինանսական արդյունքների շեղումները գերատեսչական մակարդակում

(մլն դրամ)

Ֆինանսական արդյունքներ	*նախահաշվով*	*փաստացի*	*շեղում*
Չփոխանակվող գործարքներից հասույթ՝ պետության մակարդակով	51.5	52	+ 0.5
Աշխատավարձեր և աշխատակիցների այլ հատուցումներ	20.3	21.1	+ 0.8
Գործուղումների և շրջագայությունների ծախսեր	25.8	25.4	- 0,4
Սպասարկման ծախսեր	1.4	0.7	- 0,7
Ընդամենը գործառնական գործունեության ծախսեր	47.5	47.2	- 0.3
Հաշվետու տարվա հավելուրդ/պակասուրդ	4,0	4,8	+0,8

Օգտագործելով մեր առաջարկած հաշվապահական հաշվառման հաշիվները և հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվային նոր պլանը՝ ներկայացնենք այն հաշվային թղթակցությունները, որոնք կարձանագրեն եկամուտների ու ծախսերի նախահաշիվներից շեղումների տեղեկատվական հոսքերը և հիմք կդառնան ֆինանսական վերահսկողության արդյունավետ իրականացման համար:

1. Ձևակերպվել է գործառնական գործունեությանը նպատակաուղղված պետական ֆինանսավորման նախահաշվային մեծությունը.

Դտ «Գործառնական գործունեությունից նախահաշվային հասույթներ»…….51.5
Կտ «Չփոխանակվող գործարքներից հասույթ՝ պետության մակարդակով»…..51.5

2. Ձևակերպվել է գործառնական գործունեությանը նպատակաուղղված պետական ֆինանսավորման փաստացի մեծությունը.

Դտ «Հաշվարկային հաշիվ»……;……52
Կտ «Գործառնական գործունեությունից նախահաշվային հասույթներ»…….52

---

[5] Տե՛ս **Жуковский Д.,** Формирование учетной политики для целей бюджетного учета // Финансовый справочник бюджетной организации, 2010, № 12, էջ 39-40:

3. Բացահայտվել է նախահաշվային և փաստացի հասույթի շեղումը.

Դտ «Գործառնական գործունեությունից նախահաշվային հասույթներ».....0.5
Կտ «Գործառնական գործունեության հասույթներից շեղումներ».....0.5

4. Նախահաշվային հասույթից բացահայտված շեղումը վերագրվել է չփոխանակվող գործարքներից հասույթին.

Դտ «Գործառնական գործունեության հասույթներից շեղումներ».....0.5
Կտ «Չփոխանակվող գործարքներից հասույթ՝ պետության մակարդակով».....0.5

Նախահաշվային հասույթից շեղումների հաշվառման առաջարկվող տեղեկատվական հոսքերի մեխանիզմը կազմված է վերոնշյալ հաշվային թղթակցությունների արդյունքներով: Այս պարագայում «Գործառնական գործունեությունից նախահաշվային հասույթներ» և «Գործառնական գործունեության հասույթներից շեղումներ» առաջարկվող հաշիվները բացահայտված շեղումների արձանագրման արդյունքում փակվում են, իսկ չփոխանակվող գործարքներից փաստացի հասույթը ներկայացվում է սահմանված նախահաշվով և շեղումներով:



Գծապատկեր 2. *Նախահաշվային հասույթից շեղումների հաշվառման առաջարկվող տեղեկատվական հոսքերի մեխանիզմը*[6]

Նույն սկզբունքով առաջարկում ենք հանրային ոլորտի կազմակերպությունների ծախսերի հաշվառման մեխանիզմ՝ դրանց առնչվող տեղեկատվական հոսքերի նախահաշվային մեծությունների և շեղումների ներկայացմամբ: Ահա հաշվային այն թղթակցությունները, որոնք կարձանագրեն ծախսերի նախահաշիվներից շեղումների տեղեկատվական հոսքերը և որպես հիմք կծառայեն ֆինանսական վերահսկողության արդյունավետ իրականացման համար:

5. Չևակերպվել է գործառնական գործունեության նպատակով իրականացված ծախսումների նախահաշվային արժեքը.

[6] Կազմված է 1–4 հաշվային թղթակցությունների տվյալներով:

- աշխատավարձեր և աշխատակիցների այլ հատուցումների գծով

Դտ «Աշխատավարձեր և աշխատակիցների այլ հատուցումներ»..... 20.3
Կտ «Գործառնական գործունեության նախահաշվային ծախսումներ»..... 20.3

- գործուղումների և շրջագայությունների ծախսումների գծով

Դտ «Գործուղումների և շրջագայությունների ծախսումներ»..... 25.8
Կտ «Գործառնական գործունեությունից նախահաշվային ծախսումներ»..... 25.8

- սպասարկման ծախսումներ (կոմունալ ծառայություններ, կապ և այլն)

Դտ «Շարունակական ծախսումներ»..... 1.4
Կտ «Գործառնական գործունեության նախահաշվային ծախսումներ»..... 1.4

6. Ձևակերպվել է գործառնական գործունեության նպատակով իրականացված ծախսումների փաստացի մեծությունը.

- աշխատավարձեր և աշխատակիցների այլ հատուցումների գծով

Դտ «Գործառնական գործունեության նախահաշվային ծախսումներ»..... 21.1
Կտ «Հաշվարկային հաշիվ»..... 21.1

- գործուղումների և շրջագայությունների ծախսումների գծով

Դտ «Գործառնական գործունեության նախահաշվային ծախսումներ»..... 25.4
Կտ «Հաշվարկային հաշիվ»..... 25.4

- սպասարկման ծախսումներ (կոմունալ ծառայություններ, կապ և այլն)

Դտ «Գործառնական գործունեության նախահաշվային ծախսումներ»..... 0.7
Կտ «Հաշվարկային հաշիվ»..... 0.7

7. Բացահայտվել են գործառնական գործունեության ծախսումների սահմանված նախահաշիվներից շեղումներ.

- աշխատավարձեր և աշխատակիցների այլ հատուցումների գծով՝ + 0,8

Դտ «Գործառնական գործունեության ծախսումներից շեղումներ»..... 0.8
Կտ «Գործառնական գործունեությունից նախահաշվային ծախսումներ»..... 0.8

- գործուղումների և շրջագայությունների ծախսումների գծով՝ - 04

Դտ «Գործառնական գործունեության ծախսումներից շեղումներ»..... (0,4)
Կտ «Գործառնական գործունեության նախահաշվային ծախսումներ»..... (0.4)

- սպասարկման ծախսումների գծով՝ - 07

Դտ «Գործառնական գործունեության ծախսումներից շեղումներ»..... (0,7)
Կտ «Գործառնական գործունեության նախահաշվային ծախսումներ»..... (0.7)

8. Գործառնական գործունեության ծախսումների գծով բացահայտված շեղումները վերագրվել են հաշվետու ժամանակաշրջանի փաստացի ծախսումներին.

- աշխատավարձեր և աշխատակիցների այլ հատուցումների գծով՝ + 0,8

Դտ «Աշխատավարձեր և աշխատակիցների այլ հատուցումներ»..... 0.8
Կտ «Գործառնական գործունեության ծախսումներից շեղումներ»..... 0.8

- գործուղումների և շրջագայությունների ծախսումների գծով՝ - 04

Դտ «Գործուղումների և շրջագայությունների ծախսումներ»……(0,4)
Կտ «Գործառնական գործունեության ծախսումներից շեղումներ»……(0,4)

- սպասարկման ծախսումների գծով՝ - 07

Դտ «Շարունակական ծախսումներ» ……(0,7)
Կտ «Գործառնական գործունեության ծախսումներից շեղումներ»……(0,7)

9. Չնակերպվել են հաշվետու ժամանակաշրջանի գործառնական գործունեության փաստացի ծախսերը.

Դտ «Վարչական ծախսեր» ……47.2
Կտ «Կրթություն»……47.2

Գծապատկեր 3-ում ներկայացված է նախահաշվային ծախսումներից շեղումների հաշվառման առաջարկվող տեղեկատվական հոսքերի մեխանիզմը՝ կազմված 5–9 հաշվային թղթակցությունների արդյունքներով: Այս պարագայում «Գործառնական գործունեության նախահաշվային ծախսումներ» և «Գործառնական գործունեության ծախսումներից շեղումներ» առաջարկվող հաշիվները բացահայտված շեղումների արձանագրման արդյունքում փակվում են, իսկ փաստացի ծախսումները ներկայացվում են սահմանված նախահաշվով և շեղումներով:



Գծապատկեր 3. *Նախահաշվային ծախսումներից շեղումների հաշվառման տեղեկատվական հոսքերի մեխանիզմը*[7]

[7] Կազմված է 5–9 հաշվային թղթակցությունների տվյալներով:

Այսպիսով՝ եկամուտների և ծախսերի գծով սահմանված նախահաշիվներից շեղումների հաշվառման մեր առաջարկած մեխանիզմը ընդլայնում է ֆինանսական արդյունքների վերահսկողության գործիքակազմը հանրային կազմակերպություններում, քանի որ.

1. Կազմակերպվում է բացահայտված շեղումների փաստաթղթաշրջանառություն, որը հետագայում որպես տեղեկատվական հիմք է ծառայում ֆինանսական արդյունքների վերահսկողության ժամանակ և բարելավում ֆինանսական վերահսկողության տեղեկատվական ապահովվածությունը:

2. Ֆինանսական վերահսկողության ծանրության կենտրոնը գործառույթների հետհաշվետվական ուսումնասիրությունների շրջանակից տեղափոխվում է խախտումների կանխարգելիչ ոլորտ՝ դրանով իսկ բեռնաթափելով ստուգումների շրջանակը և ուժեղացնելով նախավերահսկողական շրջանում թերությունների վերացման կառավարչական որոշումների կայացման գործընթացը:

3. Հիմք է ստեղծվում միջազգային չափորոշիչներով հանրային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների կազմման համար, քանի որ տեղեկատվությունը ներկայացվում է տեղին և ժամանակին, ըստ եկամուտների և ծախսերի գծով պահանջվող բացահայտումների, որը մեծապես բարձրացնում է ֆինանսական արդյունքներին առնչվող ներքին և արտաքին աուդիտի արդյունավետության մակարդակը:

ГЮЛЛО АРАБЯН
Соискатель кафедры
,,Управленческого учета и аудита" АГЭУ

Совершенствоавание учета отклонений финансовых результатов в государственном секторе.- Эффективность контроля над финансовыми результатами в государственном секторе резко улучшается, когда по формированию расходов и доходов принимается управленческий учет. При этом оперативно выявляются отклонения финансовых результатов от намеченных норм и организуется их учет с момента формирования, что и предотвращает нарушение бюджетной дисциплины. В статье предлагается механизм нормативного учета финансовых результатов в организациях государственного сектора Армении.

Ключевые слова: *нормативный учет, выявление отклоненный от сметы, учет финансовых результатов, финансовый контроль.*

GYULLO ARABYAN
Researcher at the Chair of
,,Managerial Accounting and Audit" at ASUE

Improving the Accounting of Financial Results Deviations in the Public Sector.- Effective control over financial performance in the public sector improves sharply when the formation of expenses and income are included in the system of managerial accounting. This quickly identifies deviations from the planned financial performance standards and organizes their records from the time of formation. This prevents the violation of budgetary discipline. The paper proposes a mechanism for regular reporting the financial results in the organizations of the public sector of Armenia.

Key Words: *standard cost accounting, deviations from the budget, accounting for financial results, financial control.*

ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԲՈՐԻՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
ՀԱԱՀ կրթության որակի վերահսկողության հանձնաժողովի նախագահ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Հոդվածում փորձ է արվել ամփոփելու բնական ռեսուրսների տնտեսական գնահատման հիմնական արդյունքները՝ ուշադրությունը սևեռելով ոչ լիարժեք ուսումնասիրված հիմնախնդիրների վրա: Տնտեսության և գործնական արդյունքների միջև առկա ճեղքվածքը վկայում է տնտեսավարման մեթոդների վերափոխման անհրաժեշտության մասին:

Հիմնաբառեր. *ռեսուրս, հայեցակարգ, արդյունք, նորմատիվ, սահմանային ծախս*

Բնական ռեսուրսների տնտեսական գնահատման հիմնախնդիրը վաղուց է գրավել մասնագետների ուշադրությունը: Տարիներ շարունակ ընթանում էին ակտիվ քննարկումներ, բանավեճեր, տեսությունը հարստանում էր նոր փաստերով, հիմնավորումներով փոխվում էին տեսակետները: Մինչև 1960 թ. կեսերը բնական ռեսուրսների գնահատման առնչությամբ լայն տարածում էր ստացել ծախսային մոտեցումը. առաջարկվում էր հաշվարկը կատարել բնօգտագործման օբյեկտի յուրացման, շահագործման և պահպանման ծախսերի հիման վրա: Դրան նպաստում էր այն տարիների տնտեսական իրավիճակը, երբ բնական ռեսուրսները չէին սահմանափակում տնտեսական զարգացումը, այնինչ կապիտալ ներդրումները խիստ պակա-

սուրդային են եղել: Որոշակի փուլում ծախսային հայեցակարգը դրական դեր էր խաղում, քանի որ անվճար համարվող բնական ռեսուրսների համեմատությամբ, անկասկած, քայլ էր դեպի առաջ: Ուսումնասիրելով բնական ռեսուրսների տնտեսական գնահատման գոյություն ունեցող մոտեցումները՝ առաջարկում ենք դրանց բարելավման և կատարելագործման հնարավոր տարբերակ՝ առաջադիմական մեթոդների կիրառմամբ:

Հասարակության և տնտեսական զարգացմանը զուգահեռ մեծանում է բացասական ազդեցությունը բնության վրա, զգացնել է տալիս նաև ռեսուրսների սահմանափակությունը: Հանածո հարստությունների յուրաքանչյուր նոր հանքավայրի բացումը, գյուղատնտեսական հողերի յուրաքանչյուր հեկտարի յուրացումը, էլեկտրաէներգիայի լրացուցիչ կիլովատ-ժամի արտադրությունը հաճախ ավելի մեծ ծախսեր են պահանջում: Այդ պայմաններում երևում է անմիջական ժողովրդատնտեսական արդյունքը, և համեմատաբար լավ որակի բնական օբյեկտների շահագործման ծախսերի և ստացված արդյունքի միջև մեծ տարբերություն է առաջանում: Որպես ծախսայինի հակակշիռ՝ ի հայտ եկավ բնական ռեսուրսների գնահատման արդյունքային հայեցակարգը: Բնօգտագործման օբյեկտի դրամական գնահատականը (օրինակ՝ հողի տեղամասը) և դրանից ստացվող արտադրանքի լրիվ արժեքը համադրվում են: Մյուս մոտեցման համաձայն՝ արժեքից պետք է հանել տեղամասի շահագործման ընթացիկ ծախսերը: Հաճախ փորձ է արվել մեխանիկորեն միացնելու ծախսային և արդյունքային մոտեցումները՝ բնական օբյեկտի շահագործումից ստացված արդյունքը գումարելով դրա յուրացման նպատակով կատարված ծախսերին:

Կարծում ենք՝ դիտարկված հայեցակարգերից ոչ մեկը, այդ թվում՝ բնօգտագործման գործող օբյեկտի շահագործման և պահպանման ծախսերի վրա հիմնված գնահատականը, օգտագործման արդյունքը կամ դրանց մեքենայորեն միավորման վրա հիմնված սկզբունքը չեն կարող ամբողջությամբ արտացոլել այն արժեքը, որ հասարակության համար ունեն բնօգտագործման օբյեկտները: Ծախսային և արդյունքային բնութագրերի դիալեկտիկական միավորման հիման վրա միայն հնարավոր կլինի կառուցել բնական ռեսուրսների համարժեք գնահատական: Նման մոտեցումը իրացվել է ռենտային հայեցակարգում, որը պատկերացում է տալիս բնօգտագործման օբյեկտների ժողովրդատնտեսական արժեքի մասին: Ռենտային հայեցակարգի հիմնական դրույթները հիմնավորվել են Ա. Գոլուբի[1] և ուրիշների աշխատանքներում: Հեղինակների շրջանում բանավեճեր են ծագում, որոնք հիմնականում վերաբերում են ռենտային հարաբերությունների բաշխման ոլորտին: Նրանց մի մասը պնդում է, որ դիֆերենցիալ ռենտան ծագում է միայն գյուղատնտեսության մեջ, իսկ լեռնահանույթով զբաղվող ձեռնարկությունների ածանցված եկամուտները ռենտային ձև չեն ընդունում: Մյուսները՝ այդ հասկացության գոյությունը սեփականության երկու ձևերի առկայության հետ կապողները, կարծում էին, որ ռենտային հարաբերությունները տեղի ունեն պետության և կոոպերատիվների ու այլ սեփականատերերի միջև: Որոշ աշխատանքներում ժխտվում է ռենտայի ձևավորման հնարավորությունը անհատական օժանդակ տնտեսություններում: Սակայն տնտեսագետների մեծ մասը համոզված էր, որ ռենտային արդյունքները ծագում են բնօգտագործման բոլոր ճյուղե-

[1] Տե՛ս **Голуб А.,** Теоретико-методологические аспекты формирования экономической оценки природных ресурсов // Сб. трудов ВННИСИ. Вып. 10. М., 1984:

րում: Ռենտային հայեցակարգի առավել հետևողական կողմնակիցները բացահայտել են դիֆերենցված եկամուտների ռենտային բնույթը տնտեսության ցանկացած ճյուղում, որտեղ օգտագործում են չվերարտադրվող բնական ռեսուրսներ: Այսպիսով՝ ռենտան ապահովում է նաև տարածքը, որի վրա տեղաբաշխվում են արդյունաբերական օբյեկտները: Ռենտային սկզբունքները տարածվում են նաև քաղաքային տարածքների գնահատականի վրա: Որոշ տնտեսագետների կարծիքով՝ դրանք հավասար և միջին ճյուղային են: Նման կանխադրույթի վրա են հիմնվում ռենտայի ձևավորման որոշակի տնտեսամաթեմատիկական մոդելներ[2]: Բնօգտագործման ճյուղերում կարգավորող ծախսը երկակի դեր է խաղում. դա, մի կողմից՝ դիֆերենցիալ ռենտայի հաշվարկման և վերջնական արտադրանքի տնտեսական արժեքի որոշման հիմնական պարամետրն է, մյուս կողմից՝ գնագոյացման հիմքը: Օպերատիվ-տնտեսական ինքնուրույնության ընդլայնման պայմաններում արտադրական ռեսուրսների նկատմամբ պահանջարկի կառուցվածքի ձևավորումը մնում է տեղային տնտեսական օղակների իրավասության ներքո: Եթե բնական հումքն իրացվում է «միջին գներով», ապա տեղային արդյունավետ շատ տարբերակներ, համընդգրկուն առումով, կդառնան ոչ արդյունավետ (շահութաբեր կլինեն ռեսուրսատար արտադրությունները): Կառավարման տնտեսական պարամետրերի համակարգը պետք է այնպես կառուցվի, որ դրա տարրերից յուրաքանչյուրը կենտրոնացված ազդեցության լրացուցիչ նվազագույն լծակների դեպքում հասնի ամենաբարձր հատուցման: Այս կամ այն միջոցառման տնտեսական արդյունքի որոշումը, կապված հանրույթի ծավալի փոփոխության կամ բնական ռեսուրսի սպառման հետ, կպահանջի միջին գներին ավելացնել լրավճարի չափը, որը տրամադրվում է տվյալ ռեսուրսը արտադրող ճյուղի վնասով աշխատող ձեռնարկությանը:

Տնտեսավարման համեմատաբար վատ պայմաններում գտնվող բնօգտագործման օբյեկտների ռենտային գնահատականը, պարզվում է՝ զրոյական է: Իսկ դա միշտ չէ, որ համապատասխանում է իրականությանը, քանի որ դիֆերենցիալ ռենտա (II)-ը կամ պոտենցիալ ռենտան[3] կարող են պահանջել նման օբյեկտների դրական գնահատականը: Ըստ բնօգտագործման համեմատաբար վատ արդյունքներ ունեցող օբյեկտների անհատական ծախսերի մակարդակի՝ սահմանային ծախսերի չափման կողմնակիցները հաճախ ստիպված են դիմելու արհեստական հնարքների՝ դրանց դրական գնահատական տալու համար. դիֆերենցիալ ռենտան ձևավորվում է իրացման ծախսերից: Օպտիմալ բնօգտագործման մոդելների հատկությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս սահմանել, որ հավելավճարային ծախսերը հողի բոլոր օգտագործվող տեղամասերում համընկնում են:

Տնտեսության ռացիոնալ վարումը ենթադրում է, որ դիտարկվող ցանկացած տեղամասերից ուղարկվող լրացուցիչ ներդրումների փոխհատուցումը պետք է միատեսակ լինի: Համապատասխանաբար պետք է համընկնեն նաև լրացուցիչ արտադրանքի թողարկման հավելավճարային ծախսերը, անկախ այն բանից, թե որտեղ ենք ցանկանում դա ստանալ: Հենց այս ծախսերի մակարդակն է սահմանային ծախսերի հիմքում: Սահմանային ծախսերի

---

[2] Տե՛ս **Герасимович В. и др.,** К проблеме формирования рентных эффектов в социалистической экономике // Экономика и мат. методы. Т. XXII, Вып. 1, 1986:

[3] Տե՛ս **Герасимович В., Голуб А.,** Оптимизация природопользования с учетом факторов локализации ресрусов // Экономика и мат. методы. Т. XXII. Вып. 4, 1986:

որոշման վերը շարադրված պարզագույն մոտեցումը կիրառվում է բնական ռեսուրսների տնտեսական գնահատականի չափման մեթոդաբանություններում: Որոշ հեղինակներ[4] պնդում են օպտիմալացման մեթոդների կիրառման անհրաժեշտությունը օգտակար հանածոների հանույթի սահմանային ծախսերի հաշվարկի դեպքում. սահմանային մակարդակը որոշվում է հանույթով զբաղվող ճյուղերի զարգացման հեռանկարային օպտիմալ պլանի մաթեմատիկական մոդելների երկակի լուծմամբ, ըստ որի հաղթահարվում են արտադրողի նվազագույն ծախսերը[5]: Նույնկերպ է մեկնաբանվում նաև Գուսևի աշխատանքում[6], որտեղ գյուղատնտեսական արտադրանքի սահմանային ծախսերի մոտավոր որոշման նպատակով առաջարկվում է անհատական ծախսերը չափել վատագույն հողակլիմայական գոտիներում: Իմանալով հաշվետվության տվյալները՝ բնական օբյեկտները հարկ է դասավորել ծախսերի աճման կարգով, բացահայտել ձեռնարկությունները և դրանց անհատական սահմանային ծախսերը: Իսկ եթե օպտիմալ պլանով վերջիններիս և հավելավճարային ծախսերի մակարդակների միջև տարբերությունը նշանակալից չէ, ապա, պարզության համար, դա կարելի է անտեսել:

Ահա թե ինչու ենթադրությունն այն մասին, որ դիտարկվող մեթոդը հնարավորություն կտա խուսափելու օպտիմալ պլանի հաշվարկների հետ կապված դժվարություններից, չի հաստատվում: Եվ դա հասկանալի է. դրա հիմնավորման ժամանակ օգտագործվում է օպտիմալ պլանի բնութագրերից մեկը, որ նախկինում գործնականում կիրառվել է, չի խթանում ռեսուրսների օգտագործման և շահագործման օպտիմալ տարածքում ելքը, ավելի շուտ հակառակը՝ դժվարացնում է տվյալ գործընթացը: Օպտիմալ պլանի որոշակի բնութագրերի ընտրությունը, որպես կառավարող պարամետր, կարող է արդարացվել միայն այն դեպքում, եթե գործունեության գոյություն ունեցող մեխանիզմը մոտեցնի օպտիմալին:

Սահմանային ծախսերի ձևավորման մեխանիզմը հիմնավորելու համար համառոտակի անդրադառնանք դրա որոշման մեթոդաբանական հարցերին: Դա ենթադրում է «արտադրական ռեսուրսների ավելացման ծախսերի սահմանը, որը ստացվում է որոշակի տեսքի հանքային հումքից, տվյալ հողային, անտառային և այլ տեղամասի շահագործման դեպքում»: Այդ ծախսերը նույն ձևով որոշվում են ուրիշ աշխատանքներում և մեթոդական փաստաթղթերի ճնշող մեծամասնությունում[7]: Մեր կարծիքով՝ տնտեսությունը զարգացման գերազանցապես ինտենսիվ ուղու վրա տեղափոխման պայմաններում սահմանային ծախսերը անհրաժեշտ է դիտարկել որպես բնօգտագործման ճյուղերի արտադրանքի տվյալ տեսակի նկատմամբ տնտեսության պահանջի բավարարման ծախսերի սահմանային թույլատրելի մակարդակ: Նման մոտեցումը թույլ կտա դրանք գնահատել ոչ միայն որպես ռեսուրսների արտադրության ընդլայնման հավելաճի նորմատիվի սահմանային թույլատրելի ծախս, այլև բնական ռեսուրսը դիտարկել որպես նյութաաշխատանքային ռեսուրսներով փոխանակման նորմատիվ: Որպես այդ և այլ միջոցառումների

---

[4] Տե՛ս Методика экономической оценки важнейших видов природных ресурсов в странах-членах СЭВ. М.: СЭВ, 1985:

[5] Տե՛ս նույն տեղը:

[6] Տե՛ս **Гусев А.,** Экономические проблемы безотходных производств // Изд. АН СССР. Сер. экон., 1985, N5:

[7] Տե՛ս Методика экономической оценки важнейших видов природниых ресурсов в странах-членах СЭВ. М.: СЭВ, նշվ. հրատ.: **Гусев А.,** նշվ. աշխ.:

իրագործման ծախսերի թույլատրելի մակարդակը բնութագրող հիմնային մեծություն հանդես է գալիս գումարային արդյունավետությունը տվյալ ռեսուրսի սպառումը սահմանափակող ոլորտում, որը արտացոլում է դրա տնտեսական նշանակությունը: Այլ կերպ ասած՝ սահմանային ծախսերի համապատասխան չափիչը սահմանային տնտեսական արդյունքն է:

Ակնհայտ է, որ սպառման սահմանային ոլորտում արդյունքի՝ որպես սահմանային ծախսերի նորմատիվի ընդունումը կնպաստի արդյունավետ լուծմանը: Եթե բնական ռեսուրսի արտադրությունը բավարար չէ, հավելաճի թույլատրելի ծախսերի նորմատիվը համեմատաբար բարձր է, որը խթանում է հանույթի ընդլայնումը կամ տվյալ բնական արդյունքի արտադրությունը: Գերարտադրության դեպքում ստեղծվում են թողարկումը կրճատելու տնտեսական խթաններ: Այդ մոտեցման առավելությունը նաև այն է, որ սահմանային ծախսի նորմատիվը դառնում է որոշելի սահմանային գումարային արդյունքի կամ սահմանային ծախսերի բաժանվող գործառույթ: Հաջողվում է հաշվի առնել դինամիկայի մի շարք գործոններ, օրինակ՝ բնական ռեսուրսների սպառման կառուցվածքի փոփոխությունը, բնական ռեսուրսների աճող պակասուրդը, բնօգտագործման օբյեկտների շահագործման պայմանների վատացումը:

Մանրամասն չանդրադառնալով հիմնախնդրի բոլոր կողմերին՝ նշենք, որ հնարավոր փոփոխությունների նախօրոք հաշվառումը և ռեսուրսների սպառման երկարաժամկետ ռազմավարության մշակումը երաշխավորում են երկարաժամկետ ծրագրի տևողության ընթացքում սպառման սահմանային արդյունքի փոփոխված արժեքը: Կայուն են նաև սահմանային արդյունքին առնչվող վերջափակող ծախսերը, որոնք ընդլայնում են դրանց օգտագործման հնարավորությունները հեռանկարային պլանավորման դեպքում[8]: Պակասուրդային արտադրանքի թողարկման ընդլայնումը խթանելու նպատակով սահմանափակող ծախսերը պետք է ընդունել սահմանային արդյունքին հավասար՝ սպառման ոլորտում: Այդպես պետք է վարվել նաև արտադրանքի գերարտադրության դեպքում: Հայտնի է, որ դիֆերենցիալ ռենտա I-ը ձևավորվում է տարբեր բնական օբյեկտներում տնտեսավարման օբյեկտիվ պայմանների տարբերության հետևանքով, իսկ ռենտա II-ը՝ միևնույն օբյեկտներում նյութատեխնիկական ռեսուրսների հաջորդաբար ներդրումների ոչ միանշանակ հատուցմամբ: Որոշ հեղինակներ բավականին մանրամասն բնութագրում են I և II դիֆերենցիալ ռենտաների որոշման սկզբունքները: Նրանց կարծիքով՝ հողի տեղամասից ստացվող դիֆերենցիալ ռենտան ձևավորվում է I և II ռենտաներից, այսինքն՝ դրանք ռենտային եկամուտների ինքնուրույն բաղադրիչներ են[9]: Ռենտային վճարումների չափերը սահմանելու դեպքում պետք է հաշվի առնել I և II կարգի ռենտաները, որոնք տարբեր կողմերից բնութագրում են ռենտային եկամուտների ձևավորման ընթացքը, բայց ոչ աղբյուրները կամ դրա գումարելիները: Նման վճարների հիմքում պետք է լինի ռենտային գնահատականը, այլ ոչ թե դրա մասնավոր բնութագրերը:

Բնական ռեսուրսների գնահատման անհրաժեշտ տարրը ժողովրդատնտեսական լրիվ արդյունքի որոշումն է, որն ապահովում է բնօգտագործման օբյեկտը շահագործման ժամանակահատվածում: Նման գնահատա-

---

[8] Տե՛ս **Сухотин Ю. и др.,** Экономический механизм управления сельским хозяйством // Экономика и мат. методы. Т. XX. Вып . 4, 1984:

[9] Տե՛ս **Герасимович В., Голуб А.,** նշվ. աշխ.:

կանի հիման վրա բնական ռեսուրսները ընդգրկվում են ազգային հարստության կազմում: Հաճախ դա հաշվարկում են որպես դիսկոնտավորված դիֆերենցիալ ռենտայի գումար.

$$P = \sum_{t=0}^{T} R_t \left(1 + E\right)^{-1} \quad , \qquad (1)$$

որտեղ՝ P-ն բնօգտագործման օբյեկտի ինտեգրալ գնահատականն է,

R_t-ն՝ դիֆերենցիալ ռենտան, որն ապահովում օբյեկտը t-րդ տարում,

E-ն՝ դիսկոնտավորման գործակիցը,

T-ն՝ օբյեկտի շահագործման տևողությունը:

P-ի որոշման հետ կապված կարևոր հարցերից մեկը բնական օբյեկտների արժեքի փոփոխության վրա դինամիկայի գործոնների ազդեցության հաշվառումն է: Գերադասելով սպառումը՝ ժամանակի ընթացքում այդ օբյեկտները, ինչպես նաև ցանկացած ուրիշ բարիքներ արժեզրկվում են: Նման միտումները հաշվի առնելու համար սովորաբար ներառում են դիսկոնտավորող ֆունկցիա: Սակայն ժամանակակից պայմաններում նկատվում է և ուրիշ հակազդող միտում, մասնավորապես՝ բնական ռեսուրսների արժեքի աճը: Նման երևույթի պատճառները ռեսուրսային հատվածում կառուցվածքային տեղաշարժերն են: Ժամանակի ընթացքում զգացվում է վերջնական ծախսերի աճ[10], բնական ռեսուրսները դուրս են մղվում դրանց օգտագործման առավել արդյունավետ ոլորտներից:

Ըստ ճյուղերի դիֆերենցված արդյունավետության նորմատիվների օգտագործման առաջարկությունները հաճախ ենթարկվել են քննադատության, ուստի հարկ չենք համարում անդրադառնալ այդ հարցին:

Ընդունելով, որ կապիտալ ներդրումների արդյունավետության նորմատիվը (նաև դիսկոնտավորման նորմատիվը), ըստ ճյուղերի, պետք է միասնական լինի, այս տեսակետի կողմնակիցները նման հնարավորություն դիտարկում են միայն ներդրումների համար՝ ըստ շրջապտույտի տևողության և արդյունքի ստացման հավանականության: Չափազանց երկարատև նախագծերի համար, որոնց արդյունքները որոշարկված չեն, առաջարկվում է կիրառել իջեցված նորմատիվ, որը դիֆերենցված է ըստ բնօգտագործման ոլորտների՝ պայմանավորված շրջապտույտի ժամանակից:

Պետք է նշել, որ քննարկվող մոտեցման հիմքում Վ.Նովոժիլովի եզրակացությունն է, ըստ որի արդյունավետության նորման նպատակահարմար է ածանցել տարբեր ներդրումների փոխհատուցման ժամկետների հիման վրա: Մեր կարծիքով՝ նման եզրակացությունը տեղին է էքստենսիվ եղանակով զարգացող տնտեսության համար, բայց լիարժեք չէ հասարակական արտադրության ինտենսիվացման պայմաններում: Մշտական կառուցվածքային տեղաշարժերը հանգեցնում են կապիտալ ռեսուրսների փոխհատուցման արժեքների տատանումների ներդրումային վերահսկման ոլորտում: Արդյունքում՝ տատանվում է նաև արդյունավետության նորման: Խնդրահարույց է հատկապես բնօգտագործման ոլորտում ներդրումային ռեսուրսների հատուցման շարժընթացի անկասելի միտումների բացահայտումը:

---

[10] Տե՛ս **Вавилов А.** и др., Методы учета ренты в ценах и плановых расчетах. Экономика и мат. методы. Т. XXII. Вып 5, 1986:

Մեր տեսանկյունից՝ իջեցված նորմատիվը բնօգտագործման օբյեկտների ժողովրդատնտեսական արժեքը որոշող նշված գործոնների հաշվառման հնարավոր եղանակներից մեկն է, որը գործնականում նպատակահարմար է կիրառել զանգվածային պլանանախագծային հաշվարկների պարզեցման համար: Սակայն, ըստ ռացիոնալ բնօգտագործման տեսության, ավելի հիմնավոր է միասնական նորմատիվի կիրառումը և (1)-ի գործադրումը՝ որպես R_t: Պետք է տարբերակել և ուսումնասիրել երկու առանձնահատուկ ընթացքներ՝ տվյալ պահին չօգտագործվող ժամանակի ռեսուրսի արժեզրկում և դրա արտադրության ու սպառման պայմանների փոփոխություն: Նման պարզ եղանակի դեպքում կիրառելի է բնօգտագործման օբյեկտի՝ ժամանակի ընթացքում ընդլայնման դիֆերենցիալ գնահատման բազմարկչային մոդելը.

$$R_t = R_0(1+\alpha)^t,$$

որտեղ՝ α -ն ընթացիկ տարեկան աճի գնահատման միջին տարեկան միտումն է, որը տեղադրելով (1)-ի մեջ և ընդունելով $T=\infty$ պայմանը, կստանանք.

$$P = R_0/(E-\alpha) \qquad (2)$$

(2)-րդ բանաձևը նախատեսված է այն դեպքի համար, երբ $\alpha < E$: Սակայն երբեմն բնական ռեսուրսների արժեքի՝ ժամանակի ընթացքում աճը կարող է գերազանցել դրա գնահատականի անկման միտումը:

Բնօգտագործման օբյեկտները, որոնք կարող են ստանալ առաջին ինտեգրալ գնահատականը, ձևականորեն հավասար են զրոյի, երբ $R_t = 0$, t=0,1,2,…..,T:

Բայց եթե որևէ պահի օբյեկտը սկսում է ապահովել դիֆերենցիալ ռենտա, այսինքն՝ $R_t > 0, t \in [0,T]$, ապա դրա ինտեգրալ գնահատականը միշտ դրական է: Բնօգտագործման օբյեկտը, օրինակ՝ հողակտորը, ապահովում է լրիվ ռենտա, եթե համապատասխան կարգի հողերը տնտեսապես սահմանափակ չեն, և, հետևապես՝ բնական գործոնը չի սահմանափակում գյուղատնտեսական արտադրության զարգացումը: Նման իրավիճակը բնորոշ է տեխնոլոգիական և տնտեսական տեսանկյունից թույլատրելի նվազագույն ինտենսիվությամբ հողի մշակմանը:

Ինտենսիվության ներքին սահմանը համապատասխանում է տվյալ կարգի հողի միավոր մակերեսից միջին հատուցման ֆունկցիայի առավելագույն ընդհանրական կետին կամ միջին նվազագույն ծախսերին: Ինտենսիվության մեծացումը նպատակահարմար է, եթե զբաղեցվի շահագործման համար պիտանի տվյալ կարգի ամբողջ հողային ֆոնդը, այլ կերպ ասած՝ գյուղատնտեսության համար հասարակության կողմից հատկացվող լրացուցիչ նյութական և աշխատանքային ռեսուրսները նպատակաուղղվում են նախկին ինտենսիվությամբ մշակվող մակերեսների ընդլայնմանը[11]: Նման դեպքում հողը ստանում է դրական գնահատական, որը աճում է ըստ դրա մշակման ինտենսիվության մակարդակի բարձրացման: Աճը դադարեցվում է, երբ անցում է կատարվում գյուղատնտեսական արտադրության նոր տեխնոլոգիայի:

---

[11] Տե՛ս **Вавилов А.** и др., նշվ. աշխ.: **Шахназарян Б., Григорян М.,** Моделирование стратегии развития природопользования и сохранения биосферы. Известия аграрной науки. Т. 10. N1, Тбилиси, 2012:

Դա վկայում է այն մասին, որ տեխնոլոգիայի փոփոխությունը հողային մակերեսների սահմանափակության հաղթահարման միակ հնարավորությունն է, այսինքն՝ կախվածության նվազեցումն է բնական պայմաններից: Հին տեխնոլոգիաների ոչ էական ձևափոխման դեպքում սա ավելի սուր է զգացվում:

Մեծ տարածայնություններ կան յուրացման տեղի և դերի ծախսերին վերաբերող հարցում: Արդեն նշվել է, որ երբեմն առաջարկվում է դրանք ընդգրկել բնական ռեսուրսների տնտեսական գնահատման կազմում:

Այսպիսով՝ հողի տեղամասի տարեկան գնահատականը ձևավորվում է երկու բաղադրիչներից՝ $P + EK$,

որտեղ՝ K-ն կապիտալ ռեսուրսներն են, որոնք հատկացվել են բնօգտագործման տվյալ օբյեկտի յուրացման համար,

EK-ն՝ ֆոնդերի համար վճարները:

Ենթադրենք՝ օբյեկտը չի շահագործվում (հաշվարկելով այս դեպքում առաջացած կորուստները՝ որոշում ենք դրա ժողովրդատնտեսական արժեքը՝ գնահատականը): Ակնհայտ է, որ այդ պարագայում կորչում է միայն R մեծությունը, քանի որ շարժուն ռեսուրսները կարող են վերաբաշխվել ցանկացած այլ ոլորտների միջև, որտեղ դրանք կօգտագործվեն նորմատիվներից ոչ ցածր արդյունավետությամբ: Տվյալ օբյեկտում առկա շարժուն ֆոնդերը անմիջապես մասնակցում են ռենտային արդյունքի ձևավորմանը և ինքնուրույն նշանակություն չունեն: Կապիտալի ծախսումներից հետո հողը ռենտա է ապահովում ոչ թե կապիտալի ներդրման հետևանքով, այլ ելնելով այն հանգամանքից, որ կապիտալի ծախսը հողը դարձրել է առավել արտադրողական, քան մինչ այդ էր: Եթե շարժուն ռեսուրսները նշանակենք K'-ով, և EK' մեծությունը դիտարկենք որպես ռենտային բնութագիր, ապա լրիվ ընդունելի է դառնում կապիտալ ներդրումների արդյունավետության ռենտային բնութագրով նորմատիվը: Ակադեմիկոս Վ.Նովոժիլովը ապացուցել է, որ C+EK գումարը դիֆերենցիալ ծախսերն են (C-ն՝ ընթացիկ, K-ն՝ կապիտալ, E-ն՝ կապիտալ ռեսուրսների օգտագործման արդյունավետության նորմատիվ)[12]: Հետևապես՝ կապիտալ ռեսուրսներով ստացվող արդյունքն ածանցյալ է: Սակայն դա ռենտային բնույթ չի կրում, քանի որ, ըստ էության, հասարակության կայուն եկամուտ չի համարվում: Ուսումնասիրելով դինամիկ մոդելը՝ դրանում կարելի է հեշտ համոզվել: Ենթադրենք՝ որոշակի t-րդ տարում հասարակությունը կատարում է K' ծավալի ներդրում, որը, սակայն, t տարում չի հասնում սպառման ոլորտ և ժամանակի ընթացքում արժեզրկվում է: Եթե այդ ռեսուրսների արժեզրկման աստիճանը մեկ տարում հավասար է E-ի, ապա t+1 տարում դրանք պետք է ապահովեն EK'-ին հավասար լրացուցիչ արդյունք, որը թույլ կտա փոխհատուցել ժամանակի ընթացքում սպառումը հետաձգելու հետևանքով արդյունքի կորուստը: Քանի որ EK' մեծության հավասար դիֆերնցիալ արդյունքը ընդունվում է որպես ժամանակի ընթացքում սպառման հետաձգմամբ պայմանավորված հասարակական ծախսերի փոխհատուցում, արդյունավետության նորմատիվը (E) չի կարող ունենալ ռենտային բնութագիր: Ռենտային չէ նաև կրեդիտի համար տոկոսը: Այսպիսով՝ գործող բնական օբյեկտների յուրացման ծախսերը կամ շարժուն են և արդեն հաշվառված են ռենտային արդյունքում (դրանց

[12] Տե՛ս Методика экономической оценки важнейших видов природниых ресурсов в странах-членах СЭВ, նշվ. հրատ.:

գումարումը կլիներ կրկնակի հաշիվ), կամ շարժուն ռեսուրսներ են, արդյունք են ապահովում, որը հավասար է նորմատիվային հատուցման տնտեսության ցանկացած ոլորտում և ընդհանուր ոչինչ չունի տվյալ օբյեկտի արժեքի հետ: Ինչ վերաբերում է դեռևս տնտեսական գործունեության ոլորտ չընդգրկված բնական ռեսուրսներին, ապա դրանց յուրացման ծախսերը մեծ դեր են խաղում ռացիոնալ բնօգտագործման ռազմավարության իրացման մեջ: Այդպիսի ծախսերի մեծությունը պետք է չափվի պլանանախագծային հաշվարկների ընթացքում այս կամ օբյեկտի յուրացման նպատակահարմարության վերաբերյալ հարցի լուծման պարագայում: Տվյալ օբյեկտը ընդգրկվում է տնտեսական գործունեության ոլորտ, եթե դրա շահագործումից ստացվող մաքուր էֆեկտը գերազանցում է յուրացման ծախսերը: Քանի որ օբյեկտի յուրացման աստիճանը կարող է տարբեր լինել, ուստի ծագում է ծախսերի օպտիմալ չափերի որոշման խնդիր: Օպտիմումը նվաճվում է, երբ յուրացման հավելավճարային ծախսերը դառնում են օբյեկտի շահագործումից ստացվող հավելավճարային մաքուր էֆեկտին հավասար:

Որոշելով չիրացված օբյեկտների արժեքը սպասվող ինտեգրալ արդյունքից՝ հարկ է հանել դրա յուրացման կապիտալ ծախսերը (հաշվի առնելով ուշացման լագերը և այլ գործոններ՝ կապված ներդրումային գործընթացների առանձնահատկությունների, օբյեկտի ներդրման և շահագործման հետ):

Բնական օբյեկտների գործունեության համար առկա է վերակառուցման ներդրումների հատուցման ոչ գծայնության հանգամանքը, որի դեպքում էֆեկտի գումարային հավելաճը կարող է գերազանցել դա ապահովող ծախսերը: Դրա համար լիարժեք ձևով է ներկայացվում նախնական յուրացում պահանջող հողի դրական ռենտայի գնահատականը հաստատող մոտեցումը. գումարվում է դիֆերենցիալ ռենտան, որն ապահովում է հողի տվյալ տեղամասը՝ նախնական որակով օգտագործման դեպքում: Նման եզրակացությունը արվել է մոդելից ելնելով, որում նվազագույնի են հասցվում գյուղատնտեսական արտադրանքի արտադրության վրա կատարված ծախսերը թողարկման ծավալների և մշակվող հողերի մակերեսների սահմանափակության պարագայում:

Յուրացման ծախսերի հատուցման գծային ֆունկցիայի դեպքում ռենտային էֆեկտի հավելաճը համընկնում է այդ ծախսերի մեծության հետ. ռենտային գնահատականի նոր արժեքը իր մեծությամբ իրականում հավասար է հին գումարին և շահագործման գումարին:

Բացի դրանից, դիֆերենցիալ ռենտայի՝ նման ձևով չափումը պատրանք է ստեղծում, թե բնական ռեսուրսներն անսահման են, և դրանց այն մասը, որը պիտանի է շահագործման, կարող է վերարտադրվել ցանկացած ծավալով, եթե իրացման համար լինեն նյութական միջոցներ: Արդյունքում՝ նոր որակական մակարդակում ստեղծվում է ծախսային հայեցակարգ: Տարբերությունը միայն այն է, որ նախորդ հեղինակները դիտարկել են ռեսուրսների մեծությունները, որոնք անհրաժեշտ են բնական օբյեկտները տնտեսական գործունեության ոլորտ ընդգրկելու համար՝ չհամադրելով սպասվելիք արդյունքի հետ:

СУРЕН ГЕВОРКЯН
Заведующий кафедрой ,,Экономики природопользования" АГЭУ,
доктор экономических наук, профессор

БОРИС ШАХНАЗАРЯН
Председатель комиссии по контролью
над качеством образования в АНАУ,
доктор экономических наук, профессор

Подходы к экономической оценке природных ресурсов.- Проблема экологической оценки природных ресурсов сегодня привлекает особое внимание специалистов. Хотя на протяжении многих лет велись активные дискуссии, в результате теория обогащалась новыми фактами, и изменялись точки зрения. На определенном этапе развития экономики затратная концепция сыграла положительную роль по сравнению с представлением о бесплатности природных ресурсов, явилась несомненным шагом вперед. С развитием промышленности и горнодобывающей отрасли усиливается нагрузка на природу, с определенного момента начинает сказываться ограниченность ее ресурсов. Освоение каждого нового месторождения полезных ископаемых, каждого гектара сельскохозяйственных угодий зачастую требует все больших и больших затрат. Некоторые авторы утверждали, что дифференциальная рента возникает только в сельском хозяйстве, а дифференциальные доходы горнодобывающих отраслей не принимают рентную форму. Другие, существование этой категории с наличием двух форм собственности, считали, что рентные отношения имеют место между государством и кооперативно-колхозным сектором. Наиболее последовательные сторонники рентной концепции вскрыли рентный характер дифференциальных доходов, возникающих в любых отраслях, которые используют природные ресурсы. Ренту приносит территория, на которой размещаются промышленные обьекты.

Ключевые слова: *ресурс, концепция, результат, норматив, предельные затраты.*

SUREN GEVORGYAN
Head of the Chair of
,,Environmental Economics" at ASUE,
Doctor of Economics, Professor

BORIS SHAHNAZARYAN
Chairman of the Commission Exercising Control over
Quality of Education at ANAU, Doctor of Economics, Professor

Approaches to Economic Assessment of Natural Resources.- The problem of environmental assessment of natural resources today attracts the attention of specialists. Although for many years there were active discussions, the resulting theory was enriched with new facts and varied points of view. At a certain stage of economic development the expenditure concept has played a positive role in comparison with the idea of cost free natural resources and was a step forward. With the development of industry and mining increases the load on the nature, from a certain point it begins to affect its limited resources. The development of each new mineral deposit, each hectare of agricultural land often requires larger and larger costs. Some authors have argued that the differential rent arises only in agriculture and mining industries and differential incomes don't have the rental form. Others, the existence of this category with the presence of two forms of ownership suppose that rent relations exist between the state and cooperative-collective farm sector. The most consistent followers of the rental concept have revealed the nature of differential rental income arising in any industry, using natural resources. Rent is brought by the territory where industrial objects are located.

Key Words: *resources, concept, result, standard, marginal costs.*

Հանդեսը լույս է տեսնում տարեկան չորս անգամ
Հրատարակության 12-րդ տարի

Լրատվական գործունեություն իրականացնող «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն: Գրանցման վկայական՝ 03Ա 054452 (ներդիր՝ 003)՝ տրված 30.06.2006: Հասցեն՝ Երևան 0025, Նալբանդյան 128:

«Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» հանդեսի խմբագրության հասցեն՝ Երևան 0025, Նալբանդյան 128, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, 3-րդ (բարձրահարկ) մասնաշենք, 6-րդ հարկ: Գրանցման վկայական՝ 01Մ000187: Ստորագրված է տպագրության՝ 29.06.2015: Պատվեր՝ 144: Տպաքանակ՝ 250: Ծավալը՝ 10,0 հրատ. մամուլ, 10,5 տպ. մամուլ, 14,7 պայմ. տպ. մամուլ: Չափսը՝ 70x108 1/16:

Հեռախոս՝ (010) 593 448

էլփոստ՝ g.v.hovhannisyan@mail.ru
Կայքէջ՝ www. asue. am → կառուցվածք → «Բանբեր ՀՊՏՀ»

էջադրումը և համակարգչային սրբագրությունը՝
ՌՈՒԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Վերստուգող սրբագրիչ՝
ՍԱԹԵՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

«Տնտեսագետ» հրատարակչություն

Տպագրված է «Տնտեսագետ» հրատարակչության
տպագրական արտադրամասում
Երևան, Նալբանդյան 128

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» գիտական հանդեսի խմբագրություն ներկայացվող նյութերը պետք է բավարարեն տեխնիկական հետևյալ ***պահանջները.***

- շարվածքի տառատեսակ՝ Arial LatArm,
- տառաչափ՝ 12,
- տողամեջ՝ 1,5,
- հեղինակի անուն, ազգանուն (գլխատառերով), աշխատավայր, պաշտոն, գիտական աստիճան, կոչում, հեռախոսահամար,
- տողատակում՝ հղումներ.
  աղբյուրի հեղինակ, վերնագիր, հրատարակության վայր, տարեթիվ (մամուլի դեպքում՝ համար) և էջ,
- հայերեն, ռուսերեն և անգլերեն համառոտ ամփոփումներ, հիմնաբառեր: